

Հ. Բ. ՉԼԼՈՒԿՅԱՆ

Հ Ա Յ

ՔԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԻՍՏԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

Г. Б. ДЖЛУКЯН

ВВЕДЕНИЕ В АРМЯНСКУЮ ДИАЛЕКТОЛОГИЮ

(СТАТИСТИЧЕСКАЯ ДИАЛЕКТОЛОГИЯ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1972

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Հ. ԱՅՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1972

Աշխատանքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում քննվում են համաժամանակյա բարբառագիտության հարցեր: Կիրառելով մաթեմատիկական ճշգրիտ մեթոդներ՝ հեղինակն այստեղ կատարում է հայ բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգում՝ ի տարբերություն մինչև հիմա ընդունված միահատկանիշ դասակարգումների: Երկրորդ մասում դրվում և լուծվում են տարածամանակյա բարբառագիտության այնպիսի հարցեր, ինչպիսիք են 5-րդ դ. բարբառային վիճակը, ժամանակակից հայ բարբառների ժամանակագրական փոխհարաբերությունը, բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում, բարբառների հնչյունական, քերականական բառային հնաբանությունները:

Պատասխանատու խմբագիր
Է. Բ. ԱՂԱՅԱՆ.

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

Ներկա աշխատությունը նախատեսված է որպես հայ բարբառագիտության յուրատեսակ ներածություն, որտեղ դրված է ժամանակակից լեզվաբանության սկզբունքներով ու մեթոդներով բառ նկարավորին լուծված են համաժամանակյա (սինխրոնիկ) և տարածամանակյա (դիսխրոնիկ) բարբառագիտության մի շարք հարցեր:

Համաժամանակյա բարբառագիտության բնագավառում հեղինակի հիմնական խնդիրը հայ բարբառների դասակարգումն է: Այս խնդրի լուծման որոնումների մեջ հեղինակը, ինչպես կտեսնենք, հանգել է բարբառագիտական մի նոր դիսցիպլինի՝ վիճակագրական բարբառագիտություն գաղափարին: Հայ բարբառագիտության մեջ մինչև այժմ ընդունված միահատկանիշ դասակարգումների փոխարեն նա փորձում է տալ բազմահատկանիշ դասակարգում՝ հենվելով համապատասխան աղյուսակների և թվային ցուցանիշների վրա: Ինչպես հայտնի է, հայ բարբառների դասակարգման մեջ գոյություն ունեցող սկզբունքների տեսական և պատմական անբավարար հիմնավորվածությունը դասակարգման ելակետային միավորների՝ բարբառների, ենթաբարբառների և խոսվածքների առանձնացման որոշակի սկզբունքների ու չափանիշների՝ բացակայությունը, այլև դասակարգման մեջ ընդգրկվող որոշ բարբառների վերաբերյալ տեղեկությունների ակնհայտ անբավարարությունը դուռ են բաց արել կամայական և սուբյեկտիվ մեկնաբանությունների համար, հասցրել մի վիճակի, երբ ամեն մի բարբառագետ իր ուսումնասիրած միավորը որակում է բառ իր հայեցողության: Հայ բարբառների դասակարգման սկզբունքների նշումը և բարբառային միավորների փոխհարաբերության

օրյեկտիվ ու համեմատաբար ճշգրիտ չափանիշների առաջումը անշուշտ, կնպաստի հայ բարբառների ուսումնասիրության զործին, բարբառներ, որոնք արդեն գտնվում են վերջնական մահացման նանապահին:

Տարածամանակյա բարբառագիտությունը մեր ըմբռնմամբ պետք է լինի ա) լեզվի գրավոր պատմության տվյալների վրա հենվող պատմական բարբառագիտության և բ) բարբառների համեմատության ու համապատասխան վերականգնումների վրա հենվող համեմատական բարբառագիտության¹ որակական համադրությունը, որտեղ լեզվի պատմական հուշարձանների տվյալները պետք է լրացվեն համեմատական բարբառագիտության տվյալներով, և ընդհակառակն: Այս բնագավառում հեղինակը նպատակ է դրել ռոշելու վիճակագրական բարբառագիտության հիմնական խնդիրները տարածամանակյա բնության մեջ, ուրվագծելու հայ բարբառների փոխհարաբերության ավելի վաղ պատկերը, այլև քացահայտելու հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական նոր արմատներ և արմատների նոր տարբերակներ:

Ձեռնարկելով ներկա աշխատությունը՝ հեղինակն, անշուշտ, զգում էր հնարավոր դժվարությունները, բայց, պետք է խոստովանել, չէր պատկերացնում դրանց չափը:

Առաջին դժվարությունը կապված է տվյալների պակասի հետ: Բնականաբար դասակարգողը պետք է ձեռքի տակ ունենա դասակարգվող միավորների վերաբերյալ եթե ոչ սպառիչ, ապա գոնե բավականաչափ լրիվ տվյալներ: Մինչդեռ հայ բարբառների վերաբերյալ մեր ունեցած տվյալները խիստ պակասավոր են: Քիչ թե շատ լավ նկարագրված և նույնիսկ մեծագրական մի քանի ուսումնասիրության առարկա դարձած բարբառային միավորների կոդիֆիկան այնպիսիները, որոնց մասին կամ որևէ տվյալ չկա, կամ կան չնչին տեղեկություններ (մեկ կամ մի քանի համառոտ տեքստեր, հնչյունական և ֆեռականական մի քանի հատկանշի թվարկումներ, սակավաթիվ բառային գրանցումներ): Հասկանալի է, որ այս պայմաններում դասակարգումը չի կարող այնպիսին լինել, ինչպիսին այն կցանկանառ տեսնել հեղինակը: Նա աշխատել է ըստ

¹ Հայ բարբառագիտական մի շարք ձեռնարկներում «Համեմատական հնչյունաբանություն» և «Համեմատական ձևաբանություն» անունների տակ հասկանում են ոչ թե պատմական այդ դիսցիպլինի բաժինները, այլ բարբառների հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունների համաժամանակյա (այն էլ ոչ ամբողջական) գույադրությունը:

հնարավորին լրացնել եղած տեղեկությունները՝ ընտրված հատկանիշների համար տվյալներ փառելով ոչ միայն եղած նկարագրություններից, այլև դիմելով տեխատերին, օգտվելով տեղեկատու անձերի (ինֆորմանտների) տվյալներից: Երբ տվյալներն այնուամենայնիվ գոհացուցիչ չեն եղել՝ հեղինակը ստիպված է եղել դրանք լրացնել ենթադրաբար՝ հենվելով միավորին մերձավոր վայրերի տվյալների վրա: Այսպես, եթե նշվում է, որ տվյալ բարբառային միավորը միջին դիրք է զբաղում այս ու այն միավորների միջև, և վերջիններս ունեն տվյալ ընդհանուր հատկանիշը, ապա այդ հատկանիշը վերագրվում է բնավոր միավորին՝ հարցանալով: Եթե սրանց տվյալները տարամիտվում են, ապա ընտրվում են ավելի մերձավոր միավորի տվյալները: Բոլոր դեպքերում աղյուսակներում բաց վանդակներ չեն թողնվել: Ընդհանուր արդյունքի մեջ բնականաբար հաշվի է առնվում հարցականներով օժտված հատկանիշների փակակի առաջացրած հնարավոր շեղումը:

Երկրորդ դժվարությունը կապված է տվյալների անհավասարաչափության հետ: Չխոսելով այն մասին, որ մեր բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ գրեթե չեն կիրառվել փորձառական հնչյունաբանության մեթոդները, և հնչյունական նկարագրությունները հենվում են բարբառը նկարագրողների տպավորության վրա,—նշենք նաև նկարագրողների լեզվաբանական պատրաստականության տարբեր աստիճանը, բարբառի իմացության տարբեր չափը (բարբառով խոսողից մինչև դրա մասին հեռավոր գաղափար ունեցողը), նկարագրության մեջ կիրառվող տարբեր սկզբունքները (հատկապես տառադարձման տարբերությունները), բարբառի տարբեր կողմերի վրա տարբեր չափով ուշադրություն դարձնելը: Ավելորդ չենք համարում նշել, որ վերջին ժամանակներս բարբառագետների տարվելը դասակարգման միակողմանի սկզբունքներով՝ այդ հատկանիշների լայն ուսումնասիրությանը նպաստելով հանդերձ՝ խանգարել է մյուս հատկանիշները նույն խորությամբ ուսումնասիրելու գործին: Սա չի նշանակում, թե ներկա աշխատության լույս տեսնելուց հետո բարբառագետները պետք է բավարարվեն միայն մեր ընտրած հատկանիշների շրջանակներով և դադարեն բարբառների հանգամանալից նկարագրությամբ զբաղվելուց: Պետք է հիշել, որ ինչպես լեզվաբանական աշխարհագրությունը, այնպես էլ վիճակագրական բարբառագիտությունը որոշակի առավելություն ունենալով բարբառային առանձին վայրերի մենագրական ուսումնասիրություն-

ների հանդեպ բարբառային կարևոր ընդհանրությունների ու տարբերությունների բացահայտման և ընդհանրացման առումով՝ գիշում են նրանց ուսումնասիրության խորության ու մանրամասնության տեսակետից:

Երրորդ դժվարությունը նորության դժվարությունն է: Եթե հին և փորձված մեթոդով գործողի ուշադրության կենտրոնում միայն ուսումնասիրության առարկան է, ապա նոր առաջարկվող մեթոդով գործողը պետք է ուշադրության կենտրոնում պահի և՛ ուսումնասիրության առարկան, և՛ ուսումնասիրության մեթոդը, որ հարկավոր է մշակել, նշանել ու հիմնավորել: Հեղինակին հատկապես մեծ դժվարություն են պատճառել դասակարգման համար հիմք ընդունած հատկանիշների ընտրությունը և խմբավորումը: Մեծ ժամանակ են խլել նախապես ընտրված հատկանիշների փոփոխությունը և սրա հետ կապված՝ աղյուսակների տվյալների վերանայումը: Սա չի նշանակում, թե հեղինակը իր ձեռք բերած արդյունքները համարում է իդեալական. ապագան ցույց կտա, թե ի՛նչ նոր հատկանիշներ կարելի է ընտրել, և ինչպե՛ս պետք է ավելի արդյունավետ դարձնել ներկա սկզբունքները: Ոչ պակաս դժվարություն է պատճառել ստացված թվային ցուցիչների մշակման հարցը: Այս դեպքում ստացված արդյունքների հաշվումը սեփական ուժերով մեծ ժամանակ կխլեր. հարկավոր էր պարզել ընտրված վայրերից յուրաքանչյուրի հարաբերությունը մյուսի հետ ըստ ընտրված հատկանիշների, որ տալիս էր $\frac{n(n-1)}{2}$, այսինքն՝ ըն-

տրված 120 միավորի դեպքում $\frac{120(120-1)}{2} = 7140$ կամբինացիա²: Այս և այլ հաշվումների համար հեղինակը դիմել է ՀՍՍՀ ԳԱ և Երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնի օգնությանը, որի նախկին դիրեկտոր Ա. Պետրոսյանին և ավագ գիտաշխատակից Բ. Մնացականյանին, այլև մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Խ. Բրուսյանին հայտնում է իր շնորհակալությունը:

Ներկա աշխատության համար նյութեր հավաքելու, աղյու-

² Եթե սրան գումարենք 4 դրական լեզուների հարաբերությունների թանակը միմյանց և բարբառների հետ, ապա թիվը կհասնի 7576-ի: Այն մի քանի անգամ կմեծանա, եթե նկատի առնենք նաև հատկանիշների առանձին խմբերը և փորձենք բարբառների փոխհարաբերությունը պարզել ըստ այդ խմբերի:

սակների տվյալներ լրացնելու և ճշտելու գործում հեղինակին օգ-
 նել են բարբառագետներ Հ. Աղամյանը (Այգետուն, Նիշ, Գեյիե-
 գուզան), Ս. Անթոսյանը (Կեսարիա, Թոմարգա, Դարենդե, Կյու-
 րին), Մ. Ասատրյանը (Խոյ), Ս. Բաղդասարյանը (Մուշ, Խլաթ,
 Բուլանդ, Խնուս, Ալաշկերտ, Մանազկերտ, Արծկե, Բաղեշ, Ար-
 ենշ), Ռ. Բաղրամյանը (Ալթուն-Հունյն, Իսմայիլ, Զմշկածագ),
 Վ. Դոլաբջյանը (Մարաշ), Ա. Հանեյանը (Տիգրանակերտ, Քեսաթ),
 Ն. Հովսեփյանը (Ոզմ), Ն. Մկրտչյանը (Բուրդուր, Սիվրիհիսար),
 Ա. Մուրադյանը (Աղափազար), Հ. Մուրադյանը (Մեղրի, Կարենան,
 Դուղեմնիս, Վարհավար), Մ. Մուրադյանը (Վան, Շատախ, Մոկս),
 Փ. Սարգսյանը (Մալա, Զանիկ), Խ. Վեյանը (Արաբկիր, Շապին-
 Կարահիսար, Խարբերդ): Առանձին բարբառախոս վայրերի վերա-
 բերյալ հեղինակին տեղեկություններ են հաղորդել Ս. Աբրահամ-
 յանը (Տումի), Ռ. Ալթունյանը (Մարզվան), Զ. Աղասյանը (Զմյուռ-
 նիս), Գ. Անդրեսայանը (Պարտիզակ), Վ. Առուստամյանը (Շա-
 հունյան), Հ. Ավագյանը (Երևան-Կենդ), Վ. Ավթանդիլյանը (Թալ-
 րիզ), Ա. Բաբայանը (Սալմաստ), Հ. Բուշիկանյանը (Խարբերդ),
 Ա. Արզումանյանը (Խանազան). Գ. Գասպարյանը (Երևան), Գ.
 Գյոզալյանը (Քարուսիս), Ս. Գյուլբուդաղյանը (Կողբ), Բ. Դարբին-
 յանը (Թովուզ), Ն. Զորյանը (Օրդու), Ա. Թավադյանը (Շուշիքենդ),
 Ա. Թումանյանը (Վարդենիս), Հ. Խաչատրյանը (Քանաֆեռ), Վ.
 Խաչատրյանը (Վարդենիս), Կ. Կարագյանը (Պարտիզակ), Զ. Ղա-
 սարյանը (Սյուլյոզ, Ռոդոսթո), Ժ. Ճշմարիտյանը (Գյաղզլատ), Ք.
 Մադաթյանը (Ալաշկերտ), Կ. Մանվելյանը (Հազգո), Ա. Մարգար-
 յանը (Գորիս), Մ. Մինասյանը (Պոլիս, Կյուրին), Զ. Միրզաբեկ-
 յանը (Զահարմահալ), Մ. Մխիթարյանը (Ղազախ, Կիրովաբադ),
 Պ. Ոսկերչյանը (Հազգո), Հ. Պետրոսյանը (Հաթեբ), Է. Պիվազյանը
 (Կամո), Ա. Պողոսյանը (Շաղախ), Խ. Սամվելյանը (Երևան-Նորֆ),
 Ա. Սարգսյանը (Կիրովաբադ), Պ. Սեակը (Սալմաստ), Հ. Սիրունի
 (Սուչավա), Ս. Տարոնցին (Մուշ), Մ. Տեր-Կարապետյանը (Նիկոմե-
 դիս), Մ. Տեր-Ղազարյանը (Վան) և ուրիշներ: Աղյուսակներ կազ-
 մելու և հաշվումներ կատարելու գործում հեղինակին օգնել են
 ՀՍՍՀ ԳԱ Հ. Անադյանի անվան լեզվի ինստիտուտի կրտսեր գիտ-
 աշխատակիցներ Տ. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը, Ժ. Մամիկոն-
 յանը, Պ. Վարդապետյանը, ավագ լաբորանտներ Է. Ասմարյանը,
 Լ. Բաբայանը, Գ. Բաղդասարյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Նա-
 զարյանը, Լ. Վարդանյանը, Ա. Սարգսյանը, մեֆենագրումիներ Ս.
 Պողոսյանը, Բ. Թադևոսյանը, այլև պետական համալսարանի ու-

մանա-գերմանական ֆիլոլոգիայի ամբիոնի լաբորանտներ Ս. Գասպարյանը, Ս. Շմալոնյանը: Այս բոլոր անձնավորություններին հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

Ներկա աշխատությունը չի կարող գերծ լինել թերություններից ու վրիպումներից, որոնց վերաբերյալ ամեն մի բարեկամական դիտողություն ու ֆենադատություն հեղինակը կընդունի սիրով: Մասնավորապես շատ ցանկալի կլինեն նշումներ կատարել աղյուսակներում բերված տվյալների մեջ³, այլև հայ բարբառագիտական ապասի կազմման աշխատանքներին և հայ բարբառների ուսումնասիրությանը նպաստելու նպատակով նյութեր ուղարկել ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ՝ ըստ աշխատության մեջ տրված հրնշյունական ու ֆերականական հարցաթերթիկների և բառային ցուցակների: Քանի որ լեզվի ինստիտուտը ձեռնարկել է բարբառագիտական (գավառական) բառարան կազմելու աշխատանքները, ուստի դրան մեծապես նպաստած կլինեն նաև այն բոլոր նախանձախնդիր անձնավորությունները, որոնք կգրանցեն բառարաններում չարձանագրված բարբառային բառեր և դրանք կուղարկեն լեզվի ինստիտուտ:

3 Սխալները կարող են հետևանք լինել ոչ միայն օբյեկտի անբավարար իմացության, այլև աղյուսակները փոխելու և ընդօրինակելու ընթացքում հնարավոր անուշադրության:

Ա. Ռ. Ա. ՋԻՆՆՈՎՈՎ

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱԼ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՓԵՍ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԴԻՍՑԻՊԼԻՆ

Ձեռնարկելով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը ըստ նրանց հնչյունական, քերականական և բառային հիմնական ռուանձնահատկությունների՝ հեղինակը սկզբնապես նպատակ էր դրել հայ բարբառների նկատմամբ պարզապես կիրառելու լեզվաբանական աշխարհագրության սկզբունքներն ու մեթոդները (մասնավորապես այսպես կոչված զուգաբանությունների՝ իզոգլոսների, մեթոդը), ինչպես որ դրանք մեկնաբանվում են սովետական լեզվաբանության մեջ՝ այսինքն՝ առանց ծայրահեղությունների, առանց զուգաբանությունները ֆետիշացնող և առանձին բարբառների գոյությունը ժխտող զանազան մեկնաբանությունների։ Սակառնար հայ բարբառագիտական ատլասի կազմման յուրատեսակ նախափորձ, կնպաստե՞ր հայ բարբառները ավելի մեծ մասշտաբով նկարագրելու և քարտեզագրելու գործին։ Սակայն աշխատանքի ընթացքում պարզվեց, որ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների նույնական կիրառումը հայերենի նկատմամբ նախ՝ կապված է որոշակի դժվարությունների հետ, որովհետև բնակչության պարբերական տեղաշարժերը խախտել են բարբառային հատկանիշների տեղաբաշխման բնական սահմանները, և երկրորդ՝ չեն տալիս բարբառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշներ։ Ինչպես հայտնի է, լեզվաբանական աշխարհագրությունը կամ, ինչպես ոմանք կոչում են (նկատի ունենալով նրա սկզբունքների կիրառումը միայն բարբառագիտության մեջ), բարբառագրությունը բարբառային կենտրոնները և սահմանները որոշում է ըստ քարտեզի վրա տարված զուգաբանական (իզոգլոսային) գծերի խտություն և նոսրություն

աստիճանի: Հասկանալի է, որ այս դեպքում լիովին չի ապահովվում բարբառային միավորների առանձնացման օբյեկտիվությունը, և անհրաժեշտ չափանիշներ չեն տրվում դասակարգման ավելի մեծ մանրամասնության, այսինքն՝ այնպիսի միավորների առանձնացման համար, ինչպիսիք են բարբառների խմբերը, ենթախմբերը, ենթաբարբառները, խոսվածքները: Այսպիսով մի կողմից՝ ուսումնասիրության առարկայի բնույթը, մյուս կողմից՝ բարբառների փոխհարաբերության պատկերը ավելի որոշակիորեն և ավելի տարբերակված կերպով արտացոլելու ձգտումը հեղինակին հանգեցրին բարբառագիտական մի նոր դիսցիպլինի հիմնադրմանը, որ նա պայմանականորեն կոչում է վիճակագրական բարբառագիտություն¹: Վիճակագրական բարբառագիտությունը բարբառագիտական մյուս դիսցիպլիններից՝ նկարագրական բարբառագիտությունից և լեզվաբանական աշխարհագրությունից (բարբառագրությունից) ավելի մոտ է երկրորդին, որի հետ համընկնում է իր խնդիրներով ու նպատակներով և տարբերվում կիրառած մեթոդներով: Վիճակագրական բարբառագիտության հիմնական նպատակը ևս բարբառների փոխհարաբերության որոշումը և բարբառային միավորների դասակարգումն է: Սակայն այս դեպքում լեզվաբանական աշխարհագրությունը դիմում է քարտեզներին և դրանց վրա տարածված զուգաբանական (իզոգլոսային) գծերին, իսկ վիճակագրական բարբառագիտությունը՝ աղյուսակներին և բարբառային ընդհանրությունների ու տարբերությունների թվային նշանակմանը՝ համապատասխան վիճակագրական հաշվումներով: Այս դեպքում բարբառային վիճակագրությունը հնարավորություն է տալիս հասնել դասակարգման ավելի մեծ ճշգրտության և օբյեկտիվության, քան այդ ի վիճակի է անել լեզվաբանական աշխարհագրությունը:

Եթե բարբառագիտական քարտեզը ներկայացնում է բարբառների տարածման բնական պատկերի մոդելը, ապա բարբառա-վիճակագրական աղյուսակը քարտեզի մոդելն է, այսինքն՝ մոդելի մոդել: Այլ կերպ ասած՝ աղյուսակի իդեալը քարտեզն է, քարտեզինը՝ օբյեկտը: Աղյուսակները գիշում են քարտեզներին նրանով, որ վերջիններիս վրա զուգաբանական գծերը գնում են

¹ 1969 թ. համամիութենական բարբառագիտական կոնֆերենցիայում կարդացած մեր ղեկուցման թեզիսներում այն կոչել էինք բարբառային վիճակագրություն, բայց հետո, կոնֆերենցիայի մասնակիցների հավանությամբ, նպատակահարմար գտանք վերանվանել ներկա ձևով:

տարբեր ուղղություններով՝ ընդօրինակելով բարբառային երևույթների աշխարհագրական տարածման իրական պատկերը, մինչդեռ աղյուսակներում բարբառային երևույթների նշանակումը հնարավոր է մեկ ուղղությամբ, մեր աղյուսակներում՝ ձախից աջ: Սակայն աղյուսակները քարտեզների նկատմամբ ունեն այն առավելությունները, որ նրանք նախ՝ հնշտացնում են բարբառային երևույթների տարածման աստիճանի որոշումը՝ թվային համապատասխան նշանակումներով, երկրորդ՝ հնարավորություն են տալիս բարբառային միավորների տեղափոխության միջոցով վերականգնելու բնակչության տեղաշարժերի հետևանքով խախտված սկզբնական անընդհատությունը, երրորդ՝ օգնում են լուծելու բարբառների «մաքրության», տվյալ գրական լեզվին նրանց մերձավորության և գրական լեզվի բարբառային հիմքի հարցերը:

Աղյուսակն այնքան ավելի ճիշտ կարտացոլի բարբառների փոխհարաբերության պատկերը, որքան անցումները նոր հատկանիշների աստիճանաբար կատարվեն, ինչպես այդ տեղի ունի իրականում: Պատահական համընկումները կամ օտար ազդեցություններով պայմանավորված ընդհանուր գծերը (հատկանիշները) կարող են տալ պլյուսների կամ մինուսների ընդհատվող շարքեր: Սակայն ընդհատական գծերը (քարտեզի վրա) և շարքերը (աղյուսակում) կարող են ստացվել ոչ միայն պատահական համընկումների կամ, աղյուսակի դեպքում, նշանակման հնարավորությունների սահմանափակության, այլև բարբառախոս բնակչության պատմական տեղաշարժերի հետևանքով, եթե մենք նկատի ենք առնում համաժամանակյա տվյալ վիճակը: Վերականգնելով ընդհանրական գծերն ու շարքերը բարբառախոս կետերի տեղափոխությամբ՝ մենք կստանանք այն նախավիճակը, երբ տվյալ հատկանիշը բնութագրել է մերձավոր վայրերը: Ընդհանուր առմամբ զուգաբանական քարտեզներն ու աղյուսակները նպատակ ունեն պարզելու բարբառախոս վայրերի բնակչության պատմական տեղաշարժերը, նրանց պատմական ընդհանրությունները: Նշանակում է՝ զուգաբանական դասակարգման իդեալը աշխարհագրական դասակարգումն է ըստ պատմական հեռանկարի: Եթե զուտ աշխարհագրական դասակարգում (հետևաբար և ծագումնային) մերձավորությունը, գործում է զուտ համաժամանակյա մակարդակով, ապա զուգաբանականը ճշգրտում է այն, նկատի ունենում տարածամասնակյա գործոնը, վերականգնում լեզվական կամ բարբառային փոխհարաբերության

պատկերը ըստ իրական ծագումնային փոխհարաբերության և վերջի ի վերջո, ժողովրդի պատմության հետ ունեցած կապի:

Լեզվաբանական աշխարհագրության ելակետային հասկացությունը բարբառային զուգաբանությունն է (իզոգլոսը): Վիճակագրական բարբառագիտության մեջ մենք այն փոխարինում ենք բարբառային հատկանշի հասկացությամբ: Բարբառային զուգաբանությունը և բարբառային հատկանիշը փաստորեն միևնույն դենոտատի տարբեր նշանակումներ են: Առաջին դեպքում ընդգծվում է ընդհանրությունը, երկրորդ դեպքում՝ տարբերությունը: Բարբառային զուգաբանությունը վկայում է տվյալ բարբառային հատկանշի՝ մի շարք բնակավայրերի լեզվի համար ընդհանուր լինելու մասին: Բարբառային հատկանիշը վկայում է տվյալ բնակավայրերի լեզվի՝ մյուսներից ունեցած տվյալ տարբերության մասին:

Սկզբնապես նպատակ ունենալով հայոց լեզվի նկատմամբ կիրառելու լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները՝ հայ բարբառների՝ մեր կողմից տրվող դասակարգումը համապատասխանաբար մտադիր էինք կոչել զուգաբանական: Վերևում նշված շարժառիթներով մենք հետազայում որոշեցինք այն կոչել բազմահատկանիշ վիճակագրական դասակարգում:

2. ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԿԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽՆԵՐԸ

Հայ բարբառների ուսումնասիրությունը մեկուկես հազարամյակի պատմություն ունի: Այդ երկարատև ժամանակամիջոցում հայ բարբառագիտությունը անցել է զարգացման մի քանի շրջան:

1) Բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական (տեղիտոգիալ) դասակարգման փորձերի շրջան (V դարից մինչև XX դ. սկիզբը).—Այս շրջանն սկսվում է հայ լեզվաբանության առաջին իսկ քայլերից և տևում մինչև XX դ. սկիզբը: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության և մեկնաբանությունների մեջ արդեն նշվում են բարբառային որոշ առանձնահատկություններ: Հայ մեկնիչները հունարենի դորիական կոչված բարբառի փոխարեն, հիշատակում են Գորդայից կամ Կորճայից կոչված բարբառը:

VIII դ. քերական Ստեփանոս Սյունեցին տալիս է հայ բարբառների տեղիտոգիալ դասակարգման առաջին փորձը. «Եւ դար-

ձեռք գրո լեզուիդ գիտելն գրովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏալեցին և զԽոթայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկան, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաւափութեան. այլ և աւգտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գովով լեզուացն»¹:

Հայ բարբառների ուսումնասիրութեան մեջ որոշ աշխուժացում է նկատվում XVII—XVIII դդ.: Հայ բարբառների վերաբերյալ տեղեկութիւններ են պարունակում եվրոպացի հայագետներ Ֆրանցիսկոս Ռիվոլայի բառարանը (1633), որտեղ բերված են զգալի թվով բարբառային բառեր, և Յ. Յ. Շրյոդերի «Գանձ արամեան լեզուի» երկը (1711):

XIX դարը նշանավորվում է հայ բարբառների ուսումնասիրութեան և տերիտորիալ դասակարգման բնագավառում կատարված զգալի առաջընթացով: Առանձնապես հիշատակելի են Ա. Այտընյանի և Բ. Պատկանյանի աշխատութիւններում բերված տվյալները²: Ա. Այտընյանը տարբերում է բարբառների չորս խումբ՝ ա) միջին դավառական՝ Հայաստան (Վան, Միջագետք և այլն), բ) Կոստանդնուպոլիս—Փոքր Ասիա, գ) արևմտյան՝ Լեհաստան—Առտեալ, դ) արևելյան՝ Աստրախան—Պարսկաստան, որ «կծգվի

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, 1915, էջ 187: Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը հակված են այստեղ հիշատակած անունների տակ հասկանալու Հայաստանի տերիտորիայում խոսված լեզուները. հմտ. Н. Hübschmann, Armenische Grammatik, 1895, էջ 519 և Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2, Երևան, էջ 128—132: Այս հեղինակները հաշվի չեն առնում Սյունեցու երկի մեկնողական բնույթը և դրանից անհրաժեշտ եզրակացություններ չեն անում: Մասնավորապես պետք է նշել Հ. Աճառյանի ապացուցման մեջ թույլ տրված հետևյալ վրիպումները. խոսելով տվյալ տեքստում «զՄիջերկրային» և «զՈստանիկան» ձևերի հոգնակիության մասին՝ Հ. Աճառյանը մոռանում է, որ նախ՝ տվյալ ղեպում խոսքը բառերի մասին է և ոչ բարբառների (այսինքն՝ «բառ» գործածված է իր բուն և ոչ «բարբառ» իմաստով, թեև այդ իմաստն էլ հնարավոր է), երկրորդ՝ Սյունեցին շատ լավ տարբերում է շրջակա լեզուների և սեփական լեզվի բարբառների իմացությունը. քաղված հատվածից առաջ Սյունեցին գրում է հենց շրջակա լեզուների մասին. «Արդ լեզու ասլ, որ շուրջ զքե սահմանակից աշխարհք իցեն, գիտութիւն լեզուաց նոցա, վասն զի էլարի աւգտակարք են այս(ք) առ ստուգաբանութիւն», ապա միայն անցնում սեփական լեզվին՝ «զքո լեզուիդ գիտելն գրովանդակ բառսն զեզերականս»:

² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866: К. Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869.

Ռուսաստանն մինչև Հնդկաստան»։ Սրանցից առաջին երեքն Ա. Այտընյանը միավորում է և տարբերում արևելյանից՝ նշելով, որ այս երեքը ծագել են միևնույն հիմքից, մինչդեռ արևելյանի հիմքը տարբեր է։ Մատնանշվում են առաջին երեքի և արևելյան գավառական հնչյունական և ձևաբանական մի քանի կարևոր տարբերիչ հատկանիշներ, այդ թվում՝ այ, իս երկբարբառների փոփոխության, ներկայի, վաղակատարի, բացառականի կազմության տարբերությունները, այլև արևելյանում ներգոյականի առկայությունը։ Ք. Պատկանյանը տարբերում է արևելյան և արևմտյան բարբառախմբեր՝ դրանց գլխավոր տարբերիչները համարելով ներգոյականի առկայությունը կամ փոխարինումը մէջ-ով, ներկայի գերբայական կամ մասնիկավոր կազմությունը։ Ինչպես տեսնում ենք, Ա. Այտընյանի և Ք. Պատկանյանի տերիտորիալ խմբավորումների մեջ կարևոր տեղ է տրվում ձևաբանական հատկանիշներին, որոնք հաջորդ էտապում մղվում են առաջին պլանը։

2) Ձևաբանական դասակարգման սկզբունքի առաջադամն և տիրապետության շրջան (XX դ. սկզբներից մինչև 40-ական թվականների սկիզբը)։—Այս շրջանում, ի տարբերություն նախորդի, առաջին պլանի վրա է մղվում ձևաբանական սկզբունքը, և բարբառները խմբավորվում են ու անվանվում ըստ ձևաբանական հատկանիշների. իհարկե, ձևաբանական դասակարգումը հենվում է աշխարհագրական (տերիտորիալ) բաժանման վրա, բայց վերջինս ենթարկվում է առաջինին, և հիմք է ստեղծվում արդի բարբառների ավելի վաղ տերիտորիալ մերձավորությունը պարզելու համար։ Հայերենի ձևաբանական որոշակի դասակարգումը առաջին անգամ տալիս է Հ. Աճառյանը իր «Հայ բարբառների դասակարգումը» ֆրանսերեն (Classification des dialectes arméniens, Paris, 1909) և «Հայ բարբառագիտություն, ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911) աշխատություններում։ Հ. Աճառյանի արժանիքը ոչ միայն հայերենի ձևաբանական խմբերի ընդհանուր մատնանշումն է, այլև բազմաթիվ բնականավայրերի բարբառային դիրքի որոշումը և մի շարք բարբառների մեկագրական ուսումնասիրությունը։ Հ. Աճառյանը ըստ ներկայի կազմության եղանակի տարբերում է 3 հյուղ՝ ա) ում (Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամախիի, Աստրախանի, Զուղայի, Ագուլիսի), բ) կը (Կարնո, Մշո, Վանա, Ճիզրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Շապին-Կարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիո, Կիլիկիո, Սյուրիո, Արաբկիրի, Ակնա, Սեբաստիո, Եվդոկիո, Զմյուռնիո, Նիկոմիդիո, Պոլսո, Ռոստոսթոյի, Խրիմի, Ավստրո-Հուն-

գարիո) և գ) ել (Մարադայի, Խոյի, Արդվինի): Պետք է նշել, որ բարբառաճյուղերի դասակարգումը հիմնելով ձևաբանական որոշակի հատկանշի վրա՝ Հ. Աճառյանը չի տալիս այս կամ այն ճյուղի մեջ մտնող բարբառների տարբերման որոշակի շափանիշներ, այլ փաստորեն այստեղ առաջնորդվում է տեղիտորիալ հատկանշով՝ խառը կերպով այն զուգորդելով հնչյունական ու ձևաբանական ինչ-ինչ հատկանիշների հետ: Հ. Աճառյանի ձևաբանական սկզբունքի հիման վրա Ա. Ղարիբյանը իր «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ (1939) առանձնացնում է այսպես կոչված ս ճյուղը (Արդվին, Շատախ, Կարճեան, Մեղրի, Հագրութ, Ուրմիա):

3) Հնչյունաբանական դասակարգման սկզբունքի առաջադաման և ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման ու մանրամասնման շրջան (1940-ական թվականների սկզբից մինչև մեր օրերը).—Այս շրջանն սկսվում է հնչյունաբանական դասակարգման սկզբունքի առաջընթացով, որի կիրառմանը զուգընթաց հետագա քայլեր են անում բարբառների ձևաբանական դասակարգման ճշգրտման ու մանրամասնման հետ կապված ուսումնասիրությունները: Բարբառների ձևաբանական դասակարգման սկզբունքն առաջ է քաշում Ա. Ղարիբյանը իր «Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը» հոդվածում (Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 19, 1941, էջ 5—18), որին հաջորդում են նրա բարբառագիտական մի շարք աշխատությունները, հատկապես «Հայ բարբառագիտությունը» (Երևան, 1953): Հիմք ընդունելով գրաբարի բաղաձայնական համակարգը և նկատի ունենալով հատկապես հին հայերենի ձայնեղ և խուլ պայթականների ու կիսաշփականների՝ բարբառներում կրած փոփոխությունները՝ Ա. Ղարիբյանը պատմա-հնչյունաբանական սկզբունքով տարբերում է ա) առաջին տեղաշարժի ենթարկված (գրաբարի ձայնեղների դիմաց խուլեր ունեցող՝ բ, գ, դ, ձ, ջ > ա, տ, կ, ծ, ճ), բ) երկրորդ տեղաշարժի ենթարկված (ձայնեղների դիմաց շնչեղ ձայնեղներ և խուլերի դիմաց ձայնեղներ ունեցող՝ բ, գ, դ, ձ, ջ > ր, գ, դ, ձ, ջ > ա, տ, կ, ծ, ճ) և զ) անփոփոխ-գրաբարատիպ (ըստ բառակազմի դիրքի)³: Կիսապատմական-կիսաստատիկ սկզբունքով երկրորդ և եր-

³ Այս դեպքում գրաբարի ձայնեղների համար ենթադրվում է «մաքուր» (ոչ շնչեղ) արտասանություն:

քորդ խմբերի մեջ առանձնացվում են հենթախմբեր: Այսպիսով, ա) առաջին խումբը համարվում է երկաստիճան ձայնեղազուրկ՝ Աստարխան, Շամախի, Ղարաբաղ, Հադրութ, Շաղախ, Մարաղա, Ուրմիա, Խոյ, Վան, Մոկս (բ, գ, գ, ձ, ջ > պ, տ, կ, ծ, ճ, որի հետևանքով առկա են միայն խուլեր և շնչեղ խուլեր): բ) երկրորդ խմբի մեջ առանձնացվում է երեք հենթախումբ՝ երկաստիճան խլազուրկ՝ Պոլիս, Եվդոկիա, Ամասիա, Մարզպան, Սամսոն, Ղրիմ, Նոր-Նախիջևան, Տրապիզոն (պ, տ, կ, ծ, ճ > բ, գ, գ, ձ, ջ, որի հետևանքով առկա են միայն ձայնեղներ և շնչեղ խուլեր), եռաստիճան խլազուրկ՝ Համշեն, Սիրիա, Ակն, Արաբկիր, Հաջըն, Շապին-Կարահիսար, Խարբերդ-Երզնկա, Մուշավա (պ, տ, կ, ծ, ճ > բ, գ, գ, ձ, ջ և բ, գ, գ, ձ, ջ > բ', գ', գ', ձ', ջ', որի հետևանքով առկա են միայն շնչեղ ձայնեղներ, ձայնեղներ և շնչեղ խուլեր) և քառաստիճան՝ Կարին, Մուշ, Երևան, Նոր-Զուղա (բ, գ, գ, ձ, ջ > բ', գ', գ', ձ', ջ')⁴: գ) երրորդ խմբի մեջ առանձնացվում է երկու հենթախումբ՝ երկաստիճան խլազուրկ՝ Տիգրանակերտ, Մալաթիա, Ռոդոսթո, Նիկոմեդիա (բ, գ, գ, ձ, ջ > փ, բ, ք, ց, չ և պ, տ, կ, ծ, ճ > բ, գ, գ, ձ, ջ, որի հետևանքով առկա են միայն շնչեղ խուլեր և ձայնեղներ) և միջին հայերենի տիպի՝ Մարաշ, Ջնիթունի Շորվոյան թաղ (բ, գ, գ, ձ, ջ ≡ պ, տ, կ, ծ, ճ, որի հետևանքով առկա են ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր): դ) չորրորդ խումբը եռաստիճան-գրաբարատիպ է՝ Թբիլիսի, Մեղրի, Կարճևան, Արզվին⁵:

4 Ինչպես ցույց է տրված մեր հոգվածներից մեկում, այս առնվանումը ճիշտ չէ. եթե մյուս դեպքերում հաշվի է առնվում միայն բառասկզբի դիրքը, ապա այս դեպքում նկատի են առնվում նաև ոչ բառասկզբում հանդես եկող պարզ ձայնեղները: Այլ կերպ ասած՝ առնվանումը չի հենվում հնչյութաբանական շափանիշների վրա:

5 Ավելորդ չենք համարում նշել, որ կարելի է կատարել բարբառների զուտ ստատիկ-հնչյունաբանական դասակարգում: Եթե զանց առնենք «քառաստիճան» բաղաձայնական համակարգ ունեցող բարբառներում թյուրք-պարսկական նորագույն փոխառությունների հետևանքով բառասկզբի շնչեղ ձայնեղների հետ միասին նաև պարզ ձայնեղների հանդես գալու մասնակի փաստերը, ապա հաշվի առնելով միայն բառասկզբի դիրքը՝ ստատիկ վիճակով կարելի է առանձնացնել եռաստիճան և երկաստիճան տիպեր (խմբեր), ընդ որում եռաստիճան տիպի մեջ կատարելով են ա) խլազուրկ (բ', դ', գ', ձ', ջ', բ, գ, գ, ձ, ջ և փ, բ, ք, ց, չ ունեցող), բ) ձայնեղազուրկ (բ', դ', գ', ձ', ջ', պ, տ, կ, ծ, ճ և փ, բ, ք, ց, չ ունեցող) և գ) շնչեղ-ձայնեղազուրկ (բ, գ, գ, ձ, ջ, պ, տ, կ, ծ, ճ և փ, բ, ք, ց, չ ունեցող) հենթատիպեր, երկաստիճան խմբի մեջ՝ ա) խլազուրկ (բ, գ, գ, ձ, ջ և փ, բ, ք, ց, չ ունեցող) և բ) ձայնեղազուրկ (պ, տ, կ, ծ, ճ և փ, բ, ք, ց, չ ունեցող) հենթատիպեր:

Իր «Հայ բարբառագիտության» մեջ (1953) և հետագա մի շարք հոդվածներում Ա. Ղարիբյանը ճշգրտելով և լրացնելով հիշյալ դասակարգումը, միաժամանակ փորձում է արդի բարբառների բաղաձայնական համակարգերը անմիջապես կապել հնդեվրոպական վիճակի հետ և դրա հիման վրա ցույց տալ բարբառների առաջացման պատմական հաջորդականությունը: Ըստ նրա՝ կարելի է տարբերել բարբառային տարբերությունների առաջացման 4 փուլ. ա) հ.—ե. խուլերը վերածվում են շնչեղ խուլերի, ընդ որում շնչեղ ձայնեղների և ձայնեղները պահպանվում են (XV—VIII դդ. մ. թ. ա.). բ) ձայնեղները վերածվում են խուլերի, և առաջանում են այսպես կոչված քառաստիճան բարբառները (Արարատյան, Մշո, Կարնո) (VII—II դդ. մ. թ. ա.). գ) շնչեղ ձայնեղները վերածվում են ձայնեղների, և առաջանում է գրաբարի բաղաձայնական համակարգը. սրան հաջորդում է ձայնեղների հետագա խլացումը և երկաստիճան ձայնեղազուրկ համակարգի բարբառների առաջացումը. դ) վերջապես, բարբառների մի ուրիշ խումբ (Աղձնիքի և Չորրորդ Հայքի բարբառները) խուլերն էլ վերածում է շնչեղ խուլերի՝ անփոփոխ պահելով հ.—ե. ձայնեղները: Արտաքնապես կուռ թվացող այս մեկնաբանությունը, ինչպես ցույց է տրվել մի շարք լեզվաբանների կողմից, խոցելի է և՛ պատմական պայմանների անբավարար հաշվառման, և՛ հ.—ե. բաղաձայնական համակարգի առանձնահատկությունների պարզունակ պատկերացման, և՛ հայերենի բարբառների առանձնահատկությունների սխեմատացման ու միակողմանի ներկայացման առումով⁶:

Այս շրջանում հայ բարբառների ձևաբանական դասակարգման մեջ հանդես է գալիս տիպաբանական մոտեցում: Բարբառային նոր առանձնահատկությունների բացահայտումը և բարբառային նոր միավորների նկարագրությունը հիմք են տալիս ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման, մանրամասնման ու լրացման համար: 1953 թ. Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտության» մեջ տարբերում է հայ բարբառների 3 խումբ և 7 ճյուղ. թեև հստակորեն չի նշվում, բայց ակնհայտ է, որ խմբերի առանձնացման համար հիմք է ծառայում տիպաբանական, ճյուղերի առանձնացման համար՝ նյութական ընդհանրությունը: Ըստ ներկայի և անցյալի անկատարի կազմության եղանակի տարբերվում են

6 Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1958—60 թթ., «Вопросы языкознания», 1959—1962 թթ.:

ղերբայավոր, մասնիկավոր ու գրաբարակերպ խմբեր, ընդ որում ղերբայավոր խմբին հատկացվում է երեք՝ ում, ւ, լ, մասնիկավոր խմբին՝ երեք՝ կր, կա, հա և գրաբարակերպ խմբին՝ մեկ ճյուղառանձնացվում են նաև միջճյուղային բարբառներ (Թբիլիսիի և Արեշ-Հավարիկի)։ Իր «Մեղրու բարբառը» մենագրության վերջում (1954 թ.) է. Աղայանը տալիս է մոտավորապես նույն դասակարգումը՝ այն Խարբերությանը, որ ա) միացնում է գրաբարակերպ ու մասնիկավոր տիպերը և տարբերում գրաբարակերպ-մասնիկավոր ու ղերբայական կազմությանը ներկայով բարբառներ, բ) Ա. Ղարիբյանի առանձնացրած «խմբերը» կոչում է «ճյուղեր», իսկ «ճյուղերը»՝ «ենթաճյուղեր»։

«Հայ բարբառագիտության» մեջ Ա. Ղարիբյանը ում ճյուղին հատկացնում է 7 բարբառ (Արարատյան կամ Երևանի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Նոր Զուղայի, Ագուլիսի և, վերապահությանը, Թավրիզ-Մոզդոկի), ւ ճյուղին՝ 8 բարբառ (Ղարաբաղի, Արզվինի, Մեղրու, Կարճեանի, Հադրութի, Դղմարի, Քեյվան-Շաղախի և Ուրմիայի), լ ճյուղին՝ 2 բարբառ (Մարաղայի և Խոյի), կր ճյուղին՝ 24 բարբառ (Կարնո, Մշո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Օրդուի, Նիկոմեդիայի, Եվդոկիայի, Շապին-Կարահասարի, Մալաթիայի, Հաջընի, Զմյուռնիայի, Պոլսի, Ռոդոսթոյի, Նոր-Նախիջևանի, Վանի, Դիարբեկի, Ողմի, Մոկսի, Տրապիզոնի, Համշենի, Սյուրիայի, Ակնա, Առդեալի և Սեբաստիայի), կա ճյուղին՝ 5 բարբառ (Ամասիայի, Զեյթունի, Բեյլանի, Սվեդիայի և Մարաշի), հա ճյուղին՝ 2 բարբառ (Քեսաբի և Արաբկիրի), գրաբարատիպ ճյուղին՝ 1 բարբառ (Խոտորջուրի)։ Թբիլիսիի և Արեշ-Հավարիկի բարբառները համարվում են միջճյուղային. ըստ Ա. Ղարիբյանի՝ առաջինը զուգորդում է ում և կր ճյուղերի, երկրորդը՝ ում և ւ ճյուղերի հատկանիշները։ Այսպիսով, առանձնացվում է ընդամենը 51 բարբառ։ Հետագայում Ա. Ղարիբյանը նշում է հա ճյուղի երկու (Արամոյի և Եվդոկիայի) և կր ճյուղի մեկ բարբառ ևս (Քաբուսիեի)։

Առանձին բարբառագիտական մենագրությունների հեղինակների բարբառ են կոչում նաև այնպիսի միավորներ, որոնք Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի կողմից դիտվում են որպես ենթաբարբառներ կամ նույնիսկ խոսվածքներ. հմմտ. Վ. Ս. Պետոյան, «Սասունի բարբառը» (Երևան, 1954), Ս. Անձոսյան, «Կեսարիայի բար-

⁷ Ա. Ս. Ղարիբյան, Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958:

բառը» (Երևան, 1961), Մ. Հ. Մուրադյան, «Շատախի բարբառ» (Երևան, 1962), Ն. Ա. Վարդապետյան, «Սյունիքի բարբառը» (գիսերտացիա, ձեռագիր, ավտոռեֆերատը՝ «Сюникский диалект», Երևան, 1962), Հ. Դ. Մուրադյան, «Վաքափաբերդի բարբառը» (Երևան, 1967) և այլն: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ չկան այս կամ այն բարբառը առանձնացնելու որոշակի չափանիշներ, այլև նշվում են ներկայի և անցյալ անկատարի կազմության այնպիսի առանձնահատկություններ, որոնք հանգեցնում են «միջճյուղային» և «միջխմբային» բարբառների առանձնացմանը: Այս բոլորը հիմք են տալիս միայն ձևաբանական սկզբունքի վրա հենվող դասակարգման վերանայման, դասակարգման համար ավելի մեծ թվով հատկանիշների օգտագործման, այլ կերպ ասած՝ գուգաբանական կամ բաղմահատկանիշ (լեզվաբանական աշխարհագրության և վիճակագրական բարբառագիտության սկզբունքներով) դասակարգում կատարելու համար:

4. Բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի առաջադման և բարբառագիտական ատլասի նախապատրաստման շրջան.—Այս շրջանը նոր է միայն սկսվում: Դրա առաջին արտահայտություններից մեկը կարելի է համարել սույն աշխատության հեղինակի նախաձեռնությամբ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների կողմից Արարատյան բարբառի խոսվածքների բաղմակողմանի ուսումնասիրությունը, որ սկսվել է 1964 թ.: Բարբառագիտական արշավախմբեր են ուղարկվել ՀՍՍՀ հարյուրավոր վայրեր, կատարվել է առանձին խոսվածքների նկարագրությունը, քալլեր են արվել դրանց փորձառական ուսումնասիրության ուղղությամբ:

Հայ բարբառների բաղմահատկանիշ դասակարգման սկզբունքի կիրառմանը նախորդում են հայ բարբառագիտության արդի վիճակի քննադատման և ծրագրային խնդիրների առաջադման մի շարք փորձեր: Մասնավորապես տողերիս գրողը հայոց լեզվի պատմությանը նվիրած իր ուսումնասիրություններում և բարբառագիտական հոգվածներում առաջ է քաշում տեսական մի շարք սկզբունքներ և կատարում մի շարք ճշտումներ, որոնք կարևոր են հայ բարբառների գուգաբանական ուսումնասիրությունը և բաղմահատկանիշ դասակարգումը հիմնավորելու համար⁸:

8 Զուգաբանական կամ բաղմահատկանիշ դասակարգման դեպքում բնականաբար ենթադրվում է, որ բոլոր բարբառներն ու խոսվածքները ունեն միջակա (անցողիկ) դժբեր:

9 «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը», ՊՅԳԱ, 57, 1, 1956 (վերամշակված տարբերակը՝ «Հայոց լեզվի զարգացման փուլերը», Երևան,

1) Զեաբանական դասակարգման սկզբունքի փոխարեն հեղինակն առաջ է քաշում այսպես կոչված պատմա-ձևաբանական սկզբունքը, որի դեպքում նկատի է առնվում ներկայի կազմությանը մասնակցող նախամասնիկների և դերբայական մասնիկների ելակետային վիճակը: Պատմականության պահանջը նախորդների մոտ բավարար չափով հաշվի չի առնվել: Ինչպես հայտնի է, ճյուղերը կոչվում են մի կողմից ում, մյուս կողմից՝ կը, ս, թեև կը-ն պատմականորեն հանգում է կու-ին, ս-ն՝ լիս-ին, ընդ որում երկուսն էլ հանդես են գալիս հնչյունական զգալի տարբերություններով. միաժամանակ նշվում է, որ պատմա-ձևաբանական դասակարգման դեպքում հայ բարբառների ձևաբանական (ձևատիպաբանական) դասակարգման երկու խմբերը (ըստ հեղինակի անվանման՝ գրաբարատիպ-նախամասնիկավոր և դերբայական) համընկնում են պատմա-աշխարհագրական դասակարգման ավանդական արևմտյան և արևելյան խմբերի հետ¹⁰: Այսպիսով ձևաբանական դասակարգմանը պատմականորեն հատկացվում է տերիտորիալ-աշխարհագրական հիմք¹¹:

2) Հայտնվում է այն միտքը, որ հնչյունական դասակարգումը հիմք է տալիս հատկապես մինչև 11-րդ դարն ընկած շրջանի, ձևաբանական դասակարգումը՝ 11-րդ դարից հետո հանդես եկող բարբառային էական տարբերությունները հասկանալու և ներկայացնելու համար: Այլ կերպ ասած՝ նշվում է, որ հնչյունական ու բառային տարբերությունների վրա միջին շրջանի սկզբներից մակաշերտվել են ձևաբանական հիմնական տարբերությունները, թեև շարունակվել է նաև հնչյունական և բառապաշարային տարբերությունների խորացման պրոցեսը:

3) Նշվում է մեր բարբառագիտական աշխատությունների անբավարար պատմականությունը կամ, ավելի ճիշտ, դրանց մեջ քննության համաժամանակյա և տարաժամանակյա սկզբունքների

1964). «Հայ լեզվաբանությունը և հայ բարբառների ծագման հարցը», ՊՅՀ, 1959, № 2—3. «К вопросу о происхождении консонантизма армянских диалектов», ВЯ, 1960, № 6:

10 Հմմտ. «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը», էջ 86 և «Հայոց լեզվի դարգացման փուլերը», էջ 50—51, Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, էջ 315:

11 Փիլիսոփայորեն արտահայտված՝ աշխարհագրական դասակարգումը ներկայացնելով որպես դրույթ (թեզիս)՝ ձևաբանականի դեպքում մենք կունենանք հակադրույթ (անտիթեզիս), բազմահատկանիշի (զուգաբանականի) դեպքում՝ համադրույթ (սինթեզիս):

շփոթումը: Հնչյունաբանությունը հայ բարբառագիտական աշխատություններում սովորաբար կառուցվում է պատմական, ձևաբանությունը՝ ստատիկ պլանով:

4) Նշվում է եղած դասակարգումների միակողմանիությունը, որի հետևանքով այս կամ այն բարբառի ծագումը որոշելու համար հիմք է ընդունվում ոչ թե նրա հատկանիշների ամբողջությունը, այլ որևէ հատկանիշ՝ հնչյունական կամ ձևաբանական: Այսպես, Հ. Աճառյանը, հենվելով այն փաստի վրա, որ ձայնեղների խլացման երևույթն ընդգրկում է ասորական, հունական և պարսկական, բայց ոչ թյուրքական փոխառությունները, գրում է. «Ձայնափոխության այս վանազանությունը ցույց է տալիս, որ օրենքը գործել է թուրքերի Հայաստան գալուց առաջ, և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարուն»¹²: Իբրև առարկություն կարելի է նշել, որ բերված փաստը խոսում է բարբառային տվյալ երևույթի (հատկանշի, զուգաբանության) ծագման ժամանակի, բայց ոչ Ղարաբաղի բարբառի ծագման մասին, բարբառ, որ բնութագրվում է զուգաբանությունների մի ամբողջ ցանցով: Այս նույն ձևով էլ Ա. Ղարիբջանը հայ բարբառների ծագման ժամանակը փորձում է պարզել միայն բաղաձայնների կրած փոփոխությունների հիման վրա¹³: Մինչդեռ «ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները»¹⁴:

5) Այս բոլորը և մի շարք այլ նկատառումներ հեղինակին հանգեցնում են այն մտքին, որ հարկավոր է հայերենի նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, բարբառային միավորներն առանձնացնելիս էլնել ոչ թե մեկ կամ հրկու հատկանիշից, այլ հատկանիշների ամբողջությունից: Նշվում է, որ շատ բարբառներ, որոնք Ա. Ղարիբջանի և այլոց կողմից հատ-

¹² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2, էջ 380:

¹³ Ի միջի այլոց նշենք, որ շնչեղ խուլերը ծագում են շնչեղ ձայնեղներից և ոչ պարզ խուլերից, ինչպես կարծում է Ա. Ղարիբջանը:

¹⁴ Գ. Բ. Ջաճուկյան, Հայ բարբառագիտությունը և հայ բարբառների ծագման հարցը, էջ 311:

կացվում են այս կամ այն խմբին, ունեն անցումնային գծեր, իրենց տարբեր խոսվածքների բաղաձայնական առանձնահատկություններով առնչվում են մերթ մեկ, մերթ մյուս խմբի հետ: Ձի կարելի դատել բարբառային տարբերությունների մասին միայն բաղաձայնների հիման վրա: Արդեն այն փաստը, որ Ա. Ղարիբյանը ըստ բաղաձայնների առանձնացնում է բարբառների միայն 7 տիպ, բայց թվում է 57 բարբառ, խոսում է նրա սխեմայի պարզունակության մասին: Հայ բարբառները բնութագրվում են մեծաքանակ զուգաբանություններով (իզոգլոտներով), և միայն նրանց բազմակողմանի ուսումնասիրությունը կարող է հանգեցնել ճիշտ եզրակացությունների¹⁵: Որպես նախնական քայլ մեր նախաձեռնությամբ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնարկում է Արարատյան բարբառի խոսվածքների նկարագրության աշխատանքները, այլև սկսում հայ բարբառների ատլասի կազմման նախապատրաստումը:

6) Անցողակի կերպով մատնանշում են նաև հայ բարբառագիտության մեջ տեղ գտած մի շարք այլ թերություններ.

ա) Անբավարար է բաղաձայնների և ձայնավորների փոփոխությունների ժամանակագրական տարբերակումը. այսպես այ> է, այ> ա բարբառային փոփոխությունների հետ միասին բարբառագետների կողմից հավասարապես նշվում է ալ> օ փոփոխությունը, որ բարբառային տարբերակում չունի և հատուկ է բոլոր վայրերին:

բ) Լավ չեն տարբերակվում բարբառախոս վայրերի առանձնահատկությունները, երբեմն էլ կատարվում է արհեստական համահարթում: Ընդհանուր գծերը, որոնք անցումներ են նշանավորում, գրեթե միշտ բացատրում են որպես ազդեցության արդյունք:

¹⁵ Г. Б. Джаукян, К вопросу о происхождении консанантизма армянских диалектов, էջ 49: Հմմտ. հեղինակի առաջ քաշած սկզբունքի դնահատակներ «Теоретические проблемы советского языкознания» գրքում, Մոսկվա, 1968, էջ 110:

Ճիշտ է, իր «Հայ բարբառագիտության» մեջ (էջ 88) Ա. Ղարիբյանը խոսում է միևնույն ճյուղի բարբառները տարբերելու համար հատկանիշների կոմպլեքս հիմք ընդունելու մասին, բայց նախ՝ այդ սկզբունքը, այսպիսով, ենթադրում է ձևաբանական դասակարգմանը, երկրորդ՝ հատկանիշների թվարկումից այն կողմ չի անցնում և հարցի լուծման մեջ որոշակիություն չի մտցնում. «Այս 12 հատկանիշներից մի խումբ հատկանիշներով (հնչյունական և ձևաբանական) միմյանցից տարբերվող խոսվածքները ազատ կերպով կարելի է դիտել իրեւ առանձին բարբառներ», գրում է նա (էջ 90):

(հմմտ. միջբարձառի գաղափարի մեկնաբանությունը Ա. Ղարիբյանի, Ռ. Բաղդամյանի և ուրիշների աշխատություններում):

գ) Զի կատարվում հնչութաբանական վերլուծություն, շփոթվում են հնչույթներն ու հնչույթների դիրքային տարբերակները [հմմտ. քմայնացած բաղաձայնների ու ձայնավորների փոխհարաբերության մեջ ակոմոդացիայի (հարմարեցման) հնարավորության անտեսումը]:

դ) Ժամանակագրական շերտերի, այլև ձայնավորների ներդաշնակության, շեշտի հետ կապված թուլացման, հարմարեցման (ակոմոդացիայի) երևույթների անբավարար հաշվառման և ընդհանրապես լեզուն որպես փոխկապակցված տարրերի համակարգ չդիտելու հետևանքով բարբառագիտական երկերում միևնույն հնչյունի փոփոխությունները հաճախ հանդես են բերվում առանց ընդհանրացնող գծերի, մանրատված կերպով:

ե) Նկատի չի առնվում, որ ձայնավորների տարբերությունները երբեմն շատ ավելի անհասկանալի են դարձնում բարբառը, քան բաղաձայններինը. հմմտ. օրինակ, Ագուլիսի բարբառը:

Ամփոփելով հայ բարբառագիտության անցած ուղու արդյունքները հատկապես հայ բարբառների դասակարգման բնագավառում՝ կարելի է ասել, որ, այսպիսով, հանդես են եկել դասակարգման հետևյալ սկզբունքները:

1) Աշխարհագրական (տեքիտորիալ) սկզբունք.—Ըստ այս սկզբունքի հայ բարբառները սովորաբար խմբավորում են արեւելյան և արեւմտյան հատվածների, նրանց մեջ էլ առանձնացվում են տեքիտորիալ զանազան միավորներ, ընդ որում հաշվի են առնելվում Մեծ և Փոքր Հայքի հին և նոր տեքիտորիալ-վարչական բաժանումները: Հնչյունական և քերականական առանձնահատկությունները նշվում են ամեն մի տեքիտորիալ խմբի համար առանձին-առանձին:

2) Զեաբանական սկզբունք.—Զեաբանական սկզբունք ասելով հայ բարբառագիտության մեջ նեղ առումով հասկանում են սահմանական եղանակի ներկա ժամանակի կաղմության առանձնահատկությունների վրա հենվող դասակարգումը. այս սկզբունքն ունի երկու դրսևորում, որոնք կարելի է կոչել ձևատիպաբանական (ձևաբանական-տիպաբանական) և նյութաձևաբանական (բուն ձևաբանական). առաջին դեպքում նկատի է առնվում ներկայի կաղմության ձևաբանական տիպը՝ անկախ նյութական ձևավորումից, երկրորդ դեպքում՝ հենց նյութական ձևավորումը, այսինքն՝

տվյալ տիպը կադմող մասնիկների նյութական ընդհանրությունը. երկրորդ դրսևորումը փաստորեն հիմք է տալիս ըստ ձևատիպաբանական սկզբունքի կատարված դասակարգմամբ ստացված խմբերի մեջ ենթախմբերի կամ ճյուղերի առանձնացման համար, այսինքն՝ ենթարկվում է նրան: Ձևաբանականի մի տարբերակն է պատմա-ձևաբանական սկզբունքը:

3) Հնչյունաբանական սկզբունք.—Հնչյունաբանական սկզբունքը ասելով արդի հայ բարբառագիտության մեջ նեղ առումով հասկանում են բաղաձայնական համակարգի, հատկապես պայթական և կիսաշփական բաղաձայնների ձայնեղ ու խուլ տեսակների կրած փոփոխությունների վրա հենվող դասակարգումը: Այս սկզբունքը ևս ունի երկու դրսևորում՝ պատմա-հնչյունաբանական և ստատիկ-հնչյունաբանական կամ հնչյունատիպաբանական: Պատմա-հնչյունաբանական սկզբունքով բարբառները խմբավորվում են ըստ հին հայերենի (երբեմն էլ հնդեվրոպական վիճակի) համար ենթադրվող ձայնեղ և խուլ տիպերի կրած փոփոխությունների: Ստատիկ-հնչյունաբանական սկզբունքով բարբառները խմբավորվում են ըստ պայթական ու կիսաշփական բաղաձայնների՝ ի՛նչ տեսակներ ունենալու, առանց պատմական հիմքերի հաշվառման:

4) Ձուգաբանական-վիճակագրական սկզբունք.—Այս սկզբունքը ներկայացնում է նախորդ բոլոր սկզբունքների յուրատեսակ համադրությունը, որ հնարավորություն է տալիս խուսափելու միակողմանիությունից, բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ շփանիշներից և հընչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխել ըստ պատմա-աշխարհագրական սկզբունքների: Այս սկզբունքը նոր է միայն մտնում կիրառության մեջ, և ներկա աշխատությունը, ինչպես նշվել է, նրա գիտական հիմնավորման ու կիրառման փորձ է:

3. ԲԱՐԲԱՌԱՆՈՍ ՎԱՅՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման ճշգրտության և արդյունավետության համար էական նշանակություն ունի դասակարգման մեջ ընդգրկվող բարբառախոս միավորների (վայ-

բերի)¹ և բարբառային հատկանիշների ճիշտ ընտրութիւնը: Երկու դեպքում էլ հեղինակն առաջնորդվել է որոշակի սկզբունքներով: Ինքնին հասկանալի է, որ ամենամեծ ճշգրտութիւնը կունենա այն դասակարգումը, որ կընդգրկի բարբառախոս բոլոր վայրերը և բարբառային բոլոր տարբերակիչ հատկանիշները: Սակայն կարելի է ասել, որ այսպիսի դասակարգումը գործնականում գրեթե անիրագործելի է, տեսականորեն՝ ոչ-խրախուսելի: Այս դեպքում ջրնջվում է դասակարգման առարկայի և դասակարգման մոդելի սահմանը: մոդելը փաստորեն համընկնում է առարկայի (օբյեկտի) հետ, որ իր հերթին դժվարացնում է օբյեկտի ընկալումը մարդկանց կողմից, այսինքն՝ թուլացնում է մոդելի իմացական արժեքը: Իսկապես, ի՞նչ կստացվի, եթե գծենք հայախոս բոլոր վայրերն ընդգրկող քարտեզներ և յուրաքանչյուր հատկանշի համար առանձնացնենք մեկ քարտեզ՝ ըստ հնարավորին հաշվի առնելով արտասանական-հնչյունական, քերականական և բառային բոլոր տարբերութիւնները: Մնում է կատարել ընդգրկվող վայրերի և հատկանիշների որոշ ընտրութիւն:

Եթե մենք գործ ունենայինք այնպիսի լեզվի հետ, որը կրող բնակչութիւնը դարերի ընթացքում արմատական տեղաշարժերի չի ենթարկվել, և որի բարբառների տարբերութիւն (հասկանալիութիւն) աստիճանը գրեթե ուղիղ համեմատական է բնակավայրերի հեռավորութիւն աստիճանին, ապա աղյուսակի մեջ ընդգրկվող վայրերի ընտրութիւնը կկատարվեր շատ պարզ սկզբունքով. այդ լեզվի զբաղեցրած տարածութիւնն արտահայտող թիվը կբաժանեինք աղյուսակում ընդգրկվելիք վայրերի թվի վրա և կստանայինք այն քառակուսի վանդակները, որոնցից յուրաքանչյուրից կառնվեր մեկ (ըստ հնարավորին վանդակի կենտրոնին մոտ գտնվող) բնակավայր: Գործնականում կարելի կլիներ, հիմք ընդունելով երկու վանդակների կենտրոնների հեռավորութիւնը, սկսել երկրի կենտրոնից կամ սահմանային որևէ բնակավայրից և հաջորդաբար ընդ-

¹ Օբյեկտիվութիւն համար մենք այստեղ խոսում ենք ոչ թե բարբառների, ենթաբարբառների կամ խոսվածքների (որոնք դեռ պետք է որոշվեն), այլ բարբառախոս վայրերի մասին: Սակայն տվյալ դեպքում նախապես արդեն հայտնի է, որ ընտրված յուրաքանչյուր վայր մշուսներից տարբերվում է առնվազն մեկ-երկու հատկանշով և, հետևաբար, կարող է կոչվել խոսվածք: հետագա դասակարգմամբ խոսվածքները կարող են միավորվել ենթաբարբառների, բարբառների և բարբառախոսների մեջ, ընդ որում մեկ խոսվածքը եւ կարող է ինքնին ներկայացնել այդ միավորները, եթե ունի մշուսներից տարբեր հատկանիշների համապատասխան ցուցիչներ:

գրկել այդ հեռավորության վրա գտնվող բոլոր վայրերը: Սակայն հայոց լեզուն խիստ հեռու է բարբառների դասավորության այդպիսի իդեալական վիճակից, և մնում է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են բնակավայրի մեծությունը, վարչական ու տնտեսական կարևորությունը, պատմական հնությունը, արդի բարբառագիտության համար ունեցած նշանակությունը և նկարագրվածության աստիճանը:

Մասնավորելով մեր խոսքը՝ նշենք այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է հեղինակը բարբառախոս վայրերի ընտրության և դասավորության հարցում:

1. Անդրկովկասից դուրս գտնվող վայրերի համար հիմք է ընդունվել հայ բնակչության այն դասավորությունը, որ գոյություն է ունեցել մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Հայտնի է, որ թուրքական պետության կողմից կազմակերպված՝ հայերի մասսայական կոտորածն ու տեղահանությունը, այլև հայերի հետագա գաղթերը հայաբնակ զանազան վայրերից արմատապես խախտել են այդ դասավորությունը, և այժմ, իհարկե, չի կարելի բառիս բուն իմաստով խոսել Զմյուռնիայի, Տրապիզոնի կամ Զեյթունի բարբառների մասին, որովհետև դրանց կրողները մասամբ բնաջնջվել են, մասամբ էլ ցրվել են աշխարհով մեկ: Անդրկովկասի համար, որտեղ հայ բարբառների դասավորությունը համեմատաբար քիչ է խախտվել, հիմք է ընդունվել արդի վիճակը՝ այժմ ընդունված անվանումներով:

2. Քանի որ նախքան առաջին համաշխարհային պատերազմը եղած վիճակով իսկ մեծ չափով խախտված էր լեզվականորեն մերձավոր բարբառախոս վայրերի աշխարհագրական մերձավորությունը, ուստի նպատակահարմար չէ այս դեպքում կատարել բարբառախոս վայրերի զուտ աշխարհագրական դասակարգում: Նկատի ունենալով, որ Հ. Աճառյանն ընդհանրապես ճիշտ է նկատել տարբեր բարբառախոս վայրերի բարբառային մերձավորության աստիճանը, մենք զուտ աշխարհագրական սկզբունքով դասավորում ենք միայն բարբառային այն կենտրոնները, որոնց անունով Հ. Աճառյանը կոչել է խոսվածքների տվյալ խումբը, իսկ մնացած վայրերը, անկախ աշխարհագրական դիրքից, դասավորվում են այդ կենտրոնների մոտ: Այսպես, Լենինականը տրվում է Կարինի մոտ՝ ըստ բարբառային մերձավորության, իսկ Կարինը դասավորվում է բարբառային կենտրոնների շարքում՝ ըստ աշխարհագրական մերձավորության:

3. Բարբառային հիմնական կենտրոնները դասավորվում են արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ: Այս դեպքում որոշ շափով հաշվի է առնվում բարբառների ավանդական բաժանումը արևմտյանների և արևելյանների, որոնց մեջ էլ շարժումը կատարվում է հիշյալ սկզբունքով: Այս բաժանումը, ինչպես հայտնի է, բացի աշխարհագրականից, ունի նաև պատմա-ավանդական և լեզվաբանական հիմք, եթե նկատի առնենք արևմտահայ և արեւելահայ գրական լեզուների գոյությունը՝ ձևաբանական մի այնպիսի նկատելի տարբերությամբ, ինչպիսին ներկայի կազմությունն է:

4. Նկատի ունենալով, որ բարբառախոս վայրերը դասակարգված են ըստ բարբառային կենտրոնների, և որ հարկավոր է համեմատությամբ ակնառու դարձնել ավանդական-ձևաբանական և ղուգաբանական դասակարգումների տարբերությունը, յուրաքանչյուր բարբառախոս վայրի անվան դիմաց անկյունավոր (միջակ) փակագծերի մեջ տալիս ենք բարբառի ավանդական անվանումը՝ ըստ Աճառյանի: Անհրաժեշտ դեպքում կլոր փակագծերի մեջ տրվում են լրացուցիչ այլ տեղեկություններ՝ քիչ հայտնի գյուղերի համար՝ վարչա-տեղիտորիալ և աշխարհագրական շրջանի կամ բուն խոսվածքի անունը, որոշ դեպքերում՝ տվյալ վայրի մի այլ տարածված կամ այժմյան պաշտոնական անունը: Հասկանալի պատճառներով բարբառային կենտրոնները տրված են ըստ Հ. Աճառյանի, որովհետև նա համեմատաբար զերծ է ձևաբանական կամ հնչյունական դասակարգման համար հիմք ընդունված հատկանիշների ֆոնիշացումից, և մերձավորության աստիճանը որոշում է համեմատաբար ավելի օբյեկտիվորեն, նկատի ունենալով հատկանիշների որոշ ամբողջություն: Հ. Աճառյանը հետագա շատ բարբառագետների նկատմամբ ունի մի առավելություն ևս. նա գրեթե չի խախտում պատմական հեռանկարը հանուն ճյուղային պատկանելիությունը որոշելու օրիգինալության, մինչդեռ բարբառները հա և կա ճյուղերին հատկացնելիս ուրիշների կողմից հաճախ նկատի չի առնվում կը-ով ներկայի առկայության կամ, ասենք, հա-ի՝ պատմականորեն շարունակականի մասնիկ լինելու հանգամանքը (հմտ. Մալաթիայի բարբառը): Նորանոր բարբառներ հայտնագործելու, Հ. Աճառյանի կողմից իբրև ենթաբարբառ կամ խոսվածք որակված միավորները առանց բավարար հիմնավորման և միակողմանիորեն ինքնուրույն բարբառներ համարելու միտումը, կարելի է ասել, համատարած է: Քանի որ Հ. Աճառյանի

աշխատութիւններում բարբառների և ենթաբարբառների ու խոս-
վածքների առանձնացման տարբերութիւններ կան, ուստի հիմք
է ընդունվել «Հայոց լեզվի պատմութիւն» 2-րդ մասում տրված
դասակարգումը (1951 թ.):

5. Աղյուսակներում ընդգրկված են Հ. Աճառյանի և այլ բար-
բառագետների կողմից որպէս բարբառ որակված գրեթե բոլոր միա-
վորները: Եթե բարբառային կենտրոնը քիչ է հայտնի, հեղինակը
գերադասում է տալ տվյալ բարբառին հատկացվող՝ ավելի լավ
հայտնի վայր. այսպէս, Ղրիմի բարբառի համար տրվում են ոչ թե
բուն Ղրիմում գտնվող վայրեր, այլ ավելի լավ ուսումնասիրված
Նոր-Նախիջևանը և Ջալթերը: Ըստ հետաքննորին ընդգրկված են
Հ. Աճառյանի կողմից իբրև ենթաբարբառ որակված միավորները:
մանավանդ որ դրանցից շատերը հետագայում այլ բարբառա-
գետների կողմից դիտվել են իբրև ինքնուրույն բարբառներ: Ավելի
քիչ տեղ է տրված այսպէս կոչված խոսվածքներին. այս դեպքում
հաշվի է առնվում նրանց կարեւորութիւն, բարբառային հատկանիշ-
ների տարբերութիւնների և նկարագրվածութիւնն աստիճանը:
Վերջին հանգամանքը առաջ է բերում որոշ անհավասարաչափու-
թիւն: Ստացվում է մի պատկեր, երբ բարբառային որոշ կենտրոն-
ներ, բավականաչափ հայտնի չլինելով, ուղեկցվում են հարցա-
կաններով, մինչդեռ ոչ այնքան մեծ տարբերութիւններ ունեցող
վայրեր ներառվում են առանց հարցականների: Այս վիճակն ան-
խուսափելի է բարբառների նկարագրութիւնն ներկա աստիճանում:

6. Հաշվարկումները հեշտացնելու համար մենք ընդգրկված
վայրերի թիվը կլորացրել ենք՝ սահմանափակելով 120-ով: Այդ
120 վայրերը ըստ վերոհիշյալ սկզբունքների դասավորված են
հետևյալ կերպ. ա) 1—72-ը ընդգրկում են «արեւմտահայ» բար-
բառախոս վայրերը, ընդ որում 1—12-ը՝ այն վայրերը, որոնց
բարբառային կենտրոնները տեղադրված են Եվրոպայում և Արև-
մրտյան Փոքր Ասիայում, 13—40-ը՝ պատմական Մեծ Հայքի արև-
մրտյան և հարավ-արեւմտյան հարակից շրջաններում, այդ թվում՝
պատմական Փոքր Հայքում, Կիլիկիայում, Սիրիայում, 41—72-ը՝
պատմական Մեծ Հայքի արեւմտյան և հարավ-արեւմտյան շրջան-
ներում. բ) 73—120-ը ընդգրկում են «արեւելահայ» բարբառախոս
վայրերը, ընդ որում՝ 73—76-ը այն վայրերը՝ որոնց բարբառային
կենտրոնները տեղադրվում են Հյուսիսային Կովկասում և Վրացա-

կան ՍՍՀ-ում, 77—89-ը՝ Հայկական ՍՍՀ-ում, 90—116-ը՝ Ադրբեջանական ՍՍՀ-ում և 117—120-ը՝ Իրանում²:

1. Սուչավա [Առդեալի]
2. Կուտի [Առդեալի]
3. Նոր-Նախիջևան [Ղրիմի]
4. Ջալթըր (Նոր-Նախիջևանի գյուղերից) [Ղրիմի]
5. Ռոզոսթո (Թեքերդաղ) [Ռոզոսթոյի]
6. Պոլիս [Պոլսի]
7. Նիկոմեդիա (Իզմիտ) [Նիկոմեդիայի]
8. Ասլանբեկ [Նիկոմեդիայի]
9. Պարտիզակ [Նիկոմեդիայի]
10. Սյուլոզ [Նիկոմեդիայի]
11. Ադամադար [Նիկոմեդիայի]
12. Ջմյուռնիա (Իզմիր) [Ջմյուռնիայի]
13. Եվդոկիա (Թոքատ) [Եվդոկիայի]
14. Մարզվան [Եվդոկիայի]
15. Ամասիա [Ամասիայի]
16. Օրդու [Օրդուի]
17. Տրապիզոն [Տրապիզոնի]
18. Ջեֆանոս (Տրապիզոնի գյուղերից) [Համշենի]
19. Մալա [Համշենի]
20. Մարթիլ (Ջանիկ) [Համշենի]
21. Շապին-Կարահիսար [Շապին-Կարահիսարի]
22. Սեբաստիա [Սեբաստիայի]
23. Բրգնիկ [Սեբաստիայի]
24. Աբարկիր [Արաբկիրի]
25. Կյուրին [Արաբկիրի]
26. Էվերեկ (Կեսարիա) [Արաբկիրի]
27. Թոմարզա [Արաբկիրի]
28. Դարենդե [Արաբկիրի]
29. Ակն [Ակնի]
30. Մալաթիա [Մալաթիայի]
31. Սիվրիհիսար [Կիլիկիայի]

² Սովորաբար տրվում են բնակավայրերի անուններ, հազվադեպ միայն (համապատասխան տարբերակված տվյալների բացակայության դեպքում)՝ շրջանների (զավառներ) անուններ:

32. Հաջրն [Կիլիկիայի]
33. Զեյթուն [Կիլիկիայի]
34. Մարաշ [Կիլիկիայի]
35. Բեյլան [Կիլիկիայի]
36. Քեսաբ [Կիլիկիայի]
37. Հաջի-Հաբիբլի (Սվեդիա) [Սիրիայի]
38. Յողուն-Օլուկ (Սվեդիա) [Սիրիայի]
39. Քաբուսիե (Սվեդիա) [Սիրիայի]
40. Արամո [Սիրիայի]
41. Կարին [Կարնո]
42. Լենինական [Կարնո]
43. Բաբերդ [Կարնո]
44. Խնդածոր (Խոտորջուր) [Խոտորջուրի]
45. Խարբերդ [Խարբերդ-Երզնկայի]
46. Երզնկա [Խարբերդ-Երզնկայի]
47. Կամախ [Խարբերդ-Երզնկայի]
48. Հալվորի (Միրաքների) [Խարբերդ-Երզնկայի]
49. Ալթուն-Հուսեյն (Քղի) [Խարբերդ-Երզնկայի]
50. Իսմայիլ (Չարսանջակ) [Խարբերդ-Երզնկայի]
51. Չմշկածագ [Խարբերդ-Երզնկայի]
52. Տիգրանակերտ [Տիգրանակերտի]
53. Եդեսիա (Ուռնա) [Տիգրանակերտի]
54. Հազդո [Տիգրանակերտի]
55. Մուշ [Մշո]
56. Բուլանլը [Մշո]
57. Խնուա [Մշո]
58. Ալաշկերտ [Մշո]
59. Մանազկերտ [Մշո]
60. Այգետուն (Սասուն-Տալվորիկ) [Մշո]
61. Նիշ (Սասուն-Մոտկան) [Մշո]
62. Գեղիեգուզան (Սասուն) [Մշո]
63. Բաղեշ (Բիթլիս) [Մշո]
64. Խլաթ [Մշո]
65. Արճեշ [Մշո]
66. Արծկե [Մշո]
67. Բաստ (Խիզան-Սպարկերտ) [Մշո]
68. Վան [Վանի]
69. Շաստախ [Վանի]
70. Մոկս [Վանի]

71. Ողմ [Վանի]
72. Վարդենիս (Քասաղգեշար) (Դիադինի) [Վանի]
73. Աստրախան [Աստրախանի]
74. Թավրիզ [Աստրախանի]
75. Թբիլիսի [Թբիլիսի]
76. Արզվին [Արզվինի]
77. Երևան [Երևանի]
78. Քանաքեռ [Երևանի]
79. Աշտարակ [Երևանի]
80. Էջմիածին [Երևանի]
81. Կողբ [Երևանի]
82. Ղալաշա (Լոռի) [Երևանի]
83. Գյառգյառ (Լոռի) [Երևանի]
84. Աստապատ [Երևանի]
85. Կամո (Նոր Բայազետ) [Երևանի]
86. Մեղրի [Մեղրիի]
87. Կարճևան [Մեղրիի]
88. Վարճավար [Մեղրիի]
89. Գուդեմնիս [Մեղրիի]
90. Ագուլիս [Ագուլիսի]
91. Յդեա [Ագուլիսի]
92. Զուղա [Զուղաի]
93. Նոր-Զուղա [Զուղայի]
94. Լիվանիան (Ջահարմահալ) [Զուղայի]
95. Հաթերբ [Ղարաբաղի]
96. Ջանյաթաղ [Ղարաբաղի]
97. Մեհտիշեն [Ղարաբաղի]
98. Հարավ [Ղարաբաղի]
99. Շուշիքենդ [Ղարաբաղի]
100. Շուշի [Ղարաբաղի]
101. Կաղարծի [Ղարաբաղի]
102. Տումի [Ղարաբաղի]
103. Հադրութ [Ղարաբաղի]
104. Շադախ [Ղարաբաղի]
105. Բոլնիս-Խաշեն [Ղարաբաղի]
106. Ղազախ [Ղարաբաղի]
107. Թովուզ [Ղարաբաղի]
108. Կոզեն [Ղարաբաղի]

109. Կիրովաբադ [Ղարաբաղի]
110. Շահումյանովսկ [Ղարաբաղի]
111. Գորիս [Ղարաբաղի]
112. Խանազաճ (Ղարադաղ) [Ղարաբաղի]
113. Բուրդուր (Արևմտյան Փոքր Ասիա) [Ղարաբաղի]
114. Հավարիկ [Հավարիկի]
115. Շամախի [Շամախիի]
116. Քյարքյանջ [Շամախիի]
117. Խոյ [Խոյի]
118. Փայաջուկ (Սալմաստ) [Խոյի]
119. Ուրմիա [Խոյի]
120. Մարաղա [Մարաղայի]

4. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ (ԶՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ). ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Բարբառային հատկանիշների ընտրության ու նշանակման հարցում հեղինակն առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով:

1. Որպես բարբառների դասակարգման հիմք ընտրվել է 100 հատկանիշ, որոնք խմբավորվել են հետևյալ կերպ. 1) հնչյունական 50 հատկանիշ՝ ա) 25 բաղաձայնական և 25 ձայնավորային. 2) քերականական, մասնավորապես ձևաբանական 50 հատկանիշ՝ ա) 25 անվանական (գոյական, ածական, թվական անուններ և դերանուններ) և բ) 25 բայական: Հասկանալի է, որ թվերի այսպիսի ընտրությունը պատահական բնույթ չի կրում. այստեղ դեր է խաղացել ինչպես հաշվարկումը՝ (հատկապես տոկոսային հարաբերությունների հաշվարկումը) հեշտացնելու, այնպես էլ լեզվի կառուցվածքի տարբեր կողմերը ըստ հնարավորին միեկնույն հարաբերությամբ (համամասնորեն) ներկայացնելու ձգտումը: Սկզբնապես հեղինակն ընտրել էր 50 հատկանիշ՝ առանց տարբեր հատկանիշների այսպիսի համամասն ներկայացման: Հետագա աշխատանքն այս ուղղությամբ, հատկապես մեթոդը կատարելագործելու միտումը, վերջ ի վերջո հասցրեց հիշյալ թվային ցուցիչներին:

2. Քանի որ բարբառային հատկանիշները հարյուրով չեն սահմանափակվում, ուստի հարկավոր է դրանց միջև որոշ ընտրություն կատարել: Այս դեպքում չափանիշ են ծառայում հատկանիշ-

ների կարևորությունը և տարածվածությունը: Առաջինը պայմանավորված է հատկանիշների հարաբերությամբ դեպի լեզուն որպես կառուցվածքային ամբողջություն, որպես փոխկապակցված տարրերի համակարգ, երկրորդը՝ հատկանիշների հարաբերությամբ դեպի այդ լեզվի տարածական (տեղիտորիալ, բարբառային) տարբերակները: Հատկանշի կարևորությունը որոշվում է լեզվական կառուցվածքի մեջ նրա ունեցած տեսակարար կշռով: Ըստ կարևորության չափանշի գերադասություն է տրվում բարբառային այն հատկանշին, ա) որ ընդգրկում է բառերի և բառախմբակապակի տիպերի ըստ հնարավորին մեծ թիվ, բ) որով բնորոշվող միավորները ունեն ֆունկցիոնալ (հաղորդակցային) մեծ արժեք ու ծանրաբեռնվածություն (հետևաբար նաև մեծ հաճախականություն) և գ) որ ամենից ավելի է շեղվում լեզվի տվյալ համակարգից՝ հանդես գալով որպես մի այլ (հին, սկզբնավորվող, երկրորդային) համակարգի տարր: Ըստ տարածվածության չափանշի գերադասություն է տրվում այն հատկանշին, որ ընդգրկում է աղյուսակում տրված վայրերի $50 \pm 35\%$ -ը, այսինքն՝ ոչ պակաս, քան 15% -ը, և ոչ ավելի, քան 85% -ը: Ընտրության այս չափանիշը հիմք ունի $C_n^m = C_n^{n-m}$ բանաձևով պայմանավորված այն փաստը, ըստ որի համակցությունների (կոմբինացիաների) առավելագույն քանակը լինում է հատկանիշների առկայությունը և բացակայությունը արտահայտող պլյուսների և մինուսների հավասար քանակի դեպքում, այսինքն՝ այն դեպքում, երբ յուրաքանչյուր հատկանիշ ընդգրկում է աղյուսակում բերված վայրերի 50% -ը: Սակայն նկատի ունենալով բարբառների նկարագրվածության արդի վիճակը և հատկանիշների կարևորության չափանշի մտցրած սահմանափակումները՝ մենք ստիպված եղանք թույլատրել իդեալականից (50% -ից) զգալի շեղում ($\pm 35\%$): Ավելորդ ենք համարում նշել, որ բացառվում են ընդհանուր տարածում ունեցող, այսինքն՝ բոլոր վայրերն ընդգրկող հատկանիշները, որոնք հավելորդային կարգով բերվում են մեր բարբառագիտական բոլոր աշխատություններում (հմմտ. ալ > օ փոփոխությունը, եւ-ով հոգնակին և այլն): Այն դեպքերի համար, երբ կարևորության և տարածվածության չափանիշները չեն համընկնում, հեղինակն ընտրել է հետևյալ ելքը. ա) հատկանշի տարածվածության իդեալական ցուցչին մոտենալու դեպքում այն համարվել է կարևոր և մտցվել ընդհանուր ցուցակի մեջ (հմմտ. նգն, նկն > յն փոփոխությունը), բ) կարևոր, բայց սահմանափակ տարածում ունեցող հատկանիշները բերվել են 25-րդ (բաղաձայ-

նական), 50-րդ (ձայնավորային), 75-րդ (տեղանական) և 100-րդ (բայական) կետերի մեջ՝ $+^1$, $+^2$, $+^3 \dots$ տիպի նշումներով, ընդ որում դրանց ներքին տարբերությունները զնահատվում են կեսական միավորով. այդպիսիք են, օրինակ շշականների սուլական արտասանությունը (շ, ճ, չ, ժ, շ ~ ձ, ծ, ց, զ, ս), մշ-ով անորոշը, և (է) նախահավելվածով կատարյալը և այլն: Բացառությունները սակավադեպ են (8-րդ, 12-րդ, 27-րդ և 96-րդ կետերը):

3. Բարբառային հատկանիշներն առնվում են համաժամանակյա (սինխրոնիկ) և ստատիկ կտրվածքով՝ ըստ արդի վիճակի, թեև, իհարկե, այդ հատկանիշները կազմավորվել են պատմական տարբեր շրջաններում և ունեն ժամանակագրական տարբեր խորություն: Այսպիսով, նախ՝ մենք խուսափում ենք մեր բարբառագիտական աշխատություններին հատուկ երկվությունից՝ հնչյունաբանության տարածամանակյա (դիսխրոնիկ, պատմական՝ գրաբարի հետ համեմատած) և ձևաբանության համաժամանակյա (սինխրոնիկ, ստատիկ) քննության եղանակից. երկրորդ՝ չենք կանգնում երկընտրանքի առջև այն բոլոր դեպքերում, երբ հարկավոր է որոշել, թե երկու ձևերից ո՞րն է ավելի հին, ո՞րն է ծագում մյուսից: Այսպես, օրինակ, բարբառներում շփականների դիմաց երբեմն առկա են կիսաշփականներ (հմմտ. երագ-ի դիմաց էրած). քանի որ տիպաբանորեն ավելի տարածված է կիսաշփականներից շփականների առաջացումը, բայց խիստ հազվադեպ է հակառակ պրոցեսը, ուստի $q > \tilde{q}$ նշանակումը կարող է ճիշտ չարտացոլել իրերի վիճակը. հարցի լուծումը թողնելով ապագային՝ մենք այս դեպքում $>$ և $<$ («ծագում է» և «հանգում է») նշանների փոխարեն գործածում ենք ժամանակային շեղություն ունեցող $\sim$ նշանը՝ «համապատասխանում է, դիմաց առկա է» իմաստով: Այս բոլոր դեպքերում մենք դեմ ենք ոչ թե պատմական քննությանը, որ մեր աշխատության գլխավոր նպատակներից է, այլ քննության պատմական (տարածամանակյա) և ոչ-պատմական (համաժամանակյա) հայեցակետերի շփոթմանը: Համաժամանակյա քննությունը ավարտելուց հետո միայն մենք դիմում ենք ժամանակագրական շերտավորման (ստրատիֆիկացիայի)՝ ըստ տվյալ վիճակում բացահայտված հին երևույթների և ըստ պատմական այն փաս-

1 Բնականաբար մենք խուսափում ենք «խլացում», «շնչեղացում» տիպի պրոցեսային որակումներից՝ գործածելով «խլություն», «շնչեղություն» տիպի տերմիններ:

տերի, որոնք համընկնում են այդ երևույթների հետ, ընդ որում նպատակ է դրվում հարաբերական ժամանակագրությունը ըստ հնարավորին դարձնել բացարձակ:

4. Բարբառային հատկանիշները ներկայացնելիս բնականաբար պետք է ունենալ համեմատության որոշակի եզր: Հայ բարբառագիտության մեջ մինչև հիմա սովորաբար այդպիսի եզր է ծառայել գրաբարը, երբեմն էլ արևելահայ կամ արևմտահայ գրական լեզուն: Շատ հետազոտողների մոտ, ինչպես նշվել է, նկատելի է երկվություն. հնչյունական հատկանիշների համար սովորաբար համեմատության եզր է ծառայում գրաբարը, ձևաբանական հատկանիշների համար՝ արդի գրական լեզվի երկու տարբերակներից մեկը (արևելահայ հետազոտողների մոտ՝ արևելահայ գրական լեզուն, արևմտահայ, հետազոտողների մոտ՝ արևմտահայը): Առանձին դեպքերում համեմատության եզր են ծառայել առանձին բարբառային վիճակներ. այսպես, օրինակ, Հ. Աճառյանը ենթաբարբառները սովորաբար համեմատում է ոչ թե գրական լեզուների, այլ բարբառային կենտրոնների առանձնահատկությունների հետ. նկարագրելով Երևանի բարբառի հիմնական առանձնահատկությունները՝ նա նշում է Բայազետի և Աստապատի ենթաբարբառների՝ բուն Երևանի բարբառից (որպես էտալոնից, համեմատության եզրից) ունեցող շեղումները: Այսպիսով, ստացվում են տարբեր դեպքերի համար տարբեր էտալոններ, և կոչվում է մի կողմից՝ բարբառային միավորների առանձնացման ընդհանուր չափանիշը, մյուս կողմից՝ միևնույն միավորների տարբեր կողմերի նկարագրության միասնականությունը: Մնում է մեկ կըք՝ ընդհանուր դասակարգում կատարելիս բոլոր դեպքերում ունենալ համեմատության միևնույն էտալոնը: Բայց ո՞րը պետք է լինի այդ էտալոնը: Ինչպես նշվեց, մինչև այժմ հետազոտողները ելել են կոնկրետ լեզվավիճակներից՝ կոնկրետ գրական լեզուներից կամ բարբառներից: Իսկ ինչո՞վ բացատրել, որ նրանք գիտակցաբար կամ ինտուիցիայով փոխել են համեմատության եզրը: Բանն այն է, որ համեմատության միևնույն եզրը պահպանելիս մի կողմից՝ առաջանում է մեծ քանակությամբ հավելուրդային, մեծք կասեինք, ավելորդ ինֆորմացիա, մյուս կողմից՝ չեն բացահայտվում բարբառային միավորների հիմնական առանձնահատկությունները: Եվ իրոք, մեր բոլոր բարբառագիտական աշխատություններում, օրինակ, համեմատության համար առնվում է գրաբարը իր բոլոր երկբարբառներով, և նշվում է, որ աւ-ը նախաբաղաձայնական դիրքում փոխվել

է օ-ի. քանի որ այս փոփոխութիւնը կատարվել է բոլոր բարբառներում, ապա այդ հատկանշի թվարկումը դառնում է ավելորդ: Միաժամանակ, բարբառներն ունեն այնպիսի հատկանիշներ, որոնք չեն կարող լիովին բացահայտվել միայն գրաբարի հետ համեմատվելու միջոցով, այնինչ պատմական բարբառագիտութեան և բարբառների ներքին փոխհարաբերութիւնը պարզելու համար դրանք շատ կարևոր են: Ավելորդ չէ նշել նաև, որ գրաբարի ոչ բոլոր առանձնահատկութիւններն են լիովին պարզ. այսպես, մինչև այժմ բ, դ, գ, ձ, շ-ին վերագրվում էր ձայնեղ արտասանութիւն, մինչդեռ այժմ ենթադրվում է, գոնե որոշ տարածքների համար, շնչեղ-ձայնեղութիւն: Մնում է մեկ ելք՝ որոշել բարբառային հատկանիշները և դրանց հետևողական բացառմամբ հասնել մի վերացական «ոչ բարբառային» վիճակի, որ կբնութագրվի բոլոր դեպքերում որպես ոչ նշանակիր անդամ: Այդ վերացական «ոչ-բարբառային» վիճակը բոլոր 100 հատկանիշների համար կունենա միայն բացասական (դրո) նիշեր, իսկ զգալա՜ն չեզո՜ւնեղք և թաղ-բառները՝ նաև դրական նիշեր՝ 1-ից մինչև 100-ի սահմաններում (ավելի ճիշտ մի քանիսից մինչև մի քանի տասնյակ), ընդ որում գրական լեզուները՝ սովորաբար ավելի քիչ չափով: Բարբառներն աճքան ավելի մաքուր կլինեն, որքան ավելի կմոտենան «իդեալական վիճակին» և գրական լեզուներին (վերջիններին՝ ցուցիչների քանակով և բաշխմամբ): Սրանով կարելի կլինի որոշել այս կամ այն գրական լեզվի բարբառային հիմքի հարցը: Հնչյունական և քերականական կոնկրետ հատկանիշների ընտրութեան մասին կխոսենք համապատասխան գլուխներում:

5. Քանի որ հատկանշի առկայութիւնը նշանակվում է պլուսով (+), բացակայութիւնը՝ մինուսով (—), ուստի և աղյուսակում ընդգրկված յուրաքանչյուր վայր բնութագրվում է պլյուսների և մինուսների որոշ քանակով և դրանց որոշ տիպի բաշխմամբ: Այն դեպքերում, երբ տվյալ վայրում տվյալ հատկանիշը գտնվում է սկզբնավորման կամ մահացման պրոցեսում, չի ընդգրկում բոլոր կարևոր բառերը, նույն վայրում տալիս է զուգահեռ ձևեր և այլն, օգտագործվում են $\pm$ և $\mp$ նշանակումները: Եթե եղած տեքստերի կամ տեղեկատու աղբյուրի օգնութեամբ հնարավոր չի եղել ճշտել հատկանշի առկայութիւնը կամ բացակայութիւնը, հեղինակը վանդակը ազատ չի թողել, այլ ենթադրաբար, ըստ այս կամ այն բարբառային վայրի հետ տվյալ վայրի ունեցած մերձավորութեան վերաբերյալ տվյալների, գրել է —, +, $\pm$ կամ

$\mp$ նշաններից որևէ մեկը՝ օժտելով հարցականով: Որոշ հատկա-
 նիշների համար տրվում են ներքին տարբերակումներ. այս դեպ-
 քում պլյուսների հետ միասին օգտագործվում են նաև լրացուցիչ
 թվային նշանակումներ. այսպես, գրական լեզուների համե-
 մատության մեջ բառակազմում (ձայնավորից առաջ) լրացուցիչ շունչ
 ունենալու հատկանիշը նշանակվում է $\pm$ -ով (հմմտ. ինչ~հինչ),
 շնչի ձայնեղության դեպքում ($\int$ ՝ ձայնեղ հ) օգտագործվում է $+^1$
 նշանը: 25-րդ, 50-րդ, 75-րդ և 100-րդ կետերը և մի շարք այլ կե-
 տեր ունեն ներքին ավելի մանր տարբերակումներ՝ $+^1$, $+^2$,
 $+^3$... տիպի նշանակումներով: Կողմնորոշման նպատակով հեղի-
 նակը յուրաքանչյուր հատկանշի համար տալիս է բառային նմուշ-
 ներ (վերահասկիչ օրինակներ)՝ արդի գրական լեզվի ուղղագրու-
 թյամբ, ընդ որում անհրաժեշտ դեպքում տրվում են նաև գրաբար
 ձևերը: Հաշվման ավելի մեծ ճշգրտության հասնելու նպատակով
 կարելի էր $+$ նշանը գործածել տվյալ զուգաբանական հատկանշի՝
 միայն բոլոր նմուշների վրա տարածվելու դեպքում և մնացած
 դեպքերը համապատասխանաբար նշանակել $\pm$ և $\mp$ նշաններով
 (ըստ գերակշռության): Սակայն այս սկզբունքը հնարավոր չէ
 հետևողականորեն կիրառել, որովհետև կան դեպքեր, երբ տվյալ
 հատկանիշը վայրերի մեկ խմբում բնորոշ է մի խումբ բառերի, մի
 այլ խմբում՝ մի այլ խումբ բառերի համար. այսպես, հ-ն բառա-
 սկզբում ավելանում է երբեմն բոլորովին տարբեր բառերում. ո-ից
 առաջ հ-ն փոխվում է ֆ-ի արևելահայ (և արևմտահայ) մի շարք
 վայրերում հռդ, հռա, հռբ բառերում, մինչդեռ արևմտահայ որոշ
 վայրերում այդ փոփոխությունը հատուկ է միայն հռս, հռդ, հռե
 բառերին և այլն:

6. Բարբառախոս վայրերի՝ իրարից ունեցած տարբերություն-
 ները հաշվելիս ա) իրար դիմաց նույնարժեք նշանների ($+$ և $+$, $-$
 և $-$, $\mp$ և $\mp$, $\pm$ և $\pm$, ալլև $\mp$ և $\pm$) առկայությունը գնահատվում
 է զրո, բ) $-$ և $+$ (ալլև $-$ և $+^1$, $-$ և $+^2$ և ալլև) նշանների առկայու-
 թյունը՝ մեկ միավոր, գ) մնացած բոլոր տարբերությունները ($-$ և
 $\mp$, $-$ և $\pm$, $+$ և $\mp$, $+$ և $\pm$, $+$ և $+^1$, $+$ և $+^2$, $+^1$ և $+^2$ և ալլև)՝ կես
 միավոր: Տարբերությունների ընդհանուր քանակը հաշվելուց հետո
 հարցականով օժտված միևնույնների քանակը գումարվում է հիմնա-
 կան թվին և կազմում հնարավոր սխալի (շեղման) վերին շեմքը,
 իսկ պլյուսների քանակը հանվում է հիմնական թվից և կազմում
 հնարավոր սխալի (շեղման) ներքին շեմքը: Հարցականով օժտված
 $\mp$ և $\pm$ նշանակումները գնահատելիս հարկավոր է նկատի ունե-

նալ, որ հարցականը վերաբերում է ներքին նիշին, այսինքն՝ $\pm$? նշանի դեպքում հնարավոր է նաև —, իսկ $\pm$? նշանի դեպքում՝ նաև $+$ ²:

Աղյուսակները կազմվում են ըստ հատկանիշների տարբեր խմբերի՝ 4 աղյուսակ՝ յուրաքանչյուրում 25-ական հատկանիշ: Աղյուսակների ներքևում թողնված 26-րդ, 27-րդ և 28-րդ վանդակաշարքերում համապատասխանաբար նշվում են յուրաքանչյուր վայրի ունեցած պլյուսների ընդհանուր քանակը և այդ քանակի՝ հնարավոր սխալի վերին ու ներքին շեմքերից ունեցած տարբերությունները. այսպես, եթե տվյալ վայրը բնութագրվում է բաղաձայնական 5 հատկանշով (5 պլյուսով), ապա 26-րդ վանդակում տրվում է 5 թվանշանը. եթե միևնույնից երկուսը հարցականով են օժտված, ապա 27-րդ վանդակում տրվում է $+2$ թվանշանը, եթե պլյուսներից մեկն օժտված է հարցականով՝ -1 թվանշանը: Աղյուսակների վերջում բերված թվանշանները ցույց են տալիս յուրաքանչյուր հատկանշի ընդգրկած պլյուսների ընդհանուր քանակը:

7. Բարբառային հատկանիշները գերազանցապես նյութական-ժագումնաբանական են, այսինքն՝ հաշվի է առնվում նյութական ընդհանրությունը (հմմտ. վի-ով հոգնակին). սակայն տեղ է տրվում նաև տիպաբանական ընդհանրությանը (հմմտ. շարունակական ներկան): Բնականաբար գերակշռում են առաջին տիպի հատկանիշները, իսկ երկրորդները հաշվի են առնվում մանրատուից խուսափելու, մասամբ էլ տիպաբանական ընդհանրությունների աստիճանը պարզելու համար: Տիպաբանական հատկանիշները հաճախ զուգորդվում են նյութականների հետ և տարբերվում նրանցից ավելի լայն բնույթ ունենալով. մեկ տիպաբանական ընդհանրությունը սովորաբար կարող է հնթադրել տալ մի քանի նյութական ընդհանրություն. այսպես, օրինակ, դերբայակազմ ներկա ունենալը տիպաբանական հատկանիշ է, որ հնթադրել է տալիս ռւմ-ով, լիսւով կամ մաւն-ով ներկաների նյութական ընդհանրություն: Այս դեպքում տիպաբանական հատկանիշը ձեռք է բերում ժագումնաբանական արժեք. այդ ընդհանուր հատկանշով

2 Ինչպես տեսնում ենք, ներկա աշխատության մեջ ընդունված է հատկանիշների հավասար գնահատման սկզբունքը: Սակայն հնարավոր է հատկանիշներին ըստ նրանց կարևորության հատկացնել տարբեր արժեքներ և դրանով իսկ ավելի ճիշտ արտացոլել խոսվածքների իրական փոխհարաբերությունը: Այդ մասին ապագայում պետք է մտածել:

միավորվող խմբերը ոչ միայն տիպաբանորեն, այլև ժագումնաբանորեն իրար ավելի մոտ են (ներանց մեջ առկա են ներկայի արտահայտության միեւնույն ներքին միտումները, թեև նյութական տարբեր իրականացմամբ), քան ոչ դերբայական ներկայով բնութագրվողները. իհարկե, այս դեպքում պետք է նկատի ունենալ ոչ թե խմբերն ընդհանրապես՝ բոլոր հատկանիշներով, այլ միայն տրվյալ հատկանիշով՝ պատմական զարգացման մի որոշակի փուլում, ունեցած ընդհանրությամբ։ Սակայն ոչ միայն ոչ բոլոր տիպաբանական, այլև նույնիսկ ոչ բոլոր նյութական ընդհանրություններն են, որ ժագումնաբանական արժեք ունեն. դրանք կարող են լինել անկախ զարգացման արդյունք՝ մասամբ որպես տվյալ միավորների համար ընդհանուր ներքին միտման իրականացում, մասամբ որպես լեզուների համար սովորական զարգացման ուղի (տարածամանակյա հանրույթ՝ դիախրոնիկ ունիվերսալիա), մասամբ էլ որպես արտաքին ազդեցության արդյունք։ Այս բոլոր տիպերի տարբերակումը հեշտ չէ, մանավանդ որ երբեմն արտաքին ու ներքին գործոնները կարող են զուգակցվել։ Մեծ է արտաքին ազդեցության դերը հատկապես տիպաբանական ընդհանրության դեպքում։ Մենք տեղ ենք տվել հատկանիշների ընտրության մեջ նաև այս կարգի դեպքերին՝ նկատի ունենալով դրանց կշիռը բարբառների ձևավորման մեջ (հմտ. ձայնավորների ներդաշնակությունը)։

8. Բարբառների բուն դասակարգումը առայժմ կհենվի միայն հնչյունական և քերականական հատկանիշների վրա։ Բառաաշխարհագրությանը (բառային զուգաբանություններին) և բառավիճակագրությանը մենք կանդրադառնանք առանձին գլխում։

9. Բարբառային հատկանիշների հասկացությունը տվյալ աշխատության մեջ համարժեք չէ լեզվական հատկանիշների այն ըմբռնմանը, որ առկա է հեղինակի նախորդ աշխատություններում³։ Լեզվական հատկանիշի հասկացությունը այս աշխատություններում առնվում է ի հակադրություն լեզվական միավորների, ընդ որում հատկանիշների և դրանցով նկարագրվող միավորների քանակի միջև սահմանվում է որոշակի կախում. նշվում է, որ մեկ հատկանշով կարելի է նկարագրել 2, 2 հատկանշով՝ 3—4, 3 հատկանշով՝

3 Գ. Զահուկան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 21—23. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 106—110. Գ. Բ. Դժաւսյան, О соотношении лингвистических единиц и признаков их описания, „Оретические и практические вопросы преподавания иностранных языков“, М., 1969, էջ 7—22.

5—8, 4 հատկանշով՝ 9—16 միավոր և այլն: Հասկանալի է, որ առաջնորդվելով տնտեսման սկզբունքով՝ 4 տարբերակ ստանալու համար բավական է ունենալ երկու հատկանիշ. այսպես, ընտրելով շնչեղության և խլության հատկանիշները կարելի է ընդգրկել շընչեղ-ձայնեղ, շնչեղ-խուլ, ձայնեղ և խուլ բաղաձայնների խմբերը, այսինքն՝ Բ, Գ, Գ, ձ, ջ բաղաձայնների բարբառային բոլոր հնարավոր տարբերակները ըստ հետևյալ աղյուսակի (աղյուսակ 1)։

Աղյուսակ 1

Հատկանիշներ	Մ ի ա վ ո ռ ն ե ր			
	փ, ֆ, ք, ց, չ	պ, տ, կ, ծ, ճ	բ, դ, գ, ձ, ջ	բ, դ, գ, ձ, ջ
Խլություն	+	+	—	—
Շնչեղություն	+	—	+	—

Սակայն հեղինակը բարբառային հատկանիշներ ասելով նկատի չունի լեզվի կառուցվածքային հատկանիշները՝ ի տարբերություն լեզվական միավորների, այլ տվյալ բարբառային միավորներին՝ իրարից ունեցած ամեն կարգի տարբերությունները, որոնք կարող են արտահայտված լինել ոչ միայն կառուցվածքային հատկանիշներով, այլև լեզվական միավորներով. այլ կերպ ասած՝ լեզվական կառուցվածքի մեջ որոշակի հատկանիշներով բնութագրվող միավորը կարող է հանդես գալ որպես այդ կառուցվածքը մի այլ (մերձավոր կամ ոչ մերձավոր) կառուցվածքից տարբերող հատկանիշ: Եթե լեզվի կառուցվածքի ներքին նկարագրության դեպքում հատկանշային բնութագրման սկզբունքը տալիս է մեծ չափի տնտեսում, և նրա կիրառումը նպատակահարմար է ու անհրաժեշտ, ապա բարբառային տարբերությունների նկարագրության դեպքում մենք անհրաժեշտաբար ստիպված ենք դիմել ոչ հատկանշային բնութագրության. այսպես, փոխանակ դիմելու «ձայնեղ (բ, դ, գ, ձ, ջ) բաղաձայնների շնչեղություն» և բ) «ձայնեղ բաղաձայնների խլություն» բարբառային հատկանիշներին, որոնց դեպքում բարբառային հատկանիշ հասկացությունը կհամընկնի լեզվա-կառուցվածքային հատկանիշ հասկացության հետ, մենք դիմում ենք ա) «ձայնեղ բաղաձայնների դիմաց շնչեղ խուլեր», բ) «ձայնեղ բաղաձայնների դիմաց շնչեղ ձայնեղներ», գ) «ձայնեղ բաղաձայնների դիմաց պարզ խուլեր» բարբառային

հատկանիշներին, որոնց դեպքում «հատկանշի» երկու հասկացությունները չեն համընկնում. այսպիսի տարբերակման պատճառն այն է, որ միևնույն բարբառախոս փայրում կարող են լինել միաժամանակ երկու տիպերը (և՛ շնչեղ ձայնեղները, և՛ պարզ խուլները) որպես դիրքային (ինչպես Հաջընում) կամ աղատ տարբերակներ (ինչպես Չալթըրում), և առաջին ուղին ընտրելու դեպքում մենք այդ կարևոր տարբերությունը (երկվությունը) չենք թացահայտի:

5. ՀնգՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ (ԶՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Հայ բարբառների հնչյունական հատկանիշների (զուգաբանությունների) ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել նախ ըստ բաղաձայնների, ապա ըստ ձայնավորների (ներառյալ երկբարբառները):

Բարբառների բաղաձայնական համակարգերը բնորոշվում են հետևյալ կարևոր հատկանիշներով (զուգաբանություններով).

*1. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խուլություն (բ, դ, գ, ձ, ջ~փ, ք, ֆ, ց, չ). բան (փան)¹, բե-րան, բերել, դանակ, դառնալ, դեղին. գալ, գանգառ, գարուն. ձախ, ձմեռ(ն), ձու. ջարդել, ջնջել, ջուր.

*2. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-ձայնեղություն (բ, դ, գ, ձ, ջ~բ', դ', գ', ձ', ջ'). բան (բ'ան), բերան, բերել. դանակ, դառնալ, դեղին. գալ, գանգառ, գարուն. ձախ, ձմեռ(ն), ձու, ջարդել, ջնջել, ջուր.

*3. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն (բ, դ, գ, ձ, ջ~պ, տ, կ, ծ, ճ). բան (պան, պան, պեն, պոն), բերան, բերել. դանակ, դառնալ, դեղին. գալ, գանգառ, գարուն. ձախ, ձմեռ(ն), ձու. ջարդել, ջնջել, ջուր.

4. Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գտնվող ձայնեղ պայթականների և կիսաշփա-

¹ Այստեղ և հետագայում փակագծերում տրվում է տեսականորեն հնարավոր մեկ կամ մի քանի ձև՝ տեղեկատու անձերի կողմնորոշման համար, առանց հնչյունական բացարձակ ճշգրտության. բաղաձայնների համար օրինակներ տալիս հատուկ ուշադրություն չի դարձվում ձայնավորների փոփոխությունների վրա և ընդհակառակն: Հասկանալի է, որ բոլոր հնարավոր փոփոխությունների թվարկումը ավելորդ ծանրաբեռնվածություն կստեղծի և նպատակահարմար չէ: Անողանիշ են կրում այն կետերը, որոնց գոյությունը հնարավոր է համարվում հին շրջանում: Սրանց մասին ավելի հանգամանորեն կիսովի երկրորդ մասում:

կանների շնչեղ-խուլթյուն (բ, դ, գ, ձ, ջ~փ, ք, ֆ, ց, չ). ուրբ [~(վ)օրփ], բուրդ, երգ, բարձ, արջ. խաբել, դադար, բագավոր, օծիֆ, ոչիլ. գուր, բադ, սուգ, օձ, մեջ.

5. Բառասկզբի խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ն~բ, դ, գ, ձ, ջ). պառավ (~բառավ), պատ, պոշ. տալ, տարի, տուն. կաթ, կատու, կով. ծաղիկ, ծառ, ծով. ճակատ, ճանճ, ճաշ.

*6. Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ն~բ, դ, գ, ձ, ջ). կարպետ (~կարքեղ), գորտ, սիրտ, երկար, երկինք, արծաթ, գործ, կարն. շապիկ, ուտել, պակաս, մածուն, կոճակ. վիշապ, շատ, կրակ, լուծ, ման.

*7. Ոչ բառասկզբի շնչեղ-խուլների ապաշնչեղության առկայություն (փ, -ք, -ֆ, -ց, -չ~ -պ, -տ, -կ, -ծ, -ն). փրփուր (~փրպուր, պրպուր), թուղթ, աղֆատ, հարցնել, շունչ. թափել, թարփել, թեփել, աֆացի, փշել. թեփ, կաթ, ֆաղաֆ, բաց, խաշ.

*8. Քմայնացած հոնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում (զ', կ', ք'). 8 (+¹). զ', կ', ք'~շ, ն, չ. գարի (~կ'արի, կ'արի), գառ(ն), գլուխ. քաղաք, քառասուն, քար. թագ, հիմզ, ձագ. աղջիկ, ծաղիկ, շապիկ. գիրք, երեք, քաղաք, գերան, գինի, գիր. կեր, կերակուր, կես, քեռի, քերել, քիթ.

9. Նզն, նկն հնչյունակապակցությունների դիմաց յն (նզն, նկն~յն). կանգնել (~կայնել, գայնել, կայնիլ, գայնիլ). բնկնել, ցնկնել. եղունգն, ծունկն, ունկն.

10. Ջայնավորահարդ հոնալեզվային պայթականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (կ, ք~ն, հ', յ, դ, խ). բախլա (~բախլա, փախլա, բալլա), տկռա, մեկմեկ, մըկ-րատ, պսակվել. դեկտեմբեր, հոկտեմբեր. աքլոր, թաքցնել, տաքդեղ.

11. Տ-ի առնմանական փոփոխություն ն, ր, ո ձայնորդներից առաջ. 11 (+). տն~նն. գտնել (~գննել), մատներ, մատնոց, մտնել, ոտներ. 11 (+¹). տր~ռ(ռ), յ(յ). տո~ռ(ռ). կտրել [~կռ(ռ)ել, կյ(յ)ել, գռ(ռ)ել, գյ(յ)ել], կտարել, Պետրոս, պատռել. 11 (+²). տր~յր. կտրել (~կյրել, գյրել), կտարել, Պետրոս. 11 (+). բտն~ռն, բն. գորտնուկ (~գորոնուկ, գոռոնուկ), խրտնել, ֆրտնել.

12. Միջձայնավորային բաղաձայնների ոչ-սաստկական և ոչ-առնմանական կրկնություն. ածել (֊ածծել, ածծել), ասել, լսել, էծու, հոգի, հակատ, մածուն, մշակ, շաքաթ, օծիք.

13. Կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (շ, ճ, չ, ձ, ծ, ց֊ծ, շ, զ, ս). իջնել (֊իշնել), մեջք, ոչլոտ. խղմտանք, կնպել, կոնկել. ամաշկոտ, աչք, ինչքան. քննկալ, իննմով, վարծի. անեծք, ծածկել, հեծնել. երեցկին, լվացք, խցկել. 13 (+¹). նաև բառասկզբում. ծալել (֊զալել), ծախել, ծարավ, ծնել, ծունկ, ծուռ.

14. Հ֊ի դիմաց որևէ դիրքում յ, յն, յ֊ի առկայություն. 14 (+). հ֊յ. 14 (+¹). հ֊յն. 15 (+²). հ֊յ. բաճ (֊բայ, բայն), ման, շան, պահել, սահման, Թագունի.

*15. Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի (ն, հ>խ, ալլև յ) առկայություն. ագի (֊հագի, հաքի, հաքի), ամաշել, անեք, ափ, ընկեք, քնտրել, ինչ, ինչքան, ով, ուրազ. 15 (+¹). ձայնեղ հ (յ). ամեն (֊յամեն, յքմեն, յքմեն), այսօր, աչք, ելնել, երեկ, ընկնել, իմանալ, ինքն, իջնել, ուր.

*16. Բառասկզբի հ֊ի դիմաց ոչ առնմանական խ (հ֊խ)². հա (֊խա), հազար, հայ, հայր, հասկանալ, հարյուր, հարս(ն), հետ, հինգ, հիվանդ.

17. Բառասկզբում՝ ո֊ից առաջ հ֊ի դիմաց շրթնային շփական, 17 (+). հ֊ֆ. 17 (+¹). հ֊վ (ալլև ու). հոզ (֊ֆոզ, վոզ, վէզ), հոգի, հոտ, հոր, հորք. հոս, հոզ, հոն.

*18. Խ֊ի դիմաց տարնմանական հ՝ բառի մեջ հաջորդող դ֊ի առկայության դեպքում (խ֊հ). խաղ (հաղ). խաղալ, խաղազ, խաղող. 18 (+¹). նաև ոչ-տարնմանական խ֊հ. խառնել (֊հառնել), խուրձ, խոռվ. ծախել, ճախիր, փոխել. զուլս, ձախ, սոխ.

19. Բառասկզբի դ֊ի (հայերեն և օտար բառերում) դիմաց խ (դ֊խ). դեկ (֊խեկ). դրկել, դավուրմա, դարիք, դամաթ. Ղազարոս, Ղուկաս, Ղրիմ.

20. Հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի (դ՛, կ՞) առկայություն. դավուրմա (֊դ՛ավուրմա, կ՞ավուրմա), դարիք, դամաթ. կարենալ, կարմիր, կարն.

21. Ֆ֊ի առկայություն. հոզ (֊ֆոզ), հոտ, հորք, հոս, հոզ, հոն. ֆոֆոալ, ֆանմ. ֆանդ, ֆասոն, ֆլան, ֆրանկ (ֆրանգ).

*22. Բ֊ի քմայնացածություն՝ դրա հետ կապված փոփոխու-

2 Առնմանական են բառի մեջ հաջորդող դ, խ֊ի առկայությամբ պայմանավորված դեպքեր՝ հաղ֊խոզ, հարբոխ֊խարբոխ:

թյուններով հանդերձ (բ~ր', յ, ձ, ծ, շ). երեք (~իյեք, ծեք, ձեք), Արամ, երագ. երդում(ն), կարգալ, մարգ. խթանել, սիրա, երթալ, զարթուն, մորթել.

23. Ռ-ի և Բ-ի շփոթություն ոչ նախաբաղաձայնական դիրքում. բարի (~բառի), զարի, տարի, ջուր, սառ, սուր. եռալ (~եռալ), կոկիլ, խռով. թառ, ծառ, ծուռ, պատառ.

*24. Բաղաձայնահանգրդ ն-ի պահպանվածություն. 24 (+¹). (ը)ն~բ. բեռն (~բեռն, բեռնը, բեռը), գառն, դաղձն, դառն, եզն, բոռն, խառն, ծունկն, կարն, հարսն, ձմեռն, ձուկն, մառն, մուկն, տասն.

25. Սահմանափակ տարածում ունեցող բաղաձայնական այլ կարևոր յուրահատկություններ. 25 (+). շշականների սուպական արտասանություն (շ, ք, չ, ժ, շ~ձ, ծ, ց, գ, ս). ջարդել (~ձարթել). ջուր, հոթ, հրագ. շափ, չոքս. շատ, շինել. ժամանակ, ուժ (<ոյժ). 25 (+¹). բաղաձայններին նախորդող բառասկզբնային ս-ի անկում (սպ-, սա~սպ-, տ- (բ-, դ-). սպիտակ (~պիտակ, բիրդագ), սպանել, ստեղծել. 25 (+²). միջձայնավորային ս-ի դիմաց հ (-ս~հ-). տեսա (~տեհա). 25 (+³). րս կապակցության դիմաց շ (րս~շ). հարս (~հաշ), ներս, չոքս, 25 (+⁴). ցուցական դերանունների միջձայնավորային ր-ի դիմաց հ (-ր~հ-). սրանք (~սհանք), դրանք, նրանք. 25 (+⁵). նախաձայնավորային լ (W). վանք (~ւանք), վրա, շվար, շվան:

Հայ բարբառների բաղաձայնական հատկանիշների (զուգաբանությունների) մասին կարելի է նշել հետևյալը.

1) Հուգաբանությունները դասավորված են որոշակի կարգով. 1—14-րդ կետերն ընդգրկում են պայթականների և կիսաշփականների (12-րդ կետը՝ նաև շփականների), 14—24-րդ կետերը՝ շփականների փոփոխությունները, ընդ որում որանց մեջ ևս առկա են որոշ ներքին ստորաբաժանումներ, որոնց մասին ավելորդ ենք համարում մանրամասնորեն խոսել:

2) Այն բոլոր գեպքերում, երբ գործ ունենք ոչ-բառասկզբի դիրքի հետ, հնչույթների տարբերակիչ հատկանիշները հանդես են գալիս անբավարար հստակությամբ, և դժվարանում է ձայնեղների ու խուլների, շնչեղների ու ոչ-շնչեղների տարբերակումը: Հասկանալի է, որ այս գեպքերում հնարավոր է գնահատման որոշ սուբյեկտիվություն: Առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Խուլ բաղաձայնների ձայնեղության և ձայնեղների խլությունից դեպքերը հաճախ զուգորդվում են նրանց թույլ և ուժեղ արտասանության հետ, ընդ որում կան գեպքեր, երբ

հիմնական տարբերակիչ հատկանիշը դառնում է ուժեղության ու թուլության հակադրությունը, իսկ խլության և ձայնեղության հակադրությունը դառնում է երկրորդական: Այս բանը կարող է տարածվել նաև սկզբնային դիրքերի վրա. այսպես, Շ. Աճառյանի նշած այն դեպքերը, երբ նա խոսում է օտարների (ֆրանսիացիների) կողմից շնչեղ ձայնեղների՝ որպես պարզ խուլեր (p, t, k) ընկալվելու մասին, ակնհայտորեն կապված են ոչ թե ձայնեղի և խուլի, այլ թուլի և ուժեղի հակադրության հետ: Հայտնի է, օրինակ, որ նախկին խուլերից ծագող ձայնեղները ավելի ուժեղ են, նախկին ձայնեղներից ծագող խուլերը՝ ավելի թուլ: Ավելի ճիշտ եզրակացություններ անելու համար հարկավոր է ձեռքի տակ ունենալ բարբառների բաղաձայնների փորձառական ուսումնասիրության և բաղաձայնների հնչույթաբանական վերլուծության տվյալներ:

3) Է՛լ ավելի մեծ է գնահատման սուբյեկտիվության հնարավորությունը ետնալեզվային բաղաձայնների քմայնացման աստիճանը որոշելիս: Մինչև այժմ, ինչպես նշվել է, բարբառների բաղաձայնական համակարգերի հնչույթաբանական վերլուծությունը կատարվել է խիստ անբավարար շափելով և անհետևողականորեն: Այդ է պատճառը, որ հեղինակը առայժմ ստիպված է խոսել ետնալեզվայինների քմայնացման մասին՝ առանց սահմանադատելու քմայնացած ետնալեզվայինների՝ որպես հնչույթներ հանդես գալու դեպքերը դրանց՝ որպես հնչույթների դիրքային տարբերակներ հանդես գալու դեպքերից: Հայտնի է, որ ետնալեզվայինները առաջին շարքի ձայնավորներից (ե, է, ի) առաջ քմայնանում են. այդպիսի քմայնացումը շատ սովորական է հատկապես քմայնացած ձայնավորներից առաջ, մանավանդ որ քմայնացումը ոչ-առաջին շարքի ձայնավորները (ա, ո, օ, ու) վերածում է առաջին շարքի ձայնավորների (ա, ո, օ, ու): Այս բոլոր դեպքերում բաղաձայնների քմայնացման աստիճանը կարող է տարբեր լինել, և, սրա հետ կապված, բարբառների մեջ քմայնացած ետնալեզվայինների առկայության ու բացակայության հարցի լուծումը դժվարանալ: Տվյալ դեպքում հեղինակն առաջնորդվել է գերազանցապես բարբառագիտական աշխատությունների տվյալներով: Բնականաբար բացառվում են այն դեպքերը, երբ քմայնացումն առկա է միայն փոխառյալ բառերում: Ընդհանրապես մեծ դժվարություններ են հանդիպում քմայնացած բաղաձայնների ու ձայնավորների փոխհարաբերության հնչույթաբանական գնահատման հարցում: Գեր-

մանական լեզուների և բարբառների պատմությունից հայտնի է, որ ձայնեղներից ծագող խուլերը, ի տարբերություն խուլներից ծագող խուլների, սովորաբար քմայնացած են լինում: Այս դեպքում հնարավոր է քմայնացած և ոչ քմայնացած խուլների հակադրություն, որ կարող է ուղեկցվել ուժեղ և թույլ խուլների հակադրությամբ, ընդ որում տարբեր դեպքերում պետք է կոնկրետ կերպով որոշվի, թե սրանցից ո՞րն է էականը (ռելեանտը): Հնչուժաբանական նուրբ վերլուծությունը պետք է ցույց տա նաև, թե ո՞ր դեպքում մենք գործ ունենք քմայնացած ու ոչ-քմայնացած բաղաձայնների հակադրության հետ, որ ուղեկցվում է քմայնացած և ոչ-քմայնացած ձայնավորների դիրքային (ադումոդացիոն) տարբերությամբ, և ո՞ր դեպքում քմայնացած ու ոչ-քմայնացած ձայնավորների հակադրության հետ, որ ուղեկցվում է բաղաձայնների դիրքային քմայնացման տարբերությամբ: Տարածամանակյա հնչուժաբանությունն ինդիկն է պարզել այն հարցը, թե այս կամ այն դեպքում ո՞րն է առաջնային՝ բաղաձայնների թե ձայնավորների քմայնացումը:

4) Ինչպես հայտնի է, դ-ն բառասկզբում խիստ հազվադեպ է հանդիպում: Հնից հայտնի՝ դ-ով բառերն էլ մեծ մասամբ բարբառներում անգործածական են եղել (հմմտ. ղեկ, ղեկավար) և երբեմն-երբեմն միայն մոտք գործել նրանց մեջ գրական լեզվից: Մնում է հենվել խիստ սակավաթիվ մի քանի բառերի (ղրկել <ուղարկել> յուլի արկանել) և դ-ով սկսվող փոխառությունների վրա (ղսմաք, Ղրիմ և այլն):

5) Ռ-ի և Բ-ի շփոթության աստիճանը կարող է տարբեր լինել. հայտնի է, որ շատ բարբառներում Բ-ն այլ բաղաձայններից առաջ վերածվում է Ռ-ի: Մենք բացառում ենք այսպիսի դեպքերը և հիմք ընդունում այլ դիրքեր: Հարկավոր է նկատի ունենալ, որ այս կետը հենվում է գերազանցապես օտար ազդեցություններով բացատրվող դեպքերի վրա և չի կարող անընդհատ գիծ տալ:

6) Մենք միացնում ենք Բ-ի քմայնացման հետ կապված տարբեր փոփոխությունները՝ նկատի ունենալով միևնույն հիմքը՝ քմայնացումը. սակայն արդյունքները կարող են տարբեր լինել. հմմտ. Բ > յ, Բ > ձ և Բ > ժ, շ փոփոխությունները, որոնցից վերջին երկուսը կարող են ուղեկցվել և Բ > յ փոփոխությամբ՝ ըստ դիրքի:

Այժմ տեսնենք, թե բարբառների. բաղաձայնական հիշյալ հատկանիշները ինչպես են հանդես գալիս մեր ընտրած 120 բարբառախոս վայրերում (աղյուսակ 2).

	1. Մուշակա	2. Կուսի	3. Նոր-Նա- խիջան	4. Չալիբըր	5. Ռոդոսթո	6. Պոլիս	7. Նիկոմեդիա	8. Ասլանբեկ	9. Պարտիզակ	10. Սյուլու
*1	-	-	-	-	+	-	+	+	+	-
*2	+	+	-	+	-	-	-	-	-	-
*3	-	-	-	±	-	-	±	-	±	+
4	+	+	+	+	+	+	+	+	+	+
5	+	+	+	+	+	+	+	+	+	+
*6	+	+	+	+	+	+	+	+	+	+
*7	-	-	-	-	-	+	-	-	-	+
*8	-	-	-	-	-	-	-	-	-	+
9	-	-	±	+	+	-	+	+	+	+
10	-	-	-	-	+	+	+	+	+	+
11	-	-	+	+	+	-	+	-	+	+
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	-	-	+	+	+	+	+	+	+	+
14	-	-	±	±	-	±	+	+	+	+
*15	-	-	-	-	-	-	-	-	-	-
*16	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	+	+	+	+	-	-	+	+	-	-
*18	-	-	+	+	-	+	-	+	-	-
19	+	+	+	+	-	+	+	-	-	+
20	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
*22	-	-	+	+	-	-	-	-	-	+
23	-	+	-	-	-	-	-	-	-	-
*24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	-	-	-	-	-	-	-	-	-
	6,5	7,5	10	11,5	8,5	8	10	11	9,5	12,5

	11. Ազատագր	12. Զժյունիկա	13. Նվերիկա	14. Մարզվան	15. Ամառիկա	16. Օրդու	17. Տրապիզոն	18. Զեֆանոս	19. Մալա	20. Մարթի
1	-	+	-	-	-	+	-	-	-	-
2	-	-	-	-	-	-	-	+	+	-
3	+	-	-	-	-	-	-	-	-	+
4	+	+	+	+	+	+	+	+	+	-
5	-	+	+	+	-	+	+	+	+	+
6	-	+	+	+	-	+	+	+	+	+
7	-	+	+	+	+	+	+	-	-	+
8	-	-	-	-	-	-	-	-	-	+
9	+	+	-	+	-	+	-	-	-	-
10	+	+	+	+	+	+	-	-	-	-
11	+ ⁰²	-	+ ¹	+ ¹	-	-	-	-	-	-
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	+	+	+	+	+	-	-	+	+	+
14	+	-	-	-	-	-	-	-	-	-
15	-	-	+	-	-	-	-	-	-	-
16	-	-	-	+	-	-	-	-	-	-
17	-	-	+	-	-	-	-	-	-	-
18	+	+	-	-	-	+	+	+	+	-
19	-	+	-	+	-	-	-	-	-	-
20	-	-	-	-	-	-	+	+	+	+
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	-	-	-	+	+	-	-	+	+	+
23	-	+	+	+	+	-	-	-	-	-
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	-	-	-	-	-	-	-	-	-
	7,5	10	9,5	11,5	5	8	6,5	8,5	8,5	8,5

	21. Շաղկն- կարմրեալ	22. Սերաստիա	23. Բլբլեկ	24. Արաբիկ	25. Կյուրի	26. Էվերեկ	27. Թոմարդա	28. Դարեմս	29. Ակն	30. Մալաթիա
1	-	-	-	-	-	-	-	-	-	+
2	+	+	+	+	-	-	-	-	+	-
3	-	-	-	-	+	-	-	-	-	-
4	+	+	+	+	+	+	+	+	+	+
5	+	+	+	+	+	+	+	+	+	+
6	+	+	+	+	+	+	+	+	+	+
7	+	+	+	-	-	-	-	-	-	+
8	-	-	-	-	-	-	-	-	-	-
9	+	+	+	+	+	-	-	-	+	+
10	-	+	+	-	+	+	+	-	+	+
11	+ ¹	+ ¹	+ ¹	-	+ ⁰¹	+	+ ¹	+ ¹	+ ⁰¹	-
12	+	-	-	+	-	+	+	-	-	+
13	+	+	+	+	+	+	+	+	+	+
14	+	+ ⁰¹	+ ⁰¹	+	-	+	+	-	+ ¹	+
15	+ ¹	+ ¹	+ ¹	+ ¹	-	-	+	+	-	-
16	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	+	+	+	+	-	-	+	+	+	-
18	-	+	+	-	+	+	-	+	-	+
19	-	-	-	-	-	-	-	-	+	-
20	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	-	+	+	+	+	-	-	+	+	-
23	-	-	-	-	-	-	-	-	-	+
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	+ ³	+ ³	-	+ ³	-	-	-	-	-
	12	15	15	11,5	11	7,5	10,5	9,5	13	10,5

	31. Սերվերի- սաբ	32. Հաշվիչ	33. Ջեյթեր	34. Մաքս	35. Քեյլիս	36. Քեյթ	37. Հաշի- կարգիչ	38. Յուրան- Օլսկ	39. Քաղաքիչ	40. Ագրոն
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	-	+	+	-	-	-	-	-	-	-
3	+	+	-	-	+	+	+	+	+	+
4	+	+	+	+	+	-	+	+	+	+
5	-	+	+	+	+	+	+	+	+	+
6	-	+	+	+	+	+	+	+	+	+
7	-	+	-	-	+	+	+	+	+	+
8	-	-	+	-	+	+	-	-	+	+
9	-	+	-	-	-	-	-	-	-	-
10	+	-	-	-	-	+	-	-	-	-
11	+	+	-	-	-	+	+	+	+	+
12	-	+	+	+	+	+	+	+	+	+
13	+	+	-	-	-	+	+	+	+	+
14	+	-	-	+	-	-	-	-	-	-
15	-	-	-	-	-	-	-	-	-	-
16	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	+	+	-	-	-	-	-	-	-	-
18	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	-	-	-	-	+	+	+	+	+	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	+	+	+	-	-	-	-	-	-	-
23	-	+	+	+	-	-	-	-	-	-
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	+	-	-	-	-	-	-	-	-
	7,5	12,5	8	5	7,5	10,5	9	9,5	10	9

Աղյուսակ 2-ի շարունակությունը

	41. Գաբին	42. Անհիմնական	43. Բարեբեկ	44. Խնդածուր	45. Խաբեբեկ	46. Նրդնիկա	47. Կալմախ	48. Հալիդի	49. Ալթուն- Հալմի	50. Իսմաիլ
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	+	+	+	+	-	+	+	+	-	-
3	-	-	-	-	+	-	-	-	+	+
4	+	+	+	+	+	+	+	+	-	-
5	-	-	+	-	+	+	+	+	+	+
6	+	+	+	+	+	+	+	+	+	+
7	+	+	+	-	+	+	+	+	+	+
8	-	-	-	-	+	+	+	+	+	+
9	+	+	+	-	+	+	+	+	+	+
10	-	-	-	-	+	+	+	-	+	+
11	+	+	+	+	+	+	+	+	-	+
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	-	-	-	-	+	+	+	-	-	-
14	+	+	+	+	+	+	+	+	+	+
15	+	+	-	-	-	-	-	-	-	-
16	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	+	+	-	-	+	-	+	-	-	-
18	-	-	-	+	+	+	+	+	+	+
19	-	-	-	-	+	-	-	+	-	-
20	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	-	-	-	+	-	-	-	-	-	-
23	-	-	-	-	-	-	-	-	-	-
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	-	-	-	+	+	+	+	-	+
	9	9	8	8	14,5	13	14	11,5	8	10,5

	51. Չժշկածագ	52. Տիգրանա- կերտ	53. Ծղերիա	54. Հազդո	55. Մուշ	56. Բուլանլիկ	57. Խնուս	58. Ալլաշկերտ	59. Մանագ- կերտ	60. Այգեառուն
1	-	+	+	-	-	-	-	-	-	-
2	-	-	-	-	+	+	+	+	-	-
3	+	-	-	+	-	-	-	-	-	+
4	-	+	+	+	+	+	+	-	+	+
5	+	+	+	+	-	-	-	-	-	+
6	+	+	+	+	+	+	+	+	+	+
7	+	-	-	-	-	-	-	+	-	-
8	-	+	+	-	-	-	-	-	-	-
9	+	-	+	-	+	+	+	+	+	-
10	+	-	-	-	-	-	-	-	-	-
11	-	+	-	-	-	-	-	-	-	-
12	-	+	+	-	-	-	-	-	-	-
13	+	-	+	-	-	-	-	-	-	+
14	+	+	+	-	+	+	+	+	+	+
15	-	-	-	+ ¹	+ ¹	+ ¹	+ ¹	+ ¹	+ ¹	-
16	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	-	-	-	-	-	-	-	-	-	-
18	+	-	-	-	-	-	-	-	-	-
19	+	+	-	-	+	+	+	+	+	+
20	-	+	+	+	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	-	-	-	-	-	-	-	-	-	-
23	-	-	-	-	-	-	-	-	-	+
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	+ ¹	+ ⁵	-	+ ⁵	-	-	-	-	-	-
	10,5	11,5	10	7	8	8	8	8	7	8

	01. Նիշ	02. Գնդիկներ- դաշն	03. Բաղեշ	04. Քլաթ	05. Արճեշ	06. Արճիկ	07. Բառ	08. Վան	09. Շատախ	10. Մոկո
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	+	+	-	-	+	-	-	+	+	+
4	-	-	-	+	+	+	+	+	±	+
5	+	+	+	-	-	-	-	-	-	-
6	+	+	+	+	-	+	-	-	-	-
7	+	-	-	-	-	-	-	-	-	-
8	+	-	+	+	+	+	+	+	+	+
9	-	-	+	+	+	+	-	+	+	+
10	-	-	-	-	-	-	-	+	-	-
11	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	+	-	-	-	-	-	-	-	-	-
14	+	-	-	-	-	-	-	-	-	-
15	-	-	+	+	+	+	+	+	+	+
16	-	-	+	+	+	+	+	+	+	+
17	-	-	-	-	-	-	-	-	-	-
18	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	+	-	+	+	+	+	-	-	-	-
20	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	+	+	+	+	+
22	-	+	-	-	-	-	-	+	-	-
23	+	-	-	-	-	-	-	-	-	-
24	-	-	-	-	-	-	-	-	-	-
25	-	+	-	-	-	-	-	-	+	+
	8,5	6	8	8	8	8	5	8	7,5	7,5

	71. Ողջ	71. Վարդանան	73. Աստղաբան	74. Բաղլիկ	75. Քրիկիկ	76. Արդվիկ	77. Կրկան	78. Քառասուն	79. Աշտարակ	80. Եղևթան
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	-	-	-	-	-	-	+	-	+	-
3	+	-	+	-	-	-	-	+	-	-
4	±	+	+	+	+	+	+	+	+	+
5	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	-	-	- ²	-	±	±	±	±	±	±
7	-	-	+	+	+	+	+	+	+	+
8	+	±	-	-	-	+	+	+	+ ¹	+
9	+	+	±	±	-	-	-	-	-	-
10	-	-	-	-	-	-	-	-	-	-
11	-	-	-	-	-	-	-	+	+	+
12	-	-	-	+	-	-	-	-	-	-
13	-	±	-	+	-	-	+	+	+	+
14	-	+ ²	-	-	-	-	-	-	-	-
15	+	+ ¹	+	+	-	-	-	-	+ ¹	-
16	+	+	-	+	-	-	-	-	-	-
17	-	-	-	-	-	-	+	+	+	+
18	-	-	+	-	-	-	+	+	+	+
19	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	+	+	+	+	+	-	-	-	-	-
21	+	+	+	+	-	+	+	+	+	+
22	-	-	-	-	-	-	+	-	-	-
23	-	-	-	+	+	-	-	-	-	-
24	-	-	+	-	±	+ ¹	-	-	-	-
25	-	-	-	-	-	-	+ ²	+ ²	+ ²	+ ²
	7,5	8	8	8	4,5	5	9,5	10	11	8,5

Աղյուսակ 2-ի շարունակությունը

	81. Կողք	82. Ղալաշա	83. Գլանգյուռ	84. Առտապատ	85. Կամո	86. Մեղրի	87. Կաբճեան	88. Վարճավար	89. Գուգեմիս	90. Ագուլիս
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	+	-	-	-	+	-	-	-	-	-
3	-	-	-	-	-	-	-	-	+	-
4	+	+	+	+	+	-	-	+	+	-
5	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	±	±	±	?	±	-	-	-	-	-
7	±	±	±	±?	±	-	-	-	-	±
8	-	+	+	-	+	+	+	+	+	+
9	±	-	-	-	±	-	-	-	-	+
10	-	-	-	-	-	-	-	-	-	±
11	+	-	-	+	-	±	-	-	-	±
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	+	-	-	-	+	+	-	-	-	+
14	±	-	-	-	-	-	-	-	-	-
15	+ ¹	+ ¹	-	+	+ ¹	+	+	+	+	+
16	-	-	-	-	+	-	-	-	-	±
17	+	+	+	+	-	-	+ ¹	-	-	-
18	+	+	+	-	-	-	-	-	-	+ ¹
19	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	-	-	-	-	+	-	-	-	-	-
21	+	+	+	+	+	-	-	-	-	+
22	-	-	-	-	-	-	-	-	-	-
23	-	-	-	-	-	-	-	-	-	-
24	-	+ ¹	+ ¹	-	-	+	+	+	+	+
25	+ ²	+ ²⁴	+ ²⁴	-	-	-	-	-	-	+ ³
	11	9	8	5,5 +1 -0,5	9,5	4,5	4	4	5	10

	92. Յդնա	92. Ջուլա	93. Նոր-Ջուլա	94. Լիվախան	95. Հաթիբ	96. Ջանյաթաղ	97. Մեհարիշեն	98. Հաթալ	99. Շուշիբենդ	100. Շուշի
1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	-	-	+	+	-	-	-	-	-	-
3	+	+	-	-	+	+	+	+	+	+
4	+	+	+	+	+	+	+	+	+	+
5	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	-	+	+	+	+	+	+	+	+	+
7	+	-	-	-	+	+	+	+	+	+
8	+	-	-	-	+	+	+	+	+	+
9	+	-	-	-	-	+	-	-	+	-
10	+	-	-	-	-	-	-	-	-	-
11	+	-	-	-	+	+	+	+	+	+
12	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	+	+	+	+	+	+	+	+	+	+
14	-	-	-	-	-	-	-	-	-	-
15	+	+	+	+	+	+	+	+	+	+
16	+	+	+	-	-	-	-	-	-	-
17	-	-	-	-	+	+	-	+	+	+
18	+	-	-	+	+	-	-	+	-	+
19	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	+	+	+	+	-	-	-	-	-	-
22	-	-	-	+	-	-	-	-	-	-
23	-	-	-	-	-	-	-	-	-	-
24	+	+	+	-	+	+	-	+	+	+
25	+	-	-	+	+	+	+	+	+	+
	11,5	6	6	7,5	11	10,5	8	11	10,5	11

	101. Կաղաթժի	102. Տուժի	103. Հաղորթ	104. Շաղախ	105. Բույնիկ- Քաչիկ	106. Ղաղախ	107. Քոզուղ	108. Կաղեն	109. Կերովա- բաղ	110. Շահումյան- նովսի	
1	—	—	—	—	—	—	—	—	—	—	
2	—	—	—	—	—	—	—	—	—	—	
3	+	+	+	+	+	+	+	—	+	+	
4	+	+	+	+	+	+	+	—	+	+	
5	—	—	—	—	—	—	—	—	—	—	
6	+	+	+	+	+	+	+	—	+	+	
7	+	+	+	+	+	+	+	+	+	+	
8	+	+	+	+	+	+	+	+	+	+	
9	—	+	+	+	—	—	—	—	—	—	
10	+	—	—	—	—	—	—	—	—	—	
11	+	+	+	+	+	—	—	—	—	+	
12	—	—	—	—	—	—	—	—	—	—	
13	+	+	+	+	—	—	—	—	—	+	
14	—	—	—	—	—	—	—	—	—	—	
15	+	+	+	+	+	+	+	+	+	+	
16	—	—	—	—	—	—	—	—	—	—	
17	+ ¹	+ ¹	+ ¹	+ ¹	—	—	—	—	—	+ ¹	
18	—	—	—	—	+	+	—	+	+	—	
19	—	—	—	—	—	—	—	—	—	—	
20	—	—	—	—	—	—	—	—	—	—	
21	—	—	—	—	—	—	—	—	—	—	
22	—	+	—	—	—	—	—	—	—	—	
23	—	+	—	—	—	—	—	+	—	—	
24	+	+	+	+	+	+ ¹	+ ¹	—	+ ¹	—	
25	+ ⁴	+ ⁴	+ ⁴	—	+ ⁴	+ ²⁴	+ ²⁴	+ ⁴	+ ⁴	+ ⁴	
	10,5	12,5	10,5	9,5	9	8	7	5	8	9	

Աղյուսակ 2-ի շտրունակաթյունը

	111. Գորիս	112. Քանազան	113. Բուրգուր	114. Հալաբլիկ	115. Շամախի	116. Քյար-բյանջ	117. Քոյ	118. Փայաջուկ	119. Ուրմիա	120. Մարաղա	
1	—	—	—	—	—	—	—	—	—	—	8,0
2	—	—	—	—	—	—	—	—	—	—	28,0
3	+	—	+	+	+	+	+	+	+	+	54,0
4	+	+	+	+	+	+	+	+	+	+	98,0
5	—	—	—	—	—	—	—	—	—	—	51,5
6	+	+	—	+	—	—	+	—	—	—	78,5
7	+	+	+	+	+	+	+	+	+	+	38,5
8	+	+	+	+	+	+	+	+	+	+ ⁰¹	65,5
9	—	+	—	—	—	—	+	+	+	+	53,0
10	—	—	—	—	—	—	+	+	+	+	26,5
11	+	+	+	—	—	+	+	+ ⁰¹	+ ⁰¹	+ ⁰¹	58,0
12	—	—	—	—	—	—	—	—	—	—	12,5
13	+	—	+	+	+	+	+	+	+	+	67,5
14	—	—	—	—	—	—	—	—	—	—	33,0
15	+	+	+	+	+	+	+	+	+	+	63,5
16	—	—	—	—	—	—	+	+	+	+	19,5
17	+ ¹	+ ¹	+	—	—	—	—	—	—	—	40,0
18	—	—	—	+	+	+	—	—	—	—	36,5
19	—	—	—	—	—	—	—	—	—	—	24,5
20	—	—	—	—	+	+	+	+	+	+	24,0
21	—	—	+	—	+	+	+	+	—	—	94,0
22	—	—	—	—	—	—	—	—	—	—	21,5
23	—	—	+	—	—	—	—	—	—	+	12,0
24	+	+	—	—	+ ¹	+ ¹	—	—	—	—	28,5
25	—	—	—	—	—	+ ⁴	—	—	—	+ ⁵	42,0
	9	7,5	9,5	6	9	11	11,5	11	10	12	

Բարբառների ձայնավորային համակարգերը բնորոշվում են հետևյալ կարևոր հատկանիշներով (զուգաբանություններով)։

*26. Շեշտակիր այ-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր. 26 (+). այ~ե. 26 (+¹). այ~ա. այս (~ես, աւ), այդ, այն. այլ, այծ. հայր, մայր, եղբայր. գայլ, լայն, ծայր.

*27. ույ-ի (<ոյ) դիմաց ոչ-շրթնային ձայնավոր (ույ~ի, է, ա). գրույց (~գրից), բույլ, լույս, ֆույր, հորաֆույր, մորաֆույր.

*28. յու-ի (<իւ) դիմաց ոչ-շրթնային ձայնավոր (յու~ի, է, ա), ալյուր (~ալիր), աբյուս, յուր, հարյուր, ձյուն³.

29. Երկբարբառների առկայություն. գետ (~գիէտ), խելք, տեղ, գիշեր, երես, ցերեկ. գող (~գուող), գորտ. լուծ (լուծծ, լէւծծ, լիւծծ), տուն, շուն. դու, ձու, լու.

*30. Շեշտակիր ե-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (~իէ). գետ (~գիէտ), թե, թել, խելք, կեղտ, կեմ, կեր, մեր, մենք, տեղ. գիշեր, երեկ, երես, տերև, ցերեկ.

*31. Շեշտակիր ո-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (ո~ու). գոմ (~գուում), գործ, գորտ, հող, ձոր, խուփ, շոգ, շոր, սոխ, փոր. ալեւոր, դժոխք, խմոր, խնձոր, սխտոր.

32. Միավանկ բառերի սկզբնային ե-ից առաջ յ-ի հավելում (ե~յէ). եզ(ն) (~յէզ, յէզն, յէզը), եկ, եռ, ես, երբ, եփ.

33. Միավանկ բառերի սկզբնային ո-ից առաջ շրթնային տարրի հավելում (ո~վօ, վէ, ուօ, ուէ). ոխ (~վօխ, վէխ, ուօխ, ուէխ), ողջ, ոչ, որ, որք, որձ.

*34. Բմայնացած ձայնավորների (ա, ը, ծ, ու) առկայություն. բարակ (~բարակ, պարակ), դատարկ, ձավար, արյուն. բորբոս, գող, ջորի, ոչ. բուրգ, գուռ(ն), ջուր, ութ. թույլ (~թուլ), լույս. 34 (+¹). միայն փոխառյալ բառերում. բիթուն (~բութուն), դարգ (~գարգ), գոշ (~գոշ), գուգ (~գուգ), թանրալ (~թանրալ), լաքա (~լաքա), մագար (~մագար), չունքի (~չունքի), սուրու (~սուրու), քոռ (~քոռ), քունջ (~քունջ), քաչալ (~քաչալ).

35. Ա-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ա~ա, ը, ծ, ու). բանջար (~բանջար, պանջար), բարակ, բարձ. գաղձն, գանախ, գատարկ, գանգատ, գարի, գարուն. ձագ, ձախ, ձավար, աչք, արյուն, հարյուր.

36. Ու-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ո~ո, ծ, ու).

³ Բացառվում են ուրյուն ածանցը և այն բառերը, որոնց մեջ յու-ն նախորդում է զ-ին՝ գյուղ (~գեղ), յուղ, նյուղ:

բուր (ֆոլոր, պոլոր), բող, բորբոս, գոգ, գող, ձող, ձոր, ջողիկ, ջորի, ոչ, որ, որբ.

37. Ու-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ու~ու, ո, օ). բուրդ (բուրք, պուրք), դու, դուռ(ն), դուրս, գութան, գուլպա, ձու, ձուկ, ջուր. ութ, ուլ, ուս.

38. Ձայնավորների ներդաշնակության առկայություն. ալյուր (ալուր), արևորություն, աղբյուր, բարև, գարի, երգումն (օրթում), լեզու, հարյուր, ոլորել, չորեքշաբթի. Խսկունի [մուկու(ն)ի, Մուկուն(ն)ի], Տիրուհի, Քերովբե.

39. Ը-ի լիաձայնություն (ը~ի, ու). բրինձ (բրինձ), գլորել, գլուխ, գրույց, թթու (թութու), լվանալ, կլոր, կնուն, կառք, փշուր. ձուկն (ձուկուն, ծուկուն), մուկն, սուկն. հացք (հացքի, հացա), ջուրք, տունք.

*40. Շեշտակիր ա-ի դիմաց միջին կամ վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ա~ե, է, ի, էի և այլն)⁴. 40 (+¹). ա~ի. 40 (+²). ա~էի և այլ երկբարբառներ. բան (բէն, պէն, բին, պին), բաց, ձագ, շատ, զարդ, բարձր, գառ(ն), գաղձ(ն).

41. Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, ե~ի, էի և այլն)՝ բացառությամբ իէ-ի. եզ(ն) (իզ), ես, երբ, գետ, քն, քել, խելք, կեղտ, հետ, ձեռ, ձմեռ(ն), մեծ, մեղր, մեռ, նեղ, ներկ, վեց, տեղ, կես (<կէս) (կիս), ձեք (ձէք). մեջ (մէջ), մեջք (մէջք), սեռ (սէր). գրեմ (գրիմ), գրես, գրենք, գրեն.

42. Շեշտակիր ո-ի (օ-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ո, օ~ու, ու, ուէ և այլն)՝ բացառությամբ ուօ-ի. ով (ումվ, հուվ), ոչ, ոսկր, օրդ(ն) օրձ. դող (դուղ). խոզ, խոտ, խորթ, ծոմ, կող, հող, շող, փող, փռ.

*43. Շեշտակիր ի-ի դիմաց միջին կամ ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ի~ե, է, ա, այ և այլն). 42 (+). ի~ե, է. 42 (+¹). ի~ա. 42 (+²). ի—այ և այլ երկբարբառներ. միս (մէս, մայս), գին.

⁴ 40—45 կետերը բնականաբար վերջնիքի շեշտ ունեցող բարբառներում վերաբերում են հիմնականում միավանկ բառերին, որոնց մեջ շեշտը գրական լեզուների համեմատությամբ մնում է նույն դիրքում:

իննն, լինդ, լիրբ, ծիծ, ծիտ, հինն, հինգ, միտք, պինդ, պինչ, սիրտ, վիզ, ցից.

*44. Շեշտակիր ե-ի (ե-ի) դիմաց ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ն, ե~ա, ան, այ և այլն). ան(ք) [~ան(ք), անք], բն (բե), մեշ (մեշ), մեջք (մեջք), տեր (տեր).

45. Շեշտակիր ու-ի դիմաց միջին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ու~ո, օ, ո, ու, ոէ, օէ և այլն). ութ (~օթ), ուղտ, ուս, ուր, ունկ(ն), թուխս (~թոխս, թօխս), խուրձ(ն), ծուխ, ծունկ(ն), ծոռ, հուռ, ձուկ(ն), մուր, մուկն, շուն, շունչ, սունկ(ն), սուտ, տուն.

*46. Ա-ի շրթնայնացածություն (ա~ան, օ, ու). 46 (+). ա~ան. 46 (+¹). ա~օ, ու՝ շեշտի տակ. կրակ (~կրօկ), հաց, հարս(ն), հալարտ, հրագ, մարդ, քար. բարակ, կարաս, քաղաք. 45 (+²). ա~օ, ու՝ ոնգայիններից առաջ. աման (~ամօն), անձրև, բան, քան, ծամ, ծանր, համ, համար, հանն, սանր. 45 (+³). ա~օ, ու հտնակավային շփականներից (դ, խ) առաջ. աղ (~օղ), դաղձ(ն), քաղ, խաղաղ, մաղ, քաղցր. բախտ, դրախտ, ծախել, կախել, վախ.

*47. Շեշտակիր օ-ի (օ-ի) ապաշրթնայնացածություն (ո, օ~ա, է, ի, ր), խոռվ (~խռավ, խռվ), ծով, կով, գետով, նրանով, ջրով. գորտ(ն), լող, հոր. ռո(ն), ով, որ, որդ(ն), որձ. մոխիր.

48. Միջին շարքի («խառն») ք, ք^ե, ա^ե ձայնավորների վերջավանկային շեշտակրություն ոչ բնածայն բառերում. ժանգ (~ժնգ), խակ (~խնգ), ձծակ (~ձնգ), պսակ (~րքսնգ), տղա (~ղքն), միաք (~մնքնկ), ուժ (~վնքն), սիրտ (~սնքնրա). ասելիս (~ասելն), կանգնի (~կայնն), կտորի (~կտորն). գրում (~գրն), գնում (~գրնն), մանում (մքսնն).

49. Ը-ով չվերջացող բառերի նախավերջավանկային շեշտակրություն (նախորդ ձայնավորի թուլացմամբ)⁵. անձրև (~անձրև), բերան, դատարկ, նախանձ, շաքար, ոչխար, պանիր. աղաշանգ (~աղաշանգ, ըղաշանգ), ամաչել, աշխատանք, գերեզման, զարդաքանգ, իմաստուն, հանաչել, քառասուն.

⁵ Վերջավանկային շեշտ ունեցող բարբառներում ժխտական բայաձևերը կարող են բացառություն կազմել (չրմ ուղի, չրմ հանկա և այլն, այլև չէր քար «ի գնում»՝ ի տարբերություն չեքա՛ր-ի «չգնար»): Սրանք նկատի չեն առնվում:

50. Սահմանափակ տարածում ունեցող ձայնավորային ալլելարները լուրահատկություններ 50 (+). Ը-ից տարբեր խառն («միջին շարքի») ձայնավորների (ա^բ, ե^բ, ը^բ) առկայություն. գ(ը)րել (∼գա^բրել), դ(ը)նել, միտք. ուծ, սիրտ. ասելի(ս) (∼ասելի^բ), կանգնի, կտորի. մեր (∼մե^բր), սերմ, վեց, սեպ, ցելս. 5 (+¹). Ռնգային ձայնորդին նախորդող ձայնավորի հարմարեցական (ա-կոմոդացիոն) ռնգայնացածություն (աֆ∼աֆ, ամ∼ամ). անաճկ (∼անաճկ), երթանք, Վարդան. 50 (+²). Երկար և կարճ ձայնավորների տարբերակվածություն (ա/ա̃, ու/ու̃ և ալլն). ձայն/ձայնը (ձան/ձան), շուք/շուքը, քրտինք/քրտինքը. վառ/վաճը (վառ/վաճ):


Բարբառների ձայնավորային հատկանիշների (զուգաբանությունների) կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

1) Ինչպես բաղաձայնական, այնպես էլ ձայնավորային հատկանիշները (զուգաբանությունները) դասավորված են որոշակի կարգով՝ երկբարբառների փոփոխությունն ու առկայությունը, ձայնավորների քմայնացման առկայությունն ու ընդգրկման աստիճանը, ձայնավորների ափելի փակ կամ ափելի բաց արտասանության դեպքերը, շրթնայնացած ձայնավորների ապաշրթնայնացման և ոչ-շրթնայինների շրթնայնացման երևույթները և այլն:

64. ջ'ան	օնծը	1		ընդամենը	17
68. քոք	անմօդ, քծք	0,5	12. Մուշ	վան	
70. ալազ	ալծզ, ղոււմ	0,5			
75. կաշի	զէրէ	1	2. փօշի, մօխիւր	մօխիւր	0,5
84. պոշ	անկի, փծշ (բծշ), ղոււրուխ	0,5	3. քէղեք	կորճ, կըլեպ	0,5
86. իզա, ըդի	էս	1	5. մենձ	ճոշ	1
	ընդամենը	13	7. խաձեւ	կըծեւ	1
11. Մուշ	Տիգրանակերտ		42 հազդէիթ	ծոս	1
6. հավք	դ'ուշ	1	27. բրմբուլ, թէրոււ	փիտուր	0,5
11. դոշ	գուրցք	1	44. չոք	ծոււնդ	1
14. ամբ	բուլոււթ	1	64. ջ'ան	խոկի, անց	1
15. ցուրդ, պաղ	բանդ	0,5	78. մուխ, ծուխ	ծուխ, մուխ	0,5
26. խըլավ	քէր	1	86. իզա, ըդի	էս	1
27. բրմբուլ, թէրոււ	թուլ	1	89. յազուս	ստաս	1
31. վոդ	շիվ	1	92. էրթալ	էրթալ, կըննւլ	0,5
36. ծամ, մաղ	մաղ	0,5		ընդամենը	9,5
38. լըսեւ	իմնալ	1	13. Մարաշ	Քեսաք	
41. կօղօշ	դ'օշ	1			
44. չոք	ծոււնդ	1	3. գէղիվ	իթիթի	1
46. տէրեվ, թոււփ	յափրաղ, թուփ	0,5	6. թըռչին, ղուշ	ծոսծի (<ձաղ)	1
48. լէռթ	(սիվ) ջիզանր, փանջանգօշ (կենդանու համար)	1	12. էրիլ, վառիլ	վառիլ	0,5
55. սար	լէռ	1	13. ջօնկ	փանչու	1

1	2	3	1	2	3
25. օգ (< ազն)	աշկ	0,5	73. Թօխուս, հունս	սերմ	1
26. գիր, շրջման	կիէն	0,5	77. պղպտիկ	բիջի(զ)	1
34. լծվ, ըսնթ, աղվօր	անուր (< աղուոր)	0,5		ընդամենը	12,5
41. բույնուղ	անճէր	1	15. վան	Շատախ	
48. սիվուց	(սիվ) ջիգւմբ	1	46. տէրեկ, թավ	թավ	0,5
57. աղուս	էնյոն	1	47. պառկել	կող ընէլ, պառկել	0,5
64. օնծը	նանֆս	1	68. քյօքյ	մընճեղ	1
68. արմօդ, քօք	դէյմյոնիզ (< տակ-մազ)	1	89. ատամ	ատամ, անոն	0,5
69. զըլծր	պոյնիւր	1	92. էրթաւ, կըննլ	էրթաւ, կըննլ, յալ	0,5
70. անվօզ, դում	դ'օմ	0,5		ընդամենը	3,0
75. դէրէ	գիշն (< կաշի)	1	16. վան	Ո՛ղկս	
78. ծուխ, մուխ	մօխ	0,5	24. ծու	ծու, խափակ	
93. դօք	շուղ	1	46. տէրեկ, թավ	թավ	0,5
	ընդամենը	14	68. քյօքյ	մընճիղ, մըղէղ	0,5
14. Աղափազար	Մարթիլ		89. ատամ	ատամ, աղաս	0,5
1. պիթուս, ըմեն, ալայ	ալայ, ըմեն	0,5		ընդամենը	2,5
3. դապուխ	դըճեպ, կարուղ	0,5	17. Երևան	Կարենան	
6. թըռչուն, թուռչուն	հափք	1	2. քյուլ, մօխիբ	մըէթըր	0,5
7. խաղնէլ, կըճէլ	խաճուշ	0,5	3. կըլէպ, կըճէպ	քիշիվ	0,5
13. ճանկ	ջօնգ, էղուսգ	0,5	14. ամբ	թօխպ	1
14. ամպ	մըռնլ	1	25. աշկ	աշկը	0,5
26. գէր	քօք	1	27. բըմբուլ, թէրուդ	թիփուդ	0,5
34. աղիկ, խաս	խաս	0,5			
46. յափրախ	դէրէք, թէր	1			
55. լէս	քան	1			
58. շըլլինք, վիզ	ջիդ	1			
64. նէֆէր, մարթ	հօքի, օնճ	1			

1	2	3	1	2	3
31. վօտ	հաք	1	70. ավաղ	դուժ	
34. լավ	օքուտ	1	84. պօշ	հանքի	1
47. պառկել	պրբանիլ	1	89. ատամ	կենեք	1
48. լեռթ	սելվ թօք	1	92. էթալ, գ'ընալ	քյընալ	0,5
58. շըլինք, վիդ	վանդ, շիլի	0,5			
61. պինչ, քինթ	քանթ	0,5			
64. օքմին, մարթ	շօնչ, նանֆար	1			
65. անձրէվ	թօռ	1	19. Երևան		
67. ճամփա	հըդի	1			
68. քօք	տակոիկ	1	1. սաղ	ըիթուն	1
70. ավաղ	դուժ	1	2. քյուլ	կըրակած խօղ	1
77. պուճուր	փըստէդ	1	3. կըլէպ	կըպէճ	1
84. պօշ	հանդին	1	6. դուշ	շիտ	1
80. ատամ	կըէոիք	1	13. շանդ	ճանկ	0,5
92. էթալ, գ'ընալ	նէլ (<գնալ)	0,5	24. ձու	հավկիթ	1
	ընդամենը	16,5	38. վօտ	վօտ, աք	0,5
18. Երևան	Բոլնիս-խաչեք		58. շըլինք, վիդ	վիդ, ճիտ	0,5
			61. պինչ, քինթ	քինթ	0,5
1. սաղ	լօխ	1	64. մարթ, օքմին	ինսան, օքմի	0,5
2. քյուլ, մօխիբ	ժօխէք	0,5	70. ավաղ	կուժ	1
13. շանդ (<ն. պրսկ.)	ճանդ	0,5	73. սէրմ	(հ)ունդ	1
14. ամբ	թօխպ	1	77. պուճուր	պըստիկ	1
39. լըսէլ, անգան անեւ	անգան օնէլ	0,5	78. ծուխ	թուխ, մուխ	0,5
47. պառկել	պարանց ընիլ	1	89. ատամ	սկրա	1
48. լեռթ, շիդյար	շիդյար	0,5	97. սիպտակ	ճէրմակ	1
58. շըլինք, վիդ, ճիտ	վէդ, ճէա	1			
64. մարթ, օքմին	խաչ, հուքի	1	20. Երևան		
65. անձրէվ	թօռ	1			
67. ճամփա	հըդէ	1	1. սաղ	թամամ	1
68. քօք	տակոէ		2. քյուլ, մօխիբ	մօխիբ	0,5

1	2	3	1	2	3
3. Կըլէսկ, Կըճէսկ	Կըճէսկ	0,5	31. Վըէննը	հաք	1
7. Կըժէլ	Խածեւ	1	34. Լնվ	օքուտ	1
64. օքմին, մարթ, հօքի	հօքի, մարթ, անձ	0,5	47. պարանց ընիլ	պըրանիլ	0,5
68. քօք	սիշա, արմատ	1	48. սըէվ ջիգյար	սըէվ թօք	0,5
69. Կըլօր	բօլըրիգ, Կուլուլագ	0,5	64. Խսան, հոքի	շօնշ, ննֆար	1
77. պուճուր	պըստիգ	1	77. պուճուր, Կուճուր	փըստէգ	1
78. ծուխ	մուխ	1		ընդամենը	8,5
89. ատամ	սկոս	1	22. Բոլնիս-Խաչեց	Տումի	
97. սիպտակ	ճէրմագ	1	2. մօխէր	քյօզ, մօխէր	0,5
	ընդամենը	9	6. դուշ	հալք	1
21. Բոլնիս-Խաչեց	Կարճեան		13. ճանդ	չանգ	0,5
1. Լօխ	սաղ	1	69. Կըլօր	պուլուր	0,5
2. քըլէսկ	քիշիվ	1	77. պուճուր, Կուճուր	Կուճի, պիծի	0,5
25. աչք	սկնը	0,5	79. Կաղնէլ	Վըէննը Կէնալ	2
27. բըմբուլ	թիփուտ	1		ընդամենը	4

Այժմ մի այլ աղյուսակով (աղյուսակ 9) ներկայացնենք բերված խոսվածքների հնչյունա-քերականական և բառային տարբերությունների քանակը.

Աղյուսակ 9

Բարբառախոս վայրեր	Տարբերություններ		
	ո՞ր վայրից	բառային	հնչյունա-քերականական
1 [87] Կարճեհան	Մուշից	21,0	65,5
2 [105] Բոլնիս-Խաչեն	»	21,0	61,5
3 [36] Քեսաբ	»	18,5	35,0
4 [26] Էվերեկ	»	24,0	50,0
5 [20] Մարթիլ	»	20,5	45,5
6 [77] Երևան	»	13,5	45,5
7 [11] Աղափաղար	»	16,0	45,0
8 [76] Արդվին	»	16,0	38,5
9 [117] Խոյ	»	12,0	37,0
10 [34] Մարաշ	»	13,0	37,0
11 [52] Տիգրանակերտ	»	17,0	32,0
12 [68] Վան	»	9,5	26,5
13 [36] Քեսաբ	Մարաշից	14,0	31,5
14 [20] Մարթիլ	Աղափաղարից	12,5	34,0
15 [69] Շատախ	Վանից	3,0	16,0
16 [70] Մոկս	»	2,5	16,0
17 [87] Կարճեհան	Երևանից	16,5	46,5
18 [105] Բոլնիս-Խաչեն	»	13,5	31,0
19 [76] Արդվին	»	13,0	23,0
20 [94] Լիվասիան	»	9,0	19,5
21 [87] Կարճեհան	Բոլնիս-Խաչենից	8,5	26,0
22 [102] Տուսի	»	4,0	17,5

Բարբառների բառային տարբերությունների քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. **Բարբառախմբերի, բարբառների և խոսվածքների փոխհարաբերությունը մոտավորապես նույնն է ըստ հնչյունա-քերականական և բառային ցուցիչների.** այլ կերպ ասած՝ հնչյունա-քերականական 100 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալների հիման վրա միևնույն բարբառին հատկացված խոսվածքները ըստ հիմնական բառաֆոնդին պատկանող 100 բառ պարունակող ցուցակի տվյալների իրարից ավելի քիչ տարբերություններ ունեն, քան տարբեր բարբառների պատկանողները, սրանք էլ՝ ավելի քիչ, քան տարբեր բարբառախմբերի պատկանողները և այլն: Բացառությունները հազվադեպ են և թերևս պայմանավորված մասամբ օտար ազդեցությունների բնույթով (օբյեկտիվ գործոն), մասամբ տեղեկատու անձերի թույլ տված վրիպումներով (սուբյեկտիվ գործոն):

2. **Խոսվածքների հնչյունա-քերականական տարբերությունների ցուցիչը մի քանի (սովորաբար 2—4) անգամ ավելի է բառային տարբերությունների ցուցիչից:** Սա եթե մասամբ խոսում է քերականական կառուցվածքի՝ հիմնական բառաֆոնդի համեմատությամբ ավելի արագ փոխվելու մասին, ապա մասամբ էլ պայմանավորված է հնչյունա-քերականական հատկանիշների և բառային միավորների ընտրության՝ մեր կիրառած սկզբունքների տարբերությամբ. քանի որ 100 բառանոց ցուցակի դեպքում հաշվի չի առնվում տարածվածությունը, շատ բառեր ըստ խոսվածքների կամ ոչ մի տարբերություն չեն տալիս, կամ տալիս են շատ փոքր տարբերություններ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ եղած տվյալներով եթե խոսվածքների հնչյունա-քերականական տարբերությունների առավելագույն քանակը անցնում է վեց տասնյակից, ապա բառային տարբերությունների առավելագույն քանակը չի հասնում երեք տասնյակի:

3. **Գնալով կոպիտ ընդհանրացման ճանապարհով՝ կարելի է նշել, որ բարբառախմբերի բառային տարբերությունների ցուցիչը մեծ մասամբ մեկուկես տասնյակից երեք տասնյակ է, բարբառային տարբերությունների ցուցիչը՝ վեցից մեկուկես տասնյակ, խոսվածքներինը՝ մինչև հինգ միավոր:**

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Տարածամանակյա բարբառագիտության խնդիրների շրջանակը կարելի է հանգեցնել երկու հիմնական խմբի՝ ժամանակագրական և վերականգնողական: Ժամանակագրական խնդիրները հանդում են բարբառային միավորների՝ միմյանցից առանձնանալու ժամանակի և բարբառային իրողությունների բացարձակ ու հարաբերական ժամանակագրության որոշմանը: Վերականգնողական խնդիրները վերաբերում են լեզվի զարգացման տարբեր փուլերում բարբառների բառային և կառուցվածքային կոնկրետ տարբերությունների բացահայտմանը: Ժամանակագրությունը տալիս է կմախքը, վերականգնումը այն լցնում է մսով ու արյամբ:

Բառավիճակագրական լեզվաժամանակագրությունը, ինչպես ցույց է տալիս անվանումը, կոչված է ժամանակագրական հարցեր լուծելու: Բառավիճակագրական տվյալները կարելի է լրացնել կառուցվածքային՝ հնչյունական և քերականական վիճակագրության տվյալներով: Տվյալ դեպքում հեղինակը ելել է հայ բարբառների կոնկրետ առանձնահատկություններից՝ առանց նպատակ դնելու տալ բոլոր լեզուների համար կիրառելի հատկանիշների որոշ շրջանակ: Եթե Սվոդեշի բառացանկերը, իրենց թերություններով հանդերձ, քիչ թե շատ ընդհանրական բնույթ են կրում և կարող են կիրառվել տարբեր լեզուների նկատմամբ, ապա այդ նույնը չի կարելի ասել հնչյունաբանության և քերականության դեպքում, որտեղ գրությունն ավելի բարդ է:

Բառերի ընտրության դեպքում գերադասությունը տրվում է կոնկրետ իմաստներին, այստեղ պետք է ընտրվեն ըստ հնարավորին վերացական միավորներ: Հնչյունական տեսակետից կարելի է

թերևս կանգ առնել հնչյունական հատկանիշների՝ Յակոբսոնի, Հալեի և Ֆանտի կողմից առանձնացված շրջանակի կատարելագործված տարբերակի վրա: Քերականական առումով պետք է որոշել քերականական այն կարևորագույն հատկանիշները (resp. կատեգորիաները), որոնք այս կամ այն ձևով արտահայտվում են ամենատարբեր կառուցվածքի լեզուներում: Մինչև այդ խնդրի լուծումը կարելի է վարվել ներկա գրքում ընդունված եղանակով՝ ելնել հայոց լեզվի կոնկրետ առանձնահատկություններից բխող հատկանիշներից:

Ինչպես նշվեց, տարածամասնակյա բարբառագիտության մյուս կարևոր խնդիրը զարգացման տարբեր շրջանների բառային և կառուցվածքային առանձնահատկությունների վերականգնումն է: Հայոց լեզվի նման մի լեզվի համար այս խնդիրը կարելի է կատարել հետևյալ միջոցներով ու եղանակներով.

1) Համեմատական բարբառագիտության տվյալների հիման վրա. — Պարզելով ժամանակակից բարբառների բառային և կառուցվածքային առանձնահատկությունները՝ կարելի է վերականգնել բարբառային տարբեր խմբերի համար ընդհանուր ձևերն ու իրողությունները և դրանք հանգեցնել համապատասխան՝ բարբառագիտական ժամանակագրությամբ որոշված շրջաններին: Ինչ վերաբերում է բարբառային վիճակագրությանը, ապա նրա տվյալները կարելի է օգտագործել հետևյալ ձևով. ա) հատկանիշների ցուցակից և աղյուսակներից բացառում ենք հնչյունական և քերականական այն հատկանիշները, որոնք եղած տվյալների համաձայն չեն կարող հատուկ լինել քննարկվող շրջանին և պետք է դիտվեն իբրև նորագույնացումներ. բ) աղյուսակներում թողնում ենք միայն այն բնակավայրերը, որոնք գոյություն են ունեցել քննարկվող շրջանում. մյուս վայրերի բնակչության ծագումը որոշվում է ըստ աղյուսակում մնացած վայրերի հետ նրանց լեզվի մերձավորության. գ) կազմում ենք նոր աղյուսակներ, որտեղ բնակավայրերը դասավորվում են ըստ իդեալական վիճակից կամ իրարից ունեցած տարբերությունների աստիճանական աճման կամ աստիճանական նվազման. սրանով հնարավորություն է ստեղծվում բնակչության հետագա տեղաշարժերի հետևանքով առաջացած լեզվական (բարբառային) ընդհատական վիճակը հանգեցնել պատմական այն շրջանի վիճակին, երբ գոյություն է ունեցել որոշ անընդհատություն, այսինքն՝ արտագաղթման հետևանք հանդիսացող բարբառային բացարձակ առանձնացում չի հղել. դ) որոնում ենք

ցուցակում տեղ չգտած, արդի բարբառների փոխհարաբերության տեսակետից առանձնակի, բայց հնում տարածված, արխաիկ բնույթի այլ հատկանիշներ և ըստ հնարավորին դրանք գումարում տվյալ շրջանի համար թողնված հատկանիշներին. ե) բառավիճակագրական ցուցակներից հանում ենք տարբերակված բառերը՝ թողնելով նրանք, որ ընդհանուր են տվյալ բարբառային միավորների համար և գոյություն են ունեցել նրանց միասնության շրջանում:

2) Պատմական բարբառագիտության տվյալների հիման վրա¹.— Հաշվի առնելով վերականգնվող շրջանի բարբառային վիճակի վերաբերյալ բոլոր արտաքին ու ներքին տվյալները՝ պարզում ենք այդ շրջանի բարբառային առանձնահատկությունները: Հայոց լեզվի համար կարելի է օգտագործել հետևյալ տվյալները. ա) զանազան հին հեղինակների, մասնավորապես Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանչի ու մեկնիչների հաղորդումները հայոց լեզվի տարածման տարբեր շրջանների լեզվական (բառային, հնչյունական, քերականական) առանձնահատկությունների մասին. բ) մատենագրական հուշարձանների լեզվական այն առանձնահատկությունները, որոնք շեղվում են ընդհանուր գրական ստանդարտից, մասնավորապես դեպքերում, երբ հեղինակների ծագման վայրերը հայտնի են, և կարելի է լեզվական այդ շեղումները տեղայնացնել. գ) օտար հեղինակների կողմից հայերեն բառերի, հատկապես տեղանունների և անձնանունների տառադարձումները. դ) այլ լեզուներից հայերենի փոխ առած և այդ լեզուներում (հատկապես կովկասյան լեզուներում) հայերենից փոխառված բառերի առանձնահատկությունների քննությունը:

3) Հնդեվրոպական լեզուների և մասնավորապես հայոց լեզվի համեմատական ֆեռականության տվյալների հիման վրա.— Հաշվի առնելով հայոց լեզվի համեմատական քերականության տվյալները՝ կարելի է գաղափար կազմել հայոց լեզվի հնագույն բարբառային տարբերությունների և բարբառային արխաիզմների մասին: Բնականաբար պետք է կարծել, որ հայերենի՝ հնդեվրոպական ընդհանրությունից առանձնանալու ժամանակ պետք է արդեն գոյություն ունենային բարբառային մասնակի տարբերություններ,

¹ Այստեղ պատմական բառը գործածված է լայն առումով՝ նշանակելով այն բոլորը, ինչ չի ներառվում համեմատական բարբառագիտության և համեմատական լեզվաբանության տվյալների մեջ:

և որ հայ ժողովրդի բոլոր հատվածների լեզուն հենց սկզբից էլ չէր կարող լինվին նույնական լինել: Հնարավոր է, որ այս կարգի որոշ տարբերություններ պահպանվեին բարբառներում և նույնիսկ մուտք գործեին գրական հուշարձանների մեջ: Եթե մենք սրանք կոչենք բարբառային հնաբանություններ, ապա կարելի է որոշել այդպիսի հնաբանությունների երկու աղբյուր. ա) հնդեվրոպական ձևերը հայերենում երբեմն արտացոլված են ոչ միատեսակ, այլ հանդես են գալիս որոշ տարբերակների (կրկնականների կամ դուբլ-լետների) ձևով, ընդ որում կան դեպքեր, երբ այդ տարբերակները չեն կարող բացատրվել դիրբային, ձայնդարձային և այլ տարբերություններով (հմմտ. վեց և վաթսուներեք)։ սրանք կարող են արդյունք լինել հայ ժողովրդի մեջ բարբառային տարբեր հատվածների խառնման. այս տարբերությունների բացահայտման ուղղությամբ վերջերս որոշ աշխատանք է կատարված Վ. Վինտերի և տողերիս գրողի կողմից². բ) բարբառներում որոշ դեպքերում կան այնպիսի արխաիկ հնչյունական ու քերականական ձևեր և բառեր, որոնք գրավոր հուշարձաններում կամ չեն պահպանվել, կամ ներկայացված են ավելի քիչ արխաիկ ձևով. սրանց ուսումնասիրությունը խիստ կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի (և ոչ միայն հայոց լեզվի) համեմատական քերականության համար:

Հասկանալի է, որ ամենից ավելի մեծ արդյունքների կարող է հասցնել երեք կարգի տվյալների համակցված ուսումնասիրությունը: Այժմ փորձենք օգտագործել առաջին երկու կարգի տվյալները հայոց լեզվի հին շրջանի (V—XI դդ.) սկզբի՝ V դարի բարբառային վիճակի պարզաբանման համար՝ ընդհանուր ձևով նկարագրելով նաև այդ շրջանից նորին անցնելիս կատարվող տեղաշարժերը. երկրորդ կարգի տվյալների մասին կրտսենք հետագա գլուխներում:

2. V դարի ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՅՑՈՒՆԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (ԶՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Ինչպես տեսանք, V դարի բարբառների հնչյունա-քերականական հատկանիշների (զուգաբանությունների) վերականգնման հա-

² Հմմտ. W. Winter, *Traces of Early Dialectal Diversity in Old Armenian*, „Ancient Indo-European Dialects“, Berkley and Los Angeles, 1966, էջ 201—211. Г. Б. Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1967.

մար մենք ունենք Լերկու հիմնական ուղի՝ «ետադարձ» և անմիջական. ա) ժամանակակից բարբառների համար ընտրված 100 հատկանիշներից նորագոյացումները բացառելու միջոցով ըստ հնարավորին թողնում ենք այն հատկանիշները, որոնք պետք է հատուկ լինեին V դարին ըստ համեմատական քերականության ու լեզվի պատմության տվյալների. բ) ի մի ենք բերում V դարի բարբառների վերաբերյալ մատենագրական տվյալներն ու վկայությունները և գումարում առաջին նշանակով ստացած տվյալներին:

Ձեռնարկելով առաջին ուղին՝ սկսենք հնչյունական զուգաբանությունների մեջ նորագոյացումների բացառումից: Հասկանալի է, որ այս դեպքում կբացառվեն՝ ա) դիրբային և փոխազդեցական նոր փոփոխությունները (առնմանություն, տարնմանություն, դիրբային կրկնություն, հարմարեցում, ձայնավորների ներդաշնակություն, լիաձայնություն), բ) օտար ազդեցությամբ պայմանավորված այն հատկանիշները, որոնց ազդեցության աղբյուրը չի կարող շատ հին լինել, գ) հնչյունական այն զուգաբանությունները, որոնց ոչ մեծ հնությունը (նորագոյացում լինելը) դժվար չէ ապացուցել անմիջական և կողմնակի տվյալներով: Նկատի ունենալով, որ V դարի բարբառների համար որպես համեմատության եզր (էտալոն) պետք է ծառայի V դարի դասական գրաբարը իր համեմատաբար նորմավորված և ատանդարտացված վիճակով (որքանով որ այդ հնարավոր է պարզել), կատարենք մի շարք այլ մասնակի փոփոխություններ ու ձևափոխումների ճշտումներ. մասնավորապես ա) 24-րդ կետը ձևակերպենք հակառակ հարաբերությամբ՝ «բաղաձայնահաջորդ ե-ի անկման միտում», բ) միացնենք ձայնավորների քմայնացման վերաբերյալ 34—37-րդ կետերը մեկ կետի մեջ՝ բացառելով միայն նոր փոխառություններում քմայնացած ձայնավորներ պարունակող բարբառային միավորները, գ) միավորենք 40—42-րդ և 43—45-րդ կետերը «ձայնավորների ավելի փակ (նեղ) արտասանության միտում» և «ձայնավորների ավելի բաց (լայն) արտասանության միտում» կետերի մեջ: Այսպիսով կստացվեն V դարի բարբառների համար հնչյունական հետևյալ 22 հատկանիշները (զուգաբանությունները)¹:

1 (1). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խլություն (բ, դ, գ, ձ, ջ~փ, ք, ք, ց, չ).

¹ Յուրաքանչյուր հատկանիշի կարգը նշող թվի մոտ փակագծերում տրվում է արդի բարբառային հատկանիշների ցանկում ունեցած Ձ-ը:

2 (2). Բառասկզբի ձայնեղ պալթականների և կիսաշփականների շնչեղ-ձայնեղություն (բ, դ, գ, ձ, շ~բ', դ', գ', ձ', շ'):

3 (3). Բառասկզբի ձայնեղ պալթականների և կիսաշփականների խլություն (բ, դ, գ, ձ, շ~պ, տ, կ, ծ, ց):

4 (6). Բ-ին հաջորդող, միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային խուլ պալթականների և կիսաշփականների թույլ արտասանություն (ձայնեղություն) (պ, տ, կ, ծ, ց~բ, դ, գ, ձ, շ):

5 (7). Շնչեղ խուլերի դիրքային ապաշնչեղություն կամ թույլ շնչեղություն (փ, ք, ք, ց, չ~պ, տ, կ, ծ, ց):

6 (8). Քմայնացած ետնալեզվայինների առկայություն (գ, կ, ք~գ', կ', ք'):

7) (15). Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզվի համեմատությամբ հավելական շնչի (հ, հ>խ) առկայություն:

7 (16) (+¹). ձայնեղ հ (չ):

8 (16). Բառասկզբի հ-ի դիմաց ոչ առնմանական խ (հ~խ):

9 (16). Բառասկզբի խ-ի դիմաց տարնմանական հ:

10 (22). Բ-ի քմայնացման երևույթի առկայություն (բ~բ', շ)²:

11 (24). Բաղաձայնահաջորդ և-ի անկման միտում (գրական լեզվի համեմատությամբ և-ի անկման դեպքեր):

12 (26). այ երկբարբառի նեղ (փակ) արտասանություն՝ է-ի վերածվելու միտումով:

13 (27). ոչ երկբարբառի թույլ շրթնայնացածություն:

14 (28). իւ (եւ) երկբարբառի շրթնային տարրի թույլ արտասանություն:

15 (30). Ե-ի երկբարբառային արտասանություն:

16 (31). Ո-ի երկբարբառային արտասանություն:

17 (34, այլև 35—37). Չայնավորների քմայնացման առկայություն:

18 (40, այլև 41—42). Չայնավորների, հատկապես ա-ի ավելի փակ (նեղ) արտասանության միտում:

19 (43). Ի ձայնավորի ավելի բաց (լայն) արտասանության միտում:

20 (44). Ե ձայնավորի ավելի բաց (լայն) արտասանության միտում:

2 Հնարավոր է, սակայն, որ բ~շ փոփոխությունը այլ լեզուների ներգրում չինի:

21 (46). Ա-ի շրթնայնացման երևույթի առկայություն.

22 (47). Ո-ի թույլ շրթնայնացածություն:

Քերականական ո՞ր զուգաբանությունները կարող են արժեք ունենալ հայոց լեզվի զարգացման հին շրջանի համար:

1) Ամենից առաջ պետք է պահել հոգնակերտների վերաբերյալ կետերը (51—55-րդ), թեև, իհարկե, խոսելով որևէ հոգնակերտի բացակայության մասին արդի բարբառային վայրերում՝ չի կարելի պնդել, թե այն չէր կարող գործածության մեջ լինել տվյալ վայրերում հայոց լեզվի զարգացման նաև հին շրջանում:

2) Քերականական մի շարք զուգաբանություններ, անշուշտ, իրենց հիմքերն են ունեցել հին հայերենի շրջանում: Պետք է կարծել, որ այն բոլոր դեպքերում, երբ տվյալ երևույթը տվյալ բարբառային վայրերում գերակշռող դիրք է ձեռք բերել, ապա այն ծնող ձևը հնում այդ վայրերում ավելի լայն տարածում է ունեցել, քան մյուս վայրերում: Այսպես, ի հոլովիչի տարածման և մյուս հոլովները դուրս մղելու միտումը գոյություն է ունեցել շատ վաղ. այդ մասին նշում են Քրականացու քերականության թարգմանության մեկնիչները: Արդ՝ պարզ է, որ այդ միտումը հատկապես ուժեղ պետք է լիներ այն վայրերում, որտեղ (ն)երու < (ն)երոյ հոգնակի ձևի դիմաց հանդես է գալիս (ն)երի ձևը: Այսպիսով, 56-րդ կետը կարելի է թողնել «Ի հոլովիչի ընդհանրացման (մյուս հոլովիչները, հատկապես ա-ն դուրս մղելու) միտում» ձևակերպմամբ: Այս նույն դատողությամբ կարելի է պահել մի շարք այլ կետեր՝ ձևակերպումների համապատասխան փոփոխությամբ (64, 76, 77¹, 82, 83, 86):

3) Նկատի ունենալով՝ դասական գրաբարի նորմավորված վիճակը՝ 66-րդ, 70-րդ, 72-րդ, 75-րդ, 76-րդ, 77-րդ և 100⁵-րդ կետերը պետք է ձևակերպել հակառակ հարաբերությամբ և համապատասխանաբար փոխել պլյուսների և մինուսների տեղերը:

Այսպիսով, բարբառային արդի հատկանիշների (զուգաբանությունների) հիման վրա կարելի է կազմել V դարի բարբառների քերականական հետևյալ 18 հատկանիշները (զուգաբանությունները).

23 (51). ուի-ով հոգնակի (երկակիի մնացուկային առկայություն).

24 (52). (ա)նի-ով հավաքական-հոգնակի.

25 (53). տն-ով հավաքական-հոգնակի.

26 (54). ստան-ով հավաքական-հոգնակի.

27 (55). օրայ(f), օրեայ(f)-ով հավաքական-հոգնակի.

28 (56). Ի հոլովիչի ընդհանրացման միտում.

29 (64). «Ի-ում» տիպի ներգոյականի ընդհանրացման միտում.

30 (66). Իկ-ով դերանվանական ձևերի գործածության սահմանափակման միտում.

31 (70). Հատկացուցչի հոդառության սահմանափակման միտում.

32 (72). Ա նախդրի գործածության սահմանափակման միտում.

33 (75). Ի նախդրի գործածության սահմանափակման միտում.

34 (76). Իլ լծորդության սահմանափակման միտում.

35 (77). Ուլ լծորդության սահմանափակման միտում.

36 (77¹). Ուլ լծորդության գործածության ընդլայնման միտում (աճիլ-ի փոխարինում ուլ-ով).

37 (82, ալլե 83, 90, 91). Բաղադրյալ (դերբայական) ժամանակաձևերի գործածության ընդլայնում.

38 (83). «Ի-իս» տիպի կառուցվածքի գործածություն.

39 (86). Բայածանց ուլ-ով ձևերի դերբայական գործածություն.

40 (100⁵). անցյալ կատարյալի միավանկ հիմքերի ե- (է) նախահավելվածի գործածության սահմանափակում:

Այս հատկանիշներն ըստ 120 վայրերի բաշխվում են հետևյալ կերպ (աղյուսակ 10):

Այժմ, ի մի բերելով համեմատական և պատմական բարբառագիտության տվյալները՝ փորձենք կազմել V դարի մի շարք հնարավոր բարբառային զուգաբանությունների ցուցակը: Այս դեպքում մենք կօգտագործենք ա) աղյուսակի համար առանձնացված հատկանիշների այն մասը, որի գոյությունը հնարավոր համարվեց V դարում, բ) աղյուսակում չարտացոլված, բայց ակնհայտորեն արխաիկ բնույթ ունեցող զուգաբանությունները և գ) մատենագրական ու ալլ կարգի վկայություններով V դարի համար հաստատվող հատկանիշները: Վերջիններիս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը: Այս կարգի հատկանիշների առանձնացման համար հիմք են ծառայում հնչյունական և քերականական զանազան զուգաձևությունները, որոնք մի քանի խմբի են բաժանվում. ա) մի շարք դեպքերում այդ ձևերի նորմավորված գրաբարյան և բարբառային հակադրություն ներկայացնելը որոշակի է. այն հաստատվում է բարբառային հետազա տվյալներով կամ մատնանըչ-

վում է ժամանակակիցների կողմից. բ) մի շարք այլ դեպքերում այդ ձևերը հակադրվում են որպես նորմավորված գրաբարյան և սկզբնավորվող աշխարհագրյան ձևեր. այսպիսի ձևերը խնամքով հավաքված են Ա. Այտրնյանի և հետագա այլ հետազոտողների կողմից՝ սովորաբար առանց աշխարհագրյան ձևերի բարբառային տարբերակման. սակայն հասկանալի է, որ մի կողմից V դարում առկա էին գրաբարին համեմատաբար մոտ և համեմատաբար հեռու տերիտորիալ շրջաններ (տարածքներ), որոնց տարբերությունը բարբառային արժեք ուներ, մյուս կողմից՝ սաղմնավորվող աշխարհագրյան ձևերի մեջ արդեն առկա էին որոշ տարբերություններ, որոնք հետագայում խորացան՝ հասցնելով ժամանակակից բարբառային տարբերություններին. գ) երրորդ դեպքում զուգահեռ ձևերը ներկայացնում են բուն (նորմավորված) գրաբարյան և հնացած (արխայիկ) կամ մնացուկային (սա երևում է հատկապես համեմատական լեզվաբանության տվյալներից) ձևերի հակադրություններ. հասկանալի է, որ այս տարբերությունները նույնպես տերիտորիալ հիմք պետք է ունենային, հետևաբար, ստեղծեին բարբառային որոշ տարբերություններ. այսպիսով, այդպիսի զուգաբանությունների հաշվառումը նույնպես արդարացնում է իրեն. դ) վերջապես, կան դեպքեր էլ, երբ զուգահեռ ձևերը թերևս ներկայացնում էին հենց միևնույն շրջաններում և երբեմն էլ միևնույն խոսողների մոտ գոյություն ունեցող կրկնակներ (դուբլետներ), որոնք բառիս բուն իմաստով բարբառային տարբերակներ չեն հղել. սակայն նկատի ունենալով, որ ամեն մի ժամանակագրական տարբերություն վերջ ի վերջո տարածական որոշ հիմք է ունենում, որ տարբերակների գործածման հաճախականությունը տարբեր շրջաններում ու տարբեր անձերի մոտ կարող էր տարբեր լինել, և որ տարբերակները երբեմն կարող էին արդյունք լինել տարբեր խոսակցական միջավայրերի, մենք այս կարգի տարբերակները ևս ներառում ենք ցուցակների մեջ, մանավանդ որ դրանց առանձնացումը ոչ միշտ է հնարավոր:

Այսպիսով, V դ. բարբառային հատկանիշների առանձնացումը փաստորեն հանգում է այդ դարի համար հաստատվող զուգաձևությունների մատնանշմանը:

Հարկ ենք համարում նշել, որ բացի որոշակի զուգաբանություններ ներկայացնող հատկանիշներից կան նաև այնպիսի երեւույթներ, որոնք հատուկ տեղաշնացում չունեն. այս կամ այն երեւույթը կարող է լինել մի բառի դեպքում մի վայրում, մի այլ բառի

դեպքում՝ մի այլ վայրում, ընդ որում հատկանիշները կարող են խաշաձևվել:

Վերևում մենք կարողացանք արդի բարբառների տվյալների օգտագործմամբ տեղայնացնել հատկանիշների որոշ մասը: Սակայն պատմական տվյալների վրա հենվող հատկանիշների տեղայնացումը հանդիպում է մի շարք դժվարությունների: Տեղայնացման համար պետք է հաշվի առնել տվյալ ձևն ավանդած հեղինակի ծագումը, տվյալ բառը հայերենից փոխ առած կամ տվյալ բառը հայերենին փոխ տված լեզվի տերիտորիալ մերձավորությունը Հայաստանի այս կամ այն մասին, տվյալ ձևի հետագա բարբառային վկայությունները: Սակայն շատ դեպքերում նման տեղեկությունները բացակայում են:

Այժմ բերենք V դարի բարբառային հիմնական զուգաբանությունների ցանկը՝ դրանց մեջ գրչագրական հետին փոփոխությունների բացառումը թողնելով ապագա ուսումնասիրություններին:

1 (1). Բառասկզբի ձայնեղ պայթականների կիսաշփականների շնչեղ-խուլթյուն (բ, դ, գ, ձ, շ~փ, ք, ք, ց, չ). բազուկ (~փազուկ).

2 (2). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-ձայնեղություն (բ, դ, գ, ձ, շ~բ', դ', գ', ձ', շ').

3 (3). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խուլթյուն (բ, դ, գ, ձ, շ~պ, տ, կ, ծ, ճ). բազուկ (~պազուկ).

4 (6). Ի-ին հաջորդող, միջձայնավորային և բառավերջի ետ-ձայնավորային խուլ պայթականների և կիսաշփականների թույլ արտասանություն ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ~բ, դ, գ, ձ, շ).

*Նղեկերտ (~Нѣгѣрѣх) (Պողոմես), վիրապ (~վրաց. gwirabi).

5. Ն-ին հաջորդող ձայնեղ պայթականների և կիսաշփականների խուլթյուն (բ, դ, գ, ձ, շ~պ, տ, կ, ծ, ճ).

6. Ն-ին հաջորդող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ~բ, դ, գ, ձ, շ).

7 (7). Շնչեղ խուլերի ապաշնչեղություն և թույլ շնչեղություն (փ, ք, ֆ, ց, շ~պ, տ, կ, ծ, ճ).

8 (8). Քմայնացած ետնալեզվայինների առկայություն (գ, կ, ք~գ', կ', ք'). գամ [~դեամ (*գ'ամ)].

9 (16). Բառասկզբում (ձայնավորից առաջ) դրական լեզվի համեմատությամբ հավելական շնչի (ն, ՚) առկայություն (բա-

ցառվում են հ-ի սաստկական համկումով բացատրվող դեպքերը՝ հ-եռ, հ-սկայ, հ-սկեմ). ամբար (աստվ.՝ 1 անդամ) [~համբար. աստվ.՝ 20 անդամ (?)]³, ապա (աստվ.) (~հապա. աստվ.), թերեւս նաեւ ամ-բառնամ (աստվ., Սոր.) (~հեռմ-բառնամ. աստվ.)⁴, այց (աստվ. Ազաթ.) (~հայց. աստվ., Բրս. Վեցօր.)⁵.

10. (17). Հ-ի զիմաց աչ առնմանական խ (հ~խ). Անճահիճոր (~Անճախիճոր), Հեր (~Լեր), հորդել (~խորդել. Պիտառ.)⁶, հացակել (Ոսկ.) (~խացակել) (?), մահին (աստվ. սղ., Եփր.) (~հախին. աստվ. Ես.).

11 (20). Խ-ի զիմաց տարնմանական հ (խ~հ). Խաղբբ (Ոսկ., Յճ.) (~հաղբբ. աստվ.), Խեղդ(եմ) (աստվ., Եզն., Ոսկ.) [~հեղձ(ում), աստվ., Եփր.], Խուղ (աստվ., Ոսկ., Մանդ.) (~հիւղ, հիղ, հեղ. աստվ.), ալլե, ալելի ուշ, ախեղծ (Ոսկ., Փրպ.) (~ահեղծ. Լաստ.) (հմմտ. հոգ. բրբ. Խեղդել~հեղդել, Խաղ~հաղ)⁸.

12 (22). Բ-ի քիմացման երևույթի առկայություն՝ համապատասխան փոփոխություններով հանդերձ (բ~ր՝, յ, շ). Լերկ (~լեշկ. Եփր., Ոսկ., Բուղ.), կոբդ (~կոշտ. աստվ. Յոր) (?), աեդորր (դորր=դիւր) (~աեդոյր, ըեդոյր. աստվ., Բրս. Վեցօր., Սերեր., Յճխ.).

13 (24). Բաղաձայնահաշորդ հ-ի անկում. աեճն (~աեճ), ինքն (~իք), կառափն (~կառափ), կողմն (~կողմ), հարցումըն (~հարցում), շաղաւաշուրթն (~շաղաւաշուրթ), ոսկեհուռն (~ոսկեհուռ) ջերմեռանդն (~ջերմեռանդ)⁹.

14. Բաղաձայնների նախորդող բառասկզբնային ա-ի անկում (?).

3 Հնարավոր է ենթադրել փոխառություն տարբեր աղբյուրներից:

4 Հստ 2. Աճառյանի՝ ամ-ը համ-ի կրճատ ձևն է, բայց հմմտ. ամենայն (*սր-):

5 Իմաստի տարբերակմամբ (հ-ն թերեւ մասնիկ է):

6 Ճիշտ ժամանակը հայտնի չէ: Հրատախ-ի խրատախ տարբերակը առնմանական է:

7 Հստ 2. Աճառյանի՝ նախնական պետք է լինի Խ-ով ձևը:

8 Ինչպես հայտնի է, դ-ն V դարում ուներ ձայնորդային հնչում, "արդ՝ Խ-ի վրա տարնմանական աղղեցություն գործելու համար այն պետք է ունենար հ-ի հետ ընդհանուր հատկանիշ (հտնալեզվայնություն-թավություն) կամ, թերեւ, որոշ շրջաններում արդեն փոխված լինեք ձայնեղ շփականի:

9 Հավանաբար ոչ-բարբառային տատանումներ են մուրհ~մուր տիպի դեպքերը:

15. Լ-ի դիմաց դ. դլամ (աստվ., եղ.) [~դղամ. աստվ. (?)], ծուլամ (Ոսկ.) (~ծուղամ. Բուգ.), յուլանամ (աստվ.) (~յուղանամ. Եվս.), ջիլ (աստվ.) (~ջիղ. Եղ.), սալար (Խոր.) (~սաղար. Փարպ., Եղ.).

16. Բառասկզբի յ-ի անկալունություն. յայրատիմ (~այրատիմ. Ոսկ., Տիմ.), յապաւել (~աղաւել. Եղ. Դա.), յուռուք (~ուռուք. Մանդ.), յօրանջ (~որոնջել. Նեղոս.). [Հմմտ. հազ. բրբռ. յաղթել~ախտել և այլն. Ախց., Աին, Ասլ., Թբ., Խարբ., Կար., Հմշ., Մրդ., Ն.-Նխշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Սլմ., Սջ., Տր. հմմտ. նաև յաջող, յարգ, յիշատակ].

17. ւ-ի անկում ու-ից առաջ. բշնամւոյ (~բշնամոյ), ծեբունւոյ (~ծեբունոյ), որգւոյ (~որգոյ).

18 (26). այ երկբարբառի նեղ (փակ) արտասանություն՝ ե-ի (ե-ի) վերածվելու միտումով. քարածայռ (~քարածեռ. Փրպ.).

19. Բառավերջի եայ-ի դիմաց և. առհավատչեայ (~առհաւաւոչէ), քուեայ (~քուէ).

20. Եւ երկբարբառի դիմաց ե (շեշտակիր վանկում). առաջեաւ (~առաջէ), գղեակ (~գղեկ. Փրպ.), այլև առեամ (~աւաւեմ). 20(+¹). եան~ին. ամենեքեան (~ամենեքին), բոլորեքեան (~բոլորեքին), երկոքեան (~երկոքին), հնգեքեան (~հնգեքին)¹⁰.

21 (27). Ոյ երկբարբառի թույլ շրջնայնացածություն՝ հետագայ ոյ>ի անցման (միջավանկում ի-ի թուլացման և սղման) միտումով.

22 (28). Իւ (եւ) երկբարբառի շրջնային տարրի թույլ արտասանություն.

23. Իւ երկբարբառի դիմաց եւ. ալիւր (~ալեւր, այլև աղբեւ, աղբեւր, աղտեւր. (եղտեւր), առեւծ, բեւր, գեւղ, դեւր, եղջեւր, երկեւղ, եւղ, բեւր, հարեւր, հեւս, հեւր, մեւս և այլն)¹¹.

24 (30). Ե-ի երկբարբառային արտասանություն.

25 (31). Ու-ի երկբարբառային արտասանություն.

26 (34—37). Չայնավորների քմայնացման անկալություն. գամ (~գեամ), խուղ [~հիւղ (?)], ծարիր (~ծարիւր, ծարոյր).

¹⁰ Տարբեր ածանցական կազմություններ:

¹¹ Հմմտ. է. Աղայան, Բարբառային հնադույն տարբերություններ հայերենում. ՀԳԱՏ, 1958, № 5: Սովորաբար ի, դ, ւ, օ հնչյուններից առաջ, Ֆվելի արխաիկը եւ-ն է:

27 (40). ա-ի դիմաց ավելի փակ (նեղ) և ձայնավոր. ծի-
ծառն (աստվ.) [~ծիծեռն (ծիծռան). եղ.].

28 (41). Ե-ի դիմաց ավելի փակ (նեղ) ի ձայնավոր.

29 (43). Ի-ի դիմաց ավելի բաց (նեղ) և ձայնավոր. լիզել
(լիզուլ) [~լեզել (լեզուլ)], հիհել (հեհնուլ).

30 (44). Ե, է ձայնավորների ավելի բաց (լայն արտասանու-
թյուն. դեկ (դեպկ)). 30 (+¹). եւ-ի (իւ-ի) դիմաց եաւ. գեւ (գիւ)
(~գեաւ), եւթն (եւաւթն), մեւ (մեաւ), ձեւ (ձեաւ) աւ-
դեւ (աւդեաւ)¹².

31 (49). Վերջընթեր վանկի ա-ի թուլացում (վերածում ր-ի)
կամ անկում. ակաղձեալ (ակերզեալ), ականջաւ (ակընջաւ),
արմատիք (արմտիք. աստվ. ծննդ. Եվս.), զոքանչի (զոքընչի).
[հմմտ. միջ. հայ. և հոգ. բրբռ. վերջավանկային շեշտից առաջ
ձայնավորի թուլացումը].

32 (49). Նախավերջընթեր վանկի ա, ու ձայնավորների թու-
լացում կամ անկում. անկողին (ընկողին), յուղարկել (յղաւ-
կել). [հմմտ. հոգ. բրբռ. վերջընթեր շեշտից առաջ ձայնավորի թու-
լացումը].

33. Ե-ի սղում դ, ո ձայնորդներից առաջ. քիթեղան (~քիթ-
ղան), մծեղան (~մծղան. աստվ.), սիսեռան (~սիսռան)¹³.

34. Հնչյունափոխվող ի-ի պահպանում. հնգետասան (աստվ.)
(հեհնգետասան. Եվս.).

35. Ի-ով վերջացող բառերի դիմաց առանց ի-ի ձև. հիւսիսի
(հիւսիս), պատասխանի (~պատասխան), տամալի (~տամալ),
այլև, ավելի ուշ, արծուի (~արծիւ).

35 (51). ուի-ով հոգնակի (երկակիի մնացուկային անկայու-
թյուն. շունք [~շնուի (շնի)]. (Ջգօն).

37. տի-ով հավաքական-հոգնակի. արմտի (Ջգօն), մանկտի,
ոսկրոտի (Թուգ., Փարպ.), փոռոտի. [հմմտ. հոգ. բրբռ. տի, տիք,
տան, տանք, տեւ հոգնակերտները].

38 (52). անի-ով հավաքական-հոգնակի (անոյ, անով տիպի
հոլովմամբ). ազատանի, անուանանի, աւագանի, զանգականի,
կրականի, նամականի, նշանանի, վնասանի. [հմմտ. հոգ. բրբռ.
անի (Ջղ.), այլև նի].

12 Բազէ-ի դիմաց բազայ ձևը հավանաբար գալիս է տարբեր փոխառու աղ-
բյուրից և ոչ թե է-ի լայն արտասանության արդյունք է:

13 Այս երեւոյթն արդեն օրինաչափություն է և Ե-ի պահպանումը՝ հնարա-
նություն:

39. Եան-ով (ան-ով) հավաքական-հոգնակի. 39 (+). եան. բեր-
դեան, իշեան (նաև իշանֆ) (Բուզ.), զրահեան, նոխազեան (Ջգոն),
նիւպատեան, խոզեան, խորդեան, գրեան, ալլե գործեան, քղթեան
(Փարպ.). 39 (+¹). ան. ձիան (Բուզ.), իշխան, ձիան (Փարպ.)
(հմմտ. հոգ. բրբռ. ան).

40. Ե(ա)ր-ով (երոյ, երով) հոգնակի. (+). բանեար, բարձկըն-
եար (-երոյ), խցկնեար, նակնեար, վանեար, վարժեար, վանեար,
ֆաղափկնեար (-երոյ). (+¹) եր. բաներ, հայեր, հարկեր, ձեռներ
(Փարպ.), վաներ.

41 (53). ստան-ով հավաքական-հոգնակի. այգեստան (ասով.,
Ագաթ., հոր.).

42. որ(ե)այ(ֆ)-ով հավաքական-հոգնակի. արաոր(ե)այ(ֆ)
(ասով.), կալորայ (ասով.), վանոր(ե)այ(ֆ) (ասով., Ոսկ., հոր.,
Փարպ.).

43 Հգն. հայցականի ձևերի դիմաց ուղղականի ձև (ուղղականի
գործածություն հայցականի փոխարեն). ընկէց ի մէջֆ (փխկ. մէջս),
զիւր զօրֆն կազմէր, ի վանֆ մի, ի չորֆ անկեալ յոսս, ի ֆաղցր
չուրֆն.

44. Հգն. ուղղականի դիմաց հայցականի ձև (հայցականի գոր-
ծածություն ուղղակիի փոխարեն). չէ սակաւ ծախսն, իրս նորոգո
ցուցաւ, հարկս ամենայն աշխարհիս առ իս են (Փարպ.), ոչ է ինչ
պէտս, ինձ արժանաւոս գան, յառաջագոյն էր վանս մի, ալլե չորս
կտակարանֆ.

45. Անհղական բառերի եղակի ըմբռնում. ի գրոցս յայսմանէ,
կառս մի, կուտֆ մի, վանաց միոջ, հասեալ էր... ճգովֆ, հաճոյ
թուցաւ իրֆս.

46. Ո հիմքով հոլովման դիմաց ու հիմքով հոլովում. արմաւ
(ոյ~ու), արջ, երինջ, համար, հաւ «պապ», մաղ, ուլ, սով, ցիռ.

47. Ո հիմքով հոլովման դիմաց ի հիմքով հոլովում. անդ (ոյ~
ի), բիծ, բուր, գոյն, երամ, լար, խանդ, խոյ, ծախ, կանչ, կար,
կքկոն, կուզ, նիշ, մաղ, մաղձ, մուք, օղ¹⁴:

48. Ո հիմքով հոլովման դիմաց ի հիմքով հոլովում. անձրև,
բաղարջ, բիծ, երամ, գմուխտ, քարախ, լար, խանդ, կոկոն, պա-
շար, օղ.

49. Ու հիմքով հոլովման դիմաց ի հիմքով հոլովում. առաւօտ,
գանձ, գէշ, դրօշ, երաստ, կան, մաղ, ջան-ֆ, սաղարթ, վնաս.

¹⁴ Հաճախակի են հատկապես ի -ի տիպի (ներգոյականի իմաստ արտահայ-
տող) ձևերը:

50. Ու հիմքով հոլովման դիմաց ի—ա հիմքով հոլովում. համ-
բաւ, մեզ, նաւոտ, սաղարթ, սապատ, վարագ.

51. Ի հիմքով հոլովման դիմաց ի—ա հիմքով հոլովում. ականջ,
աղէտ, առագաստ, բերդ, գէտ, դաշտ, երաժիշտ, նշմարիտ, մեհ-
եան, նշոյլ, տոնի, փեղկ.

52. Ու հիմքով հոլովման դիմաց ու—ա հիմքով հոլովում. կո-
զի, հոգի, ոսկի, որդի.

53. Ու հիմքով հոլովման բառերի բացառականի է վերջավո-
րութեան բացակայութիւն. յերկնաւոր զարդուն (Բարս. Վեցօր.),
յոշինջ վնասու (աստվ.), ի նախանձու իւրմէ (Եփրեմ.), ի մահու
(Փարս.), ի վաղու հորէ (Ագաթ.), զՅովնաննու (Ոսկ.).

54. Ու հիմքով հոլովման բառերի բացառականի առանց ու-
կազմութիւն՝ ու-ով ձևերի դիմաց. ի դասէ (նի դասուէ), ի խրա-
տէ (նի խրատուէ).

55. Ին—ան հիմքերի սեռական-տրականի ին-ի դիմաց ան-ով
ձև. բռին (նբռան, գիւցազին (նգիւցազան).

56. Ին—ան հոլովման բառերի բացառականի ա-ով հիմք՝
առանց ա-ի հիմքերի դիմաց. ի բեռանէ (նի բեռնէ), ի գառանէ
(նի գառնէ), ի թռռանէ (նի թռռնէ), ի խաշանէ (նի խաշնէ).
ի կաթանէ (նի կաթնէ), ի հաքսանէ (նի հաքսնէ).

57. Բ հիմքով հոլովման դիմաց ա հիմքով հոլովում (-աց).
ազոր (եցնեաց), եզր, կայսր, ուսուր.

58. Ու հիմքով բառերի սեռական-տրականի ոյ վերջավորու-
թեան դիմաց ոջ. ծղխնւոյ (նծղխնւոյ), տամալւոյ (նտամալւոյ¹⁵)

59. Հայր, տէր բառերի հգն. սեռ.-տր. հարց, տեարց ձևերի
փոխարեն հարանց, տեարանց ձևեր.

60 Ման բառի ու հոլովման դիմաց ուան տիպի հոլովում
(աստվ., Ոսկ., Խոր.).

61. Քոյր բառի քեռ, քոբ, քեց ձևերի դիմաց քուէր, քուերբ,
քուերց ձևեր:

62 (57). Բացառականի է վերջավորութեան ընդհանրացման
միտում (տարածում է շունեցող ձևերի վրա՝ ոյնէ). (+¹). դերա-
նունների մեջ. ի նորայնոյ (նի նորայնէ).

63. Բացառականի սովորական ձևերի դիմաց ուսա-ով ձևերի
գործածութիւն.

64. Գործիականի իւ, աւ, ու վերջավորութիւնների դիմաց ով.

15 ոջ—ն հաճախակի է հատկապես ներգոյական հոլովում:

65 (64). Ի -ում տիպի ներգոյականի ընդհանրացման մի-
տում.

66. -ութիւն-ի հավելում բայանունների վրա՝ գրաբարի համար
անսովոր դեպքերում. աղանդութիւն, լալութիւն, նախանձութիւն
(Բուզանդ), երգութիւն, ծառաութիւն, նրաժեշտութիւն, պատասխա-
նութիւն, փախչութիւն (Զգօն).

67. -ումն-ով բայանուններ՝ գրաբարի համար ոչ սովորական
դեպքերում. ապրումն, դողումն, արմանումն, զարհուրումն, սպառ-
նումն.

68. Գոյական անվան՝ սովորաբար ետադաս գործածվող լրա-
ցումների նախադաս և անհամաձայն գործածություն. զմեք թագա-
տուն, շան գլուխ, յայս տեղուշս, իւր որդւովն, ի մեր երկպառակու-
րենէ, Յամին արեային, եզդով արեային.

69 (70). Հատկացուցչի հոդառության սահմանափակման մի-
տում.

70. Վերջադաս մի-ի անհամաձայն (չհոլովված) գործածություն.
բռնք մի ալիւր, սուտ եղբօր մի (Բուզ.), առ ստոտառով մք (Յն-
հաղթ), ի քարի մի (Փարպ.).

71. Մի-ի փոխարեն մին ձև. մին մի քաղաք (Բուզ.), զմին
պանդոխտ (Զգօն) [հմմտ. հտգ. բրբռ. մին (Զգ.)]

72. Ոմն, ոք, իմն, ինչ անորոշ դերանունների տեղ մի. զօրա-
զլուխ մի, սենեկապետի միոյ (Բուզ.), քրիստոնէայ մի, խօս մի
(Զգօն).

73. Ոք անորոշ դերանվան տեղ մարդ բառի գործածություն.
ամենայն մարդ, քրիստոնէայ մարդ (Փարպ.).

74. Ինչ անորոշ դերանվան փոխարեն իրք. երկու իրս քարիս
(Զգօն), ամենայն իրք (Փարպ.).

75. Ոք մի անորոշ դերանուն. ոք մի (Փարպ.) (հմմտ. հտգ.
բրբռ. օմմին).

76. զի՞, զի՞նչ հարցականների հոլովաձևերի (է՞ր ի՞մ, ի՞նչ)
փոխարեն ի՞նչ-ի նախորդավոր ձևեր. յի՞նչ իր, ընդ ի՞նչ, առ ի՞նչ.

77. Ստացական և ցուցական լրացում ունեցող գոյականների
հոդառություն. իմ երկու աչքս, զմեք թագատուն (Բուզ.), իմ դար-
ծիս, այն աղբիւրն, իմ որդին.

78. Ստացական դերանվան տեղ համապատասխան հոդ.
զանձնս... վարեցի, յաջ ոռնս (Բուզ.), զնոգիս և զմարմինս ի սրտէս
(Փարպ.) և այլն:

79. Հատուկ անունների հոդառություն. Մանուէլն, զՄոսկանն,

զմարգպան Սուրենն (Բուդ.), զՅդիայն (Զգօն), Եղադն և Մովղադն և այլն.

80. Սոյն, դոյն, նոյն դերանունների ին-ով հոլովածների դիմաց ուն-ով հոլովածներ. սորին (~սորուն), սոցին [~սոցուն(ց)], սոփմբփ (~սոփումբփ).

81. Քն ստացականի ֆոյ, ֆոց, ֆովֆ (աստվ.) ձևերի դիմաց ֆոյոյ, ֆոյոց, ֆոյովֆ ձևեր (աստվ.).

82. Դերանվանական (ա)ն-ով ձև. յորմանէ (փխկ. յորմէ)¹⁶.

83. Դերանվանական տրականի ում-ով ձևերի դիմաց այլ ձևեր. ֆոյում (~ֆոյին).

84. Երեֆ և չորս ձևերի անփոփոխ գործածություն. երեֆ եղ-բարցն (Փարպ.), յերեֆ ծամու, երեֆ ծամաւ (Զգօն), չորս կտա-կարանֆ, ֆառասուն և չորս այլ.

85. Բաղադրյալ թվականների ոչ գրաբարաձև կազմություն. չորեքասան (~տասն և չորս).

86. Բաղադրյալ դասական թվականների միայն վերջին բաղադրիչի վրա որդ մասնիկի հավելում. ֆաւներորդ երրորդ (~ֆաւն և երրորդ).

87 (72). Զ նախորդի գործածությունը սահմանափակելու միտում (զեղչում). զանօրէնութիւնս որ իւր չէր զործեալ (փխկ. զորս), ի խաչ ել երեֆ ծամաւ (փխկ. զերեֆ ծամաւն), իւր ֆաշութեանն զործ ցուցանէր (փխկ. զփրոյ ֆաշութեանն), նորա աբիւն լափեցին շունֆ (փխկ. զնորա աբիւնն. Զգօն).

88. (73). Ի նախորդի գործածությունը սահմանափակելու միտում (զեղչում). առաջոյ (փխկ. յառաջոյ), վերուստ (փխկ. ի վերուստ), ամացն որ եղև նա-ի բաճափ (փխկ. յորս).

89. Ի-ով ներգոյականի փոխարին ի մէջ կապ. ի մէջ մեղաց (փխկ. ի մեղս), ի մէջ սենեկին, ի մէջ նորա, ի հրոյ մէջ¹⁷.

90. Զ-ով և բնդ-ով նախորդավոր ձևերի փոխարինում ի ներքոյ, ի վերայ կապական կազմություններով. ի ներքոյ արեգական (փխկ. բնդ արեգակամբ), ի վերայ Իսրայէլի (փխկ. զԻսրայէլէ), ծիծաղի ի վերայ նորա (փխկ. զնովա).

91. Պէս, դէմ(ս), ի համար, ի տեղի բառերով կապական կազմությունների գործածություն. գետոյ պէս, ի գազանաց դէմս, ի համար ֆեռ իւրոյ, ի ֆոյոյ տեղի, ի տեղ գնոյ, ի տեղիս նոցա¹⁸:

16 VII դարում երևան են գալիս ի մեզանէ, ի մեզնէ ձևերը:

17 Մէջ-ի շարադասութիւն համար հմմտ. 74-րդ կետը:

18 Ըստ Է. Այաքնյանի՝ հատկացուցիչ-հատկացուցչային կապակցություններ:

92. Անփոփոխ անորոշի փոխարեն տրականաձև անորոշ. պատմելոյ յանձն առեալ (Բուզ.), ի հաւան ածէ լինելոյ.

93. (77). Երկրորդ (իմ) լծորդութեան շեղոք բայերի ի-ով ձևերի դիմաց ե-ով ձևեր. նեմիմ (նեմեմ. Ոսկ.), մոլորիմ (մոլորեմ. Ոսկ.), յորդիմ (եփր.) (յորդեմ, աստվ., Ագաթ.), պայթիմ (Բուզ.) (պայթեմ. Ոսկ.).

94. Առաջին (եմ) լծորդութեան ան ածանցով բայաձևերի դիմաց անածանց ձևեր. անիծանեմ (աստվ.) (անիծեմ. աստվ. Թոսոց), անջատանեմ (աստվ., Ագաթ.) (անջատեմ. աստվ.), արածանեմ (աստվ. Եղեկ) (արածեմ, աստվ.), երկիր պագանեմ (աստվ., եփր., Սեբ., Եղ.) (երկրպագեմ. Խոր.), զատանեմ (աստվ.) (զատեմ. աստվ., եփր.), զեղծանեմ (աստվ., Ոսկ.) (զեղծեմ. Եղն.), բփանեմ (աստվ.) (բփեմ. աստվ.), խփանեմ (աստվ., Սեբեր.) (խփեմ. Սեբեր.), լփանեմ (աստվ.) (լփեմ. Կյուրեղ Կոչ.), ներկանեմ (աստվ.) (ներկեմ. Սեբեր.), սուգանեմ (աստվ.) (սուգեմ. Ագաթ.), սպանանեմ (աստվ., Փրպ.) (սպանեմ. Փրպ.), տարածանեմ (աստվ., Եղն.) (տարածեմ. Ոսկ.), օծանեմ (աստվ.) (օծեմ. եփր.) [Հմմտ. հազ. բրբռ. բֆնել, բֆնուշ (Ակն, Ախլց., Ասլ., Զթ., Կար., Հմշ., Հշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Սլմ., Սշ.)~բֆել (Ազլ., Ալշ., Գոր., Եր., Թբ., Ղրբ., Մրդ., Շմ., Զղ., Վան). զա(ր)նել (Ախլց., Ասլ., Խրբ., Կար., Հմշ., Մոկս, Ն.-Նխշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Սշ., Վան)~զարկել (Ալշ., Մոկս, Մրդ., Մուշ, Բզմ, Սլմ.). (կլնել>) կլնել (Ակն, Ասլ., Խրբ., Պոլ., Ռոդ., Սեբ., Տիգր.)~կլուլ (կլում) (Ալշ., Մուշ)~կուլ տալ (Ախլց., Գոր., Եր., Թբ., Կար., Հմշ., Ղրբ., Մոկս, Մրդ., Ն.-Նխշ., Շմ., Բզմ, Զղ., Սեբ., Սլմ., Սշ., Վան), պագնել (պաֆնել) (Ախլց., Ակն, Ասլ., Զթ., Խրբ., Կար., Հշ., Մոկս, Մուշ, Ն.-Նխշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Սլմ., Սշ.)~պագել (պաֆել) (Ալշ., Վան)~պաշել (Ազլ., Գոր., Եր., Թբ., Ղրբ., Մուշ, Շմ., Զղ.). սպաննել (Ասլ., Գոր., Խրբ., Հմշ., Պոլ., Սեբ., Տիգր.)~սպանել (Ազլ., Ալշ., Ախլց., Եր., Զթ., Կար., Ղրբ., Մոկս, Մուշ, Մրդ., Շմ., Զղ., Սլմ., Սշ., Վան). հմմտ. նաև խրտնուլ>) խրտնել (բարբառների մեծ մասը)~խրտել (Ալշ., Զթ., Հմշ., Մոկս, Տիգր.)].

95. Երրորդ (ամ) լծորդութեան ան ածանցով ձևերի դիմաց անածանց ձևեր. ծուլանամ (Յճխ., Ագաթ.) (ծուլամ. Ոսկ., Եղն.), ցանկանամ (աստվ., Եղն., Փարպ.) (ցանկամ. աստվ.)¹⁹.

¹⁹ Հնարավոր է ենթադրել կերպային (տեական—ոչ տեական) հակադրություն:

96 (78). Զորրորդ (ում) լծորդության բայերի դիմաց առաջին (եմ) և երկրորդ (իմ) լծորդության բայեր. արգելում (աստվ., Բրս., Բուլ.) (արգելեմ. Ոսկ., աստվ. Թես.). արձակում (եվս., Ոսկ.) (արձակեմ. աստվ., Բուլ., Սեբեր., Ագաթ՝ ավելի հաճախակի). լիզում (աստվ. Յուդ.) (լիզեմ. աստվ. Թագ.) (լիզանեմ. աստվ. Թուոց). կիզում (աստվ. Սղմ., Մկբ.) (հի-կիզեմ. աստվ.). յաւե-րում (աստվ., Եփր., Թագ.) (յաւելեմ. Եփր. Կորնթ.). ցելում (ցելեմ) (?)²⁰

97 (77¹). Առաջին և երկրորդ լծորդությունների ածանցավոր ձևերի (անեմ, անիմ) ձևերի դիմաց չորրորդ լծորդության (ում, նում) բայեր (չորրորդ լծորդությունն ընդարձակելու միտում)². գեծանեմ (աստվ. (գեծում. աստվ., Ոսկ.). դիզանեմ (աստվ.) (դիզում. հետն. Փիլ.). կլանեմ (աստվ.) (կլնում, բն-կլնում, աստվ.). սկսանիմ (աստվ.) (սկսնում. Ագաթ., Զգոն.). ուսանիմ (աստվ.) (սկսնում). (հմմտ. հետգ. բրբռ. պատճառականի ում խոնարհումը՝ փախուցանեմ > փախցում, այլև ան-ի պահպանումը՝ Ազլ. գտանել > գ'իդանիլ)²¹.

98. Զորրորդ լծորդության ածանցավոր նում տիպի բայաձևերի դիմաց չիմ տիպի ձևեր. զարթնում (աստվ.) (զարթչիմ. Յճիս.). բաֆնում (Ոսկ., հմմտ. բաֆում, աստվ.) (բաֆչիմ. աստվ.). բոնում (Կյուր.). (բոչիմ. աստվ.). ուոնում (աստվ.) (նուչիմ. աստվ.). փախնում (աստվ.) (փախչիմ. աստվ., Ոսկ.). [հմմտ. հտգ. բրբռ. ուոնալ (ուոնեալ, ուոանիլ) (Ազլ., Ապ., Զթ., Խրբ., Հջ., Պոլ., Ռոդ., Սեբ.) նուչիլ (ուոչել) (Գոր., Եր., Լոռի, Ղրբ., Շմ.) նուոել (Ալշ., Ախլց., Թբ., Հմշ., Մոկս, Մուշ, Ն.-Նխ., Զղ., Սլմ., Սշ., Վան, Տիգր.). բաֆում (Գոր., Եր., Թբ., Ղրբ.)—բաֆչիլ (բաֆչելուկի, Մուշ) նբաֆ կենալ (Ե., Թբ.), սրոոո՝նիլ (Ազլ.) նսաոչիլ (սաոչել) (Գոր., Եր., Թբ., Ղրբ., Շմ.) նսաոել (Զղ.). փախնիլ (փախնել, փխոնիլ) (Ազլ., Ախլց., Մուշ, Մրդ., Սլմ., Վան, Տիգր.) նփախչիլ (փախչել) (Ակն, Ախլց., Եր., Կար., Հմշ., Հջ., Ղրբ., Ն.-Նխ., Շմ., Պոլ., Ռոդ., Սշ.) նփախիլ (Ասլ., Խրբ., Մոկս, Պոլ., Սեբ., Սվ.).

99. Բազմապատկական առ, առ, տ ածանցներով ձևերի առկայություն. խածառեմ (աստվ.), խանձառեմ (աստվ.), խոցոռեմ (աստվ.), բեկտեմ (աստվ.).

²⁰ Երբեմն դժվար է որոշել, թե երկու ձևերից ո՞րն է նախնական:

²¹ -անիմ-ով բայերի փոխանցումը ում-ով բայերի բավական հաճախադեպ է միջին հայերենում:

100. Անցյալ դերբայով և լինիմ բայով կազմված բաղադրյալ ձևերի գործածություն՝ ներգործական իմաստով. պարտեալ լինէր (Ագաթ.), եխօեալ լինէի (Բուզ.). 100 (+1) չեզոք իմաստով. երեւեալ եղիցես (աստվ.), եղև մեռեալ (աստվ.), զօրացեալ լինիմ (Կորյուն), անցեալ եկեալ լինէր (Ագաթ.), գալոց լինէր, զարմացեալ լինէր (Բուզ.).

101. լոյ եմ տիպի ապառնի. իցես խօսելոյ (Բուզ.), չեմ լինել-լոյ.

102 (86). Անորոշի և բայանունների՝ ում-ով տրական-ներգոյականի գործածության միտում (?).

103. լի-ով ապառնի դերբայի գործածություն ենթակայականի իմաստով. առնելի «անող» (աստվ.), կրելի «կրող» (Ծղն.).

104 (87). ի -լիս տիպի կառուցվածքի գործածություն, ի լա-լիսն (Բուզ.).

105. իշ-ով հին դերբայական ձևերի գործածություն (անձերի համար). այրիչ (Ծղն.), սրբիչ (Ագաթ.), անիծիչ (աստվ.), տալրեցուցիչ, գնացուցիչ, գաիչ, ծնիչ, սնուցիչ.

106. Առաջին (եմ) և երկրորդ (իմ) լծորդության բայերի անցյալ դերբայի կազմում ներկայի (և ոչ կատարյալի) հիմքից. այրեմ (այրեալ՝ այրեցեալ-ի դիմաց), գրեմ (գրեալ), կարծեմ (կարծեալ), սիրեմ (սիրեալ), բնակիմ (բնակեալ), հաշտիմ (հաշտեալ).

107. Առաջին (եմ) և երկրորդ (իմ) լծորդության ածանցավոր բայերի ենթակայական (ներկա) դերբայի կազմում կատարյալի հիմքից՝ առանց ան-ի (ան-ով ձևերին զուգահեռ). գտող (հիմտ. գտանող), հարցող, աեսող, հարող (հիմտ. հարկանող), հատող, ուտող (հիմտ. ուտանող), ծնող (հիմտ. ծնանող), այլև (պատճառական) դարձուցող (հիմտ. դարձուցանող), զգեցուցող (հիմտ. զգեցուցանող), հատուցող (հիմտ. հատուցանող).

108. ած (ուած) վերջավորությանը անցյալ դերբայ. շինած քաղաք (Բուզ.), ասացածն (Փարս.).

109 (95). Առաջին (եմ) լծորդության բայերի անցյալ կատարյալի ցուցական կազմության սահմանափակման միտում (?)²².

110 (90). ուկ-ով դերբայ («ածական»). բաճեւերթուկ, գողառուկ (Բուզ.), աւաղուկ, միայնուկ, յառուկ («զատված»), պար-

²² Յի ցույական ձևերը կարելի է դիտել որպես եմ լծորդության անածանց ձևերի ածանցավոր (առնեմ) զուգաձևեր, սակայն այս դեպքում դժվար է երբեմն որոշել, թե ո՞ր ձևն է առաջնային՝ ածանցավորը, թե՞ անածանցը. հիմտ. ածանցավոր ձևերի դիմաց անածանց ձևերի վերաբերյալ կետը:

ծուկ, պարտուկ (Զգօն), յատուկ (Անհաղթ), հերատուկ (Ոսկ.)

111. (91). -լոց դերբայի հաճախակիության (Եզն.)

112. Անկանոն և զարտուղի բայերի ձևերի կանոնավորում. նաճաչեցին (փխկ. ծանեան), նաճաչեալ (փխկ. ծանուցեալ), լսեցեն (փխկ. լսիցեն), մեղանչեաց, մեղանչեցին (փխկ. մեղաւ, մեղան).

113. Անցյալ կատարյալի հզն. 2-րդ դեմքի -էք վերջավորության փոխարեն -իք. յաւելիք (Աստվ. Եզր), հաւատացիք (Նխդր. Ս. Գրոց), կոտորեցիք (Բուզ.), ծախեցիք (Ոսկ.), աւարիք, փակեցիք, քաղզմանցիք, բշնամանցիք, սպանիք (Պատմ. Աղեքս.), հրամայեցիք, ցուցիք, ածիք, տեսիք (Փարպ.).

114. Անցյալ կատարյալի եզ. 3-րդ դեմքի միավանկ ձևերում ե (է) նախահավելվածի բացակայություն (հմմտ. նախահավելվածի պահպանումը մի շարք քարթառներում).

115. Անցյալ կատարյալի եղէ (աստվ.) ձևի դեմ եղայ ձև (Եզն.).

116. Անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքի -էր վերջավորության դիմաց -իւր (կրավորական նշանակությամբ). կոչիւր (Բուզ.).

117. Փլուզանեմ (Ազաթ., Ոսկ.) պատճառականի դիմաց փլուզանեմ (աստվ., Ոսկ.).

118. Ստորադասական 1-ին և 2-րդ ապառնիների փոխարեն սահմանական ներկայի գործածություն. քէ... մերձեանամ, ...փրկիմ (աստվ.), եքե դարձուցանեմք, եքէ ակն ունիմք (Ոսկ.՝ աստվածաշնչի դարձուցանիցեմք, ակն կալցուք ձևերի դիմաց), այլև գի դպրութիւն ուսանին, ե՛կ առաքեմ գեեզ.

119. Առաջին (եմ) լծորդության անածանց բայերի եւ-ով հրամայականի դիմաց ե՛-ով ձև. խափանե՛ (փխկ. խափանեա՛). բնկե՛, գրե՛քե.

120. Կրավորաձև խոնարհման հրամայականի -ա՛յք վերջավորության դիմաց -եք. կալե՛ք, տարեք (փխկ. կալա՛յք, տարա՛յք).

121. Զրո վերջավորությամբ (արմատական) հրամայականի դիմաց -ի՛ր վերջավորությամբ հրամայական. հաւսի՛ր, իմացի՛ր, դարձի՛ր.

122. Հրամայականի -արո՛ւք (-երուք) վերջավորության դիմաց -ա՛յք (-եայք). գրեցա՛յք (փխկ. գրեցարո՛ւք), սիրեցա՛յք, կամեցա՛յք, նստա՛յք, սկսա՛յք, բողա՛յք, թաքեա՛յք, փախեա՛յք.

123. Ոչ-ի փոխարեն չ ժխտականի գործածություն. մկրտեալ չէի (Բուդ.). հակառակ և վնասակար չէ.

124. Զի շաղկապի փոխարեն որ-ի գործածություն.

125. Եթէ շաղկապի փոխարեն թէ ձևի գործածություն.

126. Յորժամ և իբրև ժամանակային շաղկապների դիմաց իբր-ի գործածություն.

127. Հոգնակի ենթակայի հետ եզակի ստորոգյալ. բափէր թևք, ոչ թաղեցաւ ոսկեբք (Զգօն), խորտակի զօրութիւնք, ամենայն իրք աշող լինի (Փարպ.), եղև... փորձութիւնք (Բուդ.).

128. Ժամանակի պարագայի հայցական ձև՝ փոխանակ ներգոյականի. այն անգամ փախչէր, որ օր հասանէ, օր մի... ասէ (Զգօն), այն օր, այն նուազ (Փարպ.).

129. Թո՛ղ, պիտի բառերի հաճախակի գործածություն.

130. Հարադրյալ բայաձևերի գործածման հաճախակիություն:

3. V ԴԱՐԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

V դարի բարբառային վիճակի մասին ամենալավ պատկերացումը, բնականաբար, կտար այն դասակարգումը, որ կհենվեր նախորդ գլխում բերված հնչյունա-քերականական հատկանիշների ամբողջության վրա: Սակայն արդեն նշվել է, որ հատկանիշների գերակշռող մեծամասնությունը կամ տեղայնացված չէ կամ տեղայնացվում է խիստ սահմանափակ թվով վայրերի համար: Ապագա ուսումնասիրությունները թերևս նոր լույս սփռեն այս հարցի վրա և բացահայտեն նոր աղբյուրներ. զգալի նյութ կտա մանավանդ առանձին վայրերից ծագող մատենագրական երկերի լեզվի և այդ վայրերի լեզվի աշխարհի վիճակի համեմատությունը (համատ. Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի և այլն): Մինչ այդ դիմենք վիճակագրական բարբառագիտության այսպես կոչված «նտադարձ» ուրու տվյալներին: Նախորդ գլխում մենք բացառեցինք այժմյան բարբառների համար նշվող հատկանիշների մեջ նոր երևույթները և թողեցինք V դարի համար հնարավոր երևույթները: Այդ գլխում միաժամանակ բերվեց մի աղյուսակ, որ ցույց է տալիս V դ. համար հնարավոր համարված հատկանիշների բաշխումն ըստ 120 վայրերի: Հենվելով աղյուսակի տվյալների՝ հաշվիչ մեքենայի կողմից կատարված այն հաշվումների վրա, որոնք ցույց են տալիս բարբառախոս վայրերի՝ միմյանցից ունեցած տարբերիչ հատկանիշների քանակը, այստեղ

կփորձենք կատարել V դ. բարբառների դասակարգումը: Քանի որ V դարի համար առանձնացված հատկանիշների քանակը (40) երկուսուկես անգամ պակաս է արդի բարբառների դասակարգման համար հիմք ընդունված հատկանիշների քանակից (100), ուստի և բարբառախոս վայրերի՝ միմյանցից ունեցած տարբերությունների քանակը մոտավորապես նույն չափով պակաս է վայրերի աշխմյան տարբերությունների քանակից: Նշանակում է՝ V դ. բարբառների դասակարգումը չի կարող կատարվել մակարդակների միևնույն քանակով: Հնարավոր է երկու ելք՝ հիմք ընդունել կամ արդի բարբառների դասակարգման համար սահմանված մակարդակային ցուցիչները և V դ. բարբառային տարբերությունները որոշել միևնույն հարաբերակցությամբ, կամ V դ. բարբառային տարբերությունները քննել արդի վիճակից անկախ՝ ինքնին առնված: Հարցը պարզելու համար դիմենք եղած տվյալներին: Բարբառախոս վայրերի՝ միմյանցից ունեցած տարբերիչ հատկանիշների առավելագույն քանակն այս դեպքում 31,5 է. այդքան տարբերություններ ունեն Մուշը Յղնայից և Զեյթունն Աստրախանից: Արդի վիճակի համեմատությամբ բարբառախոս վայրերի տարբերությունները չեն անցնում բարբառային տարբերությունների համար սահմանված քանակից (դրանք չեն հասնում ենթախմբային տարբերությունների): Այսպիսով, նպատակահարմար է տարբերել երկու մակարդակ՝ խոսվածքային և բարբառային: Արդի վիճակի համար սահմանված ցուցիչները հիմք ընդունելու դեպքում մենք կունենանք խոսվածքային մակարդակի համար 0,5—22 և բարբառային մակարդակի համար՝ 22,5 և ավելի (մինչև 31,5) ցուցիչները: Արդի վիճակից անկախ քննելու դեպքում երկու մակարդակի համար կունենանք $\frac{31,5}{2} \approx 15,5$ մակարդակային ցուցիչը, այսինքն՝ խոս-

վածքային կլինեն 0,5—15,5, բարբառային՝ 16 և ավելի (մինչև 31,5) տարբերիչ հատկանիշներ ունեցող վայրերի տարբերությունները: V դ. և արդի բարբառների փոխհարաբերությունն ավելի ակնառու դարձնելու և մոտեցման միասնականությունը չխախտելու համար ընտրենք առաջին ուղին: Այս դեպքում իրարից առավելագույն տարբերություններ ունեցող երկու զույգերից ոչ մեկի դեպքում հնարավոր չէ առանձնացնել երրորդ կենտրոն, մինչդեռ այդ բանը հնարավոր է ուրիշ կոմբինացիայի, այսինքն՝ լավագույն տարբերակի (օպտիմալ վարիանտի) ընտրության դեպքում: Հնարավոր է այդպիսի միայն մեկ տարբերակ՝ առանձնացնել Ասլանբեկ [8],

Արժեք [66] և Կիրովաբադ [109] կենտրոնները, որոնց տարբերությունները 22,5 և ավելի են: Այս դեպքում հնարավոր է առանձնացնել երեք միջբարբառ՝ Զեյթուն [33], Քաբուսիե [39] և Կամո [85]: կենտրոններով: Սրանց փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ գծագրով (գծագիր 22): Նպատակահարմար համարեցինք այս դեպքում բարբառային մակարդակով կատարված դասակարգումը լրացնել ենթաբարբառային մակարդակով կատարված դասակարգմամբ՝ հիմք ընդունելով 11,5—22 միավորի տարբերությունները՝ ըստ սահմանված սկզբունքի:

Ինչպես երևաց աղյուսակներից և վերևում արված դիտողություններից մենք V դ. բարբառների դասակարգման մեջ ընդգրկում ենք արդի բարբառների դասակարգման համար ընտրված բոլոր բարբառախոս վայրերը: Այդ բանն արվում է բարբառախոս վայրերի հին փոխհարաբերությունը ըստ հնարավորին լրիվ ներկայացնելու, գաղթած բնակչության հատվածները լեզվականորեն տեղանացնելու, բարբառային նախնական տարբերությունների տեղաբաշխման հետագա փոփոխությունները ցույց տալու նպատակով: Սակայն տարբերակման նպատակով՝ ա) Մեծ Հայքից, Փոքր Հայքից և հարակից շրջաններից հեռու գտնվող, այլև այն վայրերը, որոնց V դ. գոյություն ունենալու մասին հավաստի տեղեկություններ չկան, օժտվում են աստղանիշով. բ) բարբառային միավորների անվանումների մեջ ըստ հնարավորին հաշվի են առնվում աշխարհագրական հին անունները և վարչական հին բաժանումները: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ աստղանիշները որոշ սլայմանականություն ունեն, որովհետև նախ՝ որոշ վայրեր V դ. թեև չեն հիշատակված, բայց բացառված չէ նրանց՝ այդ ժամանակ արդեն գոյություն ունենալու հնարավորությունը, երկրորդ՝ V դ. հիշատակված և աստղանիշով չօժտված մի շարք վայրեր լիովին նույնը չեն հին վայրերի հետ կամ ունեն նոր (երբեմն էլ անմիատարր) բնակչություն: Նոր անունների կողքին փակագծերում ըստ հնարավորին նշվում են այդ վայրերի (երբեմն էլ նրանց հետ առնչվող վայրերի) հին անունները:

Ահավասիկ V դ. բարբառների դասակարգման հիմնական արդյունքները (աղյուսակ 11)¹:

¹ Այստեղ և հետագայում Մարթիլ, Խնդածոբ և Լիվաթիան անունների փոխաբեր են դրված են այն շրջանների անունները, որոնց մեջ մտնում են նշված բնակավայրերը՝ Զանիկ, Խոտուրջուր, Զառամանալ:

Բարրառային միավորներ	Խոսվածքի տարբերակիչ հատկ. քանակը	
	Նախորդ խոսվածքից	Էնթալպիայի քանակից
1	2	3
Ճ Արևմտյան կամ բյուզանդական բարբառ (գծագիր 23)		
1. Եղեսիայի էնթալպիա		
*[8] Ասլանբեկ	—	—
[53] Եղեսիա	6,0	6,0
2 (1—7). Կեսարիա-Մելիտենի միջենթալպիա		
*[26] Եվերեկ	—	—
*[27] Թոմարգա	4,5	4,5
[30] Մալաթիա (Մելիտեն)	9,0	5,5
3 (1—5). Տարանտի միջենթալպիա		
[28] Դարենդե (Տարանտ)	—	—
4 (5—12). Կարին-Պոսոբյուրի կամ Բարձր Հայք—Տայքի (Բարձր Հայքի արևելյան մասի և Տայքի) միջենթալպիա		
[41] Կարին [Թեոդ(ոս)ուպոլիս]	—	—
[43] Բարբրդ [Բայ(տ)երդ, Սմբատական]	1,0	1,0
*[42] Լեռնահան	4,0	3,0
*[44] Պոսոբյուր	7,0	8,0
5. Սերասիայի էնթալպիա		
*[23] Բրգնեկ	—	—
[22] Սերասիա	3,0	3,0
[13] Եվդոկիա	9,0	9,0
6 (5—7). Հորենբրդ-Նորնկայի կամ Մոֆթ-Բարձր Հայքի (Մոֆթի և Բարձր Հայքի արևմտյան մասի) միջենթալպիա		
*[49] Ալթուն-Հունեյն [~Քղի (Կողոբերդ)]	—	—
*[50] Իսմայիլ (~Չաբասնջաղ)	1,5	1,5
[51] Չմշկաժաղ (Հերապոլիս)	3,0	1,5
[45] Խարբերդ (Հորենբրդ)	3,0	1,5
[46] Նորնկա (Նորնկա)	3,5	3,0
[47] Կամախ	0,0	3,0
*[48] Հալվորի	3,0	4,0
*7. Խաղտիքահայ (Ջանիկահայ) (~Վամամշենի > Վամշենի) էնթալպիա		
*[20] Ջանիկ	—	—
*[18] Ջեֆանոս	6,0	6,0
*[19] Մալա	0,0	6,0
*8 (5—7—10). Ահնի միջենթալպիա		
*[29] Ահն	—	—




1	3	3
9 (7-10). Սյուլյոզի միջին թարաբրառ		
* [10] Սյուլյոզ	—	—
10. Ամառիա—* հյուսիսի ենթարաբրառ		
* [31] Սիվերինսար	—	—
* [25] հյուսիս	5,5	5,5
* [14] Մարզվան	8,0	7,0
[15] Ամառիա	3,0	5,5
11 (10-12). հյուսիսի միջին թարաբրառ		
* [24] Արաբկիր	—	—
* [21] Շապին-հարանսար (—հյուսիս)	9,0	9,0
* 12. Ադեալի (Տրանսիլվանիայի) ենթարաբրառ		
* [1] Սուշավա	—	—
* [2] Գուտի	3,0	3,0
* 13 (1-10-12). Տրապիզոնի միջին թարաբրառ		
* [4] Չալթեր	—	—
* [3] Նոր-Նախիջևան	1,0	1,0
[17] Տրապիզոն	4,5	5,5
* [6] Պոլիս	3,0	5,5
* [7] Նիկոմեդիա	4,0	6,0
* [9] Պարտիզակ	2,5	6,0
* [5] Ռոդոսթո	3,0	6,5
* [12] Զմյուռնիա	4,5	8,0
* [11] Ադափազար	3,0	8,0
* 14 (1-12). Օրգուլի միջին թարաբրառ		
* [16] Օրգուլ	—	—
II (I-IV) Հարավ-արևմտյան կամ արևելյան Կիլիկիայի միջբարբառ		
15. Արևելյան Կիլիկիայի միջին թարաբրառ		
* [33] Զեյթուն (Ուլնիա)	—	—
[34] Մարաշ (Գերմանիկե)	7,0	7,0
* [32] Հաջըն (—Բադեմոն, Հարզան)	11,0	8,0
III (I-IV-VI) Մայր հարավ-արևմտյան կամ անտիոֆանայ միջբարբառ (գծագիր 24)		
16. Հարավ-անտիոֆյան ենթարաբրառ		
* [39] Քարուսիե	—	—
* [37] Հաջի-Հաբիրի	2,0	2,0
* [38] Յոդուլն-Օլուկ	1,5	3,5
* [40] Արամա	7,5	6,5
* [36] Քեոս	4,5	4,5
17. Հյուսիս-անտիոֆյան ենթարաբրառ		
* [35] Բելլան	—	—

1	2	3
IV Հարավ-կենտրոնական բարձր (գծագիր 25)		
18. Հարավային Աղձնիքի ենթաբարձր		
[52] Տիգրանակերտ (Նփրկերտ, Մարտիրոսոլիս)	—	—
19. Հյուսիսային Աղձնիքի կամ Սանատունի (Սանունի) ենթաբարձր		
*[61] Նիշ	—	—
*[60] Այգետուն	4,5	4,5
*[62] Գեղեղուղան	6,0	6,5
*[54] Հազդո	6,5	8,5
20 (19—21). Տարոնի (Տուրուբերանի) միջինթաբարձր		
[66] Արծկե	—	—
[65] Արճեղ	3,0	3,0
[64] Խլաթ	4,5	3,5
[63] Բաղեշ (Բաղաղեշ)	1,0	4,5
*[57] Խուսու	3,5	7,0
*[56] Բուլանըղ	1,0	6,0
[55] Մուշ	1,0	5,0
[59] Մանաղկերտ	1,0	4,0
[58] Ալաշկերտ (Վաղարշակերտ)	5,0	9,0
21. Վասպուրական—Մոկքի ենթաբարձր		
[70] Մոկս	—	—
[69] Շատախ	2,5	2,5
*[67] Բաստ	1,5	4,0
[71] Ողմ	4,0	6,0
[68] Վան	5,0	5,5
*[72] Վարդենիս [~Դիագին (Տատեն)]	7,5	8,0
V (IV—VI) Հարավ-արևելյան միջբարձր (գծագիր 26)		
22. Կոզովիտի ենթաբարձր		
*[85] Կամո [Նոր-Բայազետ~Բայազեդ (Դարույնք)]	—	—
23. Հարավային Գողթնի (?) կամ *Ջուղայի ենթաբարձր		
[92] Ջուղա	—	—
*[93] Նոր-Ջուղա	4,0	4,0
*[24. Չահարմանալի ենթաբարձր		
*[94] Չահարմանալ	—	—
*25. Մարաղայի ենթաբարձր		
[120] Մարաղա	—	—
26 (22—25). Պարսկահայքի միջինթաբարձր		
*[118] Փայաջուկ	—	—
[119] Ուրմիա (Ուրմի)	3,0	3,0
[117] Խոյ (Հեր, Խեր)	3,0	4,0

1	2	3
VI Հյուսիս-արևելյան բարձր (զծագիր 27)		
27. Արևելքի ենթաբարձր		
*[87] Կարճեան	—	—
*[88] Վարճավար	2,5	2,5
*[89] Գուղեման	1,0	3,5
*[90] Մեղրի	4,5	4,0
28. Աղվանահայ կամ *Հավարիկ-Շամախի ենթաբարձր		
*[114] Հավարիկ	—	—
*[112] Քյարբյանջ	7,5	7,5
[115] Շամախի	2,5	8,0
29 (27—28—30—31). Արցախ-Սյունիքի միջին-բարձր		
[105] Բուխու-Խաչեն (Բուխիս)	—	—
*[100] Շուշի	2,5	2,5
*[08] Հարավ	1,5	3,5
*[95] Հաթեբ	0,5	3,0
*[101] Կաղարծի	1,5	4,5
*[103] Հաղբուխ	0,0	4,5
*[99] Շուշիքենդ	0,5	4,0
*[104] Շաղախ	1,0	4,0
*[111] Գորխ	1,5	3,5
*[110] Շահումյանով	1,5	4,0
*[96] Զանյաթաղ	3,0	5,0
[102] Տուսի (Գուտուր քերդ)	2,5	5,5
*[112] Խանազան	4,5	6,0
*[91] Ցղնա	7,5	4,5
[90] Ագուլիս (Ոսկերդա ավան?)	2,0	6,5
30 (27—28—29—31—33). Ուտիքի միջին-բարձր		
[107] Թովուզ (~Տավուշ)	—	—
*[106] Ղաղախ	2,5	2,5
*[109] Կերովարազ (Գանձակ)	1,0	3,5
*[97] Մեհաբեկ	5,5	3,0
*[108] Կոդեն	7,0	6,0
*31. Բուրղուլի ենթաբարձր		
*[113] Բուրղուլ	—	—
32 (31—33). Այրարատի միջին-բարձր		
[81] Կոդր	—	—
[79] Աշտարակ	4,0	4,0
[80] Էջմիածին (Վաղարշապատ)	3,0	5,0
[78] Քանաքեռ	1,0	6,0
[77] Երևան	3,5	5,5
*[84] Աստաղատ	8,5	4,5
*[74] Քավրեղ (Գավրեժ)	4,5	5,5
*[73] Աստաղատ	5,0	5,0

33. Գուգարքի եկեղեցաբաղան





Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

1. Աղյուսակը բնականաբար խիստ մոտավոր ձևով է արտահայտում V դ. բարբառային վիճակը: Այն կարող է համարվել միայն նախնական փորձ հետազա ավելի ճշգրիտ դասակարգումների համար: Առանձնապես պետք է նշել, որ V դ. համար թողնված և արդի վիճակի հիման վրա V դարին վերագրված հատկանիշները մի շարք դեպքերում կարող են ուշ զարգացման կամ ուշ ազդեցության արդյունք լինել. այսպես, ձայնավորների քմայնացման երևույթը շատ վայրերի համար կարող է այդքան մեծ հնություն չունենալ, ձևաբանական մի շարք տարբերությունների արժեքը V դ. համար կարող է լուկ ոճական լինել և այլն: Այսպիսով, հնարավոր է, որ աղյուսակն ամբողջովին կամ մասամբ արտացոլում է V դարից ավելի ուշ շրջանի (ընդհանրապես հին շրջանի) պատկեր: Սակայն այս առումով էլ այն կարող է օգտակար լինել:

2. Եթե դասակարգումը մոտավորապես ճիշտ է արտացոլում հայոց լեզվի զարգացման հին շրջանի պատկերը, ապա պետք է նշել, որ բարբառային արդի տարբերությունների զգալի մասը հիմքեր ունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ: Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարեվոր հատկանիշներ:

3. Աղյուսակը ցույց է տալիս, որ հին շրջանի բարբառային և ենթաբարբառային բաժանումների սահմանները զգալի չափով համընկնում են վարչա-ֆեոդալական հին բաժանումների սահմանների հետ, այսինքն՝ տերիտորիալ տարբերությունները նշանակալից չափով հասարակական-պատմական պայմանավորվածություն ունեն:

4. Եթե աղյուսակը գոնե մասամբ ճիշտ է արտացոլում հայոց լեզվի զարգացման հին շրջանի բարբառային տարբերությունների վիճակը, ապա զգալի չափով խախտվում են հայ պատմագրության մեջ ընդհանուր ճանաչում գտած այն տեսակետի հիմքերը, թե Փոքր Հայքի, Կիլիկիայի և հարակից շրջանների բնակչությունը հիմնականում ուշ գաղթերի հետևանք է, և որ, հետևաբար, այդ վայրերի բարբառները Մեծ Հայքի կենտրոնական և արևելյան մասերի բարբառային հին տարբերությունների հետագա խորացման արդյունք են: Աղյուսակը ցույց է տալիս, որ ա) Հայաստանի բյուզանդական մասի բնակչության լեզուն համեմատաբար միասնական է, Փոքր Հայքի ու հարակից վայրերի լեզվական վիճակը

համեմատաբար մոտ է Բարձր Հայքի ու Սոփիի լեզվական վիճակին, և, հետևաբար, ուշ գաղթերը դեպի այդ շրջանները արմատական փոփոխություններ առաջ չեն բերել, այլ մակաշերտվել են եղած տարբերությունների վրա. ք) արևելյան Կիլիկիայի լեզվական վիճակը հնում ավելի հեռու է եղել հյուսիս-արևելյան լեզվական վիճակից. այն հանգամանքը, որ արդի վիճակով արևելյան Կիլիկիայի բարբառները ավելի մոտ են Ագուլիս-Ցղնայի լեզվական վիճակին, քան հնում, ցույց է տալիս, որ արևելյան Կիլիկիայի հին բնակչության լեզուն հետագայում մեծ չափով ենթարկվել է արևելյան շրջաններից գաղթած բնակչության լեզվական ազդեցությանը և մերձեցել է նրան. գ) այն հանգամանքը, որ այսպես կոչված անտիոքահայ միջբարբառը միջին դիրք է զբաղում երեք հիմնական բարբառների միջև, ցույց է տալիս, որ Անտիոքի շրջանի հայ բնակչությունը կամ մեծ հնություն ունի և կազմավորվել է այն ժամանակ, երբ երեք բարբառների տարբերությունները ավելի թույլ էին գծազրկված, կամ ներկայացնում է տարբեր շրջանների խառնուրդ, այսինքն՝ նրա կազմավորման մեջ բացի տերիտորիապես մոտ արևմտյան և հարավ-կենտրոնական տարրից հետագայում մեծ դեր է խաղացել նաև արևելյան տարրը:

Նախապես նշվեց, որ հայոց լեզվի զարգացման հին շրջանում նկատվող բարբառային տարբերությունները հետագայում խորանում են մի կողմից՝ դեռևս այդ շրջանում նկատվող մի շարք երևույթների հետագա ծավալման ու տերիտորիալ տարածման, մյուս կողմից՝ նոր երևույթների առաջացման ճանապարհով: Մեծանում է ու փոխվում նաև օտար ազդեցությունների դերը: Եթե նախորդ շրջանում եղած բարբառային տարբերությունների առաջացման մեջ դեր էին խաղացել մինչհայկական լեզվական ենթաշերտերը և իրանական, կովկասյան, ավելի ուշ՝ արաբական լեզվական ազդեցությունները, ապա միջին և նոր շրջանում, կարելի է ասել, տիրապետող է դառնում թյուրքական ազդեցությունը: Սրա հետ միասին՝ պատմական տարբեր փուլերում և հայոց լեզվի տարածման տարբեր շրջաններում նշանակալից դեր են խաղում եվրոպական, վրացական, պարսկական, քրդական, ռուսական և այլ կարգի լեզվական տարրերը՝ բառապաշարային տարբերությունների հետ միասին առաջ բերելով կամ ուժեղացնելով հնչյունական (հմմտ. ֆ, ղ՝ բաղաձայնների տարածումը, Է-ի և Ա-ի շփոթումը, քմային բաղաձայնների ու ձայնավորների տարածումը, ձայնավորների ներդաշնակության երևույթի տարածումը և այլն) և քերականական տարբերություն-

ները (համտ. շարունակական ներկայի տարածումը, նախկին ցուցական հոգերի ստացական գործածությունը, լրացական բառերի շարադասության փոփոխությունը և այլն): Մի շարք նոր երևույթներ, իրենց հիմքերն ունենալով հնում, համընդհանուր բնույթ են ստանում կամ գոնե խիստ լայն չափով տարածվում, ինչպես, օրինակ, աւ>օ եա>ն հնչյունական փոփոխությունները, գործիականի ով վերջավորության և (ն)եւ հոգնակերտի տարածումը և այլն. ուրիշ երևույթներ ձեռք են բերում տեղական-բարբառային արժեք: Պետք է նշել, որ որոշ կարգի երևույթներ էլ հանդես են բերում արտահայտության և բովանդակության պլանների տարբերակումներ. այսպես կու և պիտի բայական մասնիկները, տարածվելով հայոց լեզվի գրեթե բոլոր տերիտորիալ տարբերակներում, ստանում են քերականական տարբեր արժեքներ. արևմտահայ բարբառներում կու-ն ստանում է ներկայի և անկատարի, արևելահայ բարբառներում՝ որոշյալ (հաստատական) ապառնիի և սլայմանականի արտահայտման ֆունկցիա, ընդ որում միջին դիրք գրավող որոշ բարբառներում այն ունենում է և՛ այս, և՛ այն ֆունկցիան. պետք է կարծել, որ սկզբնապես կու-ն ունեցել է այսպիսի երկակի արժեք և տարածվել նախքան որոշ հայ բարբառների առանձնացումը, այսինքն՝ կու-ի գրառման ժամանակից վաղ: Պիտի-ն արևմտահայ բարբառներում ստանում է սովորական ապառնիի արտահայտման արժեք, արևելահայ բարբառներում՝ գերազանցապես հարկադրականի արժեք:

Հին շրջանում գոյություն ունեցող կամ սաղմնավորվող բարբառային տարբերություններին հետագա խորացման համար կարևոր դեր են խաղում այդ շրջանի վերջերում մեծ չափով ուժեղացած երկու երևույթ, որոնք սերտորեն կապված են հայ ժողովրդի գոյության տնտեսական և քաղաքական ընդհանուր իրավիճակի հետ: Դրանք քաղաքական մասնատվածությունը և մասսայական գաղթերն են: Բագրատունիների տիրապետությունը չհասցրեց հայ ժողովրդի համար ընդհանուր միասնական պետականության ստեղծմանը. Բագրատունիների տիրապետության թուլացումը, ֆեոդալական առանձին պետական միավորների և օտար իշխողների կողմից Հայաստանի տերիտորիայում ստեղծված երկարատև ու կարճատև զանազան տիրապետությունները հիմք են ստեղծում տիրիտորիալ մասնատումների ու վերախմբավորումների համար, որոնք չէին կարող առաջ չբերել լեզվական համապատասխան փոփոխություններ: Բագրատունիների անկումից հետո հայերի մասսայական գաղթերի ու-

Ժեղացումը ստեղծում է մի վիճակ, երբ մեծ շափով փոխված է հայ բարբառների աշխարհագրական տեղաբաշխումը: Նախկին բարբառային կենտրոնների կողքին հանդես են գալիս նոր բարբառային կենտրոններ, հատկապես Փոքր Ասիայի՝ Մեծ Հայքին սահմանակից շրջաններում: Միջին հայերենի շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների ուսումնասիրության անբավարար վիճակը մեզ հնարավորություն չի տալիս առանձին-առանձին քննելու հայոց լեզվի զարգացման միջին և նոր շրջանների բարբառային տարբերությունները: Կարելի է ասել, որ արդի բարբառների հնչյունական և ձևաբանական խմբերը սկսում են գծագրվել հին շրջանի վերջերից և միջին շրջանի սկզբներից: Առանձնապես կարևոր է մատնանշել երկու կարևոր երևույթ: Արդի բարբառների հնչյունական խմբերի ձևավորման մեջ մեծ դեր է խաղում հին շրջանի վերջերից խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղացման պրոցեսի տարածվելը բառասկզբի դիրքի վրա Մեծ Հայքից դեպի արևմուտք, հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք գտնվող գրեթե բոլոր բարբառներում: Արդի բարբառների ձևաբանական խմբերի ձևավորման մեջ մեծ դեր է խաղում ներկայի, այդ թվում նաև շարունակական ներկայի նախամասնիկավոր կազմության տարածումը Մեծ Հայքի արևմտահայ և հարակից շրջաններում:

4. ԳՐԱԿԱՆ ԼԵզՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵզՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության քննությունը ունի երկու կողմ՝ գրական լեզուների բարբառային հիմքերի հարցը և բարբառների մաքրության աստիճանի հարցը: Առաջին դեպքում գրական լեզուներն առնվում են ըստ բարբառների հետ ունեցած հարաբերության, երկրորդ դեպքում բարբառներն են առնվում ըստ գրական լեզուների հետ ունեցած հարաբերության: Մինչև այժմ հայ բարբառագիտության մեջ բարբառների մաքրության մասին խոսվել է ըստ համեմատության եզր (էտալոն) ծառայող լեզվավիճակի հետ ունեցած հարաբերության. բնականաբար, այս դեպքում ևս խառնվել են համաժամանակյա ու տարաժամանակյա հայեցակետերը, և փոխվել է համեմատության եզրը. իբրև համեմատության եզր ծառայել է սովորաբար գրաբարը (հատկապես հնչյունաբանության մեջ), երբեմն նաև արևելահայ կամ արևմտա-

հայ գրական լեզուները (հատկապես ձևաբանության մեջ): Եթե տարբերակենք այս բոլոր դեպքերը, ապա ինչպես որ գրական լեզուների բարբառային հիմքերի մասին խոսք կարող է լինել միայն տվյալ շրջանի բարբառային վիճակի առումով (մինչդեռ մոռանալով այդ մասին՝ ուսումնասիրողները հաճախ խոսում են հին կամ միջին գրական լեզուների մասին՝ նկատի ունենալով բարբառների արդի վիճակը), այնպես էլ արդի բարբառների մաքրության մասին խոսք կարող է լինել միայն ժամանակակից գրական լեզվի հետ ունեցած հարաբերության առումով:

Ըստ հեղինակի կողմից տրված շրջանաբաժանման՝ տարբերվում է հայոց լեզվի պատմության 3 շրջան՝ հին (V—XI դդ.), միջին (XII—XVI դդ.) և նոր (XVII—XX դդ.): Հին շրջանի գրական լեզուն գրաբարն է, և, բնականաբար, այդ շրջանի մասին խոսելիս խոսք կարող է լինել գրաբարի բարբառային հիմքի և այդ շրջանի բարբառների՝ գրաբարի համեմատությամբ ունեցած մաքրության աստիճանի մասին: Ավելի բարդ է վիճակը միջին շրջանի դեպքում. այստեղ նախ՝ միջին գրական հայերենի կողքին գործում է որպես գրական լեզու նաև գրաբարը՝ ֆունկցիաների որոշ բաժանմամբ և երկրորդ՝ միջին գրական հայերենը դեռ չունի կայունացած նորմա ու հանդես է գալիս գրական որոշ տարբերակներով. նրան հատուկ են իմաստների բազմաձևությունը և ձևերի բազմիմաստությունը: Վիճակը բավականաչափ բարդ է նաև նոր շրջանում, երբ մենք գործ ունենք երկու գրական լեզուների և, հետևաբար, գրական երկու տարբեր նորմաների հետ: Եթե հին շրջանի համար, երբ համեմատության եզր (էտալոն) է ծառայում նորմավորված գրաբարը, մենք կարող ենք բարբառների մաքրության աստիճանը որոշել ըստ պլյուսների քանակի, ապա նոր շրջանի համար մենք ունենք երկու հնարավոր ուղի՝ ա) բարբառների համեմատությունը իդեալական վիճակի հետ, որի մեջ առկա են մերթ մեկ, մերթ մյուս գրական լեզվի տարրերը, մերթ էլ դրանցից ոչ մեկը չի ներկայացված, բ) բարբառների համեմատությունը երկու գրական լեզուների հետ առանձին-առանձին: Առաջին դեպքում բարբառախոս վայրերը կդասավորվեն ըստ հիմնական աղյուսակների ներքևի վանդակներում բերված պլյուսների քանակը նշող թվերի: Երկրորդ դեպքում բարբառախոս վայրերը կդասավորվեն ըստ երկու գրական լեզուների հետ ունեցած

1 Հմտ. Լ. Հովսեփյան, Անվանական հոլովման համակարգը միջին գրական հայերենում, Երևան, 1970 (թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր):

տարբերությունների աճման. երկու գրական լեզուների համեմատությամբ միջին դիրք գրավող բարբառախոս վայրերը երկու դեպքում էլ բնականաբար «մաքրության» աստիճանով հեռու կլինեն գրական լեզվի հիմքում ընկած բարբառներից ու խոսվածքներից:

Նախքան գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը նշող աղյուսակներին անցնելը նպատակահարմար է պարզել գրական լեզուների փոխհարաբերությունը և մերձավորության աստիճանը: Հայտնի է, որ ինչպես միջին, այնպես էլ նոր գրական լեզուները իրենց մշակման պրոցեսում զգալիորեն հեռացել են հիմք-բարբառներից: Որոշ հեղինակներ հակված են, օրինակ, ժամանակակից գրական լեզուները դիտելու իբրև բարբառների և գրաբարի միասնիկական համադրություն. իրականում, սակայն, գրական լեզուն կարող է առաջանալ միայն խոսակցական հիմքի վրա (խոսքը արհեստականորեն ստեղծված լեզուների մասին չէ) և մշակման պրոցեսում ներծծել ուրիշ (հատկապես հին գրական լեզվի) տարրեր՝ ավելի կամ պակաս չափով: Մեր շրջ գրական լեզուների փոխհարաբերությունը ըստ հնչյունա-քերականական 100 հատկանշի կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (աղյուսակ 12):

Աղյուսակի կապակցությամբ կարելի է նշել հետևյալը.

1. Բոլոր գրական լեզուներն էլ այս կամ այն չափով շեղվում են իդեալական «ոչ-բարբառային» վիճակից, որովհետև այս դեպքում հիմք են ընդունված բարբառների արդի առանձնահատկությունները, իսկ վերջիններս ա) մասամբ արխայիկ բնույթ ունեն և, հետևաբար, համընկնում են գրաբարի համապատասխան երկվության հետ, բ) մասամբ հիմք ունեն միջին գրական հայերենի հուշարձաններում արտացոլված որոշ երևույթներ, գ) մասամբ հատուկ են նաև արդի գրական լեզուներից մեկնումեկին՝ ի տարբերություն մյուսի: Եթե մենք այս դեպքում որպես համեմատության եզր ընտրեինք միայն գրաբարի առանձնահատկությունները և հետագա փոփոխությունները քննենք ըստ դրանց, ապա փոխած կլինեինք համեմատության եզրը և պատմական բարբառագիտությունից մուտք գործած կլինեինք գրական լեզվի պատմության բնագավառը: Այդ խնդիրը մասամբ կատարած լինելով մեր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքում՝ այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս թվացող բացը կարող է ծածկվել գրական լեզուների բուն համեմատությամբ ըստ 100 հատկանիշների:

	Քաղաք	Կլիկյան միջ. գրակ. հայ.	Արևմտահայ գր. լեզու	Արևելահայ գր. լեզու		Քաղաք	Կլիկյան միջ. գր. հայ.	Արևմտահայ գր. հայ.	Արևելահայ գր. լեզու
1	—	—	+	—	26	—	—	—	—
2	+	—	—	—	27	—	—	—	—
3	—	+	—	—	28	—	—	—	—
4	—	+	+	+	29	+	—	—	—
5	—	+	+	—	30	+	—	—	—
6	—	+	+	—	31	+	—	—	—
7	—	—	—	—	32	—	+	+	+
8	—	—	—	—	33	—	+	+	+
9	—	+	+	—	34	—	—	—	—
10	—	—	—	—	35	—	—	—	—
11	—	—	—	—	36	—	—	—	—
12	—	—	—	—	37	—	—	—	—
13	—	—	—	—	38	—	—	—	—
14	—	—	—	—	38	—	—	—	—
15	—	—	—	—	40	—	—	—	—
16	—	—	—	—	41	—	—	—	—
17	—	—	—	—	42	—	—	—	—
18	—	—	—	—	43	—	—	—	—
19	—	—	—	—	44	—	—	—	—
20	—	—	—	—	45	—	—	—	—
21	—	+	+	+	46	—	—	—	—
22	—	—	—	—	47	—	—	—	—
23	—	—	—	—	48	—	—	—	—
24	+	—	—	—	49	—	—	—	—
25	—	—	—	—	50	—	—	—	—
	1,5	6	5,5	1,5		3	2	2	2

	Գրառար	Կլիկկյան միջ. դր. հաթ.	Արեմտանայ դր. լեզու	Արեկտանայ դր. լեզու		Գրառար	Կլիկկյան միջ. դր. հաթ.	Արեմտանայ դր. լեզու	Արեկտանայ դր. լեզու
51	—	+	+	—	76	+	+	+	—
52	—	+	—	—	77	+	+	+	—
53	—	+	—	—	78	—	+	+	—
54	—	+	—	—	79	—	—	± ¹	—
55	—	+	—	+	80	—	—	—	—
56	—	—	—	—	81	—	—	+	—
57	—	—	+	—	82	—	—	—	+
58	+	+	+	—	83	—	—	—	+
59	—	—	—	+	84	—	—	—	—
60	—	—	—	—	85	—	+	+	—
61	—	± ¹	—	—	86	—	—	—	—
62	± ¹	—	—	—	87	—	—	—	+
63	—	±	+	—	88	—	—	—	—
64	—	—	—	+	89	—	—	—	—
65	—	—	+	—	90	± ¹	—	—	—
66	+	—	+	—	91	—	—	—	—
67	—	—	—	—	92	—	—	—	—
68	—	—	—	—	93	—	—	—	—
69	—	—	—	—	94	+	+	—	—
70	+	+	+	—	95	—	—	—	—
71	+	+	+	—	96	—	—	—	—
72	+	+	—	—	97	—	—	—	—
73	+	±	—	—	98	—	—	—	—
74	—	—	—	+	99	—	—	—	+
75	+	+	—	—	100	± ¹²⁵	± ⁵⁷	—	—
	8	11,5	7,5	3,5		5	6	5	3,5

2. Գրական լեզուների հնչյունա-քերականական առանձնահատկությունների գնահատումը հիմք ընդունված 100 հատկանշի հիման վրա հանդիպում է զգալի դժվարությունների. ա) կան զեպքեր, երբ գրաբարի և միջին հայերենի համապատասխան (հատկապես հնչյունական) երևույթների մասին մեր ունեցած տվյալները բավարար չեն հավաստի եզրակացություններ անելու համար. այսպես, հայտնի չէ ք, դ, գ, ձ, շ տառերի գրաբարյան նորմավորված արտասանությունը՝ շնչեղ թ^հ և ոչ շնչեղ. ճիշտ է, V դարի բարբառալից հատկանիշների մեջ դրանց շնչեղ արտասանությունը մենք դիտել ենք որպես բարբառալից հատկանիշ, բայց ամենայն հավանականությամբ շնչեղ և ոչ շնչեղ արտասանությունը հատուկ է եղել գրաբարի տերիտորիալ տարբերակումներին. այստեղ նպատակահարմար ենք համարել հիշյալ նկատառումներով 3-րդ կետի դիմաց տալ $\mp$ նշանը. այս նույն ձևով էլ հայտնի չէ գրաբարյան ե-ի և ու-ի ճիշտ արտասանությունը, բայց քանի որ ե-ն որպես հնչույթ տարբերվել է է-ից, գերադասել ենք 30-րդ և 31-րդ կետերի դիմաց գրաբարին հատուկ համարել երկբարբառային արտասանությունը և դնել $+$ նշանը. հայտնի չէ նաև, թե միջին հայերենն ունեցե՞լ է արդյոք կոկորդային հատուկ բաղաձայններ (ղ', կ°). արաբական զ-ն (կաֆը) միջին հայերենի փոխառություններում արտացոլված է մերթ ղ-ով, մերթ կ-ով. բ) քանի որ միջին գրական հայերենը լիովին նորմավորված լեզու չի եղել, ուստի և նրա մեջ տարբեր բարբառների ներդրման չափը որոշելը կապված է մեծ դժվարությունների հետ. այստեղ աշխատել ենք ըստ հնարավորին նկատի ունենալ բուն կիլիկյան միջին գրական հայերենի առանձնահատկությունները, թեև իհարկե, վրիպումներն անխուսափելի են. այս նկատառումով է, որ 18-րդ կետի դիմաց դրել ենք մինուս, թեև հանդիպում է հալոդ ձևը որպես ոչ օրինաչափ երևույթ. մի շարք դեպքերում մենք գերադասել ենք $\pm$ նշանը՝ նկատի ունենալով տվյալ հատկանշի ոչ հստակ արտահայտությունը. այդպես ենք վարվել գործիականի օմ-ի դեպքում, որ գործածվում է միայն եզակի թվում՝ ի տարբերություն Հաջի-Հաբիբլիի (Սվեդիա) ում ձևի, բացառական-գործիականի մ-ի համար, որ միայն մասնակի արտահայտություն ունի (հմմտ. յիսնէ-յիսմէ, ի ձեզնէ-ի ձեզմէ)². 73-րդ կետը գնահատված է $\pm$ -ով, հրովհետև

2 Գրաբարում մ-ն հատուկ չէ անձնական դերանուններին և ազգակցանիշ բառերին, այլ ցուցական, անորոշ դերանուններին, ուստի և 61-րդ կետը գրաբարի դեպքում գնահատված է մինուսով:

հնարավոր է աշխարհաբարյան ետադրությունների և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն (հմմտ. Ֆրիկի մոտ՝ վերայ երկրի, բայց ի հողի մէջ). ավելորդ չենք համարում նշել, որ մասնակի դրսևորում ունի նաև 1007-րդ կետը, որովհետև արդի բարբառների ուզել բայի փոխարեն որպես ապաունիի կազմիչ միջին հայերենում հանդիպում է կամիլ բայը. գ) դժվարություններ է հարուցում նաև արդի գրական լեզուների մի շարք երևույթների զնահատումը, որովհետև այդ լեզուների մշակման պրոցեսը նշանավորվել է քերականական ձևերի որոշակի ընտրությամբ և սկզբնապես տարածված մի շարք ձևերի արտամղումով, մի շարք երևույթներ դարձել են ոչ կենսական, և, ընդհակառակն, այլ երևույթներ սկսել են աշխուժանալ. այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը. թեև գ, ի նախդիրները գործածվել են արևմտահայ գրական լեզվի զարգացման վաղ շրջանում և թեև արևելահայ գրական լեզվում նկատվում է ի նախդրի աշխուժացման միտում, այդ երկու գրական լեզվին էլ նախդիրների գործածությունը հատուկ չենք համարել. մի շարք դեպքերում օգտագործել ենք $\mp$ և $\pm$ նշանները՝ նկատի ունենալով տվյալ երևույթների սահմանափակ արտահայտությունը կամ գրական լեզվի խոսակցական տարբերակին հատուկ լինելը. արևմտահայ գրականին հատուկ են շան, տան ձևեր, բայց ոտանավորի տան համար օգտագործվում է տունի ձևը. շարունակականի կոք մասնիկի գործածությունը հատուկ է միայն խոսակցական տարբերակին. նգն, նկն~յն համապատասխանությունը արևմտահայ գրական լեզվին հատուկ է միայն մասամբ՝ իյնալ, բայց կանգնիլ. արևելահայ գրական լեզվի դեղորայք ձևը հավաքական արժեք ունի, իսկ աղեւք տիպի ձևերը (հմմտ. և մոտեւք) հատուկ են միայն խոսակցական տարբերակին. հարկ ենք համարում նշել, որ ուլ լծորդությունը արևմտահայ գրականում սահմանափակ կիրառություն ունի, թեև նշված է պլյուսով (թողուլ, գրասնուլ):

3. Գրական լեզուների փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (աղյուսակ 13).

Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

1) Չնայած ժամանակագրական տարբեր մակարդակներին պատկանելուն՝ արդի գրական լեզուները գրաբարից տարբերվում են գրեթե նույնքան հատկանիշներով, ինչ միջին գրական հայերենը. սա բացատրվում է մասամբ միջին գրական հայերենի խայտա-

Համեմատվող գրական լեզուներ	Տարբերակիչ հատկանիշներ				
	Հնչյունական		Քերականական		Ընդամենը
	բաղա- ձայնա- կան	ձայնավո- րային	անվանա- կան	բայական	
1. ա. Գրաբար և միջին գրական հայերեն	7,5	5	8,5	3,5	24,5
բ. Գրաբար և արևմտա- հայ գրական լեզու	7	5	7,5	6	25,5
գ. Գրաբար և արևելա- հայ գրական լեզու	3	2	11,5	8,5	25
2. ա. Գիլիկյան միջին գրական հայերեն և արևմտահայ գրա- կան լեզու	1,5	0	10	3	14,5
բ. Գիլիկյան միջին գրական հայերեն և արևելահայ գրա- կան լեզու	4,5	0	14	9,5	28
3. Արևմտահայ և արևելա- հայ գրական լե- զուներ	4	0	11	8,5	23,5

բղետություն, մասամբ գրաբարի և միջին գրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ, մասամբ էլ արդի գրական լեզուների մշակման պրոցեսում գրաբարին նրանց զգալի մերձեցմամբ:

2) Միջին գրական հայերենը և արևմտահայ գրական լեզուն մեծապես տարբերվում են արևելահայ գրական լեզվից՝ գրաբարից լինեցած իրենց տարբերությունների բաշխմամբ. արևելահայ գրական լեզուն առաջին երկուսից ավելի մոտ է գրաբարին հնչյունապես և ավելի հեռու՝ քերականապես:

3) Արևմտահայ գրական լեզուն, ինչպես և սպասելի էր, երկուսն զամ ավելի մոտ է միջին գրական հայերենին, քան արևելահայ գրական լեզուն. առանձնապես աչքի ընկնող են վերջիններիս քերականական տարբերությունները. սա նշանակում է, որ արևմտահայ գրական լեզուն հանդես է գալիս որպես միջին գրական հայե-

րենի ժառանգը՝ ավելի մոտ լինելով սրան, քան գրաբարին. մինչդեռ արևելահայ գրական լեզուն ավելի հեռու է կանգնած (կիլիկյան) միջին գրական հայերենից, քան գրաբարից, որ բացատրվում է նրա և (կիլիկյան) միջին գրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ:

4) Նոր գրական լեզուների՝ իրարից ունեցած տարբերությունները քանակով մոտենում են գրաբարից նրանց ունեցած տարբերություններին, որ բացատրվում է նրանց բարբառային հիմքերի և մշակման ուղիների նշանակալից տարբերությամբ:

Այժմ չորս աղյուսակով ներկայացնենք մեր գրական լեզուների՝ բարբառներից ունեցած տարբերիչ հատկանիշների քանակը՝ բարբարի և միջին գրական հայերենի համար հիմք ընդունելով 40 հատկանիշ պարունակող ցուցակը (միջին գրական հայերենի դեպքում համեմատության համար բերվում են նաև 100 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները), արևմտահայ և արևելահայ գրական լեզուների դեպքում՝ 100 հատկանիշ պարունակող ցուցակը (աղյուսակներ 14—17).

Բարձրագույն դասեր	Տարբերու- թյունները գրաբարից	Բարձրագույն դասեր	Տարբերու- թյունները գրաբարից
1	2	1	2
1 [11] Աղափազար	9,0	33 [29] Ակն	15,0
2 [7] Նիկոմեդիա	9,5	34 [65] Արճեշ	15,0
3 [1] Սուչավա	10,5	35 [24] Արարիկի	15,5
4 [9] Պարտիզադ	10,5	36 [42] Լենինական	15,5
5 [15] Ամասիա	10,5	37 [67] Քեսաբ	15,5
6 [12] Ջմյունսիա	11,0	38 [87] Ասլանբեկ	16,0
7 [31] Սիվրիհիսար	11,0	39 [44] Խոտորջուր	16,0
8 [5] Իոդոթո	11,5	40 [74] Թավրիզ	16,0
9 [6] Պոլիս	11,5	41 [10] Սյուլյոզ	16,5
10 [63] Բաղեշ	11,5	42 [30] Մալաթիա	16,5
11 [57] Խնուս	12,0	43 [72] Վարդենիս	16,5
12 [2] Կուտի	12,5	44 [75] Թրեբիսի	16,5
13 [14] Մարզգան	12,5	45 [155] Շամախի	16,5
14 [17] Տրապիզոն	12,5	46 [13] Եվդոկիա	17,0
15 [41] Կարին	12,5	47 [22] Սեբաստիա	17,0
16 [64] Խլաթ	12,5	48 [35] Բելլան	17,0
17 [3] Նոր-Նախիջևան	13,0	49 [46] Երզնկա	17,0
18 [4] Չալիբլը	13,0	50 [47] Կամախ	17,0
19 [43] Բաբերդ	13,0	51 [69] Շատախ	17,0
20 [56] Բուլանջի	13,0	52 [73] Աստրախան	17,0
21 [16] Օրդու	13,5	53 [20] Ջանիկ	17,5
22 [21] Շապին-Կարա- հիսար	14,0	54 [28] Դարենդե	17,5
23 [53] Եղեսիա	14,0	55 [34] Մարաշ	17,5
24 [55] Մուշ	14,0	56 [37] Հաջի-Հաբիբի	17,5
25 [58] Ալաշկերտ	14,0	57 [52] Տիգրանակերտ	17,5
26 [59] Մանազկերտ	14,0	58 [74] Ողմ	17,5
27 [66] Արծիկ	14,0	59 [48] Հալվորի	18,0
28 [18] Զեֆանոս	14,5	60 [51] Ջոշկաժագ	18,0
29 [19] Մալա	14,5	61 [60] Այդեատուն	18,0
30 [25] Կյուրի	14,5	62 [76] Արզվին	18,0
31 [27] Թոմարզա	14,5	63 [87] Կարճևան	18,0
32 [26] Էվերեկ	15,0	64 [40] Աբամո	18,5
		65 [54] Հազո	18,5

1	2	1	2
66 [70] Մոկս	18,5	94 [111] Գորիս	21,5
67 [84] Աստաղատ	18,5	95 [117] Խոյ	21,5
68 [38] Յոդուն-Օլունկ	19,0	96 [119] Ուրմիա	21,5
69 [43] Բուրդուր	19,0	97 [85] Կամո	22,0
70 [49] Ալթուն-Հունեյն	19,0	98 [94] Չանթրմահալ	22,0
71 [81] Կոդր	19,0	99 [95] Հաթերք	22,0
72 [116] Քյաբքյանջ	19,0	100 [99] Շուշիքենդ	22,0
73 [39] Բարուսիե	19,5	101 [104] Շաղաթ	22,0
74 [15] Խարբերդ	19,5	102 [33] Զեյթուն	22,5
75 [50] Իսմայիլ	19,5	103 [80] Էջմիածին	22,5
76 [68] Վան	19,5	104 [83] Գյուդյառ	22,5
77 [93] Նոր-Ջուղա	19,5	105 [91] Յդնա	22,5
78 [120] Մարաղա	19,5	106 [67] Մենգեշեն	22,5
79 [23] Բրզնիկ	20,0	107 [98] Հարազ	22,5
80 [32] Հաջըն	20,0	108 [102] Տումի	22,5
81 [62] Գեղեգուզան	20,0	109 [107] Թուրուզ	22,5
82 [86] Մեղրի	20,0	110 [79] Աշտարակ	23,0
83 [88] Վաթնաժար	20,5	111 [82] Ղալաչա	23,0
84 [90] Ադուլիս	20,5	112 [110] Շահումյանովսկի	23,0
85 [92] Ջուղա	20,5	113 [78] Քանաքեռ	23,5
86 [114] Հաժարիկ	20,5	114 [100] Շուշի	23,5
87 [36] Քենտր	21,0	115 [108] Կոզեն	23,5
88 [96] Ջանյաթադ	21,0	116 [77] Երևան	24,0
89 [112] Խանադան	21,0	117 [118] Փայաջուկ	24,5
90 [61] Նիշ	21,5	118 [105] Բոլնիս-Խաչեն	25,0
91 [89] Գուդեմիրս	21,5	119 [106] Ղաղաթ	25,0
92 [101] Կաղարծի	21,5	120 [109] Կրքոզարադ	26,0
93 [103] Հադրութ	21,5		

Բարբառախոս վայրեր	Ընդամենը 40 հատվածի պարունակող ցու- ցակի	Տարբերվելու ենք միջին գրական հայերենից						
		ընդ 100 հատվածի շարունակող ցուցակի						
		հնչյունական			քերականական			ընդամենը
		բա- ղաձ.	ձայ- նավ.	ընդա- մենը	անվ.	բայ.	ընդա- մենը	
1	2	3	4	5	6	7	8	9
1 [60] Այգեառուն	7,5	4,5	7,0	11,5	9,0	7,0	16,0	27,5
2 [62] Գեղեղա- գան	7,5	4,0	10,5	14,5	7,5	6,5	14,0	28,5
3 [2] Կուտի	8,0	6,5	4,0	10,5	5,0	6,5	11,5	22,0
4 [57] Խնուս	8,0	6,0	2,0	8,0	9,0	7,5	16,5	24,5
5 [56] Բուլանլի	9,0	6,0	4,0	10,0	9,0	8,5	17,5	27,5
6 [59] Մանազ- կերտ	9,0	5,0	5,0	10,0	9,0	7,5	16,5	26,6
7 [61] Նիշ	9,0	7,0	6,0	13,0	9,0	7,0	16,0	29,0
8 [63] Բաղեշ	9,0	6,0	2,0	8,0	9,0	7,5	16,5	24,5
9 [43] Բաբերդ	9,5	5,0	1,5	6,5	6,5	6,5	13,0	19,5
10 [54] Հազգո	9,5	5,0	6,0	11,0	9,0	7,0	16,0	27,0
11 [7] Նիկոմեդիա	10,0	5,0	3,0	8,0	12,5	5,0	17,5	25,5
12 [37] Հաջի-Հա- բեբե	10,0	6,0	16,0	22,0	9,0	5,5	14,5	36,5
13 [55] Մուշ	10,0	6,0	5,0	11,0	9,0	7,5	16,5	27,5
14 [58] Ալաշկերտ	10,0	8,0	2,0	10,0	10,0	7,5	17,5	27,5
15 [64] Խլաթ	10,0	6,0	5,0	11,0	9,0	7,5	16,5	27,5
16 [41] Կաբին	10,5	8,0	1,0	9,0	7,5	4,5	12,0	21,0
17 [1] Սուշավա	11,0	5,5	2,0	7,5	7,5	6,0	13,5	21,0
18 [5] Ռոդոսթո	11,0	4,5	1,5	6,0	10,5	4,0	14,5	20,5
19 [9] Գաբրիել	11,0	4,5	6,5	11,0	11,0	8,0	19,0	30,0
20 [16] Օրդու	11,0	4,0	1,0	5,0	8,5	7,0	15,5	20,5
21 [3] Նոր-Նա- խիջևան	11,5	7,0	3,0	10,0	10,5	5,0	15,5	25,5
22 [4] Զալբլր	11,5	6,5	3,0	9,5	10,5	4,5	15,0	24,5
23 [29] Ակն	11,5	9,0	9,0	18,0	6,0	7,0	13,0	31,0
24 [38] Յոզուն- Օլուկ	11,5	6,5	18,5	25,0	8,5	6,5	15,0	40,0
25 [44] Խոտորվուր	11,5	8,0	3,5	11,5	8,0	7,0	15,0	26,5

1	2	3	4	5	6	7	8	9
26 [1] Ձմռան ժամ	11,5	6,5	7,0	13,5	8,5	8,5	17,0	30,5
27 [15] Ամառ	12,0	7,0	3,5	10,5	12,0	5,5	17,5	28,0
28 [17] Տրամադրություն	12,0	4,5	4,0	8,5	11,0	6,0	17,0	25,5
29 [21] Շապին-կարանիսար	12,0	8,0	4,0	12,0	8,0	6,0	14,0	26,0
30 [23] Կյուրի	12,0	6,0	8,0	14,0	10,5	5,0	15,5	29,5
31 [30] Մալաթիա	12,0	6,5	9,5	16,0	6,5	5,0	11,5	27,5
32 [39] Քաբուսի	12,0	7,0	18,0	25,0	8,0	7,0	15,0	40,0
33 [40] Արամ	12,0	6,0	16,5	22,5	8,5	5,5	14,0	36,5
34 [65] Արևի	12,0	6,0	8,0	14,0	9,0	8,5	17,5	31,5
35 [11] Աղափա-զար	12,5	6,5	3,5	10,0	12,5	4,0	16,5	26,5
36 [12] Ձմռան ժամ	12,5	6,0	2,5	8,5	11,0	5,0	16,0	24,5
37 [26] Էվերեկ	12,5	5,5	12,5	18,0	11,5	5,0	16,5	34,5
38 [31] Սիվրի-սար	12,5	7,5	5,0	12,5	10,0	5,5	15,5	28,0
39 [36] Քեսար	12,5	8,5	18,5	27,0	7,0	7,5	14,5	41,5
40 [49] Ալթուն-չուսի	12,5	4,0	6,0	10,0	8,5	8,0	16,5	26,5
41 [6] Պոլիս	13,0	6,0	4,5	10,5	11,5	6,0	17,5	28,0
42 [14] Մարգար	13,0	7,5	6,5	14,0	10,5	5,0	15,5	29,5
43 [18] Ջեֆանու	13,0	6,5	5,5	12,0	8,5	5,5	14,0	26,0
44 [19] Մալա	13,0	6,5	6,0	12,5	7,5	6,0	13,5	26,0
45 [20] Ջանիկ	13,0	6,5	6,5	13,0	7,5	7,5	15,0	28,0
46 [45] Պարբեր	13,0	8,5	6,0	14,5	9,0	7,5	16,5	31,0
47 [50] Իսմայիլ	13,0	6,5	7,5	14,0	9,0	9,0	18,0	32,0
48 [52] Տիգրանա-կերտ	13,0	9,5	8,5	18,0	9,5	7,5	17,0	35,0
49 [66] Արծիկ	13,0	6,0	8,0	14,0	9,0	8,5	17,5	31,5
50 [13] Եվդոկիա	13,5	7,5	9,0	16,5	8,0	4,5	12,5	29,0
51 [42] Լեւինական	13,5	8,0	5,0	13,0	7,5	4,5	12,0	25,0
52 [46] Երզնկա	13,5	9,0	6,0	15,0	9,5	7,5	17,0	32,0
53 [47] Կամախ	13,5	10,0	5,0	15,0	9,5	6,5	16,0	31,0
54 [10] Սյուլյոզ	14,0	6,5	3,5	10,0	11,5	6,5	18,0	28,6
55 [27] Թումարզա	14,0	8,5	12,0	20,5	11,5	4,5	16,0	36,5
56 [48] Հավորի	14,5	7,5	8,0	15,5	9,0	7,0	16,0	31,5
57 [22] Սեբաստիա	15,0	11,0	9,5	20,5	7,5	5,5	13,0	33,5

1	2	3	4	5	6	7	8	9
58 [28] Դարենդե	15,0	7,5	10,0	17,5	10,5	4,5	10,5	32,5
59 [24] Արաբկեր	15,5	7,5	8,0	15,5	10,0	7,0	17,0	32,5
60 [53] Եղեսիա	15,5	7,0	4,0	11,0	10,0	9,0	19,0	30,0
61 [34] Մարաշ	16,0	3,0	18,0	21,0	9,5	6,0	15,5	36,5
62 [69] Շատախ	16,0	6,5	11,5	18,0	9,5	8,0	17,5	35,5
63 [75] Թերեխ	16,0	7,5	3,5	11,0	12,5	7,5	20,0	32,0
64 [35] Բեյլան	16,5	4,5	11,5	16,0	11,0	7,0	18,0	34,0
65 [76] Արդվին	16,5	6,0	1,5	7,5	11,5	10,0	21,5	29,0
66 [113] Բուրդուր	16,5	10,5	8,5	19,0	11,0	10,0	21,0	40,0
67 [67] Բասա	17,0	7,0	10,5	17,5	9,0	7,0	16,0	33,5
68 [71] Ողժ	17,0	6,5	12,5	19,0	11,0	9,5	20,5	39,5
69 [8] Ասլանբեկ	17,5	7,0	12,5	19,5	12,5	4,5	17,0	36,5
70 [70] Մոկս	17,5	6,5	12,5	19,0	10,5	9,5	20,0	39,5
71 [23] Բրզնիկ	18,0	11,0	11,5	22,5	7,5	5,5	13,0	35,5
72 [32] Հաջըն	18,0	9,0	15,0	24,0	8,5	5,5	14,0	38,0
73 [68] Վան	18,0	7,0	9,5	16,5	9,0	8,5	17,5	34,0
74 [84] Աստաղաա	18,0	7,5	3,5	11,0	12,5	10,5	23,5	34,0
75 [94] Զահար- մահալ	18,0	7,5	4,0	11,5	12,5	9,5	22,0	33,5
76 [33] Զեյթուն	19,0	6,0	22,5	28,5	8,5	5,0	14,0	42,0
77 [97] Մհհարիկեն	19,0	9,0	11,5	20,5	16,0	9,5	25,5	46,0
78 [72] Վարդենիս	19,5	8,0	9,0	17,0	13,5	14,5	28,0	45,0
79 [92] Զուղա	19,5	6,0	5,5	11,5	13,5	13,5	27,0	38,5
80 [96] Զանյաթաղ	19,5	10,5	14,0	24,5	14,0	12,0	26,0	50,5
81 [110] Շահում- յանովսկ	19,5	10,0	14,0	24,0	14,5	13,0	27,5	51,5
82 [78] Քանաքեռ	20,0	9,0	5,0	14,0	14,5	11,5	26,0	40,0
83 [81] Կոզբ	20,0	11,0	3,0	14,0	15,5	12,0	27,5	41,5
84 [101] Կաղարծի	20,0	11,5	15,0	26,5	14,0	12,0	26,0	52,5
85 [103] Հաղրութ	20,0	10,5	15,0	25,5	13,0	12,0	25,0	50,5
86 [111] Գորիս	20,0	10,0	13,0	23,0	14,5	12,0	25,5	49,5
87 [117] Խոյ	20,0	8,5	8,5	17,0	13,5	12,5	26,0	43,0
88 [119] Ուրմիա	20,0	10,0	12,0	22,0	13,0	11,5	24,5	46,5
89 [120] Մարաղա	20,0	12,0	11,5	23,5	15,0	10,5	25,5	49,9
90 [73] Աստաղաան	20,5	7,0	2,5	9,5	18,5	10,5	29,0	38,5
91 [74] Թավրիզ	20,5	9,0	4,5	13,5	16,5	10,0	26,5	40,0

1	2	3	4	5	6	7	8	9
92 [95] Հաթերք	20,5	12,0	14,0	26,0	14,0	12,0	26,0	52,0
93 [99] Շուշիքենդ	20,5	10,5	15,0	25,5	13,5	12,5	26,0	51,5
94 [104] Շաղախ	20,5	9,5	16,0	25,5	13,0	14,0	27,0	52,5
95 [80] Էջմիածին	21,0	9,5	5,0	14,5	14,5	11,5	26,0	40,5
96 [83] Գյումրի	21,0	9,0	8,0	17,0	13,5	11,0	24,5	41,5
97 [98] Հալաբ	21,0	12,0	16,0	28,0	14,0	12,0	26,0	54,0
98 [102] Տոմար	21,0	12,5	15,0	27,5	13,0	12,0	25,0	52,5
99 [107] Թուրքմեն	21,0	8,0	11,5	19,5	14,5	12,0	26,5	46,0
100 [118] Փայտ- շուշի	21,0	9,0	12,5	21,5	13,0	12,5	25,5	47,0
101 [77] Երևան	21,5	10,5	5,0	15,5	14,5	11,5	26,0	41,5
102 [93] Նոր-Ջու- ղա	21,5	8,0	5,5	13,5	13,5	12,0	25,5	39,0
103 [100] Շուշի	22,0	12,0	14,5	26,5	14,5	12,5	27,0	53,5
104 [115] Շամախի	22,0	9,0	9,0	18,0	17,0	13,0	30,0	48,0
105 [86] Մեղրի	22,5	10,5	18,0	28,5	14,0	15,0	29,0	57,5
106 [82] Ղալաշա	23,0	10,0	9,0	19,0	13,5	13,0	26,5	45,5
107 [91] Յալա	23,0	9,5	17,0	26,5	15,0	13,0	28,0	54,5
108 [87] Կարճևան	23,5	10,0	16,5	26,5	14,5	14,5	29,0	55,5
109 [105] Բոլնիս- Պաշին	23,5	10,0	16,0	26,0	11,5	12,5	24,0	50,0
110 [106] Ղաղախ	23,5	8,0	14,0	22,0	14,0	12,0	26,0	48,0
111 [112] Պանոս- դա	23,5	9,5	17,5	27,0	14,5	12,0	26,5	53,5
112 [79] Աղաթախ	24,0	12,0	6,0	18,0	14,5	11,5	26,0	44,0
113 [109] Կիրովա- բադ	24,5	9,0	16,0	25,0	14,0	12,5	26,5	51,5
114 [116] Բյուր- բյանի	24,5	11,0	11,0	22,0	15,0	11,0	26,0	48,0
115 [85] Կամո	25,0	9,5	8,5	18,0	15,0	12,5	27,5	45,5
116 [88] Գուգեմիս	25,0	7,0	17,5	24,5	15,0	15,0	30,0	54,5
117 [90] Աղուլիս	25,5	12,0	17,0	29,0	16,5	14,0	30,5	59,5
118 [108] Կոզին	25,0	11,0	13,5	24,5	12,0	10,0	22,0	46,5
119 [88] Վարդա- վաթ	26,0	8,0	17,5	25,5	15,0	15,0	30,0	55,5
120 [114] Հավարիկ	26,0	9,0	15,5	24,5	14,5	13,0	27,5	52,0

Բարբառախոս վայրեր	Տարբերությունները արևմտահայ գրական լեզվից						
	հնչյունական			բերականական			ընդամենը
	բա- ղաձ.	ձայ- նավ.	ընդ.	անվ.	բայ.	ընդ.	
1	2	3	4	5	6	7	8
1 [5] Ռոզոսթո	5,0	1,5	4,5	2,5	3,0	3,5	10,0
2 [12] Զմյունհա	4,5	2,5	7,0	2,0	2,0	4,0	11,0
3 [7] Նիկոմեդիա	5,5	3,0	8,5	2,5	3,0	5,5	14,0
4 [16] Օրդու	2,5	1,0	3,5	4,5	6,0	10,5	14,0
5 [17] Տրապիզոն	4,0	4,0	8,0	2,0	4,0	6,0	14,0
6 [6] Պոլիս	5,5	4,5	10,0	1,5	3,0	4,5	14,5
7 [43] Բարերդ	5,5	1,5	7,0	3,5	4,5	8,0	15,0
8 [15] Ամասիա	6,5	3,5	10,0	4,0	2,5	6,5	16,5
9 [3] Նոր-Նախիջևան	7,0	3,0	10,0	3,0	4,0	7,0	17,0
10 [1] Սուշավա	5,0	2,0	7,0	4,0	6,5	10,5	17,5
11 [4] Չալթըր	8,0	3,0	11,0	3,0	3,5	6,5	17,5
12 [53] Եղեսիա	5,0	4,0	9,0	1,5	7,0	8,5	17,5
13 [11] Աղափաղար	8,0	3,5	11,5	2,5	4,0	6,5	18,0
14 [41] Կարին	8,5	1,0	9,5	5,0	3,5	8,5	18,0
15 [9] Պարտիզակ	5,0	6,5	11,5	3,0	5,0	8,0	19,5
16 [10] Սյուլյոզ	9,0	3,5	12,5	3,5	3,5	7,0	19,5
17 [21] Շապին-Կարա- հասար	8,5	4,0	12,5	4,5	4,0	8,5	21,0
18 [2] Կուտի	6,0	4,0	10,0	6,5	5,5	12,0	22,0
19 [25] Կյուրին	7,5	8,0	15,5	4,5	2,0	6,5	22,0
20 [31] Սիվրիհասար	9,0	5,0	14,0	3,5	4,5	8,0	22,0
21 [14] Մարզվան	8,0	6,5	14,5	4,0	4,0	8,0	22,5
22 [18] Զեֆանոս	6,0	5,5	11,5	4,5	6,5	16,5	22,5
23 [19] Մալա	6,0	6,0	12,0	3,5	7,0	10,5	22,5
24 [42] Լենինական	8,5	5,0	13,5	5,5	3,5	9,0	22,5
25 [44] Խոստորընդ	7,5	3,5	11,0	4,0	7,5	11,5	22,5
26 [13] Եվդոկիա	7,0	9,0	16,0	4,0	3,5	7,5	23,5
27 [30] Մալաթիա	5,0	9,5	14,5	4,5	4,5	9,0	23,5
28 [49] Ալթուն-Հուսեյն	6,5	6,0	12,5	5,5	6,0	11,5	24,0
29 [8] Ասլանբեկ	5,5	12,5	18,5	2,5	4,5	7,0	25,0

1	2	3	4	5	6	7	8
30 [28] Դաբինդե	7,0	10,0	17,0	6,0	2,5	8,5	25,5
31 [20] Զանիկ	8,0	6,5	14,5	3,5	8,5	12,0	26,5
32 [24] Արաբկեր	8,0	8,0	16,0	6,0	5,0	11,0	27,0
33 [26] Էդերեկ	5,0	12,5	17,5	6,5	3,0	9,5	27,0
34 [76] Արդվին	5,5	1,5	7,0	11,0	9,0	20,0	27,0
35 [27] Քոմարզա	8,0	12,0	20,0	5,5	2,5	8,0	28,0
36 [35] Բեյլան	6,0	11,5	17,5	5,5	5,0	10,5	28,0
37 [51] Չմշկածաղ	9,0	7,0	16,0	5,5	6,5	12,0	28,0
38 [57] Պնու	6,5	2,0	8,0	11,5	8,0	19,5	28,0
39 [63] Բաղեշ	6,5	2,0	8,5	11,5	8,0	19,5	28,0
40 [75] Քբիլիսի	9,0	3,5	10,5	10,0	7,5	17,5	28,0
41 [47] Կամախ	10,5	5,0	15,5	6,5	6,5	13,5	28,5
42 [58] Ալաշկերտ	8,5	2,0	10,5	10,5	8,5	19,0	29,0
43 [46] Երզնկա	9,5	6,0	15,5	6,5	7,5	14,0	29,5
44 [59] Մանազկերտ	5,5	5,0	10,5	11,5	8,0	19,5	30,0
45 [45] Պարբերդ	11,0	6,0	17,0	6,0	7,5	13,5	30,5
46 [48] Հալվորի	8,0	8,0	16,0	8,0	6,5	14,5	30,5
47 [22] Մեքաստիա	11,5	9,5	21,0	4,5	4,5	9,0	30,0
48 [54] Հազդո	6,5	6,0	12,5	11,0	7,5	18,5	31,0
49 [55] Մուշ	6,5	5,0	11,5	11,5	8,0	19,5	31,0
50 [56] Բուլանդդ	6,5	4,0	10,5	11,5	9,0	20,5	31,0
51 [64] Պլաթ	6,5	5,0	11,5	11,5	8,0	19,5	31,0
52 [23] Բրդնիկ	11,5	11,5	23,0	4,5	4,5	9,0	32,0
53 [50] Իսմայիլ	9,0	7,5	16,5	8,5	7,0	15,5	32,0
54 [25] Ակն	9,5	9,0	18,5	7,0	7,0	14,0	32,5
55 [34] Մարաշ	2,5	18,0	20,5	5,5	6,5	12,0	32,5
56 [52] Տիգրանազկերտ	7,0	8,5	15,0	11,0	7,0	18,0	33,5
57 [60] Այգեստուն	6,0	7,0	13,0	13,5	7,0	20,5	33,5
58 [66] Արծկե	6,5	8,0	14,5	11,5	9,0	20,5	35,0
59 [68] Վան	9,5	9,5	19,0	8,5	7,5	16,0	35,0
60 [94] Չահարմահալ	7,0	4,0	11,0	15,5	8,5	24,0	35,0
61 [67] Բասա	6,5	10,5	17,0	12,5	6,0	18,5	35,5
62 [64] Աստապատ	7,0	3,5	10,5	14,5	11,0	25,5	36,0
63 [62] Գեղեղուզան	5,5	10,5	16,0	13,5	7,0	20,5	36,5
64 [61] Նիշ	8,5	6,0	14,5	15,5	7,0	22,5	37,0

1	2	3	4	5	6	7	8
65 [65] Արճեշ	8,5	8,0	16,5	11,5	9,0	20,5	27,0
66 [73] Աստրախան	9,0	2,5	11,5	13,5	13,0	26,5	38,0
67 [74] Թազրիզ	9,0	4,5	13,5	12,5	12,5	25,0	38,5
68 [81] Կոզբ	11,0	3,0	14,0	13,5	11,0	24,5	38,5
69 [80] Էջմիածին	9,0	5,0	14,0	14,5	10,5	25,0	39,0
70 [69] Շատախ	9,0	11,5	20,5	10,5	8,5	19,0	39,5
71 [72] Վարդգեսիս	8,5	9,0	17,5	10,5	11,5	22,0	39,5
72 [77] Երեան	10,0	5,0	15,0	14,5	10,5	25,0	40,0
73 [78] Քանաքեռ	10,5	6,0	15,5	14,5	10,5	25,0	40,5
74 [30] Հաջըն	9,5	15,0	24,5	9,5	7,0	16,5	41,0
75 [33] Զեյթուն	5,5	22,5	28,0	7,5	5,5	13,0	41,0
76 [40] Արամո	7,5	16,5	24,0	10,0	7,0	17,0	41,0
77 [71] Ողմ	9,0	12,5	21,5	12,0	7,5	19,5	41,0
78 [113] Բուրզուր	12,0	8,5	20,5	11,5	9,0	20,5	41,0
79 [117] Խոյ	11,0	8,5	19,5	9,5	12,0	21,5	41,0
80 [70] Մոկու	9,0	12,5	21,5	11,5	8,5	20,0	41,5
81 [37] Հաջի-Հաբիրի	7,5	16,0	23,5	12,5	6,0	18,5	42,0
82 [85] Կամո	9,5	8,5	18,0	12,5	11,5	24,0	42,0
83 [79] Աշտարակ	11,5	6,0	17,5	14,5	10,5	25,0	42,5
84 [92] Զուղա	7,5	5,5	13,0	17,0	12,5	29,5	42,5
85 [93] Նոր-Զուղա	7,5	5,5	13,0	17,0	12,5	29,5	42,5
86 [39] Քարուսիկ	8,5	18,0	26,5	11,5	5,0	16,5	43,0
87 [115] Շամախի	10,5	9,0	19,5	12,0	12,0	24,0	43,5
88 [116] Քյարքյանջ	12,5	11,0	23,5	10,0	10,0	20,0	43,5
89 [38] Թողուն-Օլուկ	8,0	18,5	26,5	11,5	6,0	27,5	44,0
90 [83] Գյառգյառ	8,5	8,0	16,5	16,0	11,5	27,5	44,0
91 [119] Ուրմիա	12,5	12,0	24,5	10,0	11,0	21,0	45,5
92 [108] Կոզին	10,5	13,5	24,0	11,5	10,5	22,0	46,0
93 [120] Մարաղա	14,5	11,5	26,0	10,0	10,0	20,0	46,0
94 [82] Ղալաչա	9,5	9,0	18,5	16,0	13,5	29,5	48,0
95 [114] Հավարիկ	9,5	15,5	25,0	11,0	12,0	23,0	48,0
96 [118] Փայաջուկ	11,5	12,5	24,0	12,0	12,0	24,0	48,0
97 [36] Քեսաբ	10,0	18,5	28,5	11,5	8,5	20,0	48,5
98 [97] Մեհաբեդին	10,5	11,5	22,0	17,5	9,5	27,0	49,0
99 [107] Թովուզ	9,5	11,5	21,0	15,5	12,5	28,0	49,0

1	2	3	4	5	6	7	8
100 [106] Ղաղախ	10,5	13,5	23,5	15,5	12,5	28,0	51,5
101 [111] Գորիս	11,5	13,0	24,5	17,0	11,0	28,0	52,5
102 [87] Կարճեկան	9,5	16,5	26,0	13,5	13,5	27,0	53,0
103 [88] Վարճավար	7,5	17,5	25,0	14,0	14,0	28,0	53,5
104 [105] Բոլնիս-Պաշեն	11,5	16,0	27,5	14,0	11,5	25,5	53,6
105 [112] Քանադահ	9,0	17,5	26,5	15,0	11,0	26,5	53,0
106 [96] Ջանյաթաղ	12,0	14,0	26,0	16,5	11,0	27,5	53,5
107 [109] Կիրովարադ	10,5	16,0	26,5	15,5	11,5	27,0	53,5
108 [89] Գուգեմնիս	8,5	17,5	26,0	14,0	14,0	28,0	54,0
109 [110] Շահումյանովսկ	11,5	14,0	25,5	17,0	12,0	29,0	54,5
110 [95] Հաթերք	13,5	14,0	27,5	16,5	11,0	27,5	55,0
111 [101] Կաղարծի	13,0	15,0	28,0	16,5	11,0	27,5	55,5
112 [103] Հաղբութ	12,0	15,0	27,0	17,5	11,0	28,5	55,5
113 [99] Շուշիքենդ	12,0	15,0	27,0	18,0	11,5	29,5	56,5
114 [100] Շուշի	13,5	14,5	28,0	17,0	11,5	28,5	56,5
115 [98] Հաբազ	13,5	16,0	29,5	16,5	11,0	27,5	57,0
116 [102] Տումի	14,0	15,0	29,0	17,5	11,0	28,5	57,5
117 [104] Շաղախ	11,0	16,0	27,0	17,5	13,0	20,5	57,5
118 [86] Մեղրի	10,0	18,0	28,0	16,0	14,0	30,0	58,0
119 [90] Ազուլիս	12,5	17,0	29,5	16,0	15,5	31,5	61,0
120 [91] Ցղնա	12,0	17,0	29,0	17,5	14,5	32,0	61,0

Բարբառաբոս փայլեր	Տարբերությունները արևելահայ գրական լեզվից						
	հնչյունական			քերականական			ընդա- մենը
	բա- ղաձ.	ձայ- նավ.	ընդ.	անվ.	բայ.	ընդ.	
1	2	3	4	5	6	7	8
1 [80] Էջմիածին	7,0	5,0	12,0	3,5	2,0	5,5	17,5
2 [84] Աստապատ	4,0	3,5	7,5	5,5	4,5	10,0	17,5
3 [94] Չահարմահալ	6,0	4,0	10,0	6,5	2,0	8,5	18,5
4 [75] Թբիլիսի	5,0	3,5	8,5	6,5	4,0	10,5	19,0
5 [77] Երևան	8,0	5,0	13,0	3,5	3,0	6,5	19,5
6 [81] Կողբ	9,5	3,0	12,5	4,5	2,5	7,0	19,5
7 [76] Արզվին	3,5	1,5	5,0	9,5	5,5	15,0	20,0
8 [67] Քանաքեռ	8,5	5,0	13,5	3,5	3,0	6,5	20,0
9 [73] Աստրախան	6,5	2,5	9,0	5,5	7,5	13,0	22,0
10 [74] Թավրիզ	6,5	4,5	11,0	3,5	8,0	11,5	22,5
11 [79] Աշտարակ	9,5	6,0	15,5	3,5	4,0	7,5	23,0
12 [92] Զուղա	4,5	5,5	10,0	6,0	7,0	13,0	23,0
13 [93] Նոր-Զուղա	4,5	5,5	10,0	6,0	6,0	7,0	23,0
14 [41] Կարին	7,5	1,0	8,5	12,0	5,5	17,5	26,0
15 [83] Գյուղյառ	6,5	8,0	14,5	5,0	7,0	12,0	26,5
16 [82] Ղալաշա	9,5	9,0	16,5	5,0	7,0	12,0	28,5
17 [43] Բարերդ	6,5	1,5	8,0	13,5	7,5	21,0	29,0
18 [1] Սուշավա	5,0	2,0	7,0	14,0	8,5	22,5	29,5
19 [17] Տրապիզոն	5,0	4,0	9,0	11,0	9,5	20,5	29,5
20 [42] Լենինական	7,5	5,0	12,5	11,5	5,5	17,0	29,5
21 [107] Թովուզ	7,5	11,5	19,0	4,5	6,5	10,5	29,5
22 [15] Ամասիա	3,5	3,5	7,0	12,0	11,0	23,0	30,0
23 [44] Խոտորջուր	6,5	3,5	10,0	12,0	8,0	20,0	30,0
24 [113] Բուրդուր	9,0	8,5	17,5	9,0	3,5	12,5	30,0
25 [3] Նոր-Նախիջևան	8,5	3,0	11,5	11,0	8,0	19,0	30,5
26 [85] Կամա	8,0	8,5	16,5	7,5	6,5	14,0	30,5
27 [115] Շամախի	7,5	9,0	16,5	8,5	5,5	14,0	30,5
28 [4] Չալթըր	10,0	3,0	13,0	11,0	7,5	18,5	31,5
29 [5] Ռոդոսթո •	7,0	1,5	8,5	13,5	9,5	23,0	31,5

1	2	3	4	5	6	7	8
30 [27] Մեհերշեն	8,5	11,5	20,0	6,5	5,0	11,0	31,5
31 [53] Եղեսիա	8,5	4,0	12,5	9,5	10,0	19,5	32,0
32 [67] Բաստ	3,5	10,5	14,0	11,5	6,5	18,0	32,0
33 [106] Ղաղախ	8,5	13,0	21,5	4,5	6,0	10,5	32,0
34 [108] Կոզեն	6,5	13,5	20,0	5,5	7,0	12,5	32,5
35 [6] Գոլիս	6,5	4,5	11,0	12,5	9,5	22,0	33,0
36 [116] Քյարքյանի	9,5	11,0	20,5	7,0	5,5	12,5	33,0
37 [31] Սիվրիբնար	6,0	5,0	11,0	10,5	12,0	22,5	33,5
38 [2] Կուտի	6,0	4,0	10,0	15,5	8,5	24,0	34,0
39 [68] Վան	7,0	9,5	16,5	11,5	6,0	17,5	34,0
40 [109] Կիրովարադ	8,5	16,0	24,5	4,5	5,0	9,5	34,0
41 [11] Աղափազար	6,0	3,5	9,5	13,5	11,5	25,0	34,5
42 [12] Ջոյունիա	8,5	2,5	11,0	13,0	10,5	23,5	34,5
43 [7] Նիկոմեդիա	8,5	3,0	11,5	13,5	10,5	24,0	35,5
44 [35] Բեյլան	6,0	11,5	17,5	9,5	8,5	18,0	35,5
45 [16] Օբդու	6,5	1,0	7,5	16,5	12,5	28,0	35,5
46 [57] Խնուս	6,5	2,0	8,5	14,5	12,5	27,0	35,5
47 [58] Ալաշկերտ	7,5	2,0	9,5	13,5	12,5	26,0	35,5
48 [88] Վարհապար	4,5	17,5	22,0	8,0	5,5	13,5	35,5
49 [72] Վարդենիս	6,5	9,0	15,5	7,5	13,0	20,5	36,0
50 [114] Հավարիկ	6,5	15,5	22,5	8,5	5,5	14,0	36,0
51 [63] Բազեշ	7,5	2,0	9,5	14,5	12,5	27,0	36,5
52 [89] Գուդեմնիս	5,5	17,5	23,0	8,0	15,5	13,5	36,5
53 [21] Շապիւն-Կարա- հիսար	10,5	4,0	14,5	13,0	9,5	22,5	37,0
54 [56] Բուլանդդ	6,5	4,0	10,5	14,5	12,0	26,5	37,0
55 [59] Մանազկերտ	5,5	5,0	10,5	14,5	12,5	27,0	37,5
56 [87] Կարճեան	5,5	16,5	22,0	7,5	8,0	15,5	37,5
57 [54] Հազդո	5,5	6,0	11,5	15,0	11,5	26,5	38,0
58 [18] Ջեֆանոս	7,0	5,5	12,5	13,5	12,5	26,0	38,5
59 [19] Մալա	7,0	6,0	13,0	12,5	13,0	25,5	38,5
60 [55] Մուշ	6,5	5,0	11,5	14,5	12,5	27,0	38,5
61 [64] Խլաթ	6,5	5,0	11,5	14,5	12,5	27,0	38,5
62 [69] Շատախ	6,5	11,5	18,0	11,5	9,0	20,5	38,5
63 [70] Մոկս	6,5	12,5	19,0	12,5	7,0	19,5	38,5
64 [111] Գորիս	9,5	13,0	22,5	11,5	4,5	16,0	38,5

1	2	3	4	5	6	7	8
65 [117] Խոյ	10,0	8,5	18,5	11,5	8,5	20,0	38,5
66 [10] Սյուլյոզ	11,0	3,5	14,5	14,5	10,0	24,5	39,0
67 [20] Զանիկ	8,0	6,5	14,5	12,5	12,0	24,5	39,0
68 [105] Բոլնիս-Քաչեն	9,5	16,0	25,5	8,5	5,0	13,5	39,0
69 [9] Պարտիզանկ	8,0	6,5	14,5	14,0	11,0	25,0	39,5
70 [25] Կյուրիւն	9,5	8,0	17,5	12,5	10,0	25,5	40,0
71 [49] Ալթուն-Հուսեյն	7,5	6,0	13,5	15,5	11,0	26,5	40,0
72 [62] Գելիեղուզան	5,5	10,5	16,0	12,5	11,5	24,0	40,0
73 [86] Մեղրի	6,0	18,0	24,0	9,0	7,5	16,5	40,5
74 [110] Շահումյանովսկ	9,5	14,0	23,5	11,5	5,5	17,0	40,5
75 [118] Փայաջուկ	9,5	12,5	22,0	10,0	8,5	18,5	40,5
76 [120] Մարաղա	12,5	11,5	24,0	10,0	6,5	16,5	40,0
77 [24] Արարիկի	10,0	8,0	18,0	13,0	10,5	23,5	41,5
78 [119] Ուրմիա	10,5	12,0	22,5	12,0	7,5	19,5	42,0
79 [13] Եվդոկիա	8,0	9,0	17,0	14,0	11,5	25,5	42,5
80 [14] Մարզվան	10,0	6,5	16,5	13,5	12,5	26,0	42,5
81 [60] Այգետուն	7,0	7,0	14,0	16,5	12,0	28,5	42,5
82 [65] Արճեշ	6,5	8,0	14,5	14,5	13,5	28,0	42,5
83 [66] Արծկե	6,5	8,0	14,5	14,5	13,5	28,0	42,5
84 [100] Շուշի	11,5	14,5	26,0	11,5	5,0	16,5	42,5
85 [28] Դարենդե	8,0	10,0	18,0	15,0	10,0	25,0	43,0
86 [51] Չմշկաձագ	10,0	7,0	17,0	15,5	10,5	26,0	43,0
87 [61] Նիշ	8,5	6,0	14,5	16,5	12,0	28,5	43,0
88 [95] Հաթերք	11,5	14,0	25,5	11,0	6,5	17,5	43,0
89 [47] Կամախ	12,5	5,0	17,5	15,5	10,5	26,0	43,5
90 [101] Կաղարծի	11,0	15,0	23,0	11,0	6,5	17,5	43,5
91 [52] Տիգրանակերտ	10,0	8,5	18,5	15,0	10,5	25,5	44,0
92 [8] Ասլանբեկ	9,5	12,5	22,0	12,5	10,0	22,5	44,5
93 [45] Խարբերդ	13,0	6,0	19,0	14,0	11,5	25,5	44,5
94 [46] Երզնկա	11,5	6,0	17,5	15,5	11,5	27,0	44,5
95 [91] Յդնա	10,0	17,0	27,0	9,5	8,0	17,5	44,5
96 [96] Զանյաբադ	11,0	14,0	25,0	11,0	8,5	19,5	44,5
97 [112] Խանազան	8,0	17,5	25,5	10,5	8,5	19,0	44,5
98 [26] Էվերեկ	6,0	12,5	18,5	17,0	9,5	26,5	45,0
99 [27] Թումարդա	9,0	12,0	21,0	14,0	10,0	24,0	45,0

1	2	3	4	5	6	7	8
100 [30] Մալաթիա	9,0	9,5	18,5	14,5	12,0	26,5	45,0
101 [98] Հարավ	11,5	16,5	27,5	11,0	6,5	17,5	45,0
102 [71] Ողմ	6,5	12,5	19,5	16,0	11,0	27,0	46,0
103 [48] Հալվորի	10,0	8,0	18,0	16,0	12,5	28,5	46,5
104 [90] Աղուլիս	9,5	17,0	26,5	11,0	9,0	20,0	46,5
105 [99] Շուշիքենդ	11,0	15,0	26,0	12,5	8,0	20,5	46,5
106 [103] Հաղբուխ	11,0	15,0	26,0	12,0	18,5	28,5	46,5
107 [104] Շաղախ	10,0	16,0	26,0	12,0	8,5	20,5	46,5
108 [29] Ակն	11,5	9,0	20,5	14,0	12,5	26,5	47,0
109 [50] Իսմայիլ	10,0	7,5	17,5	17,5	12,5	20,0	47,5
110 [34] Մարաշ	3,5	18,0	21,5	15,5	11,0	26,5	48,0
111 [102] Տուսի	13,0	15,0	28,0	12,0	8,5	20,5	48,5
112 [22] Յեբասաիա	13,5	9,5	23,0	14,5	12,5	29,0	50,0
113 [40] Աբամո	7,5	16,5	24,0	17,0	10,5	27,5	51,5
114 [23] Բրզնիկ	13,5	11,5	25,0	14,5	12,5	27,0	52,0
115 [33] Ջեյթուն	6,5	22,5	29,0	15,5	12,0	27,5	56,5
116 [36] Քեսաբ	10,0	18,5	28,5	17,5	10,5	28,0	56,5
117 [37] Հաջի-Հաբիբլի	7,5	18,0	23,5	18,5	14,5	33,0	56,5
118 [38] Յողուն-Օլուկ	8,0	18,5	26,5	19,5	11,5	31,0	57,5
119 [32] Հաջըն	11,0	15,0	26,0	17,5	14,5	32,0	58,0
120 [39] Քարուսիե	8,5	18,0	26,5	19,5	12,5	32,0	58,5

Աղյուսակների հիման վրա մեր գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Գրական լեզուներից ոչ մեկը իր հնչյունական և քերականական հատկանիշներով նույնը չէ որևէ խոսվածքի, առավել ևս՝ բարբառի հետ: Սա նշանակում է, որ գրական լեզուները մշակման պրոցեսում զգալիորեն հեռացել են իրենց բարբառային հիմքերից և ձեռք բերել ընդհանրացնող գծեր՝ ենթարկվելով նաև այլ բարբառների ազդեցությանը: Մեր հին գրական լեզուներից գրաբարը ավելի հեռու է իր հիմքում ընկած խոսվածքներից ու բարբառներից, քան միջին գրական հայերենը, որ խոսում է վերջինիս ավելի «բնական» վիճակում գտնվելու, իր բարբառային հիմքից քիչ հեռանալու և ընդհանրապես նրա մշակման ու միօրինակացման պրոցեսի ոչ

ինտենսիվ լինելու մասին: Նոր գրական լեզուներից արևմտահայրավելի մոտ է իր հիմքում ընկած խոսվածքներին ու բարբառներին, քան արևելահայր, որ տվյալ դեպքում բացատրվում է երկու գրական լեզուների մշակման ու զարգացման ուղիների տարբերությամբ:

2. Ըստ 40 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալների՝ գրաբարը V դարում հայտնի և ճշտորեն տեղայնացվող խոսվածքներից ամենից ավելի մոտ է Տուրուբերանի (Բաղեշի, Խնուսի, Խլաթի, Բուլանդի, Մշո, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի) և նրան հյուսիս-արևմուտքից ու հյուսիսից հարող՝ Բարձր Հայքի ու Այրարատի խոսվածքներին (Կարնո, Բայբերդի՝ Բարձր Հայքի արևելյան մասում, Ալաշկերտի՝ Այրարատի Բագրևանդ գավառում): V դ. Մեծ Հայքում շտեղայնացվող խոսվածքներից գրաբարն ամենից ավելի մոտ է Տրապիզոնի և Օրդուի միջենթաբարբառների, Ամասիայի և Առդեաի ենթաբարբառի խոսվածքներին (*Աղափազարի, *Նիկոմեդիայի, *Մուշավայի, *Պարտիզակի, *Ամասիայի, *Միվրիհիսարի, *Ջմյուտնիայի, *Պուսի, *Ռոդոսթոյի, *Տրապիզոնի, *Մարզվանի, *Կուտիի, *Նոր-Նախիջևանի, *Չալթրի, *Օրդուի այլն), որ խոսում է վերջիններիս կրողների՝ հիշյալ վայրերին մերձավոր վայրերից տեղափոխվելու մասին: Այն հանգամանքը, որ սրանք ավելի մոտ են գրաբարին, քան Մեծ Հայքում տեղադրվող խոսվածքները, բացատրվում է եզրային շրջանների (տարածքների)՝ ավելի արխայիկ գծեր պահպանելու՝ լեզվաբանությունը հայտնի հատկություններով: Իհարկե, պետք է նկատի առնել 40 հատկանիշ պարունակող ցուցակի մեջ մտած հատկանիշների և նրանց բաշխման պայմանականությունը, որ կարող էր տալ իրականից զգալիորեն տարբերվող (ավելի ուշ բնույթի կամ, թերևս, ժամանակագրորեն տարասեռ) պատկեր: Հավանաբար մասամբ էլ սրանով պետք է բացատրել, որ Այրարատի բուն խոսվածքները զգալիորեն ավելի հեռու են գրաբարից, քան հիշյալները: Պետք է նկատի առնել հատկապես այն հանգամանքը, որ ցուցակում տեղ գտած ձևաբանական մի շարք հատկանիշներ կարող էին ունենալ ոճական արժեք և աչքի չընկնել իբրև գրական լեզվից բացահայտ շեղումներ. այլ կերպ ասած՝ գրաբարը կարող էր հանդես գալ ոճական-քերականական և նույնիսկ հնչյունական մի շարք տարբերակներով, որոնցից մեկն է միայն մեր կողմից հիմք ընդունվել, և որոնց տարբերություններն այնուամենայնիվ այնքան չեն եղել, որ դիտվեին որպես բացահայտ խախտումներ կամ համակարգային միանգամայն այլ տարրեր:

Եթե սրան միացնենք և այն, որ V դարի բարբառային տարբերություններն այնքան մեծ չպետք է լինեն, որքան արդի տարբերությունները, ապա պարզ է, որ գրաբարը իր տարբերակների ամբողջությամբ պետք է հանդես գար որպես ընդհանուր հասկանալի լեզու և հարազատորեն ընկալվեր բոլորի կողմից: Ավելորդ չենք համարում նշել, որ Ստեփանոս Սյունեցու կողմից VIII դ. տրված դասակարգումը ղգալի չափով մոտենում էր իրական վիճակին, թեև այստեղ, իհարկե, դեր պիտի խաղային հեղինակի բարբառային պատկանելիությունը և բարբառների իմացությունն աստիճանը: Որքանով որ հնարավորություն են տալիս դատելու V դ. (հին շրջանի) բարբառների մեր տված դասակարգումը և գրաբարի ու բարբառների փոխհարաբերության վերաբերյալ աղյուսակները, Կորձեքի, Խութի (հմմտ. Սանասուն>Սասուն), Զորրորդ Հայքի, Սյունիքի, Արցախի խոսվածքները կարող էին ընկալվել որպես բարբառային ղգալի տարբերակման ենթարկված լեզվավիճակներ. ինչ վերաբերում է Սպերին և Տայքին, ապա սրանց տարբերությունը գրաբարից չպետք է շատ մեծ լիներ, եթե դատելու լինենք մեր աղյուսակներում ընդգրկված Բայքերդի (Մաբատավանի) (Սպերում) և Խոտորչուրի (Տայքի Արսյաց փոքր գավառում) տվյալներով. այս դեպքում պետք է ենթադրել, որ Սյունեցին կամ նկատի ունի կենտրոնական շրջանների խոսվածքներն ընդհանրապես, լայն առումով, որի դեպքում այդ վայրերն ղգալիորեն պետք է տարբերվեն Այրարատի խոսվածքներից, կամ կարող էր իբրև նշանակալից շեղումներ ընկալել եղած մասնակի տարբերությունները գրաբարից:

3. Կիլիկյան միջին գրական հայերենի և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ ակնհայտորեն ավելի ճիշտ գաղափար են տալիս 40 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները, թեև ավելորդ չհամարեցինք համեմատության համար զուգահեռաբար բերել նաև 100 հատկանիշ պարունակող ցուցակի տվյալները: Ըստ 40 հատկանիշ պարունակվող ցուցակի՝ կիլիկյան միջին գրական հայերենին ամենից ավելի մոտ են ոչ թե արևելյան Կիլիկիայի (Մարաշի, Զեյթունի, Հաջընի) կամ այսպես կոչված անտիոքահայ (Քաբուսիեի, Հաջի-Հաբիբլիի, Յողուն-Օլուկի, Արամոյի, Քեսաբի, Բելլանի) խոսվածքները, որոնք եզրային դիրք են գրավել բուն Կիլիկիայի նկատմամբ, այլ առաջին հերթին Հյուսիսային Ադձնիքի կամ Սանասունի (Սասունի) ենթաբարբառի խոսվածքները (Ալգետունի, Գելիեզուզանի, Նիշի, Հազգոյի), ապա և այն ենթաբարբառների ու միջենթաբարբառների (Տուրուբերանի,

արևելյան Բարձր Հայքի, Այրարատի Բագրևանդ գավառի, այլև Տրապիզոնի, Օրգուի, Առդեալի) խոսվածքները, որոնք մոտ էին նաև զրաբարին (ընկած էին նրա հիմքում)։ Սա ցույց է տալիս, որ ա) Կիլիկիայի կազմավորման մեջ դեր է խաղացել Սանասունից գաղթած բնակչությունը. բ) կիլիկյան «բարբառի» այն ժամանակվա վիճակը չի համընկնում արդի բարբառագիտական աշխատություններում տրված վիճակի հետ. այն շատ ավելի լայն ընդգրկում է ունեցել և զգալիորեն տարբերվել է եզրային (արևելյան Կիլիկիայի և անտիոքասայ) խոսվածքներից. գ) Կիլիկիայի միջին գրական հայերենի խոսակցական հիմքը կազմել են ոչ միայն բուն Կիլիկիայի, այլև արևմտյան վայրերի հիմնական խոսվածքները՝ ոչ շատ մեծ տարբերություններով։ Կիլիկիայի եզրային խոսվածքներից նրան ամենից ավելի մոտ են հարավ-անտիոքասայ (Հաջի-Հաբիբլիի, Յոզուն-Օլուկի, Քաբուսիեի, Քեսաբի) խոսվածքները։ Այսպիսով, կիլիկյան միջին գրական հայերենը եղել է Հայաստանի արևմտյան շրջանների համար ընդհանուր հասկանալի լեզու՝ լայն խոսակցական հիմքով։

4. Ըստ աղյուսակի տվյալների՝ արևմտահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Պոլսի միջբարբառի (Ռոզոսթոյի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Օրգուի, Տրապիզոնի, Պոլսի, Ադափազարի, Պարտիզակի), Ղրիմ-Նոր-Նախիջևանի, Կարինի, Մարզվանի, այլև Առդեալի, Եդեսիայի բարբառների խոսվածքները։ Կարելի է ասել, որ արևմտահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Պոլսի միջբարբառի խոսվածքները։ Արևմտահայ գրական լեզուն՝ ա) բաղաձայնական առումով ամենից ավելի մոտ է հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրգու (2,5), Մարաշ (2,5), Ռոզոսթո (3), Տրապիզոն (4), Զմյուռնիա (4, 5), Սուչավա (5), Պարտիզակ (5), էվերեկ (5), Մալաթիա (5), Եդեսիա (5), Պոլիս (5,5), Նիկոմեդիա (5,5), Ասլանբեկ (5,5), Զեյթուն (5,5), Մանազկերտ (5,5), Գելիեզուզան (5,5), Արզվին (5,5). բ) ձայնավորների բնույթով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրգու (1), Կարին (1), Ռոզոսթո (1,5), Բաբեռդ (1,5), Արզվին (1,5), Սուչավա (2), Խնուս (2), Ալաշկերտ (2), Զմյուռնիա (2,5), Աստրախազ (2,5), Նոր-Նախիջևան (3), Նիկոմեդիա (3), Կողբ (3). գ) անվանական առանձնահատկություններով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Պոլիս (1,5), Զմյուռնիա (2), Տրապիզոն (2), Ռոզոսթո (2,5), Նիկոմեդիա (2,5), Ասլանբեկ (2,5), Ադափազար (2,5), Պարտիզակ (3),

Սյուլլոզ (3,5), Մալա (3,5), Զանիկ (3,5), Սիվրիհիսար (3,5), Բաբերդ (3,5), Սուլավա (4), Եվդոկիա (4), Մարզվան (4), Ամասիա (4), Օրդու (4,5), Զեֆանոս (4,5), Շապին-Կարահիսար (4,5), Սեբաստիա (4,5), Կյուրին (4,5). դ) բայական հատկանիշներով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Զմյուռնիա (2), Կյուրին (2), Ամասիա (2,5), Թոմարդա (2,5), Դարենդե (2,5), Ռոդոսթո (3), Պոլիս (3), Նիկոմեդիա (3), Էվերեկ (3), Չալթըր (3,5), Սյուլլոզ (3,5), Եվդոկիա (3,5), Լենինական (3,5), Նոր-Նախիջևան (4), Ադափազար (4), Մարզվան (4), Տրապիզոն (4), Ասլանբեկ (4,5), Սեբաստիա (4,5), Բրզնիկ (4,5), Բաբերդ (4,5), Մալաթիա (4,5), Սիվրիհիսար (4,5), Պարտիզակ (5), Արաբկիր (5), Բեյլան (5), Քաբուսիե (5):

5. Վերջապես, ըստ աղյուսակի տվյալների՝ արևելահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Երևանի կամ Արարատյան բարբառի խոսվածքները (Էջմիածնի, Աստապատի, Երևանի, Կողբի, Քանաքեռի), ապա հյուսիս-արևելյան բարբառախմբի մյուս բարբառների խոսվածքները: Կարելի է ասել, որ արևելահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Երևանի կամ Արարատյան բարբառի, ավելի լայն առումով՝ հյուսիս-արևելյան բարբառախմբի խոսվածքները: Արևելահայ գրական լեզուն՝ ա) բաղաձայնական առումով ամենից ավելի մոտ է հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Արզվին (3), Մարաշ (3,5), Բաստ (3,5), Աստապատ (4), Վարհավար (4,5), Զուղա (4,5), Նոր-Զուղա (4,5), Սուլավա (5), Ադափազար (5,5), Հազդո (5,5), Մանազկերտ (5,5), Կարճևան (5,5). բ) ձայնավորների բնույթով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Օրդու (1), Կարին (1), Ռոդոսթո (1,5), Բաբերդ (1,5), Արզվին (1,5), Սուլավա (2), Խնուս (2), Ալաշկերտ (2), Բաղեշ (2), Զմյուռնիա (2,5), Աստրախան (2,5), Նոր-Նախիջևան (3), Չալթըր (3), Նիկոմեդիա (3), Կողբ (3), Սյուլլոզ (3,5), Ադափազար (3,5), Ամասիա (3,5), Խոտորչուր (3,5), Թբիլիսի (3,5), Աստապատ (3,5), Կուտի (4), Տրապիզոն (4), Շապին-Կարահիսար (4), Եղեսիա (4), Բուլանրդ (4), Պոլիս (4,5), Թավրիզ (4,5), Լենինական (5), Կամախ (5), Մուշ (5), Խլաթ (5), Երևան (5), Քանաքեռ (5), Էջմիածին (5). գ) անվանական առանձնահատկություններով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Թավրիզ (3,5), Երևան (3,5), Քանաքեռ (3,5), Աշտարակ (3,5), Էջմիածին (3,5), Կողբ (4,5), Ղազախ (4,5), Թովուզ (4,5), Կիրովաբադ (4,5), Ղալաշա (5), Գյառզյան (5). դ) բայական առանձնահատկություններով՝ հետևյալ վայրերի խոսվածքներին՝ Էջմիածին (2), Զահարմա-

հալ (2), Կողբ (2,5), Երևան (3), Քանաքեռ (3), Բուրդուր (3,5), Թբիլիսի (4), Աստապատ (4,5), Գորիս (4,5), Բոլնիս-Նաչևն (5), Կիրովաբադ (5):

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՐԱՌԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատության առաջին մասի ութերորդ գլխում փորձ արվեց լեզվաժամանակագրության համար կաղմված 100 բառանոց ցուցակը օգտագործել բարբառների համաժամանակյա փոխհարաբերությունը պարզելու նպատակով: Այժմ այդ, ինչպես նաև 215 և 200 բառանոց ցուցակները կծառայեցվեն իրենց ուղղակի նպատակին՝ հայ բարբառների տարբերակման ժամանակի հարցի լուծմանը:

Ինչպես հայտնի է, Սվոդեշի լեզվաժամանակագրական մեթոդի հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ լեզվի հիմնական բառաֆոնդը փոխվում է մոտավորապես հավասար արագությամբ. հազար տարվա ընթացքում դուրս է ընկնում հիմնական բառաֆոնդին պատկանող բառերի (Սվոդեշը դրանք սահմանափակում է նախ 215, ապա 200 և վերջապես 100 միավորով) 15%-ը և պահպանվում 85%-ը: Սրա հիման վրա Սվոդեշը հնարավոր է համարում որոշել ցեղակից լեզուների տարբերակված (առանձնակի) գոյության, ալլել անթվակիր գրավոր հուշարձանների գոյության ժամանակը: Չնայած լեզվաժամանակագրության մեթոդի հիմքում ընկած ենթադրության կասկածելի լինելուն և մեթոդի կիրառության առանձին փորձերի արդարացի քննադատություններին՝ այն շարունակում է կիրառվել համեմատական ուսումնասիրություններում և տալ դրական որոշ արդյունքներ: Եթե չխոսենք լեզվաժամանակագրության մեթոդի հիմքում ընկած ենթադրության խիստ մոտավոր բնույթի մասին (հիմնական բառաֆոնդի փոփոխությունը խիստ հեռու է հավասարաչափությունից և կարող է տալ տարբեր լեզուների ու լեզուների տարբեր շրջանների համար մինչև 2—3 տասնյակ %-ի տատանում), ապա հարկ կլինի անել մի քանի այլ դիտողություն. առաջին՝ այդ մեթոդը կարող է քիչ թե շատ հավասար արդյունքներ տալ բանասիրական մանրակրկիտ շախատանքի և ցուցակների համար բառերի ըստ հնարավորին ճիշտ ընտրության դեպքում, մի պահանջ, որ ոչ միշտ է կատարվում. երկրորդ՝ այդ մեթոդի արդյունքները պետք է ըստ հնարավորին ստուգվեն այլ մեթոդների օգնությամբ ձեռք բերված արդյունքներով. երրորդ՝ այդ մեթոդը քիչ թե շատ հավաստի արդյունքներ է

տալիս մի քանի հազար տարվա սահմաններում. ավելի մեծ ժամանակի դեպքում նրա հավաստիությունը պակասում է նրանով, որ մեծանում է բառացանկում ընդգրկվող բառերի ժամանակալիս ընդգրկման ծավալը, և բառերի ընտրությունը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ. ավելի փոքր ժամանակի դեպքում մեծ չափով պակասում է հիմնական բառաֆոնդի հավասարաչափ փոփոխության վարկածի հավաստիությունը:

Մինչև այժմ Սվոդեշի մեթոդը կիրառվել է միայն լեզուների և պատմական հուշարձանների ժամանակագրության հարցերը պարզելու համար¹, ընդ որում օգտագործվել են սովորաբար գրավոր և հատկապես գրական լեզուների տվյալները: Մեր «Լեզվաժամանակագրության մեթոդը հայերենի նկատմամբ կիրառելու հարցի շուրջը» հոդվածում ցույց է տրված, որ բարբառների և ստանդարտացված գրական լեզուների տվյալները կարող են մեծ չափով տարբերվել: Այդ հոդվածում զուգադրված են գրաբարի, արևելահայ գրական լեզվի և Լոռու (Գյուղգյառի) խոսվածքի տվյալները: Այստեղ ներկա աշխատության նախորդ գլխի հետևողությամբ նախ՝ կհամադրվեն գրաբարի, կիլիկյան միջին գրական հայերենի, արևմտահայ և արևելահայ գրական լեզուների տվյալները, ապա կխոսվի բարբառների ժամանակագրության մասին: Ավելորդ չէ նշել, որ սա լեզվաժամանակագրության մեթոդը բարբառների նրկատմամբ կիրառելու առաջին փորձն է²:

Գրական լեզուների՝ ստորև կատարվող բառային զուգադրության համար (աղյուսակ 18) հիմք է ընդունվում 215 բառանոց ցուցակը. 200 բառանոց ցուցակից դուրս թողնված բառերն օտարվում են փակագծում բերված միևուս (—) նշանով, 100 բառանոց ցուցակում ընդգրկվածները՝ աստղանիշով. վերջում տրվում են 200 և 100 բառանոց ցուցակներին կատարված հավելումները (215 բառանոց ցուցակում չմտած բառերը)³:

¹ Հմմտ. Г. Б. Джаукян, Письмо в редакцию, ВЯ, 1969, № 4. О применении метода глоттохронологии к армянскому языку, ВОН, 1969, № 9.

² Այս աշխատության առաջին մասում այն օգտագործվեց անուղղակի կերպով՝ հայ բարբառների համաժամանակյա փոխհարաբերությունը պարզելու համար:

³ Միջին գրական հայերենի բառացանկը կազմել է Մ. Մուրադյանը:

Մեր «Հայոց լեզվի նկատմամբ լեզվաժամանակագրության մեթոդը կիրառելու մասին» հոդվածում (ԼՀԳ, 1959, № 9) բերված բառացանկերի համեմատությամբ այստեղ կատարված են թեթևակի ճշտումներ, և որոշ չափով փոխված են լրիվ ու մասնակի տարբերությունների գնահատման սկզբունքները: Այս պատճառով էլ կան թվային որոշ տարբերություններ, որոնք, սակայն էական որևէ բան չեն փոխում:

	Գրաբար (դասական շրջան)	Կիլիկյան միջին գրական հայերեն
*1.	ամենայն	ամեն
2.	եւ, ու (?)	ևւ, ու
3.	կենդանի, անասուն	անսուն, հայվան
*4.	մոխիր	մոխիր (մոծիր)
5.	առ	խէշ (խէշ, խըշ) * քով, առ
6.	թէկն, մէջք	թիկունք, կոնակ
7.	վատ, չար	դէշ
*8.	կեղեւ	կեղեւ, կլեւ, խեճեւ (խճեւ)
9.	զի, որովհետեւ	զի, վանց զի
*10.	որովայն, փոր	փոր
11.	պտուղ	պտուղ
*12.	մեծ	մեծ, ջոջ (ճոջ)
*13.	թոշուն, հաւ	թոշուն, հաւք
*14.	խածանեւ, կծանեւ	խածնեւ
*15.	սեւաւ	սե
*16.	արիւն	արիւն (արոյն, արուն)
17.	փշեւ	փշեւ
*18.	ոսկր	ոսկոր (ոսկր)
19.	շնչեւ	շնչեւ
20(—).	եղբայր	աղբայր (աղբար, եղբայր)
*21.	այրեւ, վառեւ	էրեւ, այրեւ
22.	մանուկ	մանշ, տղայ, մանուկ, երեխայ
23(—).	հանդերձ, դգեստ	դգեստ (սգեստ), հադուստ
*24.	ամպ	ամպ
*25.	ցուրտ	ցուրտ
*26.	գալ	գալ
27(—).	եփեւ	եփեւ
28.	համարեւ, թուեւ, հաշուեւ	համրեւ (համբրեւ), հաշուեւ, թուեւ
29(—).	աղադակեւ	ճնչակ, աղադակեւ, պօռակ
30.	հատանեւ	կտրեւ, հատնեւ (հատանեւ)
31(—).	պար	պար
32.	տիւ, աւր	օր
*33.	մեռանեւ	մեռնիւ (մեռանիւ)

	Գրաբար (դասական շրջան)	Կրկնական միջին դրական հայերեն
34.	փորել	փորել
35.	աղտեղի	աղտոտ, աղտեղի
*36.	շուն	շուն
*37.	լմպել	խմել, Լմպել
*38.	չոր, ցամաք	չոր, ցամաք
39.	բութ (?)	բութ
40.	փռչի	փռչի
*41.	ունկն (հզն. թ. ականջք)	ունկ(ն), ականջ
*42.	հող, երկիր	հող, (երկիր)
*43.	ուտել	ուտել
*44.	ձու	հաւկիթ, (ձու)
45(—).	ութ	ութ
*46.	ակն (հզն. թ. աչք)	աչք
47.	անկանել	ընկնիլ (անկնիլ, անկանիլ)
48.	հեռի	հեռու, ի դատ, ի բաց
*49.	ճարպ, ճրագու (?)	ճարպ, եւղ (եղ), ճրագու
50.	հայր	հայր (հար)
51.	երկնչել	վախնալ (վախենալ), երկրւղել
*52.	փետուր (?)	փետուր (փետրիկ, թեպուր, թեպրիկ)
53.	սակաւ	քիչ, սակաւ, ճճի մի (ճճու մի)
54.	մարտնչել	կռուիլ, պայքարել
*55.	հուր, կրակ	կրակ, հուր
*56.	ձուկն	ձուկ(ն)
57.	հինգ	հինգ
58.	լող	լող
59.	հոսել	հոսիլ
60.	ծաղիկ	ծաղիկ
*61.	թռչել	թռնուլ (թռչիլ, թռչել)
62.	մէզ, մառախուղ	մէզ, մառախուղ
*63.	ոտն (հզն. թ. ոտք)	ոտ(ք) (ոտն)
64.	չորք	չորս
65.	պաղել, սառչել	պաղիլ (պաղնալ), սառիլ (սառչիլ)
*66.	տալ	տալ
*67.	բարի, լաւ	աղէկ, բարի, լաւ

	Գրաբար (դասական շրջան)	Կիլիկյան միջին գրական հայերեն
68.	խոտ	խոտ
*69.	կանաչ	կանաչ
70.	աղիք (հզն. թ.)	աղիք
*71.	հեր, մաղ	մաղ, ծամ, հեր
*72.	ձեռն (հզն. թ. ձեռք)	ձեռ(ք) (ձեռն)
73.	նա	նա (ան), անիկ (այնիկ)
*74.	գլուխ	գլուխ
*75.	լսել, ականալ	լսել
*76.	սիրտ	սիրտ
76.	աստ	հօս (հոս), ալստեղ, աստ
78.	հարկանել	հարկնել (զարկնել, զայնել), քշտել
79.	ռննել	բռննել, պահել
80.	զիարդ, որպէս	զեբդ (զէրթ, գէտ, գէթ), հայնց (հանց), ինչ-ցեղ, որպէս
81(—).	հարկւր	հարկւր (հարոյր)
82.	որսալ	որսալ
83.	այր, (ամուսին)	էրիկ (այրիկ), (ամուսին)
*84.	ես	ես
85.	սառն	պաղ
86.	(ե)թէ	էթէ, թէ, թէ որ
87.	ի	ի, ի մէջ (մէշ)
*88.	սպանանել, սատակել	սպաննել, սատակել (սատակցնել)
*89.	գիտել	գիտնալ (գիտենալ)
90.	լիճ, լիկ	լիճ
91.	ծիծաղել	խնդալ, ծիծաղիլ
*92.	տերեւ	տերեւ
93.	ահեակ, ձախ	ձախ, ահեկ (ահեակ)
94.	ոտն (հզն. թ. ոտք)	ոտ(ք) (ոտն)
*95.	(ըն)կողմանել ⁴	պառկիլ (սլառակիլ)
96.	կեալ	աղբիլ
*97.	լեարդ	լերդ (լեարդ)
*98.	երկան	երկան (երկայն, երկար)

⁴ Միայն Բուզանդի մոտ, այն էլ իմաստային որոշ նրբերանգործ, մեկ առաջին գործածված է նաև պառակիմ բայը:

	Գրարար (չասական շրջան)	Կլիկկյան միջին դրական հայերեն
*99.	ո(բ)ջիլ	ոջիլ (որջիլ)
*100.	մարդ, այլ	մարդ, էրիկմարդ, այր մարդ
*101.	բազում	բազում, շատ
*102.	միս	միս
103.	մայր	մայր (մար)
*104.	լեռն	լեռ [լեռն, լեռո(ն)], սար
*105.	բերան	բերան
*106.	անուն	անուն
107.	անձուկ, նեղ	անձուկ, նեղ
108.	մերձ, մաւտ	ի խէշ, մերձ
*109.	պարանոց	վիզ, փոզ, պարանոց
*110.	նոր	նոր
*111.	գիշեր	գիշեր
112(—).	ինն	ինն (ին)
*113.	քիթ	քիթ
*114.	ոչ	ոչ [չ(ը)]
115.	հին	հին
*116.	մի	մի (մին, մէկ)
117.	այլ	այլ, ուրիշ
*118.	անձն	անձ, շունչ, հոգի
119.	խաղալ	խաղալ
120.	քարշիլ	քարշիլ (քարշիլ)
121.	մզիլ	հրիլ, բթիլ
*122.	անձրև	անձրև
*123.	կարմիր	կարմիր
124.	աջ	աջ (աշ)
125.	ուղիղ	ուղիղ (ուղեղ), շխտակ
126.	գետ	գետ
*127.	ճանապարհ	ճամբայ (ճանապարհ)
*128.	արմատ	արմատ, տակ
129.	պարան	պարան, չուսն
130.	փտեալ, նեխեալ	փտած (փտել և փտեալ), նեխած (նեխել և նեխեալ)
131.	շփիլ	շփիլ, մարձիլ, արորիլ
132.	աղ	աղ

	Ծրարար (գասակա՞ն չբջա՞ն)	Կիլիկիայի միջին գրական հայերեն
*133.	աւաղ	աւաղ
134.	ցաեւ, քերեւ, մաղլ(ցտ)եւ	քերեւ, ճանկոեւ
135.	ծով	ծով
*136.	տեսանեւ	տեսնուլ
*137.	սերմն	սերմ(ն), հունդ (հունտ)
138(—).	եւթն	եւթ(ն) (եթթ)
139.	կարեւ	կարեւ
140.	սուր	սուր
141(—).	ձգեւ, արկանեւ, արձակեւ	արձկեւ (արձակեւ), արկնեւ
142.	կարճ	կարճ
143.	երգեւ	երգեւ
144(—).	քոյր	քոյր (քուր)
*145.	նստեւ	նստեւ
146(—).	վեց	վեց
*147.	մորթ, մաշկ, կաշի	մաշկ, մորթ, կաշի
148.	երկին(ք)	երկին(ք)
*149.	բուռ	բուռ
*150.	փոքր	փոքր(իկ), պղտիկ
151.	հաստաեւ	հաստաւ
*152.	ծուխ	ծուխ
153.	հարթ	զորկուտ (ըզորկուտ), հարթ, դուր
154.	աւձ	օձ (օց)
155.	ձիւն	ձիւն (ձոյն, ձուն)
156.	մմն, մի	մի
157(—).	խաւսեւ	խօսիւ, զրուցեւ
158(—).	տէդ, նիդադ	տէդ, նիդադ
159.	թքանեւ	թքնուլ (թքնեւ)
160.	ճեղքեւ, ցելուլ	շառսեւ, ճղքեւ (ճեղքեւ)
161.	ճմեւ	ճգմեւ, բամեւ, մդեւ
162.	խոցեւ, միեւ	խոցեւ, զախմեւ, խթեւ
*163.	կանգնեւ	կանգնեւ
*164.	աստղ	աստղ
165.	բիբ	բիբ, մահակ, պլատիկ, գաւաղան
*166.	բար	բար

	Գրաբար (գասական շրջան)	Կիլիկյան միջին գրական հայերեն.
167.	ուղիղ	ուղիղ, շիտակ
168.	ծծել	ծծել
*169.	արեգակն, արև	արև (արեգ, արեգակ)
170.	ուռնուռ, ալտնուռ	ալտնուռ, ուռնուռ (ուռնիլ)
*171.	լոդ	լոդ
*172.	ազի, ձեռ	ազի, պոչ, ձեռ
173(—).	տասն	տաս(ն)
*174.	այն	այն (ան, այնիկ)
175.	անդ	հօն (հոն, հունկալ), այնտեղ
176.	նաքա	նաքա (այնոք, նոքա)
177.	ստուար	ստուար, հաստ
178.	նուրբ, անաւար	նուրբ, նօւր, բարակ, լատիֆ
179.	խորհել, զմտաւ ամել	խորհիլ, անդիճել
*180.	այս	այս (աս, այսիկ)
*181.	դու	դու(ն)
182.	երեք	երեք
183.	արկանել, ընկենուռ, ձգել	ձգել, արկնել, ընկնուռ, նետել
184.	կապել	կապել
*185.	լեզու	լէզու
*186.	տառամն	տկուայ, տառմ(ն)
*187.	ծառ	ծառ
188.	շրջել, դառնալ (դարձուցանել)	դառնալ, շրջ(ու)իլ
189(—).	քսան	քսան
*190.	երկու	երկու
191.	փսիւել, ործ(կ)ալ	փսիւել, ործկալ
*192.	երթալ, գնալ	երթալ, գնալ
*193.	ջերմ	շոդ «տաք», եղկ, ջերմ
194.	լուանալ	լուանալ (լուանիլ)
*195.	ջուր	ջուր
*196.	մեք	մենք
197.	խոնավ	թաց, խոնաւ, ջէճ (գէշ)
*198.	դ-իւշ	իւշ (գիւշ)
199.	երբ	երբ (եփ)
200.	ուր	ուր
*201.	սպիտակ	սպիտակ (սպիտան), ճերմակ

	Գրաբար (դասական շրջան)	Կիրիկյան միջին դրական հայերեն
*202.	ո(վ)	ով
203.	լայն, ընդարձակ	լայն (լան), ընդարձակ
204.	կին	կին (կնիկ), կնիկ մարդ
205.	հոդմ	բամի, (ը)ռեհ, հոդմ
206.	թեւ	թև
207.	մաքրել, սրբել	սրբել, մաքրել
208.	ընդ	(ի) հետ, խէշ
*209.	կին	կին (կնիկ), կնիկ մարդ
210.	անտառ	անտառ, մէրի
211 (—).	վաստակել, աշխատել	վաստակիլ, բանիլ
212.	որդն	որդ(ն), ճճի
213.	դուք	դուք
214.	ամ, տարի	տարի, ամ
*215.	ղեղին	ղեղին

Լրացումներ 200 բառանոց ցուցակին

199.	ծանր	ծանր
200.	ասել	ասել

Լրացումներ 100 բառանոց ցուցակին

*93.	կուրծք, լանջք	կուրծ(ք), լանջ(ք)
*94.	մագիլ	ճանկ, չանչուլ
*95.	լի	լի (ի լի)
*96.	եղջիւր	եղջիւր [եղջի(ւ)ր], պոզ (պօզ)
*97.	ծուռնկ	ծուռնկ, գուճ
*98.	լուսին	լուսին (լուսնակ, լուսնեակ)
*99.	բոլորակ, բոլորշի	բոլոր, կլոր
*100.	ասել	ասել

	Արեմտահայ գրական լեզու	Արեւելահայ գրական լեզու
1.	բոլոր	բոլոր
2.	և	և
3.	կենդանի	կենդանի
4.	մոխիր	մոխիր
5.	մոտ, քով	մոտ
6.	կանակ, թիկունք	թիկունք, մեջք
7.	դեշ	վատ
8.	կեղև	կեղև
9.	որովհետև	որովհետև
10.	փոք, որովայն	փոք, որովայն
11.	պտուղ	պտուղ
12.	մեծ	մեծ
13.	թաշուն	թաշուն
14.	խածնել	կծել
15.	սև	սև
16.	արյուն	արյուն
17.	փշել	փշել
18.	ոսկ(ո)ք	ոսկ(ո)ք
19.	շնչել	շնչել
20.	եզրայր	եզրայր
21.	այրել, վառել	այրել, վառել
22.	մանուկ, մանչ	երեխա, մանուկ
23.	հազուստ, զգեստ	հազուստ, զգեստ, շոր
24.	ամսլ	ամսլ
25.	ցուքտ	ցուքտ
26.	դալ	դալ
27.	եփել	եփել
28.	համբել, հաշվել, թվել	հաշվել, համբել, թվել
29.	նշալ, պոռալ, աղաղակել	նշալ, պոռալ, աղաղակել
30.	կտրել, հատել	կտրել, հատել
31.	պար	պար
32.	օր	օր
33.	մեռնել	մեռնել
34.	փորել	փորել
35.	աղաղտ	կեզտուտ

	Արեւմտահայ գրական լեզու	Արեւելահայ գրական լեզու
36.	շուն	շուն
37.	խմել, (ըմպել)	խմել, (ըմպել)
38.	չոր, ցամաք	չոր
39.	բուք	բուք
40.	փռշի	փռշի
41.	սկանչ	սկանչ
42.	հող, (երկիր)	հող, (երկիր)
43.	ուտել	ուտել
44.	հավիկթ, (ձու)	ձու
45.	ուք	ուք
46.	աչք	աչք
47.	խնալ	ընկնել
48.	հեռու	հեռու
49.	ճարպ	ճարպ, ճրագու
50.	հայր	հայր
51.	վախնալ	վախենալ
52.	փետուր	փետուր
53.	քիչ, սակավ	քիչ, (ստկավ)
54.	կովիլ, մարտնչիլ, պայքարիլ	կովիլ, մարտնչել, պայքարել
55.	կրակ, հուր	կրակ, հուր
56.	ձուկ	ձուկ
57.	հինգ	հինգ
58.	լող	լող
59.	հոսիլ	հոսել
60.	ծաղիկ	ծաղիկ
61.	թռչիլ	թռչել
62.	մեզ, մառախուղ, մշուշ	մառախուղ, մեղ, մշուշ
63.	ոտք	ոտք
64.	չորս	չորս
65.	պաղիլ, սառիլ	սառնել
66.	տալ	տալ
67.	աղեկ, լավ	լավ
68.	խոտ	խոտ
69.	կանաչ	կանաչ
70.	աղիք	աղիք

	Արևմտահայ գրական լեզու	Արևելահայ գրական լեզու
71.	մազ, հեր, վարս	մազ, վարս
72.	ձեռք	ձեռք
73.	ան, անիկա	նա
74.	զլուխ	զլուխ
75.	լսել	լսել
76.	սիրտ	սիրտ
77.	այստեղ, հոս	այստեղ
78.	զաբնել	խփել, (զարկել)
79.	բռնել, պահել	բռնել, պահել
80.	ինչպես	ինչպես
81.	հարյուր	հարյուր
82.	որսալ	որսալ
83.	(ամուսին), էրիկ	(ամուսին)
84.	ես	ես
85.	սառույց	սառույց
86.	եթե, թե որ	եթե
87.	մեջ	մեջ
88.	սպաննել	սպաննել
89.	գիտնալ	գիտնալ
90.	լիճ	լիճ
91.	խնդալ, ծիծաղիլ	ծիծաղել
92.	տերև	տերև
93.	ձախ, ահյակ	ձախ
94.	ոտք	ոտք
95.	պառկիլ, ընկողմանիլ	պառկել, ընկողմանել
96.	ապրիլ	ապրել
97.	լյարդ	լյարդ
98.	երկար, երկայն	երկար
99.	ոջիլ	ոջիլ
100.	մարդ, այլ մարդ	մարդ
101.	շատ, բազում	շատ, (բազում)
102.	միս	միս
103.	մայր	մայր
104.	լեռ	լեռ, սար
105.	բերան	բերան

	Արևմտահայ գրական լեզու	Արևելահայ գրական լեզու
106.	անուշ	անուշ
107.	նեղ, անձուկ	նեղ
108.	մոտ	մոտ(իկ)
109.	վիզ, պարանոց	պարանոց, (վիզ)
110.	նոր	նոր
111.	գիշեր	գիշեր
112.	ինք	ինն, ինք
113.	քիթ	քիթ
114.	ոչ, չ(ը)	ոչ, չ(ը)
115.	հին	հին
116.	մեկ, մը	մեկ, մի
117.	ուրիշ, այլ	ուրիշ, այլ
118.	անձ	անձ
119.	խաղալ	խաղալ
120.	քաշել	քաշել
121.	հրել, մղել	հրել, մղել
122.	անձրև	անձրև
123.	կարմիր	կարմիր
124.	աջ	աջ
125.	ուղիղ, շիտակ	ուղիղ
126.	գետ	գետ
127.	ճամբար	ճանապարհ
128.	արմատ	արմատ
129.	պարան, չվան	պարան, թոկ
130.	փտտած, նեխած	փտած, նեխած
131.	շփել	տրորել, շփել
132.	աղ	աղ
133.	ավազ	ավազ
134.	ճանկատել, քերել	ճանկատել, քորել
135.	ծով	ծով
136.	տեսնել	տեսնել
137.	սերմ	սերմ
138.	յոթը	յոթ
139.	կարել	կարել
140.	սուր	սուր

Աղյուսակ 18-ի շարունակությունը

	Արեւմտահայ գրական լեզու	Արեւելահայ գրական լեզու
141.	կրակել, ձգել, արձակել	կրակել, զցել, արձակել
142.	կարճ	կարճ
143.	երգել	երգել
144.	քույր	քույր
145.	նստիլ	նստել
146.	վեց	վեց
147.	մորթ, կաշի, մաշկ	կաշի, մաշկ, մորթ
148.	երկինք	երկինք
149.	քուն	քուն
150.	պղտխի, փոքր	փոքր (իկ)
151.	հոտ առնել, հոտոտել	հոտ քաշել, հոտոտել
152.	ծուխ, մուխ	ծուխ
153.	հարթ	հարթ
154.	օձ	օձ
155.	ձյուն	ձյուն
156.	ոմն, մը	ինչ-որ, մի (ոմն)
157.	խոսիլ, խրել	խոսել
158.	նիզակ, տեղ	նիզակ, տեղ
159.	թքնել	թքել
160.	նեղքել	նեղքել, ճգել
161.	ճղմել, քամել, ճմլել	ճմլել, ճղմել, քամել
162.	խոցել, խրել	խոցել, խրել
163.	կանգնիլ	կանգնել
164.	աստղ	աստղ
165.	ցուպ, պոպուզան	մահակ
166.	քար	քար
167.	ուղիղ, շիտակ	ուղիղ
168.	ծծել	ծծել
169.	արև	արև, արեգակ
170.	ուռիլ	ուռչել
171.	լոզ	լոզ
172.	պոչ, աղի	պոչ
173.	տասը	տաս(ը)
174.	այն	այն
175.	այնտեղ, հոն	այնտեղ

	Արեւմտահայ գրական լեզու	Արեւելահայ գրական լեզու
176.	անոնք	նրանք
177.	հաստ, (ստվար)	հաստ, (ստվար)
178.	նուրբ, բարակ, նոսր	նուրբ, բարակ, նոսր
179.	մտածել, խորհել	մտածել, խորհել
180.	այս	այս
181.	դուն	դու
182.	երեք	երեք
183.	ձգել, նետել	զցել
184.	կապել	կապել
185.	լեզու	լեզու
186.	աղուս, ատամ	ատամ
187.	ծառ	ծառ
188.	շրջել (-վել), գառնալ (գարձ- նել)	շրջել (-վել), գառնալ (գարձնել)
189.	քսան	քսան
190.	երկու	երկու
191.	փսխել, ործկալ	փսխել, ործկալ
192.	երթալ	գնալ
193.	տաք, ջերմ	տաք, ջերմ
194.	լվալ	լվանալ
195.	ջուր	ջուր
196.	մենք	մենք
197.	թաց, խոնավ	թաց, խոնավ
198.	ինչ	ինչ
199.	երբ	երբ
200.	ուր, որտեղ	ուր, որտեղ
201.	հերմակ, սպիտակ	սպիտակ
202.	ով	ով
203.	լայն, ընդարձակ	լայն, ընդարձակ
204.	կին	կին
205.	հով, քամի, հողմ	քամի, հողմ
206.	թե	թե
207.	սրբել, մաքրել	մաքրել, սրբել
208.	հեռ	հեռ
209.	կին, կնիկ	կին
210.	անտառ	անտառ

	Արևմտահայ գրական լեզու	Արևելահայ գրական լեզու
211.	աշխատել	աշխատել
212.	որդ	որդ, ճիճու
213.	դուք	դուք
214.	տարի	տարի
215.	դեղին	դեղին

Լրացումներ 200 բառանոց ցուցակին

199.	ծանր	ծանր
200.	ըսել	ասել

Լրացումներ 100 բառանոց ցուցակին

93.	կուրծք, լանջ	կուրծք
94.	ճանկ, մազիլ, (ճիրան)	ճանկ, մազիլ, (ճիրան)
95.	լեցուն, լի	լի
96.	եղջյուր	եղջյուր
97.	ծունկ	ծունկ
98.	լուսին	լուսին
99.	կլոր, բոլորակ	կլոր
100.	ըսել	ասել

Այժմ չորս գրական լեզուների հնչյունա-քերականական տարբերիչ հատկանիշների քանակը ներկայացնող աղյուսակի օրինակով կազմենք բառային տարբերությունները ներկայացնող աղյուսակ (աղյուսակ 19), ընդ որում տարբերությունները գնահատելիս առաջնորդվենք հետևյալ չափանիշներով. 1) լիակատար տարբերություն համարենք և որպես մեկ միավորի տարբերություն գնահատենք այն դեպքերը, երբ իրար դիմաց գտնվող բառերը բոլորովին չեն համընկնում, կամ համընկնում են միայն ոչ առաջին բառերը. 2) մասնակի տարբերություն համարենք և որպես կես միավորի տարբերություն գնահատենք այն դեպքերը, երբ մեկ լեզվի միակ բառը կամ առաջին հոմանիշը մյուս լեզվում հանդես է գալիս որպես ոչ առաջին հոմանիշ. 3) համընկում համարենք, որպես զրո գնահատենք և բացառենք այն դեպքերը, երբ տվյալ միակ բառի կամ առաջին հոմանիշի դիմաց գտնվում է ստուգաբանորեն նույնական բառ կամ առաջին հոմանիշ:

Գրական լեզուներ	Տ ա ր ք ե ր ու թ յ ու ն ն ե ր								
	Ըստ 215 բառանոց ցուցակի			Ըստ 200 բառանոց ցուցակի			Ըստ 100 բառանոց ցուցակի		
	ԼՐԻՎ	Մաս- նակի	Ընդա- մենը	ԼՐԻՎ	Մաս- նակի	Ընդա- մենը	ԼՐԻՎ	Մաս- նակի	Ընդա- մենը
1 ա. Գրաբար և միջին գրական հայերեն	10	36 (18)	28	10	33 (16,5)	26,5	3	11 (5,5)	8,5
բ. Գրաբար և ա- րևմտահայ գրա- կան լեզու	13	46 (23)	36	13	41 (20,5)	33,5	3	19 (9,5)	12,5
գ. Գրաբար և ա- րևելահայ գրա- կան լեզու	12	44 (22)	34	12	39 (19,5)	31,5	5	14 (7)	12
2 ա. Միջին գրա- կան հայերեն և արևմտահայ գրական լեզու	7	31 (15,5)	22,5	6	29 (14,5)	20,5	1	10 (5)	6
բ. Միջին գրա- կան հայերեն և արևելահայ գրա- կան լեզու	12	38 (19)	31	11	35 (17,5)	28,5	2	11 (5,5)	7,5
3. Արևմտահայ և արևելահայ գրա- կան լեզուներ	5	23 (11,5)	16,5	5	23 (11,5)	16,5	—	1 (0,5)	0,5

Ինչպես տեսնում ենք, գրական լեզուների բառային համեմատությունը բացահայտում է մոտավորապես նույն պատկերը, ինչ հնչյունա-փերականական հատկանիշներինը: Մեծ տարբերություն չի ստացվում նաև գրական լեզուների և բարբառների մերձավորության աստիճանը ըստ բառային տարբերությունների որոշելու դեպքում: Ավելորդ համարելով այս տարբերությունների ավելի հանգամանալից քննությունը՝ այժմ անցնենք բարբառների ժամանակագրական քննությանը: Ամենից առաջ կազմենք գրաբարի և բարբառների բառային փոխհարաբերությունը ներկայացնող աղյուսակ (աղյուսակ 20): Հեղինակն այս դեպքում առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով:

1. Բարբառների համեմատության համար հիմք է ընդունվում 100 բառանոց ցուցակը, և ըստ այդմ բաց են թողնվում 215 և 200

քառանոց ցուցակների տվյալները: Սրանով իսկ բառային տարբերությունների համար հիմք ընդունված միավորների քանակը համընկնում է հնչյունա-քերականական հատկանիշների համար հիմք ընդունված հատկանիշների քանակի հետ:

2. Չեն բերվում քննության առարկա բոլոր 120 վայրերի տրվյալները, այլ ընտրվում են բարբառային տարբեր մերձավորություն ունեցող վայրեր՝ ըստ հնչյունա-քերականական հատկանիշների տվյալներով որոշված խմբերի:

3. Ի տարբերություն գրաբարյան բառացանկի՝ այստեղ ըստ հնարավորության բացառված են զուգահեռ (հոմանիշ) բառերը, և թողնված է հոմանիշներից միայն մեկը: Ընդամիս միշտ չէ, որ նախապատվությունը տրվում է առաջին հոմանիշին, այլ բավական հաճախ ընտրվում է ոչ առաջին հոմանիշը, եթե ա) այն դասական գրաբարում մյուսին գրեթե հավասար գործածություն ունենալով հանդերձ՝ լայնորեն տարածված է բարբառներում, և սրանց համար ենթադրելի է հենց այդ նախօրինակը (ստուգաբանական հիմք), բ) տվյալ բառը սովորաբար բերվում է մեր բարբառագիտական մենագրություններին կցված գրաբարից բարբառ բառարաններում. այսպես, որովայն—փռ, հուր—կրակ, բարի—լաւ, հեռ—մազ, մորթ—մաշկ—կաշի, արեգակ—արեւ հոմանիշներից ընտրվում են փռ, կրակ, լաւ, մազ, կաշի, արեւ ձևերը. արեւ-ի համար փակագծում բերվում է և արեգակն ձևը, որ նրա ստուգաբանական կրկնակն է և կազմությանը պարզ բառ չէ: Այս սկզբունքով թույլն և հաւ հոմանիշներից պետք է գերադասվեր երկրորդը, բայց հեղինակն ընտրել է թույլն բառը՝ նկատի ունենալով հավի ձևի գործածությունը բարբառներում լայն («թռչուն»), իսկ զուգահեռ հավ ձևինը՝ նեղ իմաստով, որ առաջ կբերեր գնահատման դժվարություն: Մնացած դեպքերում գերադասվել են առաջին հոմանիշները: Մեկ դեպքում (նարպ և նրագու) հեղինակը գերադասել է բերել գէր ածականը՝ փակագծում տալով գիրաբիւն գոյականը, որը ունի և թանձրացական գործածություն՝ նարպ-ին հոմանիշ. այս դեպքում նկատի է առնվել նարպ-ի՝ բարբառներում անգործածական լինելը (ստուգաբանական սկզբունք) և նրագու-ի նեղ առումը անգլիերեն fat բառի համեմատությանը:

Գրաբարյան տվյալ արմատի պահպանվածությունը միևնույն կամ շատ մերձավոր իմաստով գնահատվում է պլուս (+), բացակայությունը՝ մինուս (—), պահպանվածությունը տարբերակված, փոքր ինչ փոխված իմաստով (այդ թվում՝ խոսքի մասացինի փոխանցմամբ)՝ պլուս-մինուս (±) կամ միևնուս-պլուս (⊕)

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Վայրեր	1 [34] Մալաշ	2 [36] Քեսաբ	3 [39] Քաղաքապետ	4 [26] Էլիսիկ	5 [6] Գուրա	6 [11] Աղաթաղաղաթ	7 [20] Ջանիկ	8 [52] Տեղաշահան- հեղաթ	9 [55] Մուշ	10 [68] Վան	11 [70] Մոկա	12 [117] Թոմ	13 [76] Արդիկ	14 [77] Երևան	15 [83] Գյումրի	16 [94] Չախաթ- Չախաթ	17 [105] Բուխարա- Թաշքեն	18 [96] Հաթիբ	19 [102] Տուրք	20-[87] Կարմիր
Բառեր																				
94. Ջուր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
95. մեք	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
96. Ինչ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
97. սպիտակ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
98. ո(վ)	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
99. կին	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
100. գեղին	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Ընդամենը	+80 -20	+85,0 -19,0	+79,5 -20,5	+73,5 -26,5	+74,5 -25,5	+74,5 -25,5	+73 -27	+73 -27	+75 -25	+78 -22	+76,5 -23,5	+77 -23	+71,5 -28,5	+80 -20	+81 -19	+79,5 -20,5	+74,5 -25,5	+77 -23	+74 -26	+73 -18

նշանով¹։ Ունկն և ակն բառերի համար դրվում են փակագծերում՝ ականջ և աչք հոգնակի ձևերը, որոնք պահպանվել են բարբառներում ականջ և աչք ձևերով որպես եզակի։ Այս փոխանցումը ևս գնահատվում է միևնույն-պլյուս ($\oplus$) նշանով, թեև ակն և աչք ձևերը նույն ծագումն ունեն, իսկ ունկն և ականջ(ք) ձևերի ընդհանուր ծագումը համաձայնական է (թեև ոչ հավաստի)։ Այս նշանների գնահատումը կատարվում է միևնույն սկզբունքներով՝ պլյուսը ($+$) գնահատվում է 1, միևնույնը ($-$)՝ 0, պլյուս-միևնույնը ($\pm$) և միևնույն-պլյուսը ($\mp$)՝ 0,5։

Հենվելով բարբառների՝ առաջին մասում բերված և գրաբարի ու բարբառների՝ այստեղ բերված բառային տարբերությունների աղյուսակների վրա՝ կարելի է անել պատմական բարբառագիտության հետ կապված մի շարք կարևոր եզրակացություններ և կատարել ժամանակագրական հաշվումներ։

1. Բարբառախոս վայրերի՝ գրաբարից ունեցած բառային տարբերությունները հասնում են 19—28,5-ի։ Այսպիսի տատանումը առաջին հերթին խոսում է այն մասին, որ գրաբարի շրջանում իրոք եղել են բարբառային զգալի տարբերություններ, և որ, հետևաբար, ժամանակակից բարբառների համեմատությունը նորմավորված գրաբարի և ոչ թե նրա տերիտորիալ տարբերակների հետ չի կարող ժամանակագրական բացարձակ ճշգրտություն ունենալ։ Սրա հետ միասին կարելի է մտածել, որ բառապաշարի միջուկի հավասարաչափ փոփոխության հայեցակետը և մանավանդ այդ միջուկին պատկանող բառերի սվոդեշյան ցուցակը խոցելի են։ Այսպես, հայ բարբառների տվյալները ցույց են տալիս, որ մի շարք բառեր համեմատաբար կայուն են և գրեթե չեն փոխարինվում այլ համարժեքներով (դերանուններ՝ ես, մեք, այն, թվականներ՝ մի, երկու, բնության մի շարք առարկաների ու երևույթների անուններ՝ հող, ջուր, կրակ, արև, փառ, մարմնի որոշ մասերի անվանումներ՝ փոք, արիւն, ոսկր, գլուխ, ձեռն, միս, բերան, սիրտ, լեզու, մի շարք դործողությունների նշանակումներ՝ գալ, տալ, ուտել, առել, տեսանել, նստել և այլն), մինչդեռ մի շարք այլ բառեր անկայուն են, երբեմն էլ նրանց արտահայտած գաղափարները կարող են ընդհանրապես բացակայել (ընդհանուր անուններ՝ քոչուն, անձն, բույսերի հետ կապված որոշ անվանումներ՝ կեղև, տերև, արմատ, սերմն, մարմնի որոշ մասերի անուններ՝ կուրծք, եղջիւր, լեարդ, և այլն)։

¹ Բավական հաճախակի են այն դեպքերը, երբ գրաբարյան մեկ բառի դիմաց գործում են երկու հոմանիշներ։

2. Ժամանակակից բարբառների՝ իրարից ունեցած բառային առավելագույն տարբերությունները (երկուսից երկուս և կես տասնյակ) զիջում են նրանց՝ գրաբարից ունեցած առավելագույն տարբերությունների քանակին (երկուս և կես տասնյակից մինչև երեք տասնյակ)։ Սա կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով. ա) ժամանակակից բարբառների՝ գրաբարի շրջանում ունեցած տարբերությունները փոքր են եղել՝ առաջանալով մեծ մասամբ գրաբարի շրջանից հետո. բ) գրաբարի ցուցակում տեղ են գտել այնպիսի բառեր, որոնք ընդհանրապես չեն պահպանվել բարբառներում. պետք է կարծել, որ դրանք կամ ժամանակին եղել են գրական «բարձր ոճի» բառեր, կամ նախքան բարբառների խիստ տարբերակումը գուրս են մղվել այլ բառերի կողմից՝ մագիլ, ըմպել, ընկողմանել, պարանոց, փոֆ, ջերմ, որոնց փոխարեն բարբառներում տարածված են ճանկ, խմել, պառկել, վիզ (շիճֆ), պստիկ (պունուր), տաֆ հոմանիշները։ Ավելորդ չենք համարում նշել, որ բառային որոշ կարգի տարբերությունների (բարբառային, ոճական, խմաստային) հիմքերը գալիս են գրաբարի շրջանից, և գրաբարի բառացանկի համար հոմանիշներից միայն մեկի ընտրությունը որոշ պայմանականություն ունի՝ փոք-որովայն, խաժանել-կծանել, ռոն-աֆ (հատկապես բաղադրություններում), մագ-ծամ «հյուսած մագ», շառ-բագում, պարանոց-վիզ (հատկապես բաղադրություններում), ճանապարհ-ուղի, ծուխ-մուխ, առև-արեգակն, երթալ-գնալ, սպիտակ-ճերմակ։

3. Գրաբարից ժամանակակից գրական լեզուների ունեցած տարբերությունները ավելի փոքր են, քան բարբառների ունեցած տարբերությունները. առաջինները կազմում են 12,5 (արևմտահայ գրական լեզվի համար) և 12 (արևելահայ գրական լեզվի համար), երկրորդները՝ 19—28,5։ Սրա պատճառները բացատրված են մեր «Հայոց լեզվի նկատմամբ լեզվաժամանակագրության մեթոդը կիրառելու մասին» հոդվածում (ԲՀԳ, 1969, № 9). այդ պատճառները հիմք ունեն մեր գրական լեզուների զարգացման ու մշակման պրոցեսի առանձնահատկությունները՝ թյուրքաբարսկական նորագույն փոխառությունների արտամղումը և գրաբարի բառապաշարից օգտվելու նշանակալից չափը։

4. Անցնելով ժամանակագրական հաշվումներին՝ կարելի է ընտրել երկու ուղի՝ կամ համեմատվող յուրաքանչյուր զույգի համար նկատի ունենալ գրաբարից ունեցած նրանց տարբերությունները, կամ ընդունել մեկ ընդհանուր միջին ցուցիչ. հետաքրքրական է նշել, որ այդ միջին ցուցիչը մոտավորապես կհամընկնի

Մվոդեշի տված ցուցչի հետ՝ հազար տարվա ըթացքում 85%-ի պահպանում և 15%-ի կորուստ: Ընտրելով այս ուղին՝ մենք կունենանք ամենից ավելի տարբերվող հայ բարբառներից Մուշի և էվերեկի տարբերակված գոյության հետևյալ ժամանակը՝

$$t = \frac{\log c}{2 \log r} = \frac{\log 76}{2 \log 85} = \frac{.274}{2 \times .163} \approx 848$$

տարի. այսպիսով, եթե համեմատության ժամանակը համարենք 1915 թվականը, որ մենք հիմք ենք ընդունում արևմտահայ բարբառների համար, ապա կհասնենք 1915—848=1067 թվականը (XI դարի II կեսը): Ինչպե՞ս համաձայնեցնել այս տվյալը V դարի բարբառների՝ մեր տված դասակարգման հետ, ըստ որի Մուշը և էվերեկը այն ժամանակ արդեն զգալիորեն պետք է տարբերակված լինեին: Այստեղ հնարավոր է նկատի առնել մեր դիտողությունները նախ՝ բարբառների այդ դասակարգման և երկրորդ՝ լեզվաժամանակագրության մեթոդի տված արդյունքների պայմանականության մասին, մանավանդ որ լեզվի գոյության ոչ մի շրջանում չի կարող լինել տարբեր հատվածների խոսվածքային բացարձակ նույնություն: Ապագային է մնում լեզվաժամանակագրական հարցերի ավելի ուսցիոնալ և ճշգրիտ մեթոդների ստեղծումը:

6. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Երկրորդ մասի սկզբում նշվեց, որ տարածամանակյա բարբառագիտության մեջ մենք գործ ունենք երեք կարգի տվյալների հետ՝ համեմատական բարբառագիտության, պատմական բարբառագիտության և համեմատական լեզվաբանության: Այլ կերպ ասած՝ տարածամանակյա բարբառագիտության մեջ հնարավոր է զուգադրել ժամանակագրական երեք տարբեր մակարդակների պատկանող միավորների վերաբերյալ տվյալներ՝ հնդեվրոպական լեզվի, որ վերականգնվում է համեմատաբանների (կոմպարատիվիստների) ջանքերով՝ համեմատվող լեզուների տվյալների հիման վրա, հին հայերենի, որի մասին զաղափար են տալիս գրաբարի (հին գրական լեզվի) պատմական հուշարձանները, օտար ու հայ հեղինակների տվյալներն ու վկայությունները, և ժամանակակից բարբառների, որոնք ուսումնասիրվում են բարբառագետների կողմից: Համեմատական բարբառագիտության և հին հայերենի վերաբերյալ պատմական տվյալների զուգադրության միջոցով մինչև

այժմ մենք փորձեցինք պարզել V դարի բարբառային հիմնական տարբերությունների պատկերը և լուծել պատմական այլ հարցեր: Ներկա գլխում հնդեվրոպական լեզվի և գրաբարի, իսկ գրաբարի և արդի բարբառների միջև համապատասխան դուգա-հեռների առկայության դեպքում նաև բարբառների տվյալների դուգադրությամբ, կփորձենք պարզել հնագույն բարբառային տարբերությունների հետքերը գրաբարում և երբեմն էլ բարբառներում: Վերջապես, հաջորդ գլխում համեմատական լեզվաբանության և համեմատական բարբառագիտության տվյալների, այսինքր՝ հնդեվրոպական լեզվի և արդի բարբառների փաստերի դուգադրությամբ կփորձենք պարզել այդ բարբառների այն հին (արխայիկ) գծերը, որոնք գրաբարից տարբեր են կամ գրաբարի մեջ չեն ավանդվել: սրանք կմիավորենք բարբառային հնաբանությունների (արխայիզմների) անվան տակ:

Ի՞նչ ենք հասկանում հնագույն բարբառային տարբերությունների հետքեր ասելով: 1) Հայտնի է, որ դեռևս հնդեվրոպական միասնության շրջանում գոյություն են ունեցել բարբառային տարբերություններ: Հայերենը, գտնվելով տարբեր բարբառների միջև, պետք է ունենար որոշ անցողիկ գծեր, որոնք կարող էին այս կամ այն չափով պահպանվել: 2) Հնդեվրոպական միասնությունից անջատվելիս բուն հայկական ցեղերի հետ կարող էին խառնվել համեմատաբար փոքրաթիվ այլ ցեղեր, որոնք, ունենալով բարբառային տարբերություններ, դրանք կարող էին փոխանցել հայերենին: 3) Հնդեվրոպական միասնությունից անջատվելուց հետո հայկական ցեղերը կարող էին շփման մեջ մտնել (և մտել են) հնդեվրոպական այլ ցեղերի հետ, ենթարկվել նրանց ենթաշերտային կամ առերևույթին ազդեցությանը, յուրացնել նրանցից զանազան բառեր և արտահայտության եղանակներ: Սրանք նույնպես կարող էին հետագայում պահպանվել: 4) Վերջապես, բնական է կարծել, որ հայերենը հենց սկզբից լիովին միատարր լինել չէր կարող, և հայկական ցեղախմբի տարբեր հատվածներում կարող էին լինել բարբառային կամ խոսվածքային տարբերություններ: Սրանք այս կամ այն ճանապարհով կարող էին փոխանցվել հայերենի այն տարբերակին, որ ընկել է հին գրական լեզվի՝ գրաբարի հիմքում:

Բարբառային հնագույն տարբերությունների հետքերի ուսումնասիրությունը դեռևս բավարար չէ: Եթե մի կողմ թողնենք զանազան ցածրուցրիվ դիտողությունները, ապա հարկ կլինի խոսել երկու ուսումնասիրության մասին:

«Հնդեվրոպական հին բարբառները» կոլեկտիվ մենագրության մեջ, որտեղ հավաքված են հնդեվրոպական լեզվաբանության հարցերին նվիրված Լոս Անջելեսի կոնֆերենցիայի նյութերը, գետեղված «Վաղ բարբառային տարբերության հետքերը հին հայերենում» ռառամնասիրության հեղինակ Վ. Վինտերը¹ փորձում է ի մի բերել հնչյունական այն տարբերակները, որոնք ըստ նրա ներկայացնում են հին բարբառային տարբերությունների հետքեր: Այստեղ նա նկատի է առնում միևնույն հնդեվրոպական հնչյունների տարբեր արտացոլումներ բնիկ հայերեն բառերում՝ բացառելով գտնադրված փոխառությունները: Ցավոք սրտի, հավաստի զուգադրումներին միանում են անհավաստի, երբեմն ակնհայտորեն փոխառյալ, ենթաշերտային և առշերտային տարբերակներ ներկայացնող, հին մատենագրական վկայությունների բնույթն ու ժամանակագրությունը բավարար չափով հաշվի չառնող զուգադրումներ: Միաժամանակ, փորձ չի արվում տվյալները տեղայնացնել, դրանք ստուգել հայ բարբառների տվյալներով: Վ. Վինտերի բերած տարբերակները մեր կողմից կօգտագործվեն որոշ վերապահությամբ և ճշտումներով:

Վերևում հիշատակված իր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ուրվագծեր» աշխատության մեջ ներկա աշխատության հեղինակը² փորձել է տարբերակել բուն հայկական (հիմնական շերտը) բնութագրող օրինաչափությունները այն շեղումներից, որոնք դիրքային տարբերություններով չեն բացատրվում: Հեղինակը հակված է այդ տարբերությունները դիտել որպես հնդեվրոպական-ենթաշերտային, հին բարբառային և հեռավոր ցեղակցությամբ հնդեվրոպական լեզուների հետ կապված լեզուների ներդրումներ: Սակայն մի շարք դեպքերում նա չի կարողանում որոշել, թե առկա օրինակներից որո՞նք են հիմնական և որո՞նք շեղվող, որովհետև երկու կարգի բառերն էլ երբեմն էլ հավասարաչափ կարևոր են և մտնում են հիմնական բառաֆոնդի մեջ: Այժմ ի մի բերելով այս տվյալները, դրանք համադրելով Վ. Վինտերի և ուրիշների հաղորդած փաստերի հետ, այլև լրացնելով նոր փաստերով՝ կտանք հնդեվրոպական միևնույն նախաձևերի զրաբարյան և (եթե կան զրաբարին համա-

¹ W. Winter, *Traces of Early Dialectal Diversity in Old Armenian, „Ancient Indo-European Dialects“*, Berkeley and Los Angeles, 1966.

² Г. Б. Джаукян, *Очерки по истории письменного периода армянского языка*, Ереван, 1967.

պատասխանող ձևեր) բարբառային տարբեր արտացոլումները³։
Հստ հնարավորին բացառում ենք ակնհայտորեն համեմատաբար
ուշ շրջանի պատկանող և, օտար ազդեցությամբ բացատրվող դեպ-
քերը։

1. Հ.—հ. k (kʰ)-ի դիմաց ա) ք և բ) խ (<*kh, որպես
k-ի տարբերակ)⁴։

ա) քելի «ղեկ, ղեկի մաս» <*kelijō-. հմմտ. հ. անգլ. helma,
անգլ. helm «ղեկ, ղեկանիվ»⁵։

քերբմ <*ker-. հմմտ. հուն. κέρω «խուզել, կտրել, փետրել»։

քեց <*kvoina. հմմտ. ալբ. kaēnā «պատիժ, վրեժ», պհլ. kēn
«վրեժ, թշնամություն»։ [հմմտ. Ալշ., եր. և ալլն քեց, Ախլց.,
Կար. խեց]⁶։

քիսք <*kvema. հմմտ. պրսկ. kām «քիմք»։

քիւ <*kēuō-. հմմտ. հ. հնդկ. skunāti, skāuti «ծածկում է»,
հ. անգլ. scu(w)a «ստվեր, մութ, պաշտպանություն»։

բ) խեղ <*khel-. հմմտ. հուն. χελλός «ծոռ ոտքով»։

խեղևի «ամբողջի մի կեսը» <*kheleph-. հմմտ. գոթ. halbs,
հ. վ. դերմ. halb «կես»։

խոյլ <*kheu-lo-. հմմտ. ռուս. шулята «ամորձիք»։

խուղ <*khu-lo-. հմմտ. հ. իսլ. cūl «անկյուն, ապաստան»,
հ. ֆրիզ. skūle «հյուղ, խուղ»։

2. Հ.—հ. kʷ-ի դիմաց ա) ք և բ) ց,—⁷։

ա) քիս-ք <*kʷēmā. հմմտ. պրսկ. kām, աֆղան. kūmat
«քիմք»։

քան (քանի, քանակ) <*kʷa-m. հմմտ. լատ. quam «քան»,
quantus «որքան»։

քառ- (քառորդ, ալլե քառ-ասուն) <*qʷe tʷr(?)։ հմմտ. լատ.
quartus «քառորդ» quadraginta «քառասուն»։

3 Բերվում են միայն հիմնական և հավաստի դեպքերը։ Մնացածների մասին
տե՛ս հիշյալ աշխատությունները։

4 Այսպիսով այս զեպքում հնարավոր է ենթադրել հ.—հ. լեզվում k-ով
և kh-ով ազատ (սովորական և սաստկական) տարբերակների գոյակցում։
Այսպիսի զեպքերի համար հմմտ. նաև հ.—հ. ք (> հայ. ք) և ph (> հայ.
փ), t (> հայ. ք. -ւ, -յ-) և th (> հայ. ք.), որոնց համար ավելորդ ենք հա-
մարում օրինակներ բերել։

5 Հ. Անառյանը հնարավոր է համարում բիեցնել հուն. χηλή «սմբակ,
կնզակ» բառից, որ չի արդարանում ոչ իմաստով, ոչ հնչյունապես։

6 Հնարավոր է, սակայն, ենթադրել հայ. բառի իրանական ծագում, որով էլ
Թերևս բացատրվում է բրբռ. խէն ձևը (իրանական մի ալլ աղբյուրից)։

7 Հնարավոր է, սակայն, որ մենք զործ ունենք զիրքային տարբերության հետ։

ք) ր (գ-ի, գ-ի-ն, ի-մն, ի-ք) < kvi(d). հմմտ. լատ. quid «ինչ».

հազ < *kʰəz-gʰo-. հմմտ. հ. հնդկ. kās-, kāsā- «հազ».

հոլ, հոլով (այլև յեղում, յաղ) < *kʰol-. հմմտ. հուն. πόλος «առանցք», ռուս. колесо «անիվ».

ո (ով, ո-ք, ո-մն) < *kʰo-. հմմտ. հ. հնդկ. ká- «ով».

ուր < *kʰu-r հմմտ. այբ. kur «երբ», լիտվ. kuĩ «ուր».

3. Առաջին շարքի ձայնավորներին (e, i) նախորդող հ. — հ. հոնալեզվայինների [gh (gʰh), g (gʰ), k (kʰ)] դիմաց ա) ետնալեզվայիններ (q, ʎ, p) և բ) կիսաշիականներ (ʒ, ɳ, ʎ)⁸.

ա) գեղձ < *ghelgʰh-. հմմտ. ռուս. железа «գեղձ»⁹.

գեր «գաբ, լաց» < *gher-. հմմտ. լատ. hirrē «ծվալ, գոմբուալ», այլև գոթ. grētan «լալ, ողբալ»¹⁰.

գերդ-աստան (< րան. ?) < *gherdh-. հմմտ. գոթ. bigair-dan «գոտանորել», ռուս. жердь «ձող».

կեամ (կեանք) < *gʷija-je-mi (*gʷei-). հմմտ. հուն. βέρμα «կապրեմ».

կեղ «վերք, խոց», կեղերչ «գանգատ. ցավ» < *gʷel-. հմմտ. հ. վ. դերմ. quelan «տանջվել», լիտվ. gėlti «ծակել, ցավել», gėlà «ցավ».

կեր < *gʷer-. հմմտ. ալ. jaraiti «կլանում է», լիտվ. geriù, gerti «խմել», այլև հայ. կուր, կոկորդ.

կես «կետ, նպատակակետ, ժամկետ», կես «մի տեսակ ճանճ, որ խալթում է կենդանիներին, իշամեղու» < *geid-. հմմտ. հայ. կիճ «խալթող», ֆին «ժոժակի խալթող» (ծր.), Թերեա նաև կծ(ան)եմ, հ. իսլ. kitla «խողտել».

կիծ (կծու) < *gigʰ-. հմմտ. լիտվ. gizti «թթվել», gizùs «կծված, դառը, թթված, մուլլ».

կին < *gʷenā. հմմտ. հ. իռլ. ben, հ. վ. գերմ. quena «կին».

քերեմ (քերթեմ, քերծեմ) < *ker-. հմմտ. հուն. κείρω «խուզել, կտրել», ռուս. червь «որդ», чертить «գծել», այլև հայ. բրբռ. քոքել.

⁸ Նկատելի է, որ քմայնացում չի լինում շրթնայնացած հոնալեզվայինների և «ասհող» s-ով արմատների զեպրում: Նթն ալոպես է, ապա տարբերությունը դիրքային է:

⁹ Գ-ի չփոխվելը ջ-ի համարվում է gʰh > ǵ-ի ազդեցության արդյունք (տարեմանություն):

¹⁰ Նորայր Բյուզանդացին համեմատում է պրոկ. γίρι, γίρι «բարձրաձայն լաց, ողբ» բառերի հետ, որ Թերեա պատկանում են այս բնաձայն արմատին:

քիւ-ք<*kvema. հմմտ. հ. հնդկ. camati, cāmati «խաշտում է, ծծում է», ն. պրսկ. čam «կեր», kām «քիմք».

քիւ<*kēyo-. հմմտ. հայ. ցիւ, հ. իսլ. skjā «շտեմարան», sky «ամպ».

բ) ջեր, ջերմ, ջերմն<*gūher-. հմմտ. հ. հնդկ. hāras-«ջերմութուն», հուն. θέρω «շոգ», θερμός «տաք, ջերմ», θέρμα «ջերմութուն».

ջիւ, ջիդ<*gūhīslā. հմմտ. լիտվ. gýsla, ռուս. жила «ջիւ-ջիդ».

ջիւ, ջիւշ<*gūhen-, *gūhenl-. հմմտ. ավ. իտալ. ĵainti «խփում է, զիպչում է, սպանում է», հուն. θείω «սպանել».

նիւ «մոծակի խալթոց» (եր.)<*gid-. հմմտ. հայ. կիւ «խալթոց», հ. իսլ. kitla «խոզանի».

նմլեմ<*gem-. հմմտ. հուն. γερμιζω «լցնել, բռնել», ռուս. сжимать «սեղմել».

ննշեմ<*gen-. հմմտ. հ. վ. գերմ. knetan «ննշել, ճմլել».

նիւ<*gēu-, հմմտ. հայ. կուռն, ցուռն (հեռն. և բրբռ.).

-չ (իւ-չ, ու-չ)<kve, հմմտ. հ. հնդկ. ca, ավ. ča, լատ. que «հ, էլ».

չոքք (չոքքաասան) <*kvetuores. հմմտ. հ. հնդկ. catvārah, հուն. τέτορος «չորս» ավել հայ. քառ-որդ, քառասուն.

4. Հ.—ե. mbh-ի զիմաց ա) մբ և բ) մ.

ա) ամպ (ամբ)<*ṃbh-, ամպրոպ<*ṃb(h)-ro-. հմմտ. հ. հնդկ. āmbhas- «անձրևաջուր», abhṛā- «վատ եղանակ, ամպեր».

բ) ծամեմ<*g'ṃbh-. հմմտ. հ. հնդկ. jāmbhatē «ատամներով բռնում է», jāmbhayati «մանրացնում է».

5) Հ.—ե. g'h-ի զիմաց (հատկապես բառակցքի նախաբաղաձայնական զիրքում) ա) զ և բ) ձ.

ա) զ (նախդիր) (հմմտ. զ-գայռել—Ոսկ.)<*g'hō-. հմմտ. ռուս. за «հետո, համար».

զոլ (բրբռ., նաև *զոդ>զոխ)<*g'hōl-. հմմտ. լիտվ. žu'olis «փալախի կտոր, ծառի բուն», հայ. ձող.

բ) ձ (զ նախդիր տարբերակը հմմտ. ձգելու, ձգնալ—միջ. շրջ.՝ զգայռել-ի զիմաց)¹¹<*g'hō-. հմմտ. ռուս. за «հետո, համար».

¹¹ ձ(>ծ)-ով ձևեր ունեն Սվեդ., Հնդ., Ախլց., Կար., Ջթ., զ(>ս)-ով ձևեր (զկոտալ, սկոտալ և այլն)՝ Ալշ., Գոր., Եր., Քբ., Ղրբ., Մոկս, Մրդ., Ջդ., Սլմ., Վան; Այս դեպքում զեռ-ը ունի նույն ծագումը, ինչ գայռ-ը:

անդ<*g'hol-. հմմտ. լիտվ. žuolis «խալսի կտոր, ծառի բուն», հայ. բրբռ. զոլ.

6. Հ.—հ. g'-ի դիմաց ա) ծ, բ) տ և գ) ս.

ա) ծեք<*g'ero- հմմտ. հուն. γέρων «ծեր. ծերունի».

ծիւն (ծւմանիւմ)<*g'en-. հմմտ. հուն. γένος «սեռ».

ծուեր<*g'ōnu-r. հմմտ. հ. հնդկ. jānu-, հուն. γόνυ «ծունկ».

բուծ<*bhug'o-. հմմտ. ալ. būza «արու ալծ, նոխազ», ն. պրսկ. buz «ալծ, արու ալծ, քաղ, նոխազ».

բ) տալ<*g'əldu- (?). հմմտ. հուն. γάλας «տալ, ամուսնու քուլլը».

տիտ «ծիծ»<*g'id-. հմմտ. հայ. ծիծ, հուն. -γάλας (<-γίδ)ος) «ծծող, ծծկեր».

արատ (ալլե արաւո)<*træg'-. հմմտ. հայ. արածեմ, հուն. τρώγω «կրծել, ուտել».

արտ <*ag'ros, հմմտ. հ. հնդկ. ājra-h, հուն. ἄγρος «դաշտ, արտ».

բուտ (բտեմ)<*bhug'- (?). հմմտ. հ. հնդկ. bhu «վալելիլ, ուտել, օգտվել».

մուտ (մտանեմ)<*mug'-. հմմտ. հայ. մուծանեմ՝ մխեմ-ի կողքին¹².

գ) աւեմ<*əg'-. հմմտ. հայ. առ-ած.

արաւս «խոպան»<*træg'- (?). հմմտ. հայ. արածեմ, արաւս, արատ, հուն. τρώγω «կրծել, ուտել».

7. Հ.—հ. k'ւ-ի դիմաց ա) շ և բ) սկ¹³.

ա) շաղեմ, շաղախ<*k'ul- (կամ *k'ue, l-). հմմտ. լիտվ. švelnūs «քնքուլշ, մեղմ».

շուկ<*k'ūon-. հմմտ. հուն. χόω «շուն».

շուկ<*k'ūonk'lo- հմմտ. լիտվ. švaikšti «ծանր շնչել, հեալ».

բ) սկետուր<*k'uek'ura. հմմտ. հուն. ἐκυρά «սկեսուր».

սկուկ<*k'ūon-to-. հմմտ. գոթ. hunds «շուն».

¹² g-ի քմայնացումսս-ից հետո:

¹³ Կասկածելի է սա որպէս բարբառային հատկանիշ դիտելը: Հեղինակը „Очерки...“ գրքում, էջ 228, *k'ū>սկ փոփոխութիւնը բացատրում է որպէս բառի մեջ մի ալլ պայթականի առկայութեան արդունք:

8. k's-ի դիմաց ա) ց և բ) չ.

ա) վեց <*(ks)uek's. հմմտ. ավ. xšvazš, հուն. ἑξ, լատ. sex «վեց».

ցաւ <*k'sāp-. հմմտ. հ. հնդկ. kṣāpáyati «վառել է տալիս, ալրել է տալիս».

բ) չոր, չիւր <*k'soro-, *k'sēro-. հմմտ. հուն. ἑσρόν «ցամաք», էդրոս «չոր».

9. չ.—ե. ք-ի և ս-ի դիմաց ա) հ, բ) և գ) յ¹⁴.

ա) հայր <pätēr. հմմտ. հուն. πατήρ «հայր».

բ) առոք <*sā-d-. հմմտ. հուն. ἄδην «կուշտ, ուղածի չափ».

գ) յագ (յագիմ, յագեմամ) <*sāu-. հմմտ. հուն. ἄω «հագեցնել, կշտանալ».

յաղթ «շատ, առատ, հսկա, քաջ, հաղթ» <*sēlt-. հմմտ. հուն. ἀλλομαι «ցատկել», լատ. salio, -ire «ցատկել, բարախել, բխել, վրան ցատկել, ծածկել (կենդանիների մասին)» (Աճառյան). [բարբառներում ներկայացված է՝ ա) ի-ով (Ալշ., Մուշ., Զուգա), բ) յ-ով (Ագլ., Դրբ.¹⁵, Շմ.), գ) հ-ով (Եբ., Զթ., Մոկս), դ) զրոյով (Ասլ., Ախլց, Ահն., Թբ., Խրբ., Կար., Հմշ., Ն.-Նխշ., Մրդ.)].

յեռուլ <*ser-s-. հմմտ. հուն. ἔν-ερσις «հեռում, միացում».

յիղկ (և յեղկ) <*pel-g-(?). հմմտ. հուն. πέλαγος «բաց ծով», գերմ. flach «հարթ».

10. չ.—ե. կ'-ից առաջ ր-ի ա) պահպանում և բ) կորուստ.

ա) հարսն <*prk'-. հմմտ. հայ. հարցանեմ (*prk'-sk'-), ռուս. просить «խնդրել».

բ) տեսանեմ <*derk'-. հմմտ. հուն. δερκομαι «նստել, տեսնել».

փեսայ <*pherk'-(?). հմմտ. հայ. հարսն, լատ. procius «փեսացու, փեսա».

11. չ.—ե. rs-ի դիմաց ա) ո, բ) րշ, ալի (կողմնակի շերտ) գ) րս, ս.

ա) գոռ-ոզ <*ghors-. հմմտ. հայ. գարշ, լիտվ. grasūs «սպառնալից, գարշ, ահաճ».

բառամիմ <*tfs-. հմմտ. հայ. բարշամիմ, հ. հնդկ. tfsyati «ծաբալ է», հուն. τέρσομαι «չորանալ».

¹⁴ Հմմտ. հառ, հոռ և յառ, յոռ, ընդ որում յոռել-ը («էտել») բարբառներում ներկայացված է յ-ով, հ-ով և զրոյով:

¹⁵ Զէխնի: Յառդ բառը ևս տալիս է բարբառային նման տիպի գուգաբանություններ:

մառ (Արբ., Մոկս, Զնդ., Սվ.), մեռ (Ակն) «փայտի բարակ փշուր, որ մարդու միսն է խրվում, փուշ» (Արբ., Մոկս, Զնդ., Սվ.), մառել «ցորենը կամենելով մանրել» (Երզ.) <*mrs-, *mers-. հմմտ. հայ. մա(ր)շեմ, հ. հնդկ. maṣam, maṣīm kar- «փոշիացնել», շվեց. morsen «փշրել».

բ) գարշ <*ghrs-. հմմտ. հայ. գոռոզ (?), լիտվ. grasūs, «սպառնալից. դարձ, տհաճ»¹⁶.

թարշամիմ <*tṛs-. հմմտ. հայ. թառամիմ, հ. հնդկ. tṛsyatṛ «ծարավ է», հուն. τέρας-αί «չորանալ»¹⁷.

լաիրշ <*slibr-s-(?). հմմտ. հայ. բրբռ. լառ, լառտել «արագ և անհասկանալի խոսել» (Արբ., Պոլ.), «շատախոսել» (Ն.-Նխշ.), լիռտել «լպրծել, ձեռքից սահել» (Ղրբ.).

մաշ-եմ (մարշեմ) <*mṛs-. հմմտ. հ. հնդկ. maṣam, maṣīm kar- «փոշիացնել», շվեց. morsen «փշրել».

դ) գոս «չոր (փայտ), չորացած, անպտուղ (ծառ)» <*ghors-(?). հմմտ. գոշ (գոշ) «քարծ, քոսա», գոշել (գուշել) «պատառուտել, գիշատել», հ. հնդկ. garṣati «տրորում է».

մարսել (թերևս նաև մասն) <*mṛs-(?). հմմտ. մա(ր)շել.

տ(ո)րորս (Վասի.), տրորս տալ (Վան), տորստել (Գեղվի), տորտել (Մարմարշիք) (<*տորորստել) <*tor-(?). հմմտ. հայ. տրորել, ռուս. тереть «տրորել», трескать «խժուկ, ագահաբար ուտել», трескаться «պատռվել, ճաքճքվել»(?).

քոս <*kors-(?). հմմտ. հայ. քերել, բրբռ. քորել. խեթ. karš-, karšiḷa- «կտրել-հանել, հատել».

փոս <*phors-(?)¹⁸. հմմտ. հայ. փոր և փերթ [*s)p(h)er- «պոկել»].

12. Հ.—ե. r, l, n + i կապակցութիւն գիմաց ա) ոջ, դշ, ճշ և բ) յր, յլ, յն.

ա) ողշ <*olḡo-. հմմտ. հ. իռլ. oll- «լրիվ մեծ», գոթ. alls-, հ. վ. գերմ. all «բոլոր, ողջ»¹⁹.

¹⁶ Գյարշել և գյարշել ձեռն ունեն Ջեյթունը և Ողմը:

¹⁷ Թարշամիմ ձեռք ծագող բառեր ունեն Այշ. (թոշմել, նաև բոսմել), Զթ., Կար. (թոշմիլ, նաև բոսմիլ), Սվ. (հին՝ Մանդ., վաստակ.): 2. Աճառյանը տարբեր է համարում բոշնիմ բայը (որից Ղրբ. բշնել «թառամել, թռչնել, գոնատվել»):

¹⁸ Հստ Աճառյանի՝ հուն. φύσσει-ից, որ քիչ հավանական է, եթե նկատի առնենք բառի տարածվածությունը:

¹⁹ Կամ, թերևս, *solḡo-ից (հմմտ. հուն. ὅλος «ողջ, ամբողջ»):

անուրջ < *onōrjio-. հմմտ. հուն. ὄνειρος (էռլ. ὄνειρος)
«հրազ».

ստերջ < *sterjio-. հմմտ. հուն. στεῖρα «ստերջ».

ջիւնջ, ջնջեմ < *gʷhenjō. հմմտ. հուն. θείνω «խիհել, խոցել,
սպանել».

բ) ալլ < *alljo-. հմմտ. հուն. ἄλλος, լատ. alius «ալլ».

գալլ < *uļkʷjio- (?). հմմտ. հնդկ. vřka-, հուն. λύκος, լատ.
lupus «գալլ»²⁰.

թոլլ < *toljio-. հմմտ. հայ. թողում²¹.

գալռ < *uərjji-. հմմտ. հ. հնդկ. vārī «ջուր», ավ. vairi «ծով»,
հ. սկանդ. vari «հեղուկ, ջուր».

ն-շոլլ < *ni-kʷoljio-. հմմտ. հայ. շող, նշող, հ. հնդկ. śvah
«վաղը».

փալլ < *phəlji-. հմմտ. հ. հնդկ. sphulinga- «կալծ», հայ.
փաղփաղիմ, փողփողիմ.

քալլ < *kəlji- (ցալլ < *skəlji-). հմմտ. հուն. σκέλος «ազդր.
ուրք», σκολιός «ծուռ, շեղ».

ձայն < *gʷhʷon-ji- (?). հմմտ. ռուս. звон «հնչում, ղողանջ,
ղանդահարութիւն», звенеть, звеню «հնչել, ղողանջել, զնգալ».

13. Հ.—հ. բ վանկարար ձայնորդի ղիմաց ա) ար և բ) ուր
(կողմնակի շիրտ).

ա) առն «արու վայրի ոչխար» < *rsen-. հմմտ. հուն. ἄρσην,
ἄρσυν «արական», ἀρνείος «խոլ».

արծուի < *rgʷipjiō-. հմմտ. հ. հնդկ. rjipya- «նետվող»
(«արծիվ» բառի մակդիրը).

բարձր < *bhrgʷhu-r-. հմմտ. հ. հնդկ. bhṛhānt- «մեծ, բարձ,
վեհ».

բ) դուրգն < *dhrgʷh- (?). հմմտ. հուն. δρόχος, հ. իռլ. droch
«անիվ».

խուրձն < *khuř(s)-to-. հմմտ. կիմր. prys «պուրակ», հ.
անգլ. hyrst «թփուտ, պուրակ».

շուրջ (բրառ. շուռ) < *skhřk-(?). կամ *skhřgh-(?) [հ.—հ.
(s)ker- «ուորել, ծռել»].

²⁰ Ավելի հակված են գալլ-ը բխեցնելու ցալլ- ձեկց (հմմտ. մ. իռլ.
fáel «գալլ»):

²¹ Գոկոռնին, հենվելով Շեֆտելովիցի վրա, բողոմ բայը բխեցնում է
հ.—հ. *tel- «բարձրացնել, կրել, համբերել» արմատից, հեղինակը («Очер-
к...») *tel- «լռել» (*stel- «գնել, կայուն, անշարժ») արմատից:

քուրջ (միջ. հայ.) < *kɟ(t)-ti-(?). հմմտ. հ. հնդկ. kṛtti- «մորթ», հայ. քերթեմ.

14. Բաղաձայններից առաջ հ.—ե. ու-ի ա) պահպանում է բ) կորուստ²².

ա) անդ (բրբռ. հանդ) < *andh-. հմմտ. հուն. ἀνδρος «ծաղիկ», թուխ. 𐌹 𐌹𐌰𐌲, 𐌹 𐌹𐌰𐌲 ante «հարթավայր, հարթություն».

անդ «այնտեղ», բնդ < *anti. հմմտ. հուն. ἀντί «դիմաց, փոխարեն».

անկիւն < *ang-. հմմտ. հուն. ἀγκύλος «ծուռ».

անձուկ < *ang'hu-. հմմտ. գոթ. aggwus «նեղանձուկ».

եղունգն *enung-(?) կամ *ong-l- (դրափոխություն) (?), հմմտ. լատ. unguis «եղունգ», ungula «ճանկ, մարակ».

բ) ածուխ < *angu-(?). հմմտ. հայ. բրբռ. անձող, լիտվ. anglis, լատվ. ùogle «ածուխ»²³.

այր < *anrjo-(?). հմմտ. հուն. ἀνῆρ, ἀνδρός «այր, տղամարդ».

այր «քարայր» < *anrjo-(?). հմմտ. հուն. ἄντρον «քարայր»²⁴.

աւծ (աւծանեմ) < *aug- < *ngʷ-. հմմտ. լատ. unguō, -ere «քսել, լուղել, օծել»²⁵.

աւձ < *aughi- < *angʷhi-. հմմտ. լատ. anguis «օձ».

հաւ- < *kʷ-. հմմտ. հ. հնդկ. aśnōti «հասնում է».

15. չ.—ե. միջձայնավորային ք-ի դիմաց ա) զ, բ) լ և գ) — (զրո) ²⁶.

ա) արեգ(ակն) < *reu-. հմմտ. հ. հնդկ. ravi-, հայ. արեւ. լոգանամ < *louəṇā-. հմմտ. հուն. ῥῶα «լվանալ, լողացնել».

սազ < *kʷayā. հմմտ. գալլ. > լատ. cavannus, ռուս. соба «բու», լիտվ. kóvas «արջնադուվ, եղջերուկ», kóva «սերմնաքաղ, ագուավ, սերմնազուավ».

²² Սակայն նկատելի է, որ ու-ի անկումն օրինաչափ է քմայնացած և շրթնայնացած (երկրորդաբար քմայնացած) ետնալիզվայիններից առաջ: Այս դեպքում ու-ի անկումը դիրքային պայմանավորվածություն ունի:

²³ Հմմտ. ստորեւ՝ աւծ-ի ծանոթությունը: Բրբռ. դ-ի դիմաց խ-ն, այլև մծեղ—մծեխ և այլն. ախլի գուգաձեռության փաստերը խոսում են IX դարից առաջ (V դարում) բարբառներում դ-ի ոչ ձայնորդային հնչման մասին, որ հետո ընդհանրանում է (իհարկե, եթե մենք գործ չունենք ուշ գրչությունների հետ):

²⁴ *nt-ի անկում և rj > ր դրափոխություն:

²⁵ „Очерк...“ գրքում հեղինակը ենթադրում է աւծ և աւձ արմատների համար ու-ի անկում և լ-ի հազվելում կամ gʷ(h)-ի շրթնային տարրի ազդեցություն:

²⁶ Վերջինս թերևս նաև նախաբաղաձայնական դիրքում (?):

բ) արեւ <*reu-. հմմտ. հ. հնդկ. ravi-, հայ. արեգ(ակն)。
 հաւ <*auēi-. հմմտ. լատ. avis «թռչուն»。
 հովիւ *oyi-pā. հմմտ. հ. հնդկ. āvi-, լատ. ovīs «ոչխար»。
 գ) երկամ <*gyrānā <*gyrəvanā. հմմտ. հ. հնդկ. grāvan—
 «սամալի նյութ հանելու քար», ռուս. жернов «ջրադաջաքար,
 երկամ»²⁷。

նոր <*noyo-ro-(?)。 հմմտ. հուն. νεαρός «նոր»。
 սոր «ծակ, խոռոչ» <*k'ouoro-(?)。 հմմտ. հ. հնդկ. savira-
 «սւժեղ, հզոր», հուն. κόρα «ծակ, խոռոչ», լատ. caverna «այր,
 անձավ»。

իւր (*eip) <*seyo-ro-(?)。 հմմտ. ավ. sava- «յուր, սեփա-
 կան», հուն. հոմ. εἶς «յուր»。

իմն <*enup. հմմտ. հուն. ἐνφα (հոմ. εἶνα-, ատտ. ἐνα-),
 *véfa (ἐν-véa) «իմն»。

նեարդ <*snēurt. հմմտ. ավ. snāvarə, հուն. νεῦρον, լատ.
 nervus «նյարդ»。

ոգեմ <*ouoguh-(?)。 հմմտ. ավ. aog- «հաղորդել, ասել»,
 այլև հայ. գոգ。

16. նախահ.—հ. ձ-ի (H-ի) դիմաց ա) հ է բ)—²⁸。

ա) հաճ «տատ» <*Han-. հմմտ. խեթ. hannaš «տատ»,
 լատ. anus «ծեր կին»²⁹。

հաւ «պապ» <*HauHo-. հմմտ. խեթ. huphaš, լատ. avus
 «պապ»。

հաւ «թռչուն» <*Hau-. հմմտ. լատ. avis «թռչուն»。

հովիւ <*Houī-. հմմտ. լուվ. haui-, լատ. ovīs «ոչխար»。

հոտ <*Hod-. հմմտ. լատ. odor «հոտ»。

հում <*HoHm-. հմմտ. հուն. ὥμος «հում»。

բ) աճ «այնտեղ», ընդ <*(H)anti. հմմտ. խեթ. hanti «առ-
 ջեի կողմ, ճակատ», hanti «մեկուսի, առանձին»。

առեամ, առելի <*(H)od-. հմմտ. խեթ. hatuki-«աարսա-
 փելի», լատ. odium «ատելություն, դժմանք»。

²⁷ aya, oyo, oya և այլն տիպի կապակցությունների ամփոփման պրո-
 ցեսը հավանաբար սկսվել էր դեռ հ.—հ. շրջանում։

²⁸ Թերևս հին փոխառություն է [խեթերեն hušk- «պապ»] բային ցե-
 ղակից (հայաս. ?) բառից] հայ. (հ)սկեմ բայը։

²⁹ Ի միջի այլոց նշենք խեթ. happira- «բաղաբ» (<*«տոնավաճառ») և
 հայ. խաւիղ «պարտեզ, բանջարանոց» (<*«ցանկապատված վայր») բառերի
 զուգադիպումը։ Խեթերենը Թերևս հայերենի աղբյուրն է։

արգել<(H)ark-. հմմտ. խեթ. ħark-«պահել».

արծաթ, արծենել<(H)arg'-[:(H)ɾg'-]. հմմտ. խեթ. ħarki-«սպիտակ, լուսավոր», հուն. ἄργος «սպիտակ», ἄργυρος «արծաթ».
աւն «ունեցվածք, սեփականություն» <*(H)opn-. հմմտ. խեթ. ħapinahh-«հարստացնել», հ. հնդկ. apnas-«արդյունք, ունեցվածք, սեփականություն».

արջ<?. հմմտ. խեթ. ħartagga- «արջ(?)», հուն. ἄρκτος «արջ».

գեղմն<*(H)uel-(?), հմմտ. խեթ. ħulana-«բուրդ», կիմր. gwlan «բուրդ».

ոսկր<*(H)ost-. հմմտ. խեթ. ħaštai-, հուն. ὀστέον «ոսկր».

ոսւ<*(H)ozdo-. հմմտ. խեթ. ħašduir «ճիպոտ, բարակ ճյուղ», հուն. ὄζος, գոթ. asts «ճյուղ».

17. Հ.—է. ձայնորդներից առաջ ա) ձայնավոր նախահավելված՝ հունարենին զուգահեռ, բ) առանց հունական զուգահեռի, գ) նախահավելվածի բացակայություն՝ ի տարբերություն հունարենի.

ա) աղուես<*ulōp-. հմմտ. հուն. ἀλώπεξ «աղվես».

աղբատ<*lik-. հմմտ. հուն. ἄλιγος «քիչ, սակավ, փոքր»
և λοιγός «կործանում, աղետ».

այր (սեռ. առն)<*anr-(?). հմմտ. հուն. ἀνήρ (սեռ. ἀνδρός), ն. փոյուղ. անար «այր, աղամարդ».

անեծք<*neid-. հմմտ. հուն. ὄνειδος «հշտամբանք, պարսպանք».

անուն<*nōm̥. հմմտ. հուն. ὄνομα «անուն».

ասող<*stel-(?). հմմտ. հուն. ἀστέρ «աստղ».

ատամն<*dnt-. հմմտ. հուն. ὀδών «ատամ».

երեկ(ոյ), երեկ<*regwos-. հմմտ. հուն. ἔρεβος «խավար»,
այլև թոխ. Լ. orkam «խավար».

իմ<*eme-. հմմտ. հուն. ἐμέ և με «ինձ».

իեն<*enq̣. հմմտ. հուն. ἐνFα-(հոմ. εἰνα-) «ինն».

ոռնամ<*ru-(?). հմմտ. հուն. ὠρόμαι «ոռնալ».

բ) ամիս<*mēns-. հմմտ. հուն. αἶμα, և ἴν, իոն. μεῖς «ամիս».

ա-նաւթի<*nagw̥h-. հմմտ. հուն. νήφω «զգաստ, ժուժկալ լինել»³⁰.

30 Կ դարում հանդիպում են և նօրի (աստվ.) և աեօրի (Ոսկ.) ձևերը Բարբառներում ա-ով, բացի Ղարաբաղից (նօ՛րէ) :

իմանամ *mənā-mi (ի-ն ժաղում է *ə-ից)³¹. հմմտ. հուն. μαίνομαι *ամոլեցնել*, μεμνησχω, μέμνημαι (*պերֆ.*) *հիշեցնել*».

դ) մեզ < *meighā. հմմտ. հուն. ὀμείγειν *ամաց, մեզ*».

մեզ < *meig'h-. հմմտ. հուն. ὀμείγειν *ամիգել*».

18. Հ.—Ե. e-ի դիմաց ա) Ե, բ) Է, գ) Ի (< Է) և դ) ա.

ա) երեկ(nj) < *regʷos-. հմմտ. հայ. երեկ, հուն. ἔρεβος *«խավար»*.

բ) երեկ < *regʷos-. հմմտ. հայ. երեկ(nj), հուն. ἔρεβος *«խավար»*.

մեջ < *medhjos. հմմտ. լատ. medius *«միջին»*.

գ) գիշեր < *uekero-(?)³². հմմտ. լիտվ. vākaraš, ռուս. вечер *«երեկո»*.

դ) վաթ-սուն < *syek's-k'ontə. հմմտ. հուն. ἐξήκοντα *«վաթ-սուն»*³³.

հանում < *penumi. հմմտ. լիտվ. pinti *«հյուսել»*, հայ. հենք, հինել, *ավելի հին հեցում*.

ծաղր, -ու < *g'elōš. հմմտ. հուն. γέλως *«ծիծաղ, ծաղր, ծաղրի առարկա»*, այլև հայ. ծիծաղ, թերևս նաև ծաղիկ³⁴.

առնում < *e-nōm (*o-nōmn. հմմտ. հուն. ἔνομα < *ἐνομα, որ-տեղ e > o *փոփոխությունը բացատրվում է առնմանությունով*»).

տասն < *dek'η. հմմտ. հուն. δεκά³⁵.

աք, -ու < *pek'u- (*pok'u- ?)³⁶. հմմտ. լատ. pecū *«խոշոր եղջերավոր անասուն»*.

31. Եթե ի-ն նախորդի մնացորդ չէ:

32. Ըստ Պետերսոնի՝ *uoikero- ձևից (*ueik- «թաց» արմատից), որ կասկածելի է:

33. e > a փոփոխությունը ոմանք բացատրում են որպես հաջորդ ու-ի ազդեցության արդյունք, ինչպես հենում—հանում զույգի դեպքում:

34. Հունարենի համար ենթադրվում է γέλως ձև, բայց հնարավոր է ենթադրել նաև ու-ի (ծաղու) ազդեցությունով e > a:

35. Ըստ Մեյերի՝ տասն < dek'η (հմմտ. ռուս. три-дцать).

36. Հայ ա-ն բացատրվում է o-ից՝ ձայնավորային սկզբնավանկում, իսկ հմմտ. հաջորդ ու հիմքակազմ տարրը:

արիւն <*esj (+իւն). հմմտ. հուն. ἔαρ, խեթ. ešhar «ար-
ջուն»³⁷.

գարուն<*yesj (+ուն)³⁸. հմմտ. հուն. ἔαρ «գարուն».

մաւրուք (ալիւ մորուք, մուրուք)<*smekru-(?). հմմտ.
հ. հնդկ. śmāśru- «մորուք», ալբ. mjekre «ծնոտ, մորուք» [հմմտ.
հայ. բրբռ.՝ ու-ով (Ալշ., Ջթ., Հջ., Մուշ, Ն.-Նխշ., Սվ.), ո-ով
(Խրբ., Պոլ., Ռոդ., Սեբ., Տիգր.), ի-ով (Աղլ. (ի>ալ), Ախլց., Եր.,
Կար., Հմշ., Ն.-Նխշ., Ջդ., Սչ.). ձեւերը].

19. Հ.—հ. օ-ի դիմաց ա) ո կ բ) ա.

ա) հոտ (հոտիւմ, հոտոտիւմ)<*od-. հմմտ. հուն. ὄζω «հոտ
արձակել» (պերթ. ὀδωδα).

ոտ<*ozdo-s. հմմտ. հուն. ὄζος, գոթ. asts «ոտ», ճլուզ».

որբ<*orbho-. հմմտ. հ. հնդկ. ārbha-«փոքրիկ, թույլ.
կրեխա», հուն. ὀρφανός «որբացած», հայ. արբանեակ.

ործ (ործի-ք, ամ-ործի-ք, մի-ործի)<*orgʰi-. հմմտ. հուն.
ὄρχις «ծու, ամորձի».

բ) ագանիւմ, ալթոնգ<*ou-, *ou-t-. հմմտ. ալ. aodra-
«կոշիկ», լիտվ. aviū, -ėti «կոշիկ կրել», aūti «կոշիկ հագնել»,
aūtas «ոտքի փաթաթան».

ալիւ աշ-ք<*okv(kv)-, okvī. հմմտ. ռուս. око, очн.

ահուրջ<*onōrjo-. հմմտ. հուն. ὄνειρος (էոլ. ὄνυρος) «ե-
րազ».

առեամ<*od-. հմմտ. հուն. ὀδω-(*od-սծ-), οὐδένετα «կոպում
է», οὐδένενα «բարկանալ, քրթմնջալ».

արբանեակ<*orbh-. հմմտ. հուն. ὀρφανός «որբացած, զուրկ»,
հայ. որբ.

աւելում «ալիւել», յ-աւելում «ալիւլացնել» <*obhel-. հմմտ.
հուն. ὀφέλλω «ալիւել» և «ալիւլացնել».

աւն «սեփականութիւն»<*opnos-. հմմտ. հնդկ. āpnas-
«հկամուտ, ունեցվածք, սեփականութիւն», հուն. ὀμπνη «անուշ».

հայն<*gʰuon-ji-. հմմտ. ռուս. зvon «հնչում, ղողանջ,
զանգահարութիւն, զնդոց», звенеть «հնչել, ղողանջել, զնգալ»:

³⁷ Սակայն հ.—հ. e-ն կարող էր լինել և երկար (հմմտ. հուն. ἔαρ (Հե-
սիքիոս), որի զեպքում կարելի է ենթադրել Ե:Յ. հերթադաշտութիւն [(esj):
*esj- > աբ(-իւն)]:

³⁸ Այլ զեպքում նույն դիմաց առկա է ե՝ *yesjbbhi > բերբ,
*gʰesjbbhi > ձեռք, esʔti > են:

7. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՅՑՈՒՆԱ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ԱՐԽԱԻԶՄՆԵՐԸ)

Բարբառային հնաբանությունների (արխաիզմների) անվան տակ, ինչպես նշվել է, մենք նկատի ունենք բարբառային բնույթի հնչյունական, քերականական և բառային այն առանձնահատկությունները, որոնք զրաբարում չեն ավանդվել, տարբերվում են զրաբարի համապատասխան երևույթներից և գալիս են հայոց լեզվի զարգացման հնագույն (նախագրային) շրջաններից: Իհարկե, ինչպես լեզվական այլ երևույթներ, այս առանձնահատկությունները հավասար հնություն չունեն: Կան այնպիսի գծեր, որոնք գալիս են հնդեվրոպական միասնության շրջանից և, պահպանված լինելով որոշ բարբառներում, անհետացել են զրաբարի հիմքում ընկած բարբառային տարբերակում կամ նրա մեջ միայն որոշ հետքեր թողել: Կան գծեր, որոնք արդյունք են հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած ցեղերի ու ժողովուրդների լեզվական նստվածքի՝ ենթաշերտի (սուբստրատի): Վերջապես, կան գծեր էլ, որոնք առաջացել են հայերենի և այլ ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային շփման, այլ և էթնիկական-առերտային (ադստրատային) փոխազդեցության հետևանքով: Բարբառային առանձին կարգի հնաբանությունների հետագա քննության ընթացքում մենք կաշխատենք սրանք ըստ հնարավորին տարբերակել:

Հայ բարբառների արխաիկ գծերի ուսումնասիրության վիճակը բավարար համարվել չի կարող: Այդ հարցը կամ սովորաբար անտեսվում է բարբառագետների կողմից, կամ հրամցվում են բավարար չափով չհիմնավորված, մի քանի անստույգ փաստի մակերեսային քննության հիման վրա կատարված հապճեպ եզրակացություններով:

Զցանկանալով ստվեր գցել այնպիսի ուսումնասիրողների աշխատանքի վրա, ինչպիսիք են Լ. Մսերյանցը և Ա. Տոմսոնը¹, նշենք որ հայ բարբառների քննության նրանց եղանակը, կարևոր լուծա-
ներդնելով հայոց լեզվի համեմատական քերականության մեջ, չի

¹ Հմտ. Л. Мсериани, Этюды по армянской диалектологии, I—II, СПб, 1897—1901. А. Томсон, Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890.

բացահայտում քննվող բարբառների արխաիկ գծերը: Լ. Մսերյանցը Մշո բարբառի և Ա. Տոմսոնը Թբիլիսի բարբառի հնչյունական, քերականական և բառակազմական քննությունը կատարում են հայերենին ցեղակից լեզուների համապատասխան փաստերի հետ անմիջապես զուգադրելու, հնդեվրոպական նախալեզվի վիճակի հետ համեմատելու միջոցով: Այսպիսով, չի պարզվում, թե տվյալ բարբառը հնդեվրոպական ի՞նչ գծեր է պահպանել, որ չկան գրաբարում և այլ բարբառներում, ի՞նչն է ընդհանուր հայկականը և ի՞նչը՝ տվյալ բարբառին հատուկը: Առանձին դեպքերում միայն այս հեղինակները բարբառային արխաիզմների բացահայտմանն օժանդակող հետաքրքրական դիտողություններ են անում:

Հայ բարբառների արխաիկ գծերի բացահայտման ուղղություններ փորձել է աշխատել Ա. Ղարիբջանը²: Սակայն առանձին դեպքերում հետաքրքրական դիտողություններ անելով հանդերձ (համտ. հայ բարբառների շնչեղ ձայնեղների արխաիկության հարցի դրումը³, հ> խ փոփոխությունը ուրարտական ենթաշերտով բացատրելը)⁴ նա չունի դրանց առանձնացման հստակ չափանիշներ և մեթոդներ: Հավասարապես արխաիկ են համարվում և՛ այն գծերը, որոնք ըստ Ղարիբջանի գրաբարից ավելի հին են (ինչպես շնչեղ ձայնեղների առկայությունը), և՛ այն գծերը, որոնք համընկնում են գրաբարի համապատասխան գծերի հետ, բայց հանդես են եկել հայոց լեզվի ինքնուրույն վարձագման ընթացքում (ինչպես ի նախդրով գործիականի իմաստի արտահայտումը Արամոյի բարբառում), և՛ այն գծերը, որոնք ակնհայտորեն տվյալ բարբառների ինքնուրույն վարձագման արդյունք են և ոչ մի կերպ հնդեվրոպական շրջանից բխեցվել չեն կարող (ինչպես մենաբարբառների՝ շեշտով պայմանավորված երկբարբառացումը) և այլն:

Իրենց ուսումնասիրություններում ավելի զգուշավոր են Հ. Աճառյանը և է. Աղայանը, որոնցից առաջինը հանգամանալից քննություն է ենթարկում հնչյունական և բառային կարեորագույն հնաբանությունները, իսկ երկրորդը մատնանշում է բարբառներին հա-

2 Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953. Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ. Երևան, 1958. Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3. А. С. Гарибян, Об армянском консонантизме, «Вопросы языкознания», 1959, № 5.

3 Այս դեպքում էլ Ա. Ղարիբջանը անտեսում է գրաբարի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ արտասանվելու հնարավորությունը:

տուկ մի քանի արխաիկ գիծ⁴։ Նրանց բերած փաստերը կօգտագործվեն առաջիկա քննության մեջ։ Բառային որոշ արխաիզմների մասին խոսել է նաև ներկա աշխատության հեղինակը իր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ուրվագծերում»⁵, առանց դրանց մանրամասն և տեղայնացված քննության։

Հենվելով հայոց լեզվի զարգացման հին շրջանի համար մեր նշած հատկանիշների վրա՝ ամենից առաջ փորձենք պարզել բարբառային տարբերությունները և դրանց ձևավորման ուղիները հայոց լեզվի նախագրային շրջանում։ Հայոց լեզվի զարգացման հին շրջանի համար մենք նշեցինք հնչյունական 20 տարբերիչ հատկանիշ։ Ճիշտ է, հնարավոր է ենթադրել նաև շնչեղ խուլների թույլ շնչեղության հնությունը և ընդհանրապես ենթադրել բաղաձայնների հայկական տեղաշարժի ավարտման տարբեր աստիճաններ հայ ժողովրդի տարբեր հատվածների համար, բայց այդ քիչ հիմնավորված կլինի, և դժվար կլինի առանձնացնել դիրքային ու փոխազդեցական ապաշնչեղությունը ոչ-դիրքայինից և ոչ-փոխազդեցականից։ Թողնելով այդ հարցը՝ նախ աշխատենք որոշել, թե հիշյալ 20 հատկանիշներից (զուգաբանություններից) որո՞նք են գալիս հնդեվրոպական շրջանից կամ արդյունք են ինքնուրույն զարգացման, և որո՞նք են արդյունք ենթաշերտային ու ալլ կարգի ազդեցությունների։

1—3 (1—3). Զուգաբանություններից առաջին երեքը վերաբերում են հնդեվրոպական շնչեղ ձայնեղների՝ bh, dh, g'h, gh (g'u'h)՝ հայերենում կրած փոփոխություններին։ Հայտնի է, որ մինչև վերջին ժամանակներս ենթադրվում էր, թե հայերենում տեղի է ունեցել հնդեվրոպական բաղաձայնների լիակատար տեղաշարժ՝ հ.-ե. շնչեղ ձայնեղները վերածվել են ձայնեղների, ձայնեղները՝ խուլների, խուլները՝ շնչեղ խուլների⁶։ Զ. Ֆուգտը և է. Բենվենիստը, հենվելով Ա. Մեյերի և Զ. Պեդերսենի անցողակի դիտողությունների վրա, ենթադրեցին, որ հայերենի, հատկապես գրաբարի համար, բնորոշ է եղել ք, դ, գ, ձ, ջ բաղաձայնների շնչեղ-ձայնեղ արտառանու-

4 Զ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913. Հայերեն արմատական բառարան, Երևան, 1925—1935. Հայոց լեզվի պատմություն, 1—2, Երևան, 1940—1951 (հատկապես առաջին մասի 118—122 և երկրորդ մասի 135—141, 324—439 էջերը). է. Աղալյան, Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, ՆՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 5։

5 Դ. Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

6 Հաջվի շնչը առնում մասնակի շեղումները։

թյունը: Ա. Ղարիբյանը այդպիսի արտասանություն վերագրելով հայերենի մի շարք բարբառներին՝ կարծում է, որ գրաբարին հատուկ է եղել ք, դ, գ, ձ, ջ-ի պարզ ձայնեղ արտասանությունը, և, հետևաբար, շնչեղ ձայնեղներ ունեցող բարբառները նախորդել են գրաբարին: Տողերիս գրողը կարծում է, որ գրաբարի ք, դ, գ, ձ, ջ-ի տակ պետք է ենթադրել և՛ շնչեղ ձայնեղներ, և՛ պարզ ձայնեղներ՝ առանց հնչյութաչին տարբերակման: Պատմական փնջ հաջորդականություն կարելի է ենթադրել նախագրաբարյան շրջանի համար: Վերևում մենք տեսանք, որ ք, դ, գ, ձ, ջ-ի շնչեղ արտասանությունը հայոց լեզվի զարգացման հին շրջանում հատուկ է եղել բարձր Հայքի, Սոփքի (Չորրորդ Հայքի), Տուրուբերանի և Այրարատի հիմնական մասի բնակչությանը, եթե, իհարկե, չենթադրենք, որ շնչեղ արտասանությունը հետագա ձեռքբերում է: Քանի որ ամենից ավելի հավանական է ենթադրել, որ գրաբարի հիմքում ընկած են եղել Տարոնի և Այրարատի արտասանական նորմաները, ուստի և պետք է կարծել, որ գրաբարի հիմքում ընկած էր շնչեղ-ձայնեղ արտասանությունը: Այս դեպքում ապաշնչեղացումը և խլացումը կարելի է բացատրել կամ որպես հայոց լեզվի հենց սկզբից եղած որոշ հատկությունների (շնչեղ ձայնեղների ձայնեղություն և հնչեղության տարբեր աստիճանների) հետագա տերիտորիալ խորացում, կամ որպես հայոց լեզվի տարածման ընթացքում առաջացած ենթաշերտային տարբերություն: Կարելի է ասել և միջին տիպի եզրակացություն՝ ենթադրելով սկզբնական տարբերությունների հետագա խորացում հայոց լեզվի տարածման և նրա՝ Հայաստանի տերիտորիայում բնակվող զանազան ցեղերի լեզուն դառնալու կապակցությամբ: Քանի որ ոչ շնչեղ արտասանությունը հատուկ է եղել Գուգարքին, մասամբ էլ թերևս Ուտիքին և Տայքին, ապա այս դեպքում շնչի վերացումը կամ թուլացումը թերևս արդյունք է կուվկասյան ենթաշերտի ազդեցության: Միաժամանակ, քանի որ խլացումը հատուկ է հարավային և արևելյան շրջաններին, պետք է ենթադրել այդ շրջանների բնակչության՝ ձայնեղները խլացնելու հատկում: Կարելի է գծել հ.—ե. շնչեղ ձայնեղների փոփոխման հետևյալ սխեման.

bh, dh, g'h, gh (gʷh) →	b', d', g', j', j' →	b, d, g, j, j
(Հ.—Ե.)	(Տարոն, Այրարատ)	(Գուգարք)
	↓	↓
	p', t', k', c', č'	p, t, k, c, č
	(Աղձնիք)	(Մոկք, Վասպուրական)

4 (6). Միջձայնավորային խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղությունը (թույլ արտասանությունը) ակնհայտորեն կապված է հայոց լեզվի զարգացման ներքին միտումների հետ: Հայտնի է, որ միջձայնավորային խուլների ձայնեղացումը հանդես է գալիս որպես յուրահատուկ տարաժամանակյա հանրույթ (ունիվերսալիա) և հատուկ է եթե ոչ բոլոր լեզուներին, ապա գոնե շատ լեզուներին: Այդպիսի վիճակ մենք տեսնում ենք, օրինակ, իրանական, ռոմանական և այլ լեզուների պատմության մեջ: Հայերենում միջձայնավորային դիրքին համարժեք են նաև բառավերջի ձայնավորային և Ի-ին հաջորդող դիրքերը⁷, որոնք նույնպես առաջ են բերում խուլների թույլ և, սրա հետ կապված, ձայնեղ արտասանություն: Պետք է նշել, որ ձայնորդներին հաջորդող խուլների ձայնեղացումը հին երևույթ է և բնորոշում է հայոց լեզվի զարգացումը հենց ամենավաղ շրջանից: Ավելի ուշ է հանդես գալիս հետագա ձայնեղացումը նշված դիրքերում, որով իսկ Ի-ին հաջորդող դիրքը առաջ է բերում ձայնեղացման երկու տարբեր պրոցես՝ ընդհանուր հայկական, որ հատուկ է եղել թերևս նախահայերենի շրջանին, և բարբառային, որ սկսվելով համեմատաբար վաղ՝ տարածվել է ուշ ժամանակներում՝ հավանաբար հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերին: Ավելորդ չենք համարում նշել, որ և ձայնորդից հետո գտնված դիրքը առաջ է բերում ձայնեղների և խուլների խառնում դեռևս հին շրջանում. հմմտ. քանկ/քանգ. բանտ/բանդ և այլն:

5 (7). Շնչեղ խուլների դիրքային ապաշնչեղությունը պետք է տարբերել թույլ շնչեղությունից. առաջինը ամենայն հավանականությամբ համեմատաբար նոր երևույթ է և բացատրվում է փոխազդեցական հնչյունափոխությամբ. թույլ շնչեղությունը կարող է և համեմատաբար հին երևույթ լինել՝ պայմանավորված հայ ժողովրդի որոշ հատվածների արտասանական մասնակի առանձնահատկություններով՝ ժառանգված կամ ենթաշերտային բնույթի: Այս կարգի վայրերի թիվը խիստ սահմանափակ է, և աղյուսակներում դրանք նշանակված են պլյուսով, մինչդեռ դիրքային ապաշնչեղության դեպքերը նշանակված են մինուս-պլյուսով:

6 (8). Քմայնացած ետնալեզվայինների առաջացումը չի կարելի կտրել նրանց դիրքից. այն սովորաբար հարմարեցական (ակոմոդացիոն) փոփոխության ուժեղ աստիճանն է, որ հանդես է գա-

⁷ Հմմտ. 'Hλέγερδα ձեր Պաղոմեոսի մոտ (~*Սղեկերո):

լիս երկու ձևով՝ առաջին շարքի ձայնավորներից (ե, ի) առաջ և քմայնացման ճանապարհով առաջին շարքի վերածված ձայնավորներից առաջ (ա, ո, ու > օ, ու, օւ): Բաղաձայնների քմայնացման առաջին տիպը ներքին պրոցես է և տարբեր վայրերում կարող է ավելի կամ պակաս ուժով արտահայտվել: Երկրորդ պրոցեսի համար կարելի է երկու ենթադրություն անել: Կարելի է ենթադրել, որ այդ ներքին պրոցես է՝ կապված ձայնեղ բաղաձայնների խլացման հետ. այս դեպքում բաղաձայնների քմայնացումը նախորդում է ձայնավորների քմայնացմանը: Կարելի է ենթադրել նաև, որ այդ երևույթը արգելու է ենթաշերտային կամ, թերևս նաև առշերտային ազդեցության. այս դեպքում ձայնավորների քմայնացումը կարող է նախորդել բաղաձայնների քմայնացմանը և կամ նույնիսկ գործել վերջինիս հետ միաժամանակ: Այն հանգամանքը, որ Թրակացու քերականության թարգմանության մեջ զամ-ի համար նըշվում է գնամ գուգահեռը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ քմայնացման պրոցեսի նշանակում, խոսում է երկրորդ ենթադրության օգտին: Այս մասին է վկայում նաև հայ բարբառների փոխհարաբերության արդի վիճակը. հայտնի է, որ կան վայրեր, որտեղ առկա են քմայնացած ձայնեղներ ու քմայնացած ձայնավորներ (հմմտ. Ագուլիսը), և կան վայրեր, որտեղ առկա են քմայնացած խուլեր (ձայնեղների դիմաց) ու քմայնացած ձայնավորներ: Այս դեպքում կարելի է որոշել, որ քմայնացումը բնորոշում է հատկապես արեւելյան շրջանները (Արցախ, Սյունիք, Վասպուրական, Պարսկահայք) և արդյունք է այդ (ու հարակից) շրջանների հին բնակչության ենթաշերտային (ու առշերտային) ազդեցության:

7 (16). Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզվի (գրաբարի) համեմատությամբ առկա հավելական շնչի համար տարբեր ծագում է ենթադրվում. ա) մի շարք դեպքերում հ-ն կարող է գալ հայոց լեզվի զարգացման ամենավաղ շրջանից և արտացոլել հ.—ն. s-ն կամ p-ն. այս դեպքում կարծվում է, որ այդ հ-ն, պահպանվելով հայ բարբառների մի նշանակալից մասում, չի պահպանվել գրաբարի արտասահմանական նորմաների հիմքում ընկած խոսվածքներում. այս ենթադրությունը որոշ կասկածներ է հարուցում այն առումով, որ այս կարգի հ-ն որոշ դեպքերում տարածված է ժամանակակից բոլոր բարբառներում (հետևաբար դրանք՝ հնի շարունակությունը լինելու դեպքում այն պետք է գտնվեր նաև գրաբարի հիմքում ընկած խոսվածքներում). հմմտ. գրաբարի արք արմատի դիմաց հարք (*srb-), ալի(f), ալեռ-ի

դիմաց՝ հալհոր (*p|lɔ-) և այլն. նկատի ունենալով >խ բարբառային փոփոխության հնութիւնը՝ կարելի է որոշ ընտրութիւն կատարել և մեծ հնութիւն վերագրել այն դեպքերին, որոնց մեջ հ-ի դիմաց հիշյալ փոփոխութիւնը կրած խոսվածքներում կամ բարբառներում (հմմտ. վան) առկա է իւ: Հ. Աճառյանը իր՝ «Հայոց լեզվի պատմութիւն» 2-րդ մասի 411—412-րդ էջերում բերում է այն դեպքերը, երբ հ.—հ. s-ի կամ p-ի դիմաց գրաբարն ունի զրո, մինչդեռ բարբառներում առկա է հ կամ յ. պետք է նշել, սակայն, որ Աճառյանը չի տարբերում ընդհանուր տարածում ունեցող ձևերը մասնակի տարածում ունեցողներից. բ) մի շարք դեպքերում բառակզբի հավելական հ-ն կարող է արտացոլել նախահնդեվրոպական կոկորդայինները, ինչպես այդ տեսնում ենք նաև գրաբարում (հմմտ. հաճ, հաւ և այլն ձևերը). սակայն այս դեպքում հայերենի բարբառային տարբերութիւնները նախ՝ պետք է հասցնել մինչև հ.—հ. կոկորդայինների գոյութիւնը շրջանը, որ քիչ հավանական է, և երկրորդ՝ նախորդ դեպքի նման անբացատրելի թողնել գրաբարի զրոյի դիմաց նրա հիմքում ընկած խոսվածքների արդի վիճակներում հ-ի առկայութիւնն փաստը՝ կարևոր է նշել, որ մի շարք խոսվածքներում մենք ունենք ձայնեղ հ (յ), որ հանդիպում է հատկապես շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող խոսվածքներում. սա ենթադրել է տալիս դրանցում շնչեղ սկիզբ՝ և՛ ձայնավորով, և՛ ձայնեղներով սկսվող դեպքերի համար. Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմութիւն» 2-րդ մասի 412-րդ էջում բերված են գրաբարի զրոյի դիմաց բարբառներում՝ հ-ի առկայութիւնն այն դեպքերը, որոնք հ.—հ. s-ով կամ p-ով չեն բացատրվում. մեր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմութիւնն ուրվագծերում» բերված են գրաբարի այն դեպքերը, որոնց մեջ հ-ն թերևս զալիս է նախահնդեվրոպական կոկորդայիններից. գ) վերջապես հնարավոր է, որ շունչը առաջացած լինի հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերից, և նախորդ երկու կետերում բերված որոշ դեպքեր էլ բացատրվեն այդպիսի ուշ զարգացմամբ, մասնավորապէս որ նման հավելական շունչ հանդիպում է նաև այնպիսի փոխառյալ բառերում, որոնք հ-ով չեն սկսվում⁸. այս վարկածի հաստատման դեպքում կարելի է կասկածի տակ առնել նաև շնչեղ ձայնեղների նախնականութիւնը, և դրանց առկայութիւնը հավելական շնչի առկայութիւնն նման բացատրել որպէս համեմատաբար ուշ

⁸ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ մաս, էջ 413:

երևույթ՝ արդյունք կամ ինքնուրույն զարգացման (շնչավոր բա-
ռասկզբի առաջացման), կամ ենթաշերտային ազդեցության:

8 (16). Բառասկզբի Ե-ի դիմաց խ-ի առկայությունը, անշուշտ,
ենթաշերտային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական ազդե-
ցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է
հատկապես վասպուրականում և Պարսկահայքում:

9 (18). Բառասկզբի խ-ի դիմաց Ե-ի առկայությունը տարնմա-
նական բնույթ ունի և, ինչպես նշվել է, չի կարող շատ հին լինել.
այն պայմանավորված է լ-ից ծագող Ղ-ի արտասանական յուրա-
հատկությամբ (ետ գնացած արտասանությամբ), որ համեմատա-
բար ուշ շրջանի է. էլ չենք խոսում այն մասին, որ V դ. վերագրվող
վկայությունների մեջ հնարավոր են պարզապես գրչության ուշ
սխալներ:

10 (22). Ը-ի քմայնացումը արդյունք է թերևս մասամբ ներքին
(դիրքային-փոխազդեցական), մասամբ ենթաշերտային կամ ար-
տաքին ազդեցության: Մենք պետք է տարբերակենք նաև քմայնաց-
ման արդյունքները. հնարավոր է, օրինակ, որ Նոր-Նախիջևանի
Ի>Ղ փոփոխությունը ծագումով կապված չէ Համշենի բարբառի
համապատասխան փոփոխության հետ. թե ո՞ր շափով է այս փո-
փոխությունը արտաքին (թերևս նաև իրանական) ազդեցության
արդյունք, այդ կարոտ է լրացուցիչ ուսումնասիրության:

11 (24). Բաղաձայնահաջորդ Ե-ի առաջացման վերաբերյալ
տարբեր կարծիքներ կան: Մասնավորապես Ա. Մեյեն և ուրիշնե-
րը ենթադրում են հ.—ե. հայցականի վերջավորության տարածում
ուղղականի վրա (չի բացառվում նաև չեզոք սեռի անունների Մ-ի
հետ ձուլվելը): Տողերիս գրողը ենթադրում է, որ Ե-ի տարածման
համար նշանակություն է ունեցել նաև ուրարտական ազդեցու-
թյունը, այսինքն՝ հայցականի և չեզոք սեռի Մ-ի (>Ո) տարա-
ծումն ու ընդհանրացումը կապված է դրա՝ ուրարտերենի ուղղ. հո-
լովի ու վերջավորության հետ համընկնելով: Յ. Ֆեյդին իր անտիպ
հոդվածում Ե-ն կապում է և որոշիչ-ցուցական հոդի հետ: Հին շր-
ջանի համար մենք բարբառայնություն համարեցինք գրաբարի
համեմատությամբ Ե-ի անկման հաճախակիությունը: Եթե նկա-
տի ունենանք, որ արդի շատ վայրեր ոչ միայն պահպանել են Ե-ն,
այլև ունեն Ե-ի ավելի մեծ տարածում (Ե-ի գործածության ընդլայ-
նում), ապա հասկանալի կլինի, որ հայերենի նախագրային շր-
ջանում արդեն հանդես են եկել խոսվածքային տարբերություններ
ըստ բաղաձայնահաջորդ Ե-ի տարածման աստիճանի:

12—14 (26—28). Գրաբարի երկբարբառները չեն ներկայացնում հնդեվրոպական երկբարբառների անմիջական շարունակությունը: Այսպես, այ երկբարբառը գալիս է ոչ միայն *ai-ից*, այլև *atē* կապակցությունից (հմմտ. հայր, մայր, եղբայր). ոչ երկբարբառը ծագում է *eu* երկբարբառից, ընդ որում այն հանգամանքը, որ ոչ փոփոխությունը փոքրասիական զուգահեռ ունի⁹, խոսում է այդ փոփոխության բավական վաղ ավարտման մասին: Տարասեռ ծագում ունի նաև իւ երկբարբառը. հմմտ. *i-on* > իւն և *seuro-* > (**eu* >) իւր: Այս բոլորը ցույց են տալիս, որ երկբարբառների արտասանական տարբերությունները պետք է կապել իրենց իսկ երկբարբառների կազմավորման պրոցեսի հետ: Հասկանալի է, որ երկբարբառները հայ ժողովրդի տարբեր հատվածներում չէին կարող լինել միատեսակ արտասանվել, և այդ տարբերությունները ժամանակի ընթացքում կարող էին խորանալ՝ հանգեցնելով մենաբարբառացման տարբեր պրոցեսների: Հնարավոր է, որ ներքին տարբերությունները խորանային նաև արտաքին ազդեցությամբ կամ թեկուզ հենց ենթաշերտի բնույթով: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել նաև եւ և իւ երկբարբառների տեղաբաշխման վրա՝ նկատի ունենալով, որ միևնույն բառերի եւ-ով և իւ-ով տարբերակները խոսում են ոչ միայն ժամանակագրական տարբեր շերտերի, այլև բարբառային հնարավոր տարբերությունների առկայության մասին, որոնք, անշուշտ, գոյություն են ունեցել նախքան գրաբարի, որպես գրավոր լեզվի, հանդես գալը:

15 (30). Ե-ի ժամանակակից մի շարք հայ բարբառների ունեցած երկբարբառային արտասանությունը հակադրվում է է-ի ոչ երկբարբառային արտասանությանը: Այն բարբառները, որտեղ ե-ն արտասանում են որպես երկբարբառ, տարբերում են ե-ն և է-ն որպես առանձին հնչույթներ: Կարելի է կարծել, որ այս տարբերությունը հասնում է ոչ միայն գրաբարի՝ որպես գրական լեզվի, սկզբնավորման, այլև նախագրային շրջանը¹⁰: Այս դեպքում պետք է տարբերել բարբառային երկու շրջան (տարածք) որոնցից մեկում ե-ի և է-ի տարբերությունը երկբարբառի և ոչ-երկբարբառի էր, մյուսում բացի և փակի, կամ թերևս, սրա հետ կապված, կար-

⁹ Հմմտ. O. Haas, Die phrygischen Sprachdenkmäler, „Linguistique balkanique“, X, Sofia, 1966, էջ 250—251.

¹⁰ Հնարավոր է նաև ենթադրել բարձրացող և իջնող երկբարբառների սկզբնական տարբերություն (բէ և էբ կամ յէ և էյ), ինչպես ցույց է տալիս վերջին ձայնավորը:

Ճի ե երկարի: Կարևորն այն է, որ երկու դեպքում էլ դրանք գրա-
բարի շրջանում տարբերվում էին, թեև երկրորդ տարածքում այս
տարբերակումը պետք է ավելի թույլ լիներ, որ և հանգեցրել է
գրանց նույնացմանը:

16 (31). Ու-ի երկբարբառային և ոչ երկբարբառային արտա-
սանությունը, հավանաբար, նույնպես իր հիմքերն է ունեցել գրա-
բարի շրջանում: Այն ժամանակ, երբ ավարտվում է աւ>օ փոփո-
խությունը պրոցեսը, այսինքն՝ հին շրջանի վերջերին, բարբառային
տարբերությունը հանգեցնում է մի տարածքում ու-ի և օ-ի՝ որպես
երկբարբառի և ոչ-երկբարբառի հակադրությանը, մյուսում՝ գրանց
արտասանական նույնացմանը (թերևս բացի և փակի այլահնչա-
կային տարբերությամբ): Հասկանալի է, որ ու-ի արտասանության
բարբառային երկու տարածքի տարբերակումը հասնում է նաև նա-
խագրային շրջանը: Ավելորդ չենք համարում նշել, որ ե-ի և ու-ի
երկբարբառային արտասանության հետ է կապված գրանց բառա-
սկզբի յէ և վօ արտասանությունը, թեև, իհարկե, յ-ն և վ-ն կարող
էին առաջանալ այդ դիրքում նաև անկախ դրանց նախնական
երկբարբառային արտասանությունից:

17 (34—37). Ձայնավորների քմայնացման մասին մենք առիթ
ունեցանք խոսելու բաղաձայնների քմայնացման կապակցությամբ:
Այստեղ ավելորդ չենք համարում նշել բարբառային և օտար
քմային արտասանության գրավոր արտահայտման եղանակների
մասին: Փմային ա-ն (ան) թրակացու քերականության թարգմանի-
չը և հավանաբար մյուս մատենագիրները արտահայտում են սո-
վորաբար եա-ով: Մյուս քմային ձայնավորներից ու-ն սովորաբար
արտահայտում են ու, ու-ն իւ ձևով: Հասկանալի է, որ այն մատե-
նագիրները, որոնց բարբառի համար քմայնացած արտասանու-
թյունը բուրրովին խորթ չէր, օտար ու-ն պետք է արտահայտելին
իւ-ով, մյուսները պետք է գերադասելին ի-ն, եթե, իհարկե, սրան
չէր միանում բնագրի արտասանությունն ըստ հնարավորին ճիշտ
ներկայացնելու ձգտումը: Ավելի ճշգրիտ եզրակացություններ անե-
լու համար պետք է ուշադիր քննել լաբիալիքոս և լաբիալիքոս,
պիւքոն և պիւքոն տիպի գրությունների հեղինակների տեղային
պատկանելիությունը:

18—20 (40—44). Ձայնավորների ավելի փակ կամ ավելի նեղ
արտասանությունը շատ դեպքերում պետք է կապել ենթաշերտա-
յին ազդեցությունների հետ: Որ այդ պրոցեսները շատ դեպքերում
բավականաչափ հին են և հասնում են մինչև նախագրային շրո-

շանը, երևում է, օրինակ Քրիստի բարբառի օրինակից. Քրիստի բարբառի ե>ի և ո>ու փոխոթությունները, անշուշտ, այնքան հին են, որ նոր՝ վրացական միջավայրում շարունակվում են գործել, թեև վրացական ազդեցությունը բացառում էր նման փոփոթությունը:

21—22 (46—47). Չայնավորների շրթնայնացման և ապա-շրթնայնացման երևույթներին պետք է տարբերակված մոտեցում ցույց տալ: Այն դեպքերում, երբ ա-ի շրթնայնացումը և ապա-շրթնայնացումը ակնհայտ դիրքային պայմանավորվածություն ունեն (հմմտ. ա>օ փոփոթությունը ռնգայինների մոտ, ո>ա փոփոթությունը վ-ի մոտ) բնականաբար առկա է համեմատաբար ուշ ներքին փոփոթություն, թեև չի բացառվում արտաքին ազդեցության հնարավորությունը: Սակայն ա-ի շրթնայնացումը այլ դիրքերում ենթադրում է ենթաշերտային հին ազդեցության առկայություն: Մենք դժվարանում ենք ավելի համարձակ ենթադրություն անել ա-ի շրթնայնացման՝ մինչև հնդեվրոպական շրջանը հասնելու մասին՝ նկատի ունենալով հնդեվրոպական որոշ տարածքներում (օր.՝ նախասլավոնական տարածքում) ա-ի շրթնայնացումը:

Հին հայերենի շրջանում տեղ գտած հնչյունական լրացուցիչ զուգարանությունների հնության մասին մենք առիթ ունեցանք տեղում խոսելու: Ինչպես տեսանք մի շարք դեպքերում տարբերությունները հասնում են նախադրային և հնդեվրոպական շրջանը: Այստեղ խոսենք բարբառների հնչյունական մի շարք հին երևույթների (արխաիզմների) մասին:

1. Գրաբարի բ, դ, գ, ձ, ջ ձայնեղների դիմաց փ, ք, ֆ, ց, շ շնչեղ-խուլեր և ընդհանրապես՝ այն բարբառներում, որտեղ այդպիսի օրինաչափ փոփոթություն չկա. բալախ «անապատային փատ խոտ, փշաբույս» (<վրաց. balaxi «խոտ») ~ փալախ «մի տեսակ դաշտային փափուկ խոտ» (Ալ., Բլ., Եր., Մուշ) (փոխառություն տարբեր աղբյուրներից). բշտել «հանդիմանել» (Ոսկիփ., հմմտ. և Մուշ)¹¹ ~ փշտել «նեղացնել, հանդիմանել, ատել» (Եր.). բուխ, բխել (բղխել) ~ փլխեցնել «բխեցնել» (Ղրբ.). քղփ (Հրուս., այլև Լոռի, Ղզ., Ղրբ., Ղրդ.) ~ դղփ (ղխկի, դխփ) (Բլ., Մուշ) (Նորայր Բյուզանդացին բուն ձևը համարում է դղփ, մյուսները՝ բարբառային, բայց սա չի արգարանում բարբառների հնչյունական օրենքներով). ակնհայտորեն հին կերպարանք ունի գրաբարի քէ (<*t-)

11 Հ. Աճառյանը բառը համարում է անստույգ:

քառի դիմաց հարբերդի զք ձևը. քանի որ $P > 2$ փոփոխությունը հատուկ չէ հարբերդին, ուստի այս դեպքում պետք է ենթադրել հ.—ե. t -ի այնպիսի դիրքային ձայնեղություն, ինչպես դու (*tu), դ(ա) (*to-) բառերի դեպքում, այսինքն՝ ձայնեղացումը գալիս է հ.—ե. շրջանից:

2. Գրաբարի դ, տ, ք պայթականների դիմաց ծ, ճ, չ և ընդհակառակն. լպիրծ~*լպիրտ (լպատել, լպտան, լպատուկ) (Խրթ., Ղրթ., Ն.-Նխշ., Պոլ.). փթիթ, փթթել~փչչել «փթթել, ծաղկել» (Եր.). հմմտ. և տառիկ (Եր.). տրտիկ (Ղրթ.) «վազվզել, ցատկըտել, կայթել» (Ղրթ.)~տոճիկ (Լոռի, Մուշ, Վան):

3. Գրաբարի պ, տ, կ, ծ, ճ պարզ խուլերի դիմաց ք, դ, գ, ձ, չ ձայնեղներ և ընդհակառակն՝ այն բարբառներում, որտեղ այդպիսի օրինաչափ փոփոխություն չկա. պարոյք~բարուք (Եր., Թթ.), բալուկ (Մուշ):

4. Գրաբարի փ, ք, ք, ց, չ շնչելի խուլերի դիմաց պ, տ, կ, ծ, ճ պարզ խուլեր և ընդհակառակն՝ այն բարբառներում, որտեղ տվյալ դիրքում այդպիսի օրինաչափ փոփոխություն չկա. քաթախ, քորել (*tɿ-, *tor-)~տարուստ [արուն-տարուստ «արյունաշագախ» (Վան)]. կտաւ~քթեթ «հնացած կտավի կտոր» (Սվ.), «հարսանեկան զգեստ» (Եր.) (փոխառություն տարբեր աղբյուրներից). քուղ «ոլորված թել», քղանցք~կողանչ «քղանցք» (Աղն.). շփել~շնպել «խփել, զարկել» (Եր., Ղզ.), շպպացնել «ուժգին խփել զարկել», շպշկել, շպշկորել «վրան քսել» (Ախլց.). պատիր (<իրան.)~փաթիրի «կեղծ» (Ղրթ.) (փոխառություն ավելի ուշ շրջանի իրան. աղբյուրից). պարտակել (<պհլ.)~փաթակել «պարտակել, ծածկել, պահել» (փոխառություն ավելի ուշ շրջանի իրանական աղբյուրից). պինչ~փինչ (Ախլց.). տուտն, տտուն (*dud- ?)~դուդա «դունչ» (Ղզ., Ղրթ.) (չ. Աճառյանը համեմատում է Թրք. dudak «շրթունք» բառի հետ. հնարավոր է մանկական-կրկնական լինելը). փաթեթ~բղեղ (Արծր.). փաղ (բաղ)~պել «պտտվել» [պիլի (Մրշ.), բիլի (Հջ.), բիլի (Ձթ.)]. փառ~պար «երեսի փառ» (Այնթ., Սվ., Վան). փուլ, փուլզանել~բլել «փլչել, փուլ գալ» (Եր., Թթ., Մուշ և այլն). փուտ, փտել (<իրան.)~պալել «փչանալ, ապականվել, նիհարել» (Խլ., Վան). համատիպ համապատասխանությունների կան և բարբառային տարբեր խմբերի մեջ. հմմտ. ցմակ (Պոլ.)~ծմակ, ծմալ, ծմա, ծմո «մանկական հիվանդություն» (Արթ., Թթ., Կևս., Սվ.):

[ծ (251). Գրաբարի սպ, ստ կապակցությունների (հ.—հ. st, sp) զիմաց պ, տ (>բ, դ). սպանել~բաննիլ, ստեղծել~դեղ-
ձիլ, ստերջ~դերջ (Խրբ., Երգ.). զուգաբանությունների ցանկում
այս երևույթը կարելի է կլինիք՝ հանգցնել հ.—հ. շրջանին որպես
«սահող» s-ի առկայության և բացակայության զուգահեռություն
(հմմտ. սփռել և փռել), բայց սպիտակ բառի (իրան. փոխառ.)
համատեղ բիզագ փոփոխությունը խոսում է այն մասին, որ այս
փոփոխությունը մ. թ. ա. 3-րդ դարից վաղ չի կատարվել. հմմտ.
նաև ստեպղին (<հուն. σταφυλινος) և տապղին (Վան), այլև ստեփ,
ստեփուն (Վան) և տեփ շիրանից հետո, այնուհետև (Ուրմ.):

6. Գրաբարի բառամիջային զ-ի (հ.—հ. g'h) զիմաց (ն)ձ.
ոզնի (*og'hiniǰo-)~ոճնի (Մուշ.), օճնի (Ալշ.), վոնճնի (Շատ.),
ւոնճնը (Մոկս), կոնճնի (Ջղ.), կունճինա (<Լոռի). ն-ի առկա-
յությունը պետք է դիտել կամ որպես հ.—հ. շրջանից եղած լրա-
ցուցիչ ու-ի առկայություն (այս դեպքում հմմտ. Հ. Աճառյանի
հաստատած նձ>զ օրենքը՝ անճն>ազն, խոնճ>խազ)¹², կամ
որպես հետագա հավելում հաջորդ ն-ի ազդեցությամբ:

7. Գրաբարի բառակցքի ու-ից առաջ կ նախահավելված
(նախահնդեվրոպական կոկորդայինից). ոզնի~կօզնի (Գոր., Ղրբ.),
կըզնի, կուզնի (Աղլ.), կուզնի (Եր.), կուզ (Ղգ.), կոնճնի (Ջղ.),
կունճինա (Լոռի), կուզնիք (Շմ.) (Հ. Աճառյանը կ-ն համարում
է ոզնիկ-ի կ-ի դրսիփոխության արդյունք). ոսաղ~կոսաղ (Եր.).
ործկալ~զօ(ր)ձգալ (Ն.-Նխշ.), գոյձգալ (Հմշ.), զօձգըղալ (Խրբ.),
կօծկալ (Ախլց.). որոնալ~զծրջալ (Ասլ.), գոռչալ (Ն.-Նխշ.)
[ըստ Հ. Աճառյանի՝ կ-ն առաջացել է սահմանականի կ(ը)-ի կցու-
մով].

8. Գրաբարի տալ բառի (g'əldu-) զիմաց տալվ ձև (Ալշ.,
Բլ., Թվր., Մոկս, Մուշ, Սլմ., Վան), տավլ (Մրղ.). վ-ն հավա-
նաբար գալիս է հ.—հ. շրջանից (հմմտ. g'əldu-):

9. Կաթն [*g(a)lakt-] բառի զիմաց կախց (Աղլ.). կախս
(Հվր.), որտեղ խ-ն գալիս է դ-ից (*1):

10. Գրաբարի դ ձայնորդի (*1) զիմաց ր (ռ). գաղճն (*dhāl-
կամ dhāl-)~դ'աոց (Խրբ.). մղեղ~մռեղ (մրեղ). բաղեղն~բա-
ռեղ (բառեխ, բարեխ) բառերի դեպքում հավանաբար առկա է ուշ
շրջանի տարնմանություն:

¹² Հմմտ. և խազել սեփանձից կատաղել (Ջրս.):

11. Գրաբարի ր, ո ձայնորդների (*r) զիմաց ւ, դ. թիթեան (*pter-)~թիթեի (Ձթ.), թթեղ (Չնդ.), թթեիս (Ակն), թիաղնիկ (Մուշ), թեթեղիգ (Տիգր.) (<*թիթեղն). հեթիւն (*per-)~հեիւն (Վր.):

12. Գրաբարի շուն բառի (k'un) զիմաց շըվըն ձև (Կուրդ-Փալան՝ Նիկոմ. շըշ.):

13. Գրաբարի ածուխ բառի զիմաց ն-ով ձևեր՝ աննող (Գոր., Ղրբ.), աննուղ (Գոր. Հշ.), աննող (Եր.), աննոխ (Ն.-Բզ.), հաննող (Շմ.). բարբառային ձևերն ավելի հին են, եթե որևէ կապ ունեն հ.—հ. *ong- (*ongelo-) «ածուխ» ձևի հետ (թերևս որևէ հ.—հ. լեզվի միջնորդությամբ):

14. Գրաբարի հ-ի և ր-ի զիմաց րն (<իրան.). բան, բիր, բրհիլ (Ազլ.), բիհր, բհիր (Եր., Թբ., Ղզ., Ղրբ.). ջահ~*ջարն (Ձթ.). այսպիսով, հիշյալ գրաբ. բառերը իրանական ծագում ունեն և ոչ թե անմիջապես գալիս են հ.—հ. շրջանից:

15. Գրաբարի ա-ի զիմաց շ (փոխառություն տարբեր աղբյուրներից). սալոբ~շլոբ (Ալշ., Մուշ., Ջդ.), շլոբ (Եր.), շլուբ (Թբ.), շլծր (Գոր.), շլլծր (Ղրբ.), շլլուբ (Ազլ.). սեպ~շեպ (Մուշ). հասկ~իսաշկ (Մոկս, Ողմ, Վան), իսշշկ (Մրդ., Սլմ.). աատասկ~տատաշ (Եր., Թբ.).

16. Գրաբարյան ա-ի զիմաց իս (հմատ. սուն~իսուն, իսարիսիս~սարսիսիս). սինն~իսինն (Ալմ., Վան). լեսուլ, լոսել¹³~լեիլել «ջարդել, փշրել, մանրել» (Վան):

17. Գրաբարի վ(ի)-ի զիմաց (<իրան. vi-, vī-, vē-) ու. վիշապ~ուշապ (Եր.), իուշապ (իուշաբ) (Մուշ), ուշաբ (Հմշ., Ն.-Նխշ.), հիւշապ (հիւշափ) (Ազլ.), օշափ (Գոր., Ղրբ.), ուշօբ (ուշոբ) (Ձթ.). վկա~ուգա (Ն.-Նխշ.). վնարել~ունարել (Ն.-Նխշ.):

18. Գրաբարի բառակցքի հ-ի զիմաց զրո (հմատ. հակառակ երևույթը). հանար «մի հացաբուխ» (ըստ Հ. Աճառյանի՝ կովկասյան աղբյուրից)~անար (Եր., Թբ.), անառ (Ալշ.) (հմատ. հանար — Գոր., Ղրբ.). հանար «մի ծառ»~անար (Շշ.), անար(ք)ի (Լոռի, Ղզ.), ածրի (Հմշ.) (հմատ. հանարիկ—Լոռի, Ղրբ.). հաւատ (հաւատ, հմատ. յաւատ, ավելի ուշ աւատալ, Մդ., Լմբ.)~ավատալ (Թբ., Մրդ., Սլմ., Վան), ալտալ (Թբ., Կար., Ողմ), ալիալ (Խրբ., Պոլ., Ռոդ.), ալիընալ (Ալշ., Մուշ, Ռոդ.), ավգիլ (Սվեդ.),

¹³ Ըստ Հ. Աճառյանի՝ *kleik'-ից, որ հնչյունապես չի արգարանում:

ավգընալ (*Տիգր.*), ավգոլ (*Հռ.*), ավգոլ, ավգոլ (*Զթ.*), հունձ~ունձ (*Մոկս, Մրդ., Ողմ, Մլմ.*). հնձան~ընձան (*Աղլ., Զթ.*):

19. Գրաբարի ծ-ի զիմաց ն. ծիծառն~ննքոնել (*Վան.*) ծիրան~նիրան (*Ալշ., Մուշ. հմմտ. կովկ. նույլ ձևերը. Հ. Աճառյանը բառը համարում է ուրարտերենից փոխառյալ*):

20. Գրաբարյան դ-ի զիմաց լ և լ-ի զիմաց դ. դանդաղ~դանդաղոշ «հիմար, տիմար, ապուշ, ծանրամիտ» (*Եր.*). լող զլողալը», լող «զլան»~լոլո լվլանալը, լողացնելը, լողանք» (*Թր., մնկ.*), լոլոն «կլոր. կլոր բան» (*Զրս.*), լոլակ զլոլքի ոսկր» (*Ղրբ.*), լոլիկ «ոսկեխնձոր» (*Ակն, Բլութ.*) (*Աճառյան.*). հիւղ (*Խուղ*)~հոլիկ «քողտիկ» (*Ն.-Բզ.*). մղել (**mu-l-?*)~մլել «մղել, հրել, խոթել» (*Բլ., Խլ., Մոկս, Ն.-Բզ., Վան.*). մուլ (մա-մուլ, մլ-ա-դաց)~մուղ «ցորեն աղալը» (*Մշկ.*):

21. Գրաբարի՝ ռնգայիններին նախորդող ի, ու (>ը) ձայնավորների զիմաց ե (*ե*), ո (*ո*). լմ(լ)ել «ճմռել, շաղել, կոխել, կակղացնել» (**lem-*)~լեմ «ատամ» (*Ղրբ.*), «խոշոր ատամ» (*Շլ.*), լեմնիկ «ատամները թափած» (*Ղրբ.*), լոմլեմ «թափած ատամներով ծամծամել» (*Սվ.*). [հմմտ. նաև բրբռ. բոնձ (*Եր.*) բոնձիկ (*Ղզ., Ղրբ.*) «խեցեղեն ամանի կոտրած ներքնամաս. հիվանդ, նիհար», բնձոք «մի քիչ, մի կոտոր» (*Հմշ.*) (**bhong'->*բոնձ>բոնձ?*. **bhe(n)g->բեկանեմ, բեկոթ*]. քեմ «կովի բռնոց» (*Սեբ.*) (**tyen-*). քոնքորալ «քրթմնջալ, մրթմրթալ, փնթփնթալ» (*Եր., Ղրբ.*) (=հռն. *τονθορῶ* «քրթմնջալ, մրթմրթալ, փնթփնթալ»). կլոնգորակ «գնդակ» (*Ղրբ.*) (**glont-?*), կլոնջ (*Պոլ.*), կլոնձ (*Ղրբ.*) «մեծ կոտոր, գունդ» [հմմտ. կլնգրիկ «կոկիկ, գողտրիկ» (*Վան.*), կլննել «տաք ջրի մեջ ալյուրի գնդգնդելը (?)» (*Զթ.*)]. հննք «հարկինք, խնջուլք, հացկերուլթ» (*Այնթ.*) (**pen-*). շենք «լալն քալլ. բացված ոտքերի արանք» (*Ղզ., Մր., Վան.*) (**k'uenk-*) (*հմմտ. բրբռ. շեք*). տենեք (**qենեք?*) «տանիքի հարթ կտուր» (*Արբ., Զթ., Խրբ., Կլուր., Մլթ., Զրս., Տիգր.*) (**dhen-* «ձեռքի ափ, գետնի հարթ տեղ. հարթ տափարակ?»). գրաբարյան (*ծ-րդ դ. ավանդված*) հիհնում և հենում ձևերը կարծես ցույց են տալիս հնում միևնույն հարաբերություն առկայությունը, բայց կասկածելի է ինքնին ի ձայնավորի առկայությունը (հիհնում փխկ. **հնում*). *աա թերեւս պետք է բացատրել *pēi-nu-mi (և ոչ *penumi) նախաձևով. ըստ Մելեի Ե-ն արդյունք է ու-ի առկայության. հա-*նում ձևը բացատրվում է կամ որպես ձայնդարձ (**pq-*) (*Աճառյան.*), կամ որպես հին բարբառային ձև (**pen->հան-*) (*Վինտեր.*).

էական բաշի հոն. 3-րդ դեմքի եմ ձևի ե-ն բացատրվում է նրանով, որ եմ-ը ծագում է ոչ թե senti-ից, այլ espi-ից (հմմտ. Վինտեր):

22. Ղ, ր ձայնորդներին նախորդող գրաբարյան ե նախահավելվածի դիմաց ա. եղբայր~*աղբայր (ախբար, ախպեր և այլն) (բոլոր բարբառները, բացի Ձեկթունից). եղունգն~անղունգ (Հշ.), աղունք (Ասլ.). եղջիւր~ախջիւր (Ակն), ախջ'իւր (Խրբ.), ախջ'եր, ախջ'եյ (Ձթ.). երեկոյ~յարակու (Ջդ.), հարակու (Հշդ.). երեսուն~յարասուն (Ջդ.), արասուն (Ազլ.), յար(ա)սուն (Թբ.), յարսուն (Հվր.), անսուն (Խրբ.). երեւիմ~(յ)արեալ (Ջդ.), օրվօնօլ, օյվօնօլ (Ձթ.). երկու~անրկու (Ազլ.), յարկու (Հվր.). մի շարք դեպքում ա-ն բացատրվում է ձայնավորների ներդաշնակութեամբ (հմմտ. երազ~արազ, երկաթ~արկաթ և այլն). հակառակ դեպքերը [գրաբարյան ա-ի դիմաց ե (ե)] գերազանցապես արդյունք են ձայնավորային ներդաշնակության կամ ձայնավորների նեղ արտասանության մասնակի միտման (հմմտ. աղանձ~եղինձ, արածել~երեծալ, արեգակն~երեգակ և այլն). մանավանդ որ այդպիսի փոփոխություններն տեղի է ունենում ա-ի նախնականության դեպքում (հմմտ. աղաւնի~եղավնի, արմուկն~երմունկ և այլն):

Մի քանի խոսք այն մասին, թե որոշ դեպքերում ինչպես կարելի է պարզել բարբառային այս կամ այն փոփոխության որոշակի ժամանակը: Այսպես, գրաբարի եաւթն (եւթն), աւծ, գաւտի, քաւրափել ձևերի դիմաց մի շարք վայրերում առկա են օխտը (էխտը, էխտը), աղծ (օղծ>օխծ), գախտի, քախթփել ձևերը, որոնք, ըստ Մեյերի, արդյունք են լ-ի առնմանական փոփոխության շնչեղ բաղաձայնից առաջ, ընդ որում, քանի որ հայերենը ֆ չի ունեցել, ֆ-ն էլ փոխվել է Խ-ի (հմմտ. Իt> խտ անցումը իրանական փոխառություններում). լ>ղ փոփոխությունը բացատրվում է որպես հաջորդ բաղաձայնի ձայնեղության արդյունք¹⁴ (բայց շնչեղությունն առկա է եղել, որ և առաջ է բերել հիշյալ փոփոխությունը): Հասկանալի է, որ նախ՝ լ>ֆ> խ և լ>ղ փոփոխությունները պետք է նախորդած լինեին աւ>օ փոփոխությանը կամ գոնե սկսվեին նախքան այդ փոփոխության սկսվելը, այսինքն՝ 10—11-րդ դդ. առաջ¹⁵, երկրորդ՝ այդ փոփոխությունը պետք է կատարվեր դ-ի՝

¹⁴ Հմմտ. և Հ. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, 2, էջ 403:

¹⁵ Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի հնչյունափոխության մի շարք երկվյութների մասին, ԳԱՏ, 1957, № 4:

ձայնորդից ձայնեղ կիսաշփականի փոխվելուց հետո՝ այսպիսով, հիշյալ փոփոխությունների ժամանակը թերևս 9-րդ դարն է:

Եթե հնչյունական մի շարք զուգաբանությունների մենք վերագրեցինք բավական մեծ հնություն՝ հասցնելով մինչև ենթաշեքոտային հին ազդեցությունները և մասամբ նույնիսկ մինչև հնդեվրոպական շրջանը, ապա այդպիսի հնարավորություն չի կարելի ենթադրել քերականական շատ զուգաբանությունների համար, որոնց վերաբերյալ վկայություններ կամ հին շրջանում ընդհանրապես չկան, կամ հանդես են գալիս 5-րդ դարից շատ հետո: Միակ զուգաբանությունը, որին կարելի է խոր հնություն վերագրել, թերևս -ուի հոգնակերտն է, որ հանդես է գալիս որպես երկակի մնացորդ, այն էլ որոշակի ձևափոխությամբ: Մնացած դեպքերում մենք գործ ունենք կամ մասնակի տարածում գտած և հավանաբար փոխառությամբ բացատրվող դեպքերի (-անի, -ստան հոգնակերտները), կամ բավական վաղ սկսված ներքին միտման, որ կարող էր ուժեղանալ նաև էթնիկական փոխազդեցությամբ (բաղադրյալ ժամանակաձևերի գործածության ընդարձակումը), կամ էլ համեմատաբար ուշ հանդես եկած և հետագայում՝ հին շրջանից հետո տարածված միտումների հետ (մնացած դեպքերը՝ սակավ բացառությամբ): Այս բոլորը խոսում են այն մասին, որ նախագրային շրջանում կամ քերականական մեծ տարբերություններ չեն եղել, կամ դրանք եղել են, բայց մասամբ համահարթվել են, մասամբ պահպանվել (աղյուսակում տեղ չգտած զուգաբանություններ): Այս վերջին կարգի երևույթներից հատկապես պետք է նշել հնդեվրոպական հերթագայության տարբեր աստիճանների պահպանման բարբառային իրողությունները: Սա վերաբերում է ինչպես ձայնորդային, այնպես էլ, թերևս ձայնավորային հերթագայություններին: Ձայնորդների *т/л* հերթագայությունը, որ մենք տեսնում ենք, օրինակ, *ster-/stel-* «աստղ» արմատի մեջ (հմտ. հայ աստղ և հուն. ἀστὴρ), թերևս տեղ է գտել հայերենի բարբառային տարբերությունների մեջ: Ինչպես, տեսանք, որոշ բարբառներում գրաբարի *т*-ի դիմաց առկա է *л* և *л*-ի դիմաց՝ *т* կամ *н*: Հնարավոր է, որ գրաբարյան և մի շարք բարբառների *н*ուրջ բառի դիմաց Հազրոյի ունեցած *н*ունջ բառը ներկայացնի *т/н* հերթագայությանը, թեև այս բառերի ծագումը դեռ պարզ չէ: Թերևս *т/л* հերթագայությունն է առկա դանդաղ (բրբռ. դանդաղը) և դանդան «հիմար, տիմար ապուշ, թանձրամիտ» (Ղրբ.) բառերի մեջ: Ձայնավորների հնդեվրոպական հերթագայության՝ գրաբարի և բարբառների ունեցած տարբերությունները (տարբեր աստիճանները) փաստորեն դադարել են

ձևաբանական արժեք ունենալուց: Դրանք դարձել են բառային տարբերակներ, որոնք մասամբ ունեն իմաստային տարբերություն, մասամբ դարձել են միևնույն բառերի կամ արմատների սոսկ հնչյունական տարբերակներ: Անհրաժեշտ է նշել, որ մի շարք դեպքերում ձայնավորային տարբերությունների բնույթը պարզ չէ, որովհետև կամ պարզ չէ այդ բառերի կամ արմատների ծագումն ընդհանրապես, կամ պարզված չեն հայերենի ձայնավորների փոփոխությունների տվյալ տիպերի հնգեվրոպական հիմքերը:

8. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ԱՐԽԱԻԶՄՆԵՐԸ)

Բարբառների՝ գրաբարից ունեցած բառային հին բնույթի տարբերությունները կամ, այլ կերպ ասած, բարբառների բառային հնաբանությունները կարելի է բաժանել մի քանի տիպի, ընդ որում որոշ օրինակներ միաժամանակ կպատկանեն մի քանի տիպի (սրանք բերվում են միայն մեկ կետի տակ՝ չկրկնելու համար):

Բարբառային բառերի համեմատության ժամանակ հեղինակը վարվում է հետևյալ կերպ.

1) Բառերը սովորաբար բերվում են Հ. Աճառյանի «Հայերենի գավառական բառարանում» տրված ձևով, միայն թե ա) բայական բոլոր իլ վերջավորությունները բերվում են նլ ձևով (բացի հատուկ դեպքերից), բ) կրավորականի ու-ն արտահայտվում է վ-ով, գ) կատարվում են անհրաժեշտ ուղղումներ առանց հատուկ նշման, դ) որոշ բարբառային ձևերի համար ենթադրելի նախատիպերը տրվում են փակագծում:

2) Հոգվածը կառուցվում է հետևյալ հաջորդականությամբ՝ ա) բարբառային բառը, բ) ենթադրական նախատիպը և հ.—ե. նախաձևը՝ փակագծի մեջ, գ) բառիմաստը՝ չակերտների մեջ, դ) տվյալ բառը կամ իմաստն ունեցող բարբառային վայրի անունը՝ հապավված ձևով: Այն դեպքում, երբ միևնույն իմաստի համար առկա են տարբեր բառաձևեր, ապա այդ ձևերն ունեցող բարբառային վայրերի հապավված նշանակումները տրվում են իմաստից առաջ՝ չակերտների մեջ: Եթե տվյալ բարբառային բառը տրվում է ըստ բառարանների, ապա փակագծերի մեջ բերվում են վերջիններիս հապավված նշանակումները:

3) Համեմատվող բառերը բերվում են որոշակի հաջորդակա-նությամբ, ընդ որում առավելություն է տրվում հայերենի հետ

ձևով կամ իմաստով մերձավոր բառաձևերին: Արդեն ստուգաբանված և գրականության մեջ լայն կերպով հայտնի հայերեն բառերը սովորաբար տրվում են՝ անկախ մերձավորության աստիճանից: Վերջում փակագծերի մեջ բերվում են հնդեվրոպական այն արմատներն ու հիմնաձևերը, որոնց պատկանում են համեմատովող բառերը՝ ըստ Յ. Պոկոնուո ստուգաբանական բառարանի: Լ. Աճառյանի ստուգաբանած բարբառային բառերի համար բերվող զուգահեռները ճշտված են ըստ նորագույն աղբյուրների, թեև փակագծի մեջ տրված է Լ. Աճառյանի ազգանունը:

1. Գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք, ընդ որում վերջինս չի բացատրվում տվյալ բարբառի հնչյունափոխության սովորական օրենքներով.

ա. Ձայնդարձի (ձայնավորների հերթագայության) տարբերություններ, որոնք հաճախ արտացոլում են հ.—հ. ձայնդարձի տարբեր աստիճանները¹. արգ, յարգարել (*ar-t-)~հորդանք «հարդարանք» (Կես.). բառնալ (*bħrg'h-)~բեռնել (Ազլ., Ախլց., Եր., Խրբ. և ալլն) (ըստ Լ. Աճառյանի՝ կամ բերձ-ից կազմված հին կամ բեռն-ից կազմված նոր ձև). բեկանել~բոկել «բռնեցքով խփել, բռթել, հրել» (Թբ.). բորբ (*bho-bħr-o-)~բերբել (Ղբ.). բութ~բիթ «հաստազուլուխ, ապուշ» (Ախլց.). զամփա~զոմփոռ (Եր.). թառամ (հմմտ. նաև Ազլ., Խրբ., չչ., Շմ., Տիգր.)~թոռոմ (Ալշ., Ախլց., Ակն, Ասլ., Եր., Կար., Հմշ., Մոկս, Մուշ, Մրդ., Ն.-Նխշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Սլմ., Վան). թակն (այլև թակեղն, թակաղակ) (*tæg-)~թոկիկ (*tog-) «փայտե գործիք տանիքի եզրի քարերն ամրացնելու համար» (Ակն). թօն~թեմ «խոնավ» (Մն.). լեսուլ~լոսել (Ակն, Բյութ., Խրբ., Ղբ., Մուշ, Չրս.). լող~լեղ (Եր.). կաղիմ~տկողիմ (Ղբ.), թակուղնք (Ղբ.) (տ-ն թերևս նույնն է տեթ, տիկիմ, տիեզերք բառերի տի-ի հետ՝ «մեծ». հմմտ. Ղբ. կաղիմ «խոզակաղին» և տկողեմ «արքայակաղին»). կեռ (կոր)~կոռ (Եր., Մոկս, Մուշ, Վան). կոփել~կեփել «տաշել» (Չթ., Կլուր.). կրծել~կործել «կրծել, մաշեցնել» (Ղբ.). հաղ (ալլե խն., Մուշ)~հեղ «առնգամ» (Ասլ., Ակն, Արբ., Կար., Պոլ. և ալլն). հալ (*paus- ?)~հեվ «մի բանի կամ գործի ծայր. սկզբնապատճառ». ճետ «ցեղ, սերունդ» (այլև Ալշ., Բլ., Խն., չչ., Մուշ, Սլմ., Վան)~նուտ «ձագ, ճուտ» (Ախլց., Եր., Թբ., Լոռի, Ղզ., Ղբ.,

¹ Ըստ հնարավորության բացավում են ձայնավորների ներդաշնակության ու լիաձայնության, բարբառի համար հնարավոր հնչյունափոխության բացատրվող դեպքերը:

Վան), մալել (*m|l-), մեղկ (*mel-), մեղմ~մող «ծառի մատաղ տերեւ», մոլ «ծառի երկրորդական հյուղ, բողբոջ» (Ակն, Բալու, Չմշկ., Չրս., Տր.), մողկ «ծախի պես մի բույս»։ մեղու~մողիկ «մեղու» (Մրդ.)։ մոռանալ (*mors-)~մառ-ն-ալ, -իլ (Չթ., Խրբ., Հը., Սվ.). շեղ, շեղել~շաղվել «շփոթվել» (Ղրբ.). շեշտ~շաշտ (Ղրբ.). պեղել~պողել «բրեւ, պեղել» (Սվ.) (ըստ Հ. Աճառյանի՝ նույնն է պողել «մաքրել, լաթով մաքրել» բառի հետ, որի արմատն է թերեւս պող «լաթի կտոր» <պրակ. Խճ. «ծրար, կապոց». անհավանական է). սառն (*k'j-)~սուռ (Գնձ., Մուշ). ա(ռ)րոփել~տրփալ (Հայսմապուրք, ալլե եր., Ղգ. և ալլն). փառ (<ուրարտ.>կովկ.)~փեռ «գինու երեսի մար» (Վան). փերթ~փուռ-թիկ (Վան), փրթիկ (Ն.-Բգ.), փոթիկ (Ապ., Բլ.), ալլե թերեւս փրչ «մազ, բուրդ». քերել (*ker-)~քորել (արեւելահայ բարբառային վայրերում՝ իմաստով տարբերակված քերել-ի հետ միասին). քերծ (*ker-)~քուրչ «քերծ, լեռան վրայի մեծ ապառաժ ժալո» (Ախլց.):

բ. Չախնափորների տարբերութուններով ուղեկցվող կամ չուղեկցվող բաղաձայնական տարբերութուններ². աղանձ (լքմհ. հմմտ. հնդկ. randh- «եփել»)~լանդակ «մի տեսակ կերակուր՝ բրնձով, ձավարով և կորկոտով» (Ակն, Գմշ., երգ., Դար.). բողբոջ (*bhol-)~բղբուռ «մանր, մատղաշ» (Մուշ). դանդաղել~անտնալ (դնգնալ?) «գանդաղել» (Արբ., Եվդ., Խրբ., Պոլ.). դադար (*dhj-)~դարդար «օրորոց» (եր.), «օրոր, քուն» (Վան). թրիք (թրել, թրջել, թարախ)~թիթրեհ (Մուշ, Արմ.), թիթեհ (եր.) «աթար, անասնի չոր քակոր» [հմմտ. և թորալ (Չրս., Մն.), թորթրալ (Մն.) «բարակ անձրեւ, կաթկթել». լաթ (<իրան? հմմտ. ուս. лата «կարկատան»)]~լանթ «լաթ» (Ղգ., Ղրբ., Շղ.), լանձի-լանձի «պատառոտված». լակել (*lak-)~լկել (Թբ., Խն., Կար., Պոլ., Վան), լկստել (Չրս., Պոլ.) «լիզել, լիզելով ուտել» [հմմտ. և լպգտել (Ղգ., Ղրբ., Շմ.), լպստել (եր., Ղրբ.)՝ լափել-ի կողքին]. խաղաւարտ~խավարդն, խավարձ, խավարսն «մի հիվանդութուն՝ շրջրուկ, էկզեմա»(?). կորկ [*gʷor-gʷ(or)-o-] «կպած մնացած կեղտ»~կոկիլ-ոտ «կեղտոտ» (Կար.). կոկոն, կոկով, կոնգոմ~կոկո (Խոյ). կոկոշ «գլուխ» (Լոռի), կոկո «կլուր, գնդաձև. անպոչ հավ» (Խրբ.), «ամորձիք, կոկով» (Ն.-Նխշ.), կոկոլ «անպոչ հավ». կկու~կուկուկ (Բգ., Պոլ.). հալել (*p|l-)~հլգել «մաշվել, բարա-

2 Հմմտ. մասամբ հնչյունական տարբերութուններին նվիրված հատվածը:

կել» (Ախլց.), հլկել «հոգնությունից նվազել» (Խրբ.), հլհլալ «շնչակտուր լինելով հեալ» (Նփր.), հլհլել «հալչել, մաշվել, թափ-
թըփվել» (Խն.). հոա, հոաոաել~հաուա «հոտ» (Քզր). մողեզ
(<խրան. ?)~մողոզիկ «մի տեսակ թունավոր մողես» (Մրդ.),
«նիհար ճարպիկ գող կատու» (Վան), մողորիկ «մի տեսակ կարճ
և անթուլն օձ» (Տր.). ուաել (*ōd-)~աուուաք «ձմեռվա հասար
պաշարված ուտելիքներ» (Վան). փեսել~փեթոտել, փեթոկել (Պու.),
փիքոտել (Ասլ.) «ծվեն-ծվեն անել, թերթերը պոկել». փուխը,
փխրել (<կովկ.?)~փխել, փխել «ճզմել, տրորել», փխլվել,
փլշկվել «փխրվել». փշուր (<կովկ.?)~փշխել, փշշել «փշրվել»
(Վան):

2. Գրաբարից տարբեր կազմություն.

ա. Գրաբարյան արմատի դիմաց աճականով կամ հին ա-
ծանցով ձև. դեղ (*dheI-)~դեղդ «մի տեսակ բույսի արմատ,
որով մազերը լվանում են՝ ամրացնելու համար» (Վան), դլբիկ
«ծառի պտղալից ճյուղ» (Ակն). խոյլ~խիլթ (Լոռի). մեզ~մզլել
«բորբոսնել» (Ախլց., Ախլք., Արբ., Խն., Պու., Սվ.) (Աճառյան).
մուև~մնին «մի տեսակ ոջիլ», մնեղ «մանր ոջիլ, անիծ». մոր
(*mor-)~մոռ, մոշ (*mor-s- > *մորշ) «մորենու պտուղ» (Ղբ., Լ.).
շղարշ~շղա «կանաց զլխի ծածկոց» (Տիգր.). ջնջել~ջնջխել «ջախ-
ջախել, փշրել, ջարդել» (Ախլց., Արճ., Բդ., Եր., Կար., Մուշ).
*ցեռն (*sker-no-)~ցոթկել, ցրգել «լույծ կղկղել» (Վան). փոր~
փարթ (Արբ.), փառչիկ (Տիգր.). փռել~փեռկել «ոտքերը լայն
բանալ», փեռկվել «ոտքերը մեկնել՝ փռվել. տարածվել, հեռու
գնալ» (Խրբ.). փիծ~փծնի (Եր.) (Աճառյան). քերել (քերծել,
քերթել)~քերչ «նուրբ ծաղր» (Սվ.), քերցել «քերթել» (Եր.),
քերփել «կեղեքել» (Եվդ.):

Հատուկ խումբ են կազմում բարբառային այն բառերը, որոնք
գրաբարի ն-ից զուրկ ձևի դիմաց վերջաձայն ն ունեն, որ սովո-
բարբառ համարվում է հին հայցականի մնացորդ: Հ. Աճառյանը
բերում է հետևյալ ձևերը. բծիծ «ոջիլ»~բծիծն (պծեզնը) (Ղբ.).
բոռ (*bhor-) «իշամեղու»~բոռն (պոռնը.) (Ղբ.). բորբոս~բոր-
բոսն (Ղբ., Շմ.), բորբոսնել (Ալշ., Կր., Մուշ և այլն). բոհնչ~
բոհնչն (Ազլ., Ղբ.). գորա~գորառնուկ (Ազլ., Գոր., Զթ., Շմ.,
Զդ.). բուզ (հմատ. հուն. τῆλον)~բուզն (Թբ., Ղբ.). խեծ~խեծն
(Շմ.). խլեզ (հմատ. ասոր. xlezōna)~խլեզն (Ղբ., Շմ.). ծուռ
(*gur-)~ծուռն (ծուռը) (Եր., Թբ., Զդ.). կռեզ «ծառի խեժ»~

կաեզն (Ազլ.). հակ *«բեռան մի կողմը»* ~ հակն (Ազլ., Ղրբ.). մամուռ ~ մամուռն (Ղրբ.). սինն ~ սիննն (Ազլ., Ղրբ., Շմ.):

բ. Գրաբարից տարբեր աճական կամ հին ածանց.

ակն (*okv-) ~ ակլակ (*դնել*) *«պահ մտնել, դարանակալել»* (հմմտ. լիսվ. aký'las *«ուշադիր»*). ասեղն (*ak'il-) ~ ասող *«արորի մասերից մեկը»* «թուր» (Վան). առ-ոք (*sā-d-) ~ ատն (ատնի-ով «յուզալի, պարարտ») (Ալշ.). բլիթ (*bhlē- կամ bhl-) ~ բլիկ (*Խրբ.*). թուրջ, թուրմ (թրել, ալլե թորել, թարալս) ~ թրուշ (արյուն-թրուշ *«արյունահեղութուն, ջարդ, կոտորած»*) (Եր.). լպիրծ (լարծուն), լպիրշ, լիրթ (*sli-b-, -p-) ~ լպիռտ (<լպիրտ?) (լպրու-տել, լպռաան, լպռաուկ) (Խրբ., Ղրբ., Ն.-Նիշ., Պոլ.). լիպոզ *«լպիրշ»*, (Վան) (ոզ-ի համար հմմտ. գոռ-ոզ, տիեկ-ոզ *«համառ, գոռոզ, ամբարտապան»*, տկլ-ոզ՝ տկլ-որ-ի *կողքին*). լքել, լիք (*likv-) ~ պլած (*q-լքած) *«լքված, սիրտը կոտրված, մի կողմ քաշված»* (Արբ.), *«նիհարած, վտիտ»* (Ադն.). խենեպ ~ խենեն *«բարակ կեղև ունեցող, դլուրաբեկ»* (Ղրբ.). կաղին ~ կաղաղ *«խակ ընկույզ»* (Ազլ., Խրբ.) (հմմտ. և տկողին *«կաղին»*). կտե ~ կտեփ *«ծառի կեղև»* (Հմշ.). ձաղկ *«ճյուղի ծեծ»*, ձաղկել *«ծեծել»* (*g'halg-) ~ ձաղտել (Լեն., Կար.) (սակալն հմմտ. հ. — և. g'hel- *«կտրել»*, որից հայ. ձող, գոթ. gīlpa *«մանգաղ»*). ձմեռն (*g'himerino-) ~ ձմեթ *«ձյան պատճառած աչքացավ»* (Բդ.). մեզ (*me igh-) ~ մկկել *«ամպել»* (Ախուրյանի Արևիկ դ.). մլուկն (*mēlū-?) ~ մլակ *«մոծակի նման մի փոքրիկ միջատ»* (Եր.), մլաք *«մլուկ, փայտոջիլ»* (Ղրբ.). մռայլ, մռախտուղ (*mōr-, *mər-) ~ մռած *«մշուշ, մռախտուղ»* (Ղրբ.) (Աճառյան). փթուր ~ փթիր *«ծիռ կամ էշի աղբ»* (Եր., Շմ.), փթիկ *«շատ մանր ձավար»* (Արբ.):

գ. Գրաբարյան բաղադրյալ ձևի զիմաց արմատական ձև. անշուշտ ~ շուշտել *«կասկածել»* (Վան). արքայ ~ արք (Թբ., Ղրբ.), երք (Եր.) *«եշխանություն»*, արք-ենի *«հաղթանդամ»* (Խրբ.). բո-ծոծ (բծիծ, բծուծ) ~ բոծ (Եր., Ողմի.). զգեստ, զգենուկ ~ զեստ (*Խլ., Ն.-Բզ.*), զենալ (Ղզ., Ղրբ.). ծմակ ~ ծմա (Ախլց. Խրբ., Կար., Մոկս, Սլմ., Վան)³. կաղկանձել ~ կոնձալ (Եր.). կողկողել (-իմ) *«ողբալ»* ~ կողալ (Չթ.). կոնել *«խփել, զարկել»* ~ կոուն *«կտոր»* (Նրբ., Շմ.). հանգչել (-իմ) ~ հանգ *«շունչ, հանգստություն»* (Ալշ., Եր., Մոկս, Մուշ, Վան). հոլով ~ հոլ *«շունչան»* (Եր.),

³ Եթե ծմա-ն չի ձևացել կ-ի անկմամբ:

«գնդախազ» (Ղրբ.). նառագայթ~նառագ-ել (Ակն, Ասլ., Եր., Լոռի, Ղրբ., Ն.-Նխշ., Պոլ.). նմել (*gem-)~նմել «նկզել, ծովել, կռնալ, կքվել, շղերը բռնվել, երակ երակի գալ» (Ղրբ.). շուք~շուռ (Ազլ., Եր., Ղրբ., Մոկս, Մրդ., Շմ., Զդ. և այլն). պեպէն~պէն (Ղրբ.). սարիք, սարգ (*k'g-)~սարել «մանել» (Խն.). «լարեր (թակարդը, աղեղը)» (Ղրբ., Շմ.). սպարդել (-իմ) «գույնը թռչել, դժգունել» (*spardh-)~սպռել (Եր., Վան). արիմ~արի (Ալշ., Մալ., Եր., Մոկս, Մուշ, Զդ., Սր., Վան). ցողուն~ցող (Ալշ., Բլ., Եր., Մուշ, Վան). օրօրել~օրել (Կր., Մուշ, Ն.-Նխշ., Պոլ., Ռոդ., Սեբ., Տիգր.):

3. Գրաբարյան բառիմաստից տարբեր՝ նրան գուգահեռ կամ նրանից հին բառիմաստ⁴. գերեզման~գիրիզմայել «խոր փորել» (Չրս.)⁵. իլ (հտգ. իլիկ) (*el-?)~իլլել «ուրել» (Մրդ.). կեղ (guel-) «խոց, ուռուցք»~կեղ «վերքի վրայի փառ» (Ղրբ.) (Աճառյան). հեա, ոսն (*ped-, *pod-)~հետիկ «կոշիկ, մույգ» (Ալնթ.). «լայն կոշիկ» ձյան վրայով գնալու համար» (Խութ, Կար., Հմշ., Մուշ). հետին «հետիտան, ոտքով» (Խութ). փակ~փակ «բանտ» (հնդհ.). փառ «գգեստ, շապիկ» (<ուրարտ.?)~փար «գործվելուց լցված կտավ» (Աթ.), «նախարակի թելերը միացնող թել՝ առասան» (Ղրբ.):

4. Գրաբարում չպահպանված կամ զրաբարից տարբեր ձևով պահպանված հին փոխառություններ. անթայր «կայծ, կայծակ» (Երեմ.) (հմմտ. հուն. ἄνθραξ «ածուխ», հայ. անթեղ, վրաց. ant- «վառել»). թիլ «հողաբլուրի վրա գտնվող գյուղ» (հմմտ. Թիլ ա- վանի անունը<սևմ. հմմտ. ակկադ. tillu «բլուր»); կոմբ «մեծ խոշոր» (<իրան. հմմտ. հ.—հ. kum-bh-). մաա «լեռ, բլուր» (Զթ.), «լեռան կող, լանջ» (Չրս.) (հմմտ. ալ. mati- «լեռան կատար, ցցվածք»). ջմար «տղամարդ» (Ղրբ.) (<? հմմտ. հ. հնդկ. jāmātar- «աղջկա ամուսին, փեսա»<հ.—հ. g'em-)⁶. տապաս «մորթի հրատապ բորբոքում՝ որպես մանկական հիվանդություն» (Արբ.) (հմմտ. տապաստ «մի տեսակ մահացու ցավ»<? հմմտ. հ. հնդկ. tāpas- «ջերմություն»). քեստ «սիրտը կոտրված» (Ն.-

⁴ Բերում ենք մի քանի օրինակ՝ ավելի մանրամասն քննությունը համարելով ապագայի գործ:

⁵ 2. Աճառյանը համարում է իրան. փոխառություն՝ նկատի ունենալով garizman «երկինք» բառը (?):

⁶ Հնչյունական կողմի համար հմմտ. ջամբել և հ. հնդկ. jabhate<հ.—հ. g'embh- «կծել»:

նխշ.) [*<իրան. հմմտ. մ. պրսկ. škastan «կոտրել, ջարդել» <հ.—հ. *(s)kend-ի*],

5. Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ կամ արմատական ձևեր: Այստեղ բնականաբար ընդգրկվում են ոչ միայն այն արմատները, որոնք գրաբարում զուգահեռներ չունեն, այլև այն ձևերը, որոնք հնչյունապես, իմաստով կամ կազմութիւն տիպով հանդես են բերում համեմատական լեզվաբանութիւն տեսակետից կարևոր տարբերութիւններ:

Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները երկու տիպի են.

1. Արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափութիւններին.

1) Հ.—հ. bh, dh, gh (gʰh) > հայ. բ, գ, դ. բբուկ (*bhuhhu-) «փետուր» (Խլ., Ն.-Բզ., Սր.), «հալի կամ աքաղաղի կատար» (Գար. բռ.)—հուն. βουβών «ուռած գեղձ աճուկում», լիտվ. bubsù, bubsė'ti «պղպղալ», չվիզ. bobba «պղպղակ, պիպեն. միջատ» և այլն [հ.—հ. b(h)(e)u- «փչել, ուռչել»]⁸.

բզեղ (*bhuhhu-dh-) «գիրուկ, հասուլիկ» (Սրբ.), բբուկել (*bhuhhu-t-) «ուռչել, գիրանալ, տկոնել» (Չրս.)—մ. անգլ. budde, անգլ. bud «կոկոն, բողբոջ», մ. ն. գերմ. buddich «ուռած-հաստացած», վ. գերմ. būtil, գերմ. Beutel «քսակ», ն. գերմ. puddig «ուռած, փքված», չվիզ. puta «փքված լինել», նորվ. pūta «հաստ կին», հայ. պոյսն և այլն [հ.—հ. b(h)eu- «փչել, ուռչել»]⁹:

բլուզ (*bhlō-dh-?) «բղուզ» (Սեր.), բլտիկ (*bhlōd-) «մի տեսակ մեծ կճուճ» (Գղի)—ն. հնդկ. bhāṇḍa- (*bhaln-da?) «կճուճ, աման», ն. վ. գերմ. blāt(t)ara, հ. սաքս. blādara «պղպղակ, պպեն, ծաղկասպի, չեչ» և այլն (հ.—հ. bhel-, bhlē- «փչել, ուռչել, բխել»).

7 Ավելորդ չենք համարում նշել, որ կատիկ «մակալեղու» բառը (միջ. հայ., այլև նր., Թվր., Կար., էրբ.), որ Հ. Աճառյանը թողնում է առանց ստուգաբանութիւն, ծագում է թյուրքական աղբյուրից (հմմտ. թաթ. kadik «պինդ, դուրս ցցված», որից ռուս. кадык «շնչափողի բերան, աղամասնձոր, կատիկ»):

8 Թեքես այստեղ է պատկանում նաև պալաւ «կանաչ կեղեր հանած և միայն կարծր կեղևով մնացած ընկույզ» (Ղրբ.):

9 Այստեղ հանդիպող «միշատ, բզեղ» իմաստը (հմմտ. ն. անգլ. budda «աղբաբզեղ», մ. անգլ. budde «բզեղ, բլուճ») հնարավորութիւն է տալիս bhel- «փչել, ուռչել, բխել» արմատից բխեցնելու բողոն, բլոն, բղոն բառերը:

բղբունը (*bhel- կամ *bhōl-) «ուռածութիւն, փքվածութիւն (լավ եփվելուց կամ թթվելուց)» (Զրս.), բխբուն «ուռած-բարձրացած (լավ եփվելուց)» (Ն.-Բզ.)— բլուր, բոլոր, բեղուն և ալլն (հ.—ե. bhel-, bhlē- «փչել, ուռչել, բխել»)¹⁰.

բղող (*bhōl-) «խոնկի կամ խեփի մեծ կտոր. կիսաշոր ծիրան. լավ հասած մսոտ ծկբան, բշտիկ, փչացած ձու» (Վան)— հայ, բլուր, բոլոր, բեղուն, լատ. follis «փուչիկ, փուքս, քսակ», և ալլն (հ.—ե. bhel-, bhlē- «փչել, ուռչել, բխել»).

բողոց (*bholdhjo-) «վերք» (Տիգր.).—կիմբ. ball «համա-ճարակ», հ. շվեդ. bulde, bolde, byld «այտուցք, խոց, թարախակալված վերք» և ալլն (հ.—ե. bhel-, bhlē- «փչել, ուռչել, բխել»).

բոյթ (*bheu-t-) «դառն վրալի գնդաձև բռնակ» (Գար. բռ.). բուր (*bhu-t-) «կուղ, սապատ» (Եր., Ղզ.) (հմատ. և բոյթ «բուլթ մատը»)—մ. անգլ. budda, անգլ. bud «բողբոջ» մ. ն. գերմ. buddich «ուռած-հաստացած» մ. վ. գերմ. butze «գունդ», butzen «ուռչել» և ալլն [հ.—ե. b(h)(e)u- «փչել, ուռչել, բխել»]:

բորեկ (*bhor-), «թուխ, սպիտակ կով» (Կար.).—հայ. (<երան.) բորենի, ափ. bawra-, bawri «կուղբ, ջրշուն», ն. վ. գերմ. bero «արջ», brun «փայլուն, թուխ» և ալլն (հ.—ե. bher- «փայլուն, բաց-թխագուն», bhēro-s, bheru-s «թխագուն կենդանի»):

բուլ (*bhu-l-) «խմորի գունդ» (Աղուլ., Ջուղ., Ղբբ.).—հայ. բլուր, բոլոր, լատ. follis «կաշվե փուչիկ, փուքս» և ալլն (հ.—ե. bhel- «փչել, ուռչել, բխել») (Աճառյան):

գմբոց (*dhembh- կամ *dhem-p-) «թմբուկի ձալն» (Ղբբ.). «ծեծ» (Ղզ.), գմբուղ «բռունցք, կռուփ, բռունցքի հարված» (Եր.). գմբուկ «բռունցք» (Եր.), գմբլակ (Եր.), գմբիկ (Վան), գմբիկ (Ախլց.) «թմբուկ»—շվեդ. dimpa (damp) «թրմփալ, արագ և ծանր ընկնել» ն. գերմ. dumpen «խփել, հրել», անգլ. բրբռ. dump «ծանր խփել» (հ.—ե. dhen- «խփել, հրել»՝ շրթնալին աճակա-նով).

գնգզել (*dhen-gh) (Շմ.), գնգստել (Եր., Թբ.), գնքսել (Եր., Լոռի) «խիստ ծեծել», թերևս նաև գնկլոգ «ապուշ, հիմար»—հ. սկանդ. danga (*dangōn) «ծեծել», մ. անգլ. dingen «խփել, հրել» և ալլն (հ.—ե. dhen- «ծեծել, հրել»՝ համալեզվալին աճակա-նով).

գնթել (*dhen-th-) «հրել, բռնել»՝ արթնանալու համար», թերևս նաև գնթունել «ապուշ կտրել, շմեղ» (Լոռի)—նորվ. բրբռ.

¹⁰ Կազմութեան համար հմտ. բողբոջ:

denta «հրհրել, հրմշտել, փոքր հարվածներ տալ», անգլ. din[†] «հարված, հրոց» և այլն (հ.—հ. dhen- «խփել, հրել»՝ առաջնա-
Պեղվալին աճականով):

զան (*għn-) «զզվանք» (զանել, զանելանք, զանուր, զան-
կուս)—ռուս. гнущий «զզվելի» гнущаться «զզվել» և այլն
(հ.—հ. ghen- «կծել, մաշել, քերել») ¹¹.

զլիել (*ǵōl-pħ-) «կորզել, շորթել, ձեռքից խլել» (ն.-բզ.)—
լատ. vellō, -ere «փետել, պոկել, խլել», գոթ. wilwan «թալա-
նել, հափշտակել» և այլն (հ.—հ. ǵel-, այլև ǵol- : ǵōl- «ճանկել, կորզել, խլել, պոկել, թալանել, ճանկոկել, վիրավորել, վերք»):

2) չ. և. b, d, g (gǵ) > հայ. պ. տ, կ.

պլիկ (*bu-l-) «կանացի ամոթույք» (երզ.), պուպուկ (*bu-
l-) «ամորձիք» (Ղրբ.)—ն. հնդկ. buri-, buli- «հետույքի թուշ-
կանացի ամոթույք», լիտվ. bulis «հետույքի թուշ» և այլն [հ.—հ.
b(h)(e)u- «փչել, ուռչել, բխել»] ¹².

տարթ (*d̥r-th-) «աթար, թրիքի տափակեցրած շերտ՝ իբրեկ
վառելիք» (Թբ., Եր. Ղրբ., ն.-բզ., Սրմ., Վան), «մարմնի վրալի
հաստ կեղտ» (Խրբ., Վան)—հ. անգլ. tord «կեղտ, աղբ, կղկղանք»,
ռուս. дерть «տրորված հացահատիկ՝ որպես անասնակեր», այլև
дермо «աղբ, թրիք, կեղտ» և այլն (հ.—հ. der- «քերել, կաշին
հանել, պատռել, ճեղքել, պատռել—հանել, անջատել») ¹³.

տարտղնել (*d̥r-d-) (Ասլ., Արբ., Եվզ., Կյուբ., Մուշ., Մրզ.,
Զրս., Պոլ.), տարտղնել (Պոլ.) «ցրել, ցիրուցան անել, բաժանել,
բաշխել, մասնատել», տարտոցել «խմորի զանգվածները ձևել»
(Սվ.)—հ. հնդկ. dardarti, dardarīti «պատառոտում է, պատռում
է, ճղճղում է, ճղում է», ալ. darədar-«ճեղքել, պատռել», չխ.
drdati «փետել», այլև հոլլ. tarnen, tornen, մ. վ. գերմ. trennen
«բաժանել, անջատել» և այլն (հ.—հ. der- «քերել, կաշին հանել,
պատռել, ճեղքել, պատռել—հանել, անջատել»՝ հավանաբար dā-
«բաժանել, կտրտել, պատառտել» արմատից, որպես աճակա-
նով ձև).

11 Չ. Աճառյանը, ՀԱԹ, 2, էջ 61, կասկածով կապում է զան «ծեծ» բառի
հետ (հ.—հ. gǵhen-ից):

12 Թերևս այս արմատի -g- աճականով ձևից է (*bu-g-) ծագում պուկ
«տունու ճյուղից պատրաստված փշելու նվագարան, որ պուս ձայն է հանում»
բառը (Ակն):

13 Թերևս այստեղ նաև տալիս «պնդություն, կարծրություն» (հմմտ. հայ. տեռ
«կոշտուկ»):

տորորալ (*dor-) «կամաց-կամաց դեռ ու դեռ քայլել, թափառել, շրջել» (Մուշ), տորտորալ «երերալ՝ ղողղողալով քայլել (հիվանդության կամ տկարության հետևանքով)» (Եվդ.)—հ. հնդկ. drāti «վազում է, շտապում է», dāridrāti «շրջում է, թափառում է», հ. վ. գերմ. trotdōn «տաք դնել, քայլել» գերմ. բրբռ. trotteln «դանդաղ դնալ» և այլն (հ.—ե. der- «վազել, քայլել, դանդաղաքայլ դնալ»)¹⁴.

տրաքել (*dērək-?) «ճալթել, պատռել, պալթել» (Աստ., Ախլց., Թբ., Կար., Լոռի, Ղզ., Ղրբ.)—չեխ. drkati «հրել, սալթաքել», բուլղ. дърпам «քաշում եմ, ձգում եմ, փորում եմ», այլև հ. հնդկ. dar- «պալթեցնել, պատռել, ճեղքել» ավ. darədar- «ճեղքել, պատռել», հայ. տեռել «քերթել, կաշին հանել» և այլն (հ.—ե. der-, derek- «քերթել, կաշին հանել, պատռել, ճեղքել, պատռել-հանել, անջատել»):

կալանջել (կլանջել) (*gal-) «ոռնալ, լալով գոռալ» (Ղրբ.)—ավ. gəṛəzaiti «գանգատվում է, ողբում է», հ. վ. գերմ. klingen, klinkan «հնչել», անգլ. clink, շվեդ. klinka «ծնգալ, ծնդծնգալ» և այլն [հ.—ե. gal-, gleng(h)- «կանչել, գոռալ»].

կաղվել (*gl-) «սառչել» (Չրս.)—լատ. gelū «ցուրտ, սառնամանիք», gelō, -āre «սառեցնել, սառչել», հ. սկանդ. kala, kōl «ցուրտ լինել, սառչել, մրսել», հ. անգլ. ciele, անգլ. chill «ցուրտ» հ. վ. գերմ. kalt «ցուրտ, սառը» և այլն [հ.—ե. gel(ə)- «ցուրտ, սառչել, մրսել»]:

կաւառ (*gəu-) «նեղ առու, արխ» (Ակն, Արբ., Խրբ., Կլուբ.) «ջրաբերան» (Եր., Ջթ.) (հմատ. կաւառն «ջրի նեղ առու») — հայ. կորի «ջրի նեղ առու՝ արտը ջրելու համար» և այլն (հ.—ե. geu- «ծռել, թեքել, կամար կազմել»):

կեա (*geid-)¹⁵ «մի տեսակ ճանճ, որ հորթերին կծելով փախցնում է» (Ղրբ.), կեա անել «հորթերի հանկարծ փախչելը» (Գնձ., Ղրբ.) — հայ. կեա, կծանեմ, հ. իսլ. kitla «խաղտել» և այլն (հ.—ե. geid- «կծել, խաղտել»):

կլաթան (*gylə-t-?) «կոկորդ» (Վան) — հայ. կլանեմ, կուլ, բրբռ. կուլ «կոկորդ», լատ. gula, հ. վ. գերմ. kela, հ. անգլ. ceola, ռուս. ГЛОТКА «կոկորդ» և այլն (հ.—ե. gel-, gyl- «կլանել»):

¹⁴ Հմատ. Թերեա նաև տուտը «դանդաղ» (Ասլ.):

¹⁵ 2. Աճառյանի ՀԳԲ-ում տրված է կեա ձևով, բայց ՀԱՄ-ում ուղղված է կէա. հին վկայությունը կա Մխիթար Գոշի առակներում:

կլամփոց (*gʷimph-) «**քաղցի**» (Թբ.)—ալբ. gjemp, gjembt «**փուռ**», ալլե հալ. կեդել, կեդեքել, ռուս. жало «**խալթոց**», жалить «**խալթել**» և ալլեն [հ.—ե. gʷel- «**ծակել**» (ծակող) ցաղ-տանջանք, մահ»].

կլմբոս (*glembh-) «**մեծատուն**, հարուստ մարդ» (Ղբբ.[՝] կտկբ.), կլմպուզ (*glemb-) «**ճախնդևդ, տակ**» (Վան), կլմպոզտիկ «**գլուխկոնծի**», կլմպուբ (Տբ.), կլիմպուբ (Հմշ.) «**երդիկից օջախի վրա կախված շղթա, որի ծալրի կեռերից աման են կախում բան եփելու համար**»—մ. վ. գերմ. klamben «**պինդ ամրացնել**», հ. շվեդ. klimper «**գուղձ, գունդ, հոծ զանգված**» և ալլեն [հ.—ե. glemb(h)- «**սեղմել, գնդել**»՝ gel- «**գնդվել**» արմատից]։

կլապաիլ (*gləb-) «**կծկվել, կլոր ծալվելով նստել (օձի մասին)**»—սլովեն. glábiti «**իրեն քաշել, հավաքել, քշտել, հանգրիճել**», սերբ. zglōbiti «**հավաքել, կազմել**» լեհ. giobić (հին) «**սեղմել, միացնել**» և ալլեն [հ.—ե. geleb-, glēb(h)-: gləb(h)-, gleb(h)-: gl[b(h)- «**գնդել, սեղմել**»՝ gel- «**գնդ(վ)ել**» արմատից]։

կլիկ (*gl- կամ gōl-) «**կտտոր, մանր եղջերավոր կենդանիների կղկղանք**» (Ալն, Աբբ., Չմշկ.), կլտիկ «**թրիք**» (Մշկ.), կլիկ (կլիկի?) «**մի տեսակ փոքրիկ կլոր հաց**» (Սեբ.), կլիկ «**փոքր նարինջ, թուրինջ կամ գիր պտուղ**» (Ադն.), կլիկ «**պուտ, կաթիլ**»—հ. հնդկ. gula-b, gull, gulikā «**գնդակ, գունդ, մարգարտահատիկ**», հոլլ. (հին) kal «**խնձորի և տանձի կուտ**», լեհ. glon, glen «**հոծ զանգված, հացի կտոր, ջրիմուռ**» և ալլեն [հ.—ե. gel- «**գնդ(վ)ել**»].

կլնգրիկ (*glent- կամ *glendh-) «**կոկիկ, գողտրիկ**» (Վան), կլննել «**տաք ջրի մեջ շաղված ալյուրի դնդվելը**» (Չթ.), կլոզ (Ասլ., Աբբ., Չրս.), կլոն «**խմոր հաց, բաղարջ, ձեթով հաց**» (Ալշ., Արճ., Խոլ, Ողմ, Վան), կլուն «**կոլորակ և ողորկ քար, լսարկ**» (Բդ.) [հմմտ. հ. կլոնջ (Պոլ.) կլոնճ (Ղբբ.) «**մեծ կտոր, գունդ**» կլոնդրակ «**գնդակ**» (Ղբբ.)]—հ. շվեդ. klinter «**լեռնագագաթ, լեռնագուղձ**», մ. ն. գերմ. klint «**ծալո, խուլթ**», ն. գերմ. klint, klinte «**գուղձ, հոծ զանգված, գունդ, կուլտ. հաստ կին**», գերմ. բրբ. klunze, ն. գերմ. klunter «**կեղտի կամ աղբի կտոր, կտտոր**» նորվ. klundra «**կունդ, խիլթ**» և ալլեն [հ.—ե. glent-, glendh-(?), gel-d-, gle-d-, gel-dh-, gle-dh-՝ gel- «**գնդ(վ)ել**» արմատից]։

կլոբ (*gōl-) (ն.~նխշ.), կոլոբ (*gol-) (Մշ.) «**գնդաձև, բուլորակ, սեխ**» (Ասլ., Մն., Մուշ, Չրս., Վան) «**կոլոլակ, ծեծած մսի գնդակներով պատրաստված կերակուր**» (Ալնթ.), կլուբիկ «**մի տեսակ աման**» (Մուշ), կլոք «**կծիկ**» (Խն.), կղակ «**եղի թափանի**

հաստ մասերը» (Եր.), կղան «կաշվե հաստ փոկ՝ գութանը կամ ապլը լծին կապելու համար»—հ. հնդկ. gula-ի «գնդակ, գունդ, մարգարտահատիկ», glāu-ի «գնդակ, գնդաված դանգված» և այլն [հ.—ե. gel-, g(e)leu- «գնդ(վ)ել»]¹⁶.

կլպոք (*gleb-) «կլորիկ, պսալիկ, սիրուն» (Բն.), կլպնդրիկի «գլուխկոնժի»—լատ. globus «գունդ, գնդակ, կլոր բան, կուլտ» glēba «գուղձ, գնդակ, բեկոր» և այլն [հ.—ե. geleb(h)-, gieb(h)-, glēb(h)-, gieb(h)-: gl̥b(h)- «գնդել, սեղմել»՝ gel- «գնդ(վ)ել» արմատից].

կոլոլ (*gol-) «կլոր» (Եր., Թբ.), «կանացի գլխազարդի վրա կախված գնդիկ» (Ղրբ.), կոլոլել «կլորացնել, ոլորել, փաթաթել» կոլոն «անեկ հաց» (Մրդ.), կոլոնիկ «կլոր, բոլորած» (Սվ.), կոլոն «մեծ կուլտ, դեզ» (Սր., Վան) (համատ. բրբռ. կլոր, կոլոր)—հ. հնդկ. gula-ի «գնդակ, գունդ, մարգարտահատիկ», glāu-ի «գունդ, գնդակ, գնդաված դանգված» [հ. ե. gel- «գնդ(վ)ել»]¹⁷.

կուլ (*gul-) «կոկորդ» (Ղրբ.)—հայ. կուլ, կլանել, լատ. gula «կոկորդ» և այլն (հ.—ե. gel-, gul- «կլանել») (Աճառյան).

կուկուլ «մի տեսակ կլորիկ հաց» (Խն.), «ծու» (Վան, մնկ.), կուկուլ «բրգաձև դեզ, կուլտ (կրակի, տներենրի և այլն)», կուկուլի «գոգալորութուն, գոգալոր» (Ախլց.), կուկուլ «ընկուլզ» (Արճ., մնկ.), թերևս նաև կուկի «գլուխ» (Եր., Լոռի, մնկ.)—մ. յլ. դերմ. kugel(e), գերմ. Kugel «գնդակ», գերմ. բրբռ. Kocke «դեզ» և այլն (հ.—ե. geu- «պտտել, ոլորել» արմատից, gug-, gud- համատ. նաև gag-, gōg- «գունդ»—մնկ. րառ.).

կոինճ «քաշված, կուչ հկած, չորացած» (Զրս.), կոինճ «կնճիռ» (Պոլ.), կոկել «կուչ գալ, կծկվել (ցրտից)», կոնճել «քաշվել, կծկվել» (Մլկ., Պոլ.), «չորանալ, գոստնալ» (Զրս.), «քաշվել-մնալ, սթրվել» (Մուշ), կոնճկավել «թելի, մազի խառնվելը» (Վան), կոնճ(մ)ել «կծկվել, կուչ գալ (տաքությունից՝ կաշվի մասին)» (Խրբ.), կոնճ «զանգուր, գուռ» (Ն.-Բդ.), կոտել «կուչ-կուչ գալ (տաքությունից՝ կաշվի մասին)» (Ն.-Բդ.), «չեչոտել» (Արբ., Պոլ.), «փոթ-փոթ լինել (լավ չեփվելուց՝ մսի մասին)», կաթ-կապ «հանգուլց», կրկիտ «պինդ, սեղմված, ամուր» (Եր.),

¹⁶ Բայց հմտ. և հ.—ե. geu- «ծռել, թեթել, կամարել», որից հայ. կոբ, կոբիգ, կրուկն:

¹⁷ Բայց հմտ. հ.—ե. geu-, «ծռել, թեթել կամարել», որից հայ. կոբ, կոբիգ (-լ-ածանցով. կոլ-ը՝ -լ-ածանցով): Հնդկի թե կոլոն-ը կապ ունի հուն. κολωνός, κολωνή «բլուր» բառերի հետ:

«ժլատ, կծծի» (Ախլց.), կրճան «ժլատ, կծծի» (Եր.), կրոչ «փայտե կարթ» (Հմշ.)—հ. սիանդ. krōkja «ծռել, բռնել», նորվ. krjuka (krauk) «խորշոմել, կնճռոտել, կծկվել, սողալ», նորվ. բրբռ. kre-ken «թուլլ, տկար, դաբաբեկ», արև. ֆրիզ. kret «խորշոմած պտուղ», լիտվ. grandis, grundis «օղակ», լատվ. grūods «պինդ ոլորված, ձիգ» և այլն [հ.—հ. ger-, greg-, gren-g, gred-, grend- և այլն «պտտել, ոլորել»․ քայց հմմտ. նաև (s)ker- «խորշոմել, կնճռոտել»]։

կռաուկ (*gurd-?) «խռակ» (Արբ.)—հայ. կեր, կոկորդ, ալբ. zgurdhë (*dz-gu.rda) «փորտախք», ռուս. горло «կոկորդ» և այլն [հ.—հ. gwer- «կլանել, կոկորդ»]։

կսիտ (*gud-) «կատվի, ոչխարի, մկան կղկղանք» (Ղրբ.), կատուր (Թվր., Կար, Մժ.), կատոր (Ղրբ.) «այծի, ոչխարի, ուղտի կղկղանք» (հմմտ. նաև պատուր, սպտուր)—հուլ. kuit (*kūt-), kiete (*keot-) «ձկնկիթ», մ. ն. գերմ. kōtel «կտիտ, կտտոր, ալծի, ձիու կրտածե կղկղանք» և այլն [հ.—հ. gud-՝ geu- «ծռել, թեքել, կամար կապել» արմատից]։

3) Հ.—հ. p, t, k (kʷ) > հայ. հ (—), թ, ք։

հլոսել (*pel-?) «հրել, մղել, դլորել» (Մուշ)—լատ. pellō, -ere «խփել, հրել, մղել, շարժել» և այլն [հ.—հ. pel- «հրելով կամ խփելով շարժել, քշել»]։

հոա, յոա¹⁸ «մի տեսակ աման»—հ. սաքս. fat «աման», լիտ. púodas, լատվ. puōds «պտտուկ, կնճռ» և այլն [հ.—հ. pēd-, pōd- «բռնել, աման»] (Անտոյան)։

լավ (*pləu-) «հեղեղ» (Շլ.)—հուն. πλώω «լողալ», հ. իսլ. flōa, հ. անգլ. flōwan «գերլցվել, լցվել-թափվել», հ. վ. գերմ. fluot, գերմ. Flut «մակընթացութուն, հոսանք, հեղեղ», ալլե հայ. լուսնալ և այլն [հ.—հ. pleu-, plou- «թափվել, հոսել, լողալ, թափել, լցնել, թռչնել»]։

լաքոշ (*plā-k- կամ *plə-k-) «բերանը բաց, լախաբերան, բացբերան, շատախոս, մի տեսակ (մեծ, լախադուխ) տանձ» (Վան), թերևս նաև լաք «ածու, մարդ, ալգեբաժին»—հուն. πλάξ «հարթութուն, հարթակ», հ. իսլ. flaga «նեղ հողաշերտ», մ. ն. գերմ. vlage «հողաշերտ», լիտվ. plākanas «հարթ, տափակ», լատվ. plaskains «հարթ» և լախ, ռուս. плоский «հարթ» և այլն [հ.—հ. plā-k-, plə-k- և այլն «լախ և տափակ, տարածել»]։

18. 2. Անտոյանը տալիս է հոա, յոա ձևով, բայց օ-ի նախնական լինելու դեպքում (օ < ա) նրա ստուգաբանությունը չի արդարանում։

թալ (*tāl-) (Թվր., Դրբ.), ալիկ թերևս թելուկ (Եր.) *ամի ուտելի բույս, մի տեսակ վալլրի բանջար*¹⁹—հուն. τήλις *բուդախտ*, τήλεθώ *գլխի թերևս, ծաղիկ, կանաչիկ, ընձյուղիկ*, լատ. tālea *«հիպոտ, հյուղ, տունի»*, լիտվ. at(t)ólas *«աշնան խոտ»* և ալլն (հ.—հ. tál- *«աճել, բուսնել, կանաչել. բույս, ընձյուղ»*).

թնալ (*ten-) (Խրբ., Զրս.), թնթնալ (Ախլբ., Խրբ., Զրս.), թնգթնգալ (Եր., Թբ.), թնկթնկալ (Ն.-Բգ., Վան), ալիկ թնձկալ (Զթ., Մն., Պոլ.) *«հեղեղալ, առանց արցունքի լալ»*²⁰ [հմմտ. և թոնթալ *«հեղալ»* (Վան)]—հուն. στένω, στέινω *«գանգատվել, հեծել, ողբալ, տնքալ»*, στεναγμός *«հառաչիկ»*, հ. իսլ. stynr *«տնքանքոց»*, ուսու. стои *«տնքալ»* և ալլն [հ.—հ. (s)ten- *«որոտալ, աղմկել, տնքալ»*].

թոռ (*tor-s-?) *«թարմ»* (Դրբ.)—հուն. τέργη *«քնքուլ»*, հ. հնդկ. tárana- *«մատղալ, քնքուլ»*, հայ. թոռն և ալլն (հ.—հ. ter-, teru- *«քնքուլ, թուլ»*).

թործ (*torg'-) *«անկումնաձև տաշած փոս՝ գերանը գերանին հազցնելու համար»* [հմմտ. և թորիծ—նՀԲ]—հայ. թուր, արածել (*trəg'-), թերևս նաև թուրծ *«ալալ»*, հուն. τóρμος *«անցք»* և ալլն (հ.—հ. ter- *«տորոել, շփել, ծակել»*) (Աճառյան).

քեղի (*kel-) *«պոկել, քաղել, քերծել, հանել»* (Արբ.), քեղ-ծըվել *«քերծվել»* (Մուշ), քեղրգել *«քերել»* (Եփհ.), քեղրթել *«պոկել, սկրթել, հանել»* (Աղ., Արբ., Մուշ)—հայ. քաղել, ցելուկ և ալլն [հ.—հ. (s)-kel- *«կտրել»*].

քեռթափորթիկ (*ker-th-?) *«խորդուբորդ»* (Վան), ալիկ քրափքշտուն *«խորդուբորդ, անհարթ»* (Ն.-Բգ.)—հ. իսլ. skrydda *«կրնճոտված կաշի»*, հ. լիտվ. skraudūs *«խորդաբեկ, խորդուբորդ»*, skraudu, skrausti *«խորդուբորդ դառնալ»* և ալլն [հ.—հ. (s)ker- *«կրնճոտվել, խորշոմել, խորդուբորդ կաշի, կեղև, թեփ»*].

քթել (*kēth-) (Ուրմ.), քիթել (Մրդ.) *«հոգնել»*—իսլ. scíth *«հոգնած»*, ալիկ հայ. խաթարել և ալլն (հ.—հ. skēth- *«վնասել»*)²¹.

քոռ (*kors-?) *«ցեխ»* (Վան)—ն. պրսկ. kari, karah *«կեղտ»*, հուն. κόρυα *«խլինք»* κορύναι *«լորձոնք»* (Հեսիք.), հ. վ. գերմ.

19 Հմմտ. նաև բաղբ, բաղրիկ *«մի տեսակ բույս»*.

20 Հ. Աճառյանը կապում է թնձկալ, թնձկալ *«շան ձագերի քծնելու ձայն արձակելը»* բառերի հետ:

21 Քիթել-ը Հ. Աճառյանը, ՀԱՄ, 3, էջ 1176, համեմատում է գրաբարում ափանդված կրառ թթուլլ, անհաստատ բառի հետ:

horo «կղկղանք, կեղտ», հ. իսլ. horr «խլիճք, քթի կեղտ, կեղտ», հ. իսլ. corcach «ճահիճ» և այլն (հ.—հ. ker-, kers- «մթազույն, կեղտազույն, գորշ», kor-ko- «կեղտ, ճահիճ»).

քոռթիկ (*kor-th-?) «ծառի վրա գլխացած փոս» (Ձմշկ.), թերևս նաև քոնած (Վան), քոնուկ (Մուշ) «ծաղկատար, չեչոտ»—հայ. քերել, քերթել, քերծել, հ. հնդկ. kartá- «փոս, անցք» և այլն [հ.—հ. (s)ker- «կտրել»].

քորթիկ (*kor-th-?) «կաղամբի և ալև բույսերի բարակ թերթիկ» (Ղրբ.)—հայ. քերթել, լատ. cortex «կեղև», լիտվ. karta- «շերտ, խավ» և այլն [հ.—հ. (s)ker- «կտրել»].

քոնելի (*krenthi- կամ krenkhi-?) (Ղզ., Ղրբ.), քոնել (տալ) (Շլ.), քոնշ (տալ) (Եր.), քոշանել (Եր., Ղրբ., Ն.-Բզ.), կոշանել (Ապ.), քոի (տալ) (*kri-) (Ղրբ., Յդնա), գոի (տալ) (Ազլ.), քոի-քոի (անել) (Ղրբ.), քոուշ (տալ) (*kru-), գոշանել (Մուշ) «հրել, բռնել, բռնել-զցել, բռնել-քշել»²²—սլավ. *křetati՝ ուսս. кретать, кренуть, крятать, кряхуть «նկարչել, շարժել, անջնջ շարժել, բռնել-զցել, ես կամ առաջ տալ» և այլն [հ.—հ. (s)ker-, որից (s)krei-, (s)kreu-, (s)ker-k-, (s)kert-, (s)kerət-, (s)krat-, (s)kre-n-t-, (s)krek-, (s)krenk- և այլն «չլորել, ծռել»]:

4) Հ.—հ. ph, th, kh, sk (sk') > հայ. փ, ք, ք, ց, այլև թերևս skh (sk'h) > շ.

փամփխել (<փամփխել?) (*phamph-) «խմորի բարձրանալը» (Ղրբ.), փամփխիկ, փամփխուկ «փափուկ, հիրդ, գիրուկ» (Խրբ.), փամփուլիկ «քնքուշիկ», փամփուխ «գողարիկ» (Ն.-Բզ., Վան), փքմփուս «կակուղ, փափուկ» (Վան), փմփոնել «գիրանալ» (Ղրբ.)—հայ. փամփուշտ, լիտվ. pampiti «ուռչել, փքվել», լատվ. pampt, pempt, pumppt «ուռչել», ուսս. пуп «պորտ» և այլն [հ.—հ. p(h)a* mp(h)- «ուռչել»]²³.

փաթացնել (*pher-th-?) (Ղրբ.), փաթկալ (Եր.), փաթկացնել (Եր.) «հանկարծակի ծիծաղել, ծիծաղի պոռթկալը», փրթավել «շարտել, ուժով նետել» (Ղրբ.), փրթել «պոկվել, ցրվել» (Ակն. Պու.), «հանկարծ երևան գալ» (Արբ., Պու.), փրթնել «ազատվել,

22 Թերևս գ-ով ձևերը գալիս են հ.—հ. gher- «ցցվել, տնկվել» արմատի ձևերից (հմմտ. նորվ. բրբռ. gara- «ծակել, հրել, բռնել») (կոնսամինացիա):

23 Այս նույն անալոգիայով թերևս փափուկ բառի կարելի է բխեցնել հ.—հ. *pa*р- «ուռչել» արմատից; Հմմտ. և ծուփուլ «ափանջի մոտի խոպոպիկ» (Ան.), փոփուշ «ճահատի վրայի խոպոպիկ» (Եր.), փոփուլ «փուխբ, կակուղ» (Եր.), փոփուլիկ «քնքուշ, փափուկ, կակուղ» (Պու., մեկ.) (հ.—հ. pup-?):

արձակվել» (Վան), փրթցնել «ազատել, ազատ արձակել» (ԶԹ.) (հմմտ. փրկել, այլև պոքկալ) — հ. հնդկ. sphūr̥ti- «պոռթկում, հանկարծ հայտնվելը», հայ. սպառնալ և այլն [հ.—հ. sp(h)er- «ցրել, ոտքով հրել, շարտել, թարտալ», sp(h)erd(h)- «ցնդել, ցատկել»՝ (s)p(h)er- «ցրել, ցանել, ցայտեցնել» և per- «ցայտեցնել, ցանել, փռնչացնել» մերձավոր ձևերի կողքին]։

թոնթորալ «քրթմնջալ, մրթմրթալ, փնթփնթալ» (Եր., Ղրբ.) — հուն. τριτοροῦζω «քրթմնջալ, մրթմրթալ, փնթփնթալ» (?) (Աճառյան)²⁴։

ցլեպ (*skleb-) (Հոռի), ցլեփ (*skleph-) (Ղրբ.), ծլեպ (<ցլեպ) (ՇԼ.), ցլկտել (*skleig-) «մաշել, պատռտել (հագուստը)» (Եվդ.) — հայ. ցլելուլ, ն. վ. դերմ. scelifa «կաշվե թաղանթ» մ. ն. դերմ. schelver «պոկված թերթ» և այլն [հ.—հ. (s)kel-, (s)kel(e)-p-, (s)kel(e)-b-, (s)klei- և այլն «կտրել»]։

ցոթկել (*skēr-th-) «ցնկնել» (Վան), ցոռկ (*skēr-) «նոր ծիլ» (Վան), «նորահաս տունկ» (Բզ., Մուշ, Վան), «տղա, երեխա» (Ողմ), ցրտեցնել (Թբ.), ցրիտցնել (Ն.-Նխշ.) «դուրս ցատեցնել», ցրքել «թափել, ցրցրել» (Եվդ.), ցրքտել «վրան ցայտել» (Ն.-Նխշ.) — հուն. σκαρδαρός «ցատկ», σκίρταω «ցատկել», հ. իսլ. skirja «շահել կով, երինջ», skæri «շահել ճայ», հ. իռլ. fo-cerdaím «նետում եմ», cuirithir «նետում է, դնում է» և այլն [հ.—հ. (s)ker-, -d- «ցատկել, շուրջը ոտտոտալ. պատվել»]։

շիլ (*skhēl-) «սխալ» (Ղրբ.) — հ. հնդկ. skhalatē «սայթաքում է, օրորվում է, սխալ է գնում», հայ. սխալ և այլն [հ.—հ. skhel- «սայթաքել, սխալվել»]²⁵։

շիպո (*skhib-?) «շիլ» (Ղրբ.) — հ. իսլ. skelfr, «շիլ, շեղ», մ. վ. դերմ. schief «շիլ, շեղ, ծուռ» և այլն [հ.—հ. skēi-bh-, -p- «շիլ, ծուռ, կաղ»]։

շիվ (*skhip-) «ծառի դալար ճյուղ» (Եր., Ղրբ.), «բարակ ու դալար փայտ, ճիպոտ» (Խն.), «խաղողի թև» (Մրդ.), «թերևս նաև շիփ «շղթամի արձակած թև» [հմմտ. շիւ «ճյուղ, ոտ» (Երեմ. բռ.), այլև «խաղողի չանջ. ջուլհալի ձևաքի կողափայտ» (Արմ. բռ.)] — հուն. σκίπω, լատ. scīpio, -onis «փայտ, ձեռնափայտ, ցուպ» և այլն [հ.—հ. skel-p- «կտրել, զատել, բաժանել, անջատել»] (Աճառյան)։

²⁴ Պարզ չէ կապը հ.—հ. (s)ten- «որոտալ, ափսկել, տնջալ» արմատի հետ։ Վերջինս քննականական չէ՞ (հմմտ. հայ. տնջալ)։

²⁵ Հավանաբար (s)kel-, «ծռել, հենել, ծուռ» արմատի արտահայտչական տարբերակն է. հմմտ. շիլ «ծուռ»։

շոպկեի (*skhob-) «մորթագերծ լինել» (Մուշ) — ռուս. скоб-
лить «քերել, քերթել», скопить «կտրել, ամորձատել» և այլն
[հ.—հ. (s)kep-, (s)kop-, (s)keb(h)-, skob(h)- «սուր գործիքով
կտրել, ճեղքել»].

ծ) Հ.—հ. ց'հ, ց', կ', կ'հ > հայ. հ, ծ, ս, ց (?), այլև կ'ս > շ-
արց (<*արծ, <*arg'h-?) «հյուսվածքի սկիզբ», արցել
(<*արծել) «հյուսվածքն սկսել» (Ղրբ.) — հուն. «σχημα» «սկիզբ,
հիմնադրում, հիմք», ἄρχω «սկսել, ձեռնարկել, առաջնորդել, իշ-
խել» (Աճառյան)²⁶.

սլուլ (*k'el-) ²⁷ «սառնամանիք, սաստիկ ցուրտ» (Եր., Չնգ.,
Վան) — հ. հնդկ. śīśira- «զոռ, ցուրտ», ավ. sarata-, հ. պրսկ. šard
«սառը, ցուրտ», օս. sald- «ցուրտ», լիտ. šalù, šalti «սառչել»,
šaltas «սառը» հ. պրուս. passalis «սառնամանիք» և այլն (հ.—հ.
k'el «սառչել, սառը, ցուրտ»).

սղին (*k'el-) «շրի վրա սառույցի բարակ շերտ» (Ն.-Բգ.),
սղոն «հալչող գետի վրայի սառույցի կտոր» (ՆՀԲ) (հմմտ. և
բրբռ. սլուլ) — հնդկ. hal «սառած գետին», լիտ. šalnia «շաղ»,
pāšalas «սառած գետին», հ. պրուս. passalis «սառնամանիք» և
այլն (հ.—հ. kel- «սառչել, սառը») (Աճառյան).

սոքեկ, սոքիկ (*k'or-) ²⁸ «մի տեսակ բույս, որի սև և մանր
հունդերից ձեթ են հանում» (ըստ Տիրացյանի՝ մի տեսակ վալրի
գարի, Holesus lanatos L., ըստ Ս. Camelina sativa) (Ղրբ.) — հայ.
սեբմ(ն), ալբ. thjerre «ոսպ», հ. վ. գերմ. hirsó, hirsí «կորեկ» և
այլն (հ.—հ. k'er- «աճել, աճեցնել»).

սոխ (*ok'-) «մի տեսակ փշուա բույս» (Ղրբ.) — հայ. ասեղն,
թերևս նաև հասկ, լատ. aculeus «խալթ. փուշ. ծայր», aquifolium
«սրտանրե (ծառ)», գալլ.-լատ. opulus «թխկի», սլավ. *ošuta
«ուղտափուշ, կաթնրեկ» (ռուս. оcot «կաթնրեկ») և այլն (հ.—հ.
ak'-, ok'- «սուր, սրածայր»):

շեք (*k'yek-) (Եր., Թվր., Ղրբ., Մուշ, Գղի), այլև շեք
(Ղզ., Սր., Վան), շքեռ (Ղրբ.) «լալն քալլ», «սրբանը աճուկին
միացնող մասը» (Թվր., Ղրբ.), «բացված ոտքերի միջև եղած

²⁶ Հուն. բառերի ծագումը պարզ չէ, եթե այս համեմատությունը ճիշտ է,
այս կարելի է վերականգնել հ.—հ. arg'h- կամ rg'h- (:reg'h-) հիմնաձև:
Այս դեպքում առաջ բառը չպետք է կապել սրանց հետ (հ.—հ. rek- «սահմանել»
կամ փոխառությունն առոր. միջնորդությամբ?):

²⁷ Զանգվորման համար հմմտ. հ. վ. գերմ. hāli «սահուն, հարթ»:

²⁸ Զանգվորման համար հմմտ. հուն. πόρος «երեխա, տղա, հյուշ»
և այլն:

տարածութիւնը» (Ղզ., Ղրբ.)—հ. հնդկ. śvāñcatē «բացվում է», ucchvankā- «բացվածք» և ալլն (հ.—ե. k'yek-, k'yenk- «բաց լինել»).

շիվ (*k'yui-yo-?) «շվոց, ձալն» (հմմտ. շվի, շվեմ)—ն. իսլ. hvíða «խրխնշալ», հ. իսլ. hvína «շրշալ», hvísla «սուլի», ռուս. свистеть «սուլի», թերեւ նաե հայ. շշել և ալլն (հ.—ե. k'yui- «սուլի, շշալ»)²⁹.

ծ) Հ. և. r, l, m, n, հայ. p (n), l (ղ), մ, ց.

առի (>առռե, *ari-) «հուլժ, շատ, ամենա-» (Ղրբ.)—հ. հնդկ. (վեդ.) ari- «հուլժ (?), շատ (?)», հուն. ἀρι- «հուլժ, շատ» (հ.—ե. ari-?) (Աճառյան).

արիք (*ari-) «հասակ, տարիք» (Երզ.) [հմմտ. նաև արեճք «հասակ, տարիք» (ՆՀԲ)]—հուն. ἀριθμός «թիվ, քանակ, երկարութիւն, տեղութիւն» (այստեղ և հայ. հարիւր?), հ. իռլ. հ. անդլ., հ. վ. գերմ. rīm «թիվ» և ալլն [հ. և. ar-, arei- «հարմարեցնել», որտեղից հայ. առնեմ (արարի), յարմար, արդ, արդար].

լակ (*læg-) «թուլլ, փչացած (ծու)»—հուն. λαγάρος «փոս ընկած, փափուկ, նուրբ», լատ. latus «թուլլ», հ. իռլ. lacc «թուլլ, կակուղ, տկար», մ. ն. գերմ. lak «թուլլ, ազատ, խախտւտ» և ալլն [հ.—ե. (s)læg-: (s)læg- «թուլլ, հոգնած լինել»] (Աճառյան)²⁹a.

լակվորել (*læg-) (Ախլց.), լկռովել (*læg-) (Եր.), լկռտել (Պոլ., Վան), ալլև լկրտել, լկստել «շփանալ, լրբանալ, երես առնել»—հուն. λαγνέω «անառակութիւն անել», λαγνός «անառակ կին» (Հեսիք.), մ. նիդեռլ. lak «թուլլ, լալն, ցոփ, ցանկասեր» և ալլն [հ.—ե. (s)læg-: (s)læg- «թուլլ լինել, թուլլ, թուլամորթ, ցոփ»].

լամփա (*lǫph-) «առաստաղի տախտակ» (Սլմ.), լամփառ «վեցմատնյա եղան» (Ն.-Բզ.), լամփացա «թխտ լալն, լմփոշ» (Պոլ.), «հաստ ու կոպիտ» (Ղրբ.), լմփոշ, լմբատ «հաստ, անշրնորհք կերպով հաստ», լմբալ, լմբմբալ «անշնորհք կերպով ոտքերը գնելով, երերալով գնալ» (Ապ., Բլ.)—հ. հնդկ. rāmbate, lambate «կախված է, ցած է կախված», նորվ. slampa «անփութորեն գնալ» և ալլն [հ.—ե. lēb/p-, lōb/p-, lāb/p-, lēb/p-, (s)lemb(h) «թուլլ կախվել. շրթունք»].

²⁹ «Очерки по ист. дописъм. пер. арм. яз.» գրքում, էջ 255, հեղինակը բխեցնում է sʷei-ից («սուլի, շշալ»)՝ կողմնակի շերտի միջոցով, որ ալլնի քիչ հավանական է:

²⁹a Ասկայն հմմտ. հ.—ե. leg- «կաթել, ծորալ, լուծել, հալլել» (այստեղից հայ. լիճ, լիկ, Խ. իռլ. legaim «լուծվել, հալլել»), որ թերեւ ալլնի հավանական է:

լապո (*lāb-) (Եր., Ղրբ.), լեպո (*leb-) (հմատ. և լափուռ) «նիհար, կախ ընկած միս»—նորվ. lapa «թուլ կախվել», հ. իսլ. leppr «լաթեր. գանգուրներ» և ալլն (հ.—հ. lēb/p-, lōb/p-, jāb/p-, lēb/p- «թուլ կախվել»).

լափազ (*lāb- կամ *ləb-) «խիստ նիհար, վտիտ» (Վան), «դատարկ, անպետք (մարդ)» (Լոռի), լավլաի «հիվանդոտ, նիհար» (Նպ.)—լատ. labō, -āre «օրորվել, տատանվել, թուլանալ, խարխուղվել, անկման հասնել», lābēs «անկում, փլվածք, կործանում, հիվանդութուն, տկարութուն», գերմ. laff «թուլ, հոգնած», Laffe «հիմար, տխմար մարդ, դմբ», läppisch «հիմար, անհեթեթ, դատարկ», գերմ. laps, lapp «հիմար մարդ», ռուս. слабый «թուլ» և ալլն (հ.—հ. lēb-, lōb-, lāb- «թուլ կախվել»)³⁰.

լավոթել (*lāp- կամ *ləp-) «կեղտոտել, ապականել, լուծ կղկղել» (Ուլ., Վան), լավոսթել «կեղտոտել, ապականել» (Վան), ալլե թերևս լափ «նոսր ցեխ» (Թբ.)—նորվ. slevjen «լորձնոտ, կեղտոտ», slabbe, շվեդ. slabba «կեղտոտել», մ. նիդեռլ. slabben «կեղտոտել, ապականել. ծծել, կլանել» և ալլն (հ.—հ. lāb/p-, lēb/p-, lōb/p- «թուլ կախվել»)³¹.

լեզել «թանձրանալ» (Ալշ.), «տափակեցնել, հարթել (վեգի երկու կողմերը)» (Կար.), «մաշեցնել, հարթել, կոկել» (ՆՀԲ)—մ. վ. գ. lōēge, լիտվ. lėžns «հարթ» և ալլն (հ.—հ. legh'-: ləg'h- «գետնին սողալ, ցածր»).

լելալ (*lel-) «երերալ, շարժվել» (Վան), լելե «սալլալ» (Վան, մնկ.), լելեշ «ապուշ, տխմար» (Պոլ.), լելիկ «հարբած. ծաղրելի, թեթեամիտ», ալլե լիլիկել «երեխային օրորել» (Մրդ.), լիլո «խիստ հարբած, գինով» (Չրս.), լուլ «գինով հարբած» (Ղրբ.), լկալ, լկվել «շարժվել, երերալ» (Վան), լկել «շարժել, ցնցել» (Ապ., Բլ.), լվել «սաստիկ հարբել», լկուլ, լուլուկուլ «գինով շատ հարբած»—հ. ե. հնդկ. lōlati «չես ու դեն է շարժվում», lē-lāyati «օրորում է, ճռճում է», լիտվ. leliūou, leliūoti «օրորել, ճռճել», լատվ. leluoju, leluot «օրորել (երեխային)», lelis «ալծիկ» (թռչուն). անշնորհք, ձախորդ մարդ», ռուս. лелеять «օրորել, փալփալել» և ալլն (հ.—հ. lel- «օրորել»—բնաձայն արմատ).

լեպ (*leb-) «լեզվի վրայի կեղտ, դիրտ» (Ղրբ.), լեպանք,

³⁰ Հմատ. նաև հ.—հ. (s)leu- «թուլ կախած, թուլ», որոնցից նիդեռլ. slauk «նիհար, վտիտ, հարթ», նորվ. slauk «թուլ մարդ» և ալլն:

³¹ Հնչյունապես ալլելի բիշ հավանական է բխեցնել (հ.—հ. leu- (leuə-: ləu-) «կեղտ», «կեղտոտել» արմատից):

լապանք (*lob-) «գիրտ, մրուր (օճառ եփելուց հետո մնացած», լեպակալել «կեղտոտվել, փառակալել (լեզվի մասին)» (Ղրբ.), լոպպա ջրալի՝ ցեխ» (Ղզ.), — լատ. labes «փլվածք, կործանում» բիծ», իսլ. slevja «լորձոնք», նորվ. slevjen «լորձնոտ, կեղտոտ», շվեդ. slabba «կեղտոտել», շվեդ. բրբռ. slabb «ցեխաջուր», գերմ. Schlamm «տիղմ, ցեխ, կեղտ» և ալլն [հ.—հ. lëb/p-, lðb/p-, lãb/p-, (s)lëmb(h)- «թուլլ կախվել»].

լեզ (*sleig'h-) «երկար մնալուց ջրի տակ կապված կեղտ» (Պոլ.) — ռուս. СЛИЗЬ «լորձ, մաղաս», СЛИЗКИЙ «լպրծոն», մ. վ. գերմ. slich «տիղմ, ցեխ» և ալլն [հ.—հ. slei-g'(h) — «լորձնոտ, լպրծոն. հարթել, ողորկացնել»՝ (s)lei- «լորձնոտ, կպչուն» արմատից].

լիծ (*sligh-?) «ողորկ, հարթ. անամոթ, աներես» — հ. իսլ. slíkr «հարթ, ողորկ», ռուս. СЛИЗКИЙ «սահուն, լպրծոն» և ալլն [հ.—հ. (s)lei- «լորձնոտ, լպրծոն. սահել»] (Աճառյան)³².

լիել (*lēg-) «հալչել, սկսել հալչել» (Ալին, Խն., Կար., Չրս., Վան) — հայ. լիճ, լիկ, լոճել, հ. իսլ. legaim «լուծվել, հալչել», հ. անգլ. leccan «թրջել» և ալլն (հ.—հ. leg- «կաթել, հալչել») (Աճառյան).

լկատած (*lēg-) (Եր., Ղզ., Վան), լկոտած (Ադ., Պոլ., Վան), լկոտի (Վան), լկրտված (Ղրբ.) «անամոթ, հրես առած» (հմմտ. և լկտի) — հուն. λαγνέω «անառակություն անել», λωγάζ «անառակ կին», շվեդ. բրբռ. slök, släk «թեթևսովիկ կին» և ալլն [հ.—հ. (s)lēg-: (s)lēg- «թուլլ լինել, թուլլ, թուլամորթ, ցուր»].

լմել (*lem) (Բդ.) «ճմռել, փափկացնել, հարել, հարել-կրպցրնել», լմկել (Վան), «չարչարել», ալլև լամլամել, լամլմել (Ղրբ.), լմլմել (Վան), լոմլմել (Սվ.) «(թափած ատամներով) ծամծմել, (խոսքերը) ծամել», լամ «թուլացած, անդամալույծ եղած» (Ղրդ.), «վատ թխված (հաց)» (Ղրբ., Թվր.), լիմա-լիմա «մանր, մանր շարդած» (Ախլց.) — հ. վ. գերմ. հ. իսլ. lami «կաղ, հաշմանդամ, անդամալույծ», ռուս. ломать «կոտրել» և ալլն (հ.—հ. lem- «կոտրել, փխրուն, փափուկ») ³³.

³² 2. Աճառյանի բերած զուգահեռները պատկանում են sleig- ձևին, մինչդեռ հայերենը ենթադրում է (s)leigh-: (s)ligh- նախաձև:

³³ Համապատասխան գրաբ. լմել բայը Պետերսոնը համեմատում է սլավ. բառերի հետ, որ անհավանական է համարում Աճառյանը: Բարբառային բառերը հաստատում են Պետերսոնի ստուգաբանությունը:

լոք (*lok-) «ցատկ, մեծ քալ» (Եր., Ղրբ.) լոք տալ, լոք-
լոք անել, լոքլոքել «ցատկել, ցատկոտել»—լատվ. lezu, lēkt
«ցատկել, ոտանել» և ալլն (հ.—հ. lek- «մարմնի անդամ, վերջա-
վորություն. ծոնել, թեքել. ցատկել») (Աճառյան)³⁴.

լպզա(ր)ալ, լպզտալ (*lph-) (Վան), լպստել (Պրբ.) «սահել,
սայթաքել լպրծալ», լպզտրուն «սահուն, լպրծուն» (Վան), լպռտ-
լպռտ «լպրծուն» (Վան), լպռտել «լպրծուն լինել» (Վան), «արագ-
արագ և անհասկանալի խոսել» (Պրբ., Պոլ.), «լիքտել «շատա-
խոսել» (Ն.-Նիշ.), լպստած (Եր., Թբ.), լպզտած (Ղրբ.), լպրզտ-
րուկ (Վան) «լիբբ, լկտի, աներեսաբար խոսող», ալլն լիլիպացնել
(*liph-) «անհասկանալի խոսել (պառափների մասին)» (Եր.), լբփ-
լբփալ «շատ թրջվել, խխմել» (Ղրբ.), լիռտվել «լրբություն անել,
լկրտվել» (Վան)—հալ. լպիրծ, լպիրշ, լիրբ և ալլն (հ.—հ. lei-b-
-ph- «լործնոտ, լպրծուն. սահել, հարթել»).

լուփ (*lōph-) (Մուշ), լափ (*laph-) (Ոզմ) [համատ. նաև
լբալ (Մուշ, Ն.-Բզ., Վան), ալպ, լովազ (Ոզմ) «ափ, բուռ», լպել
«ճանկելով մի բուռ վերցնել» (Մուշ, Վան), «բռնել» (Վան)]—
գոթ. lōfa «ափ», հ. վ. գերմ. lappo «ափ, թիաբերան», ռուս.
лапа «թաթ» և ալլն (հ.—հ. lēp-, lōp- lēp- «հարթ լինել, ձեռ-
քի ափ, ոտքի թաթ, թի», lōpā «ձեռք, թաթ») (Աճառյան).

աղաղել (*alal-) «լալ, գոռալ, կանչել» (Ախլց.) (համատ.
գրար. աղաղակ)—հուն. ἀλαλῶ «մարտական ձայն արձակել,
կանչել, գոռալ» և ալլն (հ.—հ. alā—բնաձայն արմատ) (Աճառյան).

ուլուլալ (*ulul-) «լալ, ողբալ, աղաղակել (կանանց մասին)»
(Ախլց.)—հ. հնդկ. ulul-, ulūlū- «ողբալի, աղաղակելի», լատ.
ululō, -āre «ոռնալ, ողբալ, ճչալ, աղաղակել» և ալլն (հ.—հ. ul-,
ulul- «ոռնալ, ճչալ, աղաղակել») ³⁵.

մալալիոնել (*māl-) «ամբողջովին քսել (մանավանդ հեղուկ
և ապականոց բաներով), շաղախել, ապականել, կեղտոտել» (Պոլ.)
—հ. հնդկ. malinā- «կեղտոտ, սև», հուն. μέλας «սև», μόλονω «կեղ-
տոտել», հ. վ. գերմ. mālōn «նկարել, գծել» հ. նորվ. mōēla «ներ-
կել, նկարել» և ալլն (հ.—հ. mel- —գուլներին, հատկապես մուխ,
կեղտոտ գուլներին նշանակում. «կեղտ, կեղտոտել»).

34 Եթե ալստեղ է պատկանում նաև լատ. locusta «մորեխ» բառը, ապա
թերևս համեմատելի է հալ. լոֆ «մի վնասակար կենդանի» բառի հետ:

35 Ն. Աճառյանը, ՀԱՄ, 5, էջ 488, միացնում է ողբալ «լաց, ողբ» արմատի
հետ, որ բխեցնում է *ol-ից՝ վերջինիս հետ նույնացնելով *ul-ը:

մալամշել (*məl- կամ *ml-?) «տխուր-տրտում նստել» (Ն.-Բզ.), թերեւ նաեւ մելուր «տխուր» (մութ-մելուր «տխուր-տրտում») (Խրբ.), մոլոզվել «տխուր նստել մտածել» (Ախլց.)—հուն. μέλω «հոգածութեան առարկա լինել» (միշ. սեռ) հոգալ, հոգ տանել», μέλει μοι ճեղքս է պատճառում», μελέδω «հոգս, տագնապ, վիշտ» և ալլն (հ.—ե. mel- «հապաղել, տարակուսել»)³⁶.

մալանջ (*ml-) «սանդերքով մաքրած բրդի կիսալուսնաձև կտոր՝ մանեղու պատրաստ» (Ղրբ.)—հուն. πολλός «բրդի փաթիլ, բուրդ, մազափունջ» և ալլն (հ.—ե. mel- «բուրդ, բրդե հագուստ»).

մաղավել (*mld-) «ցրվել» (Խրբ.)—հ. հնդկ. mārdati «տրտում է, ճմռում է», ն. իսլ. mylska «փռել», հ. անգլ. formolsnian «փռելանալ», հուն. ἀμαλδώνω «քանդել, ոչնչացնել, փչացնել» և ալլն (հ.—ե. mel-, -d- «մանրել, խփել, աղալ»).

մամուխ (*mukh-) «իգական ամոթույք» (Ն.-Նիշ.)—հայ. մուխ, մխել (կազմութեան համար հմմտ. մամուլ—մլել, մլմլել) (հ.—ե. meukh- «սողոսկել, մխել»).

մամուր (*mōr-?) «քերոցի փշրանքը» (Երզ.)—հայ. մարս «կրիվ», հուն. παραίω մաշել, սպառել, հանդցնել», հ. իսլ. merja «խփել, ջարդել», ն. իսլ. mor «փռել», հ. շվեդ. morb «փխրուն զանգված, փլվածք», խեթ. marrija- «մանրել, փշրել» և ալլն (հ.—ե. mer-, merə- «տրորել», մամուր-ի կազմութեան համար հմմտ. մամուլ—մլմլել).

մանել (*mēn-?) «հասկանալ» (Ողմ, մնկ.)—հայ. իմանալ, հ. հնդկ. mānyatē «խորհում է, մտածում է» և ալլն (հ.—ե. men- «մտածել»).

մառ (mrs-) «չտաշած տափաբակ բարակ շլուղ, որ մատն է մտնում» (Արբ., Մոկս, Չնգ., Սվ.), մեռ «մսի մեջ մտած փալտի ծեղ» (Ակն), մառել «ցորենը կամենելով մանրել, կալսել» (Երզ.)—հ. իսլ. merja «խփել, ջարդել», ն. իսլ. mor «փռել», խեթ. marrija- «մանրել, փշրել», հ. հնդկ. maśam, maśīm kar- «փռելացնել», հ. վ. գերմ. zermürsen «ճմլել, ճզմել», շվեյց. morsen, mürsen «փշրել, մանրել» և ալլն (հ.—ե. mer-, mers- «տրորել»).

մաքել (*mər- կամ mer-?) «հանգցնել» (Խրբ., Ն.-Նիշ., Պոլ.), մաքել, մաքմքել «հանգչել»—հուն. μαρμαίρω, μαρμαρίζω «փալլել, վառվել», ռուս. мреть «առկալծել, մթնել», мерцать

³⁶ Սակայն հմմտ. հ.—ե. mel- «մանրել, խփել, աղալ», որից Հ. Աճառյանը բխեցնում է հայ. մոլի, մոլբ, մոլբբ բառերը:

«առկայծեի», меркнутъ «մթնել, աղոտանալ, նսեմանալ» և ալլն (հ.—հ. mer- «առկայծել, աղոտ առկայծել, աղոտ փալլել»).

մլալ (*smōl-) «ծխալ, մխալ» (Ղզ.), մլմլալ «ծխի՝ հանդարտ բարձրանալը» (Ղբբ.), «պլպլալ, առկայծել» (Մն., Սվ.) (հմմտ. մուլլ) — մ. իռլ. smāl, smōl, smual «կրակ, ջերմութիւն, մոխիր», մ. նիդերլ. smölen, նիդերլ. smeulen «ծխալ, մլմլալ», ֆլամ. smoel (օ-ով) «տոթ, ծանր, խեղդուկ» և ալլն (հ.—հ. smel- «դանդաղ և ծխալով վառվել, ծխալ, մլմլալ») (Աճառյան).

մկկալ (*mekk-?) «այծի ձայն հանելը» (Եր., Ղբբ., Վան) — հայ. մաքի, հուն. հոմ. μεκκεσαι, գերմ. meckern «մկկալ, մալել» և ալլն (հ.—հ. mek- «մկկալ» — բնածայն արմատ) (Աճառյան).

մղմող, մղմեղ (*mł-, *mol-, *mel-) «ցեց» (Ղբբ., Ղզ.) — հայ. մալել, մլմլել, մլ-աղաց, մեղմ, մամուլ, մլուկն, գոթ. malō, ռուս. моль «ցեց» և ալլն (հ.—հ. mel- «մանրել, փշրել, աղալ») (Աճառյան).

մնիկ (*men-) «շատ մանր, փոքր» (Պոլ.), «փոքր տղա, մանչուկ» — հայ. մաճուկ, մաճէ, հ. իռլ. menb «փոքրիկ» և ալլն (հ.—հ. men- «փոքր, փոքրացնել»).

մորտել (*mord-) «կրծեի» (Ղբբ.) — հայ. մաքա «կոխի», լատ. mordeo, -ēre «կծել, կրծել» և ալլն (հ.—հ. mer-d- «տորոել, շփել») (Աճառյան).

մուգ [* (s)mugh-] «թխագուին» (Եր., Ղբբ.) — հայ. մուխ, ռուս. смуглый «թուխ» և ալլն [հ.—հ. (s)meug(h)-, (s)meukh- «ծխել, ծուխ»] (Աճառյան).

մոմուռ (*mōrs-?) «ցափ, վերքի կսկիծ» (Ախլց., Բլ., Եր., Վան), «կսկծալի» (Վան), «կծու, կանաչ պղպեղ» (Բն.), մոռւ «բարկ, կծու» (Մուշ) — մ. վ. գերմ. zermürsen «ճգմել, ճմռել», շվեյց. morsen, mürsen «մանրել», նիդերլ. morzelen «տորոել, տրորելով մանրել», ալլև լատ. mordeo, -ēre «կծել», հ. վ. գերմ. smerzan «ցափել», smerzo «ցափ», անգլ. smart «վերքի կսկիծ, ալրող. սուր ցափ. կսկծալի, սուր» և ալլն (հ.—հ. mer-, -s- և ալլն «տորոել, բռնել, թալանել»).

Կան զգալի թվով բնածայն և մանկական բառեր, որոնք հնչյունապես երբեմն շեղվում են հայերենի բուն օրինաչափութիւններից.

բլբլալ «շատախոսել, արագ-արագ խոսել» (Եր., Թբ., Թվր., Շլ.), — իսլ.-նորվ. bulla «թոթովել, շաղակրատել, շատախոսել»,

հ. պրուս. billit «ասել, խոսել», լիսվ. billu, biloti «խոսել» և այլն (հ.—հ. bhel- «հնչել, խոսել, մոնչալ, հաղել»).

գաղա (Վան), գաղո (Ոոյ, Սլմ.) «քույր, մեծ քույր», գաղն' «ո՛վ քույր» (Վան), գաղո՝ «ո՛վ հայր»—հուն. θείος «քեռի», θεία «հորաքույր, մորաքույր», ռուս. дед «պապ» дядя «քեռի» և այլն [հ.—հ. dhē-, dhē-dh(ē)- մանկական բառ՝ ընտանիքի ալագ անդամներին նշանակելու համար].

գաղաջել «հավի կոկոալը ձու ածելուց հետո» (Չթ.)—ռուս. гоготать «սագերի կոնչալը» և այլն (հ.—հ. gha gha և այլն—բնածայնություն կոկոալու, կոնչալու համար).

խառափել «լեզվով ճթթացնել»—հ. հնդկ. jāratē «աղմկում է, հնչում է, կանչում է, ճռռում է», հ. վ. գերմ. carron «ճռռալ, չիկալ», հայ. կռուցիլ և այլն (հ.—հ. ger- «խաղաղ ձայնով ճչալ»).

կռավել «կռկալ (ազդավի մասին)» (Ղրբ.), կռիկ «ազդավ» (Վան)—հայ. կռուցիլ, հ. սկանդ. kräkr «ազդավ», krāka, գերմ. Krähe «արջնագռավ» և այլն (հ.—հ. ger- «խաղաղ ճչալ»—բնած. հմմտ. և ազդալ).

աղն' «ո՛վ մայր, մայրիկ» (Մուշ. Չթ.՝ անե), աղո «ծեր կին, պառավ» (Մուշ), առաա «մայր, մայրիկ» (Ակն)—հ. հնդկ. attā «մայր, ալագ քույր», atti-h «ալագ քույր» և այլն (հ.—հ. atos, atta «հայր, մայր»—մանկական բառ).

ապի՝ «եղբայր» (Թվր.), «հայրիկ, ո՛վ հայրիկ» (Լոռի, Ղազ.)—հուն. ἄππα «հայրիկ, պապա», թոխ. Բ appakke «հայր, հայրիկ» (հ.—հ. appa «հայր»—մանկ. բառ).

ափու (Եր.) «հայր, հայրիկ»—հուն. ἄππα, ἀπφά, ἀπφός «հայր, հայրիկ», թոխ. Բ appakke «հայր» (հ.—հ. appa «հայր»—մանկ. բառ) (Աճառյան).

մա «մայրիկ» (Վան, մնկ.), թերևս նաև ումա «տատ» (Աղփ.)—հ. հնդկ. mā «մայր», հուն. μά «մայրիկ» (հ.—հ. mā, այլև կրկն. māmā, mammā «մայր»—մնկ. բառ).

մամ «մայր» (Բլութ., Տիգր.), «տատ» (Ախլց., Կար., Պոլ.), մամա «մայրիկ» (Վան, մնկ.), «տատ» (Այնթ.), «դայալ, մանկաբարձուհի» (Արբ.), մամա, մամմա, մա «ուռեղիք» (Պոլ., մնկ.), մամա «ուռեղ, կե՛ր» (Եր., մնկ.), մամի «պառավ կին» (Ն. Նխշ.)—ն. պրսկ. mām, māmā, mamī «մայր», հուն. μάμα «մայրիկ» և այլն (հ.—հ. mā, կրկն. māmā, mammā «մայր»—մնկ. բառ).

նան, նանա, նանե, նանի «մայր, մայրիկ» (Եր., Մուշ, Վան)—

հ. հնդկ. nana, պրսկ. nana, արմ. nane «մայր, մայրիկ» (հ.—ե. nana, nena և այլն «մայր, մայրիկ»—մանկ. բառ) (Աճառյան), Մի շարք դեպքերում համեմատությունները կասկածելի են (հին փոխառություններ, պատահական նմանություն և այլն)։

ա) Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բառային իմաստները զգալիորեն շեղվում են.

բալան-բալան (*bhj-?) «բարդ-բարդ, քուլա-քուլա, ամպանման, հորդ (ծուխ, բոց, ամպ, փոշի և այլն)» (Վան) (հմտ. և բրբռ. պալաք-պալաք)—հ. շվեդ. bulin, bolin «ուռած-փքլած», շվեդ. բրբռ. bål, bål «հաստ ու մեծ, ուժեղ, քաշ» և այլն (հ.—ե. bhel-: bhj- «փչել, ուռչել, բխել»)։

բամփ (Վգլ.), փամփ (Ապ., Բլ.), «չուած մատներով ձեռք՝ հարվածելու պատրաստ», որից բամփել, բամբել, բամբալա, բամփալա, փամփալա, բամբալել, փամփալել և այլն—հուն. βαμβαίνω, βαμβαλόω, βαμβακώω «ատամներն իրար խփել, մրմնջալ» և այլն (հ.—ե. baba- բնած. բառ՝ ba^xmb- և ba^xb-, bha^xbh-, pa^xp- «ուռչել» արմատների կողքին)։

դրբոց (*dhrabh-) «ծեծ» (Եր.)—գոթ. dreiban «քշել, հրել» և այլն (հ.—ե. dhreibh- «քշել, հրել», dhrebh- «մանրել, փշրել», dhebh- «հրել, խփել», dhreu-bh- «մանրել, փշրել» ձևերի կողքին)։

պուլիկ (*beul-) «հողե աման» (Եր., Ղզ., Ղրբ., Թբ., Վան), այլև պուլուց «բոկեղի նման կլորիկ հաց» (Ախլց. Կար.)—մ. ն. գերմ. pull, poll, poll «կեղե», puył «պարիկ», puyla «ուռուցք» և այլն (հ.—ե. b(e)u-, bh(e)u- «փչել, ուռչել», որտեղից հալ. պոյան)։

պուտ (*bud-) «կաթիլ» (Ախլց., Արբ. Եր., Եվդ., Խրբ., Ղզ.), «խալ» (ՆՀԲ), «մի տեսակ բանջար» (ՆՀԲ), պտիկ «մի տեսակ բանջար» (Ասլ.)—հ. հնդկ. budbuda-ի «ջրի պղպղակ, պղպղակ», շվեդ. puta «ուռած լինել», puta «բարձ», հայ. պոյան և այլն [հ.—ե. b(e)u-, bh(e)u- «փչել, ուռչել»]։

տեփ (deph-) (Ղրբ.), տմփոց (*demph-?) (Վան) «լավաշ-թրխի, բացված խմորը թոնրի կողերին խփելու ձվածե բարձ» (Ղրբ.), տեփ «եփխսայի տակ դրվող բարձ» (Ղրբ.), թեփես նաև տեփ «այգու մեջ շինված հյուղակ, քուլիկ, քողտիկ»—հայ. տոփել,

հուն. δέψω «ճմռել», սերբ. dépti «խփել, հրել» և այլն (հ.—ե. dēph- «արորել, խփել, ճմռել»)³⁷.

տիտիկել (*di-?) «փետրատել, բզիկ-բզիկ անել» (Եվգ.)—հ. հնդկ. dīti-ն բաժանում, բաշխում, հ. սկանդ. tí-na «պոկել, քաղել, մաքրել», հայ. տի «հասակ» («ժամանակահատված») և այլն (հ.—ե. da-: dā-, dai-: dāi-: dī- «բաժանել, կտրատել, պատատոտել»).

ալուզ (*dlu- կամ dēlu-?) «խեցեղեն աման, փարչ, սափոր» (Վան)—ռուս.-եկ.-սլավ. делва «տակառ», բուլղ. делва «փարչ» կապն երկունկանի աման» (հ.—ե. del- «ճեղքել, կտրել, ճարտարությամբ տաշել»).

կառափ (*gei-?) «կալքաշ, կապտոն (տախտակ, որով կամ-նած ցորենը քաշելով հավաքում են թեղելու համար» (Շիր.)—հուն. ἀγείρω «հավաքել», τὰ γάργαρα «բազմութիւն, կոյտ» և այլն (հ.—ե. ger- «հավաքել»)^{37a}.

կզիկ (*gu-g'h-?) «հողե ջրաման» (<իրան.?)—ն. պրսկ. gūzak «կոճ», լիտ. gūžas «խիթ, ելունդ» և այլն (հ.—ե. geu- «ծռել, թեքել, կամար կազմել», որանդից հայ. կուր «տաշտ», բրբռ. կուր, կուրիկ «փայտյա աման», կորի «ջրի նեղ առուն» և այլն).

կիվ (*gēu-) «լեռների վրա դիզված ձյունակոյտ, որ ցած գլորվելու դեպքում կոչվում է հյուս»—նորվ. kaa «խոտը շրջել», kjūka, kokle, kukle «գուղձ, գունդ, հոծ զանգված», դան. kok(k) «կոյտ, դեզ», հ. սկանդ. kúfr «կտր ծալր, կոյտ», հայ. կորիզ և այլն (հ.—ե. gēu-, gəu-, gū- «ծռել, թեքել, կամար կազմել»).

